ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԻՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

« Երկար ատենէ ի վեր ֆրաժարեր եմ փնտռելէ աշխարհի վրայ աւելի ֆետաքրքիր ու գեղեցիկ ֆրաշալիք մը, քան ճշմարտուԹիւնը, կամ աւ նուազն զայն ճանչնալու մարդկային ճիգը»:

ՄՕՐԻՍ ՄԷԹԷՐԼԻՆԿ

(PRINTED IN FRANCE)

IMPRIMERIE MASSIS -:- PARIS

1930

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԻՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս գիրքն տպագրուած է 100
օրինակ հոլանտական մանուածոր
թուղթի վրայ, թուագրուած:

Digitized by the Internet Archive
in 2025

https://archive.org/details/unset0000unse_x6u2



ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Mkrtich Parsamean

Awetis Aharonean

Ir keanke ew grakanut'

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԻՐ ԿԵԱՆՔԸ

ԵՒ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Երկար ատենէ ի վեր ջրաժարեր եմ փնտռելէ աշխարհի վրայ աւելի ջեռաքրքիր ու գեղեցիկ ջրաշալիք մը, քան ճշմարտու-Թիւնը, կամ առնուազն զայն ճանչնալու մարդկային ձիգը»:

ՄՕՐԻՍ ՄԷՔԷՐԼԻՆԿ

ՏՊԱՐԱՆ - ՄԱՍԻՍ - ՓԱՐԻԶ

1930

ԿԵԱՆՔԸ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ.— ԳԻՒԼԱԶԻՋ ԽԱԼԻՖԱՆ.— ՈՏԱՆԱՒՈՐ ՄԸ ԵՒ ԳԻՐՔԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ.— ՌՈՒՍ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.— ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵՆ ՑԵՏՈՅ ԲԱՆՑ.— ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶԸ.— ԱԶՔԵՐՈՒՆ ԼՈՅՍԸ:

Ուեւտիա Ահարոնեան ծնած է 4 Յունուար 1866ին, Սուրմալու գաւառին կեդրոնավայրը եղող, Իգդիր գիւղաքաղաքին մօտիկ, Իգդիրմաւա փոքրիկ գիւղին մէջ, որ կը գտնուէր Արարատեան դաշտին վրայ, Մասիսի ստորոտը:

Գիւղին քահանան նորածինին անունը մուտքաւ արձանագրել ծնունդներու տանկին մէջ: Ուեւլի վերջը միայն, մայրը մօտաւորապէս յիշեց իր զաւկին ծննդեան թուականը. այս է պատճառը, որ ոմանք 1867ին կ'ընդունին անոր ծննդեան թուականը:

Հայրը, առւաքինի, աշխատասէր, համեստ ու կրօնասէր դարբին Առաքելը, վաթսունական թուականներուն Կովկաս գաղթեր էր Պարսկահայաստանի Հաւթվան գիւղէն: Իսկ մայրը բայառիկ դիրք մը կը վայլէր և ընդհանուրին ուշադրութեան առարկան էր այն հանգամանքով, որ ամբողջ գաւառին մէջ կարդալ-գրել գիտցող միակ կինն էր:

Հօր և մօր ինչպէս նաև իր ընտանիքին, գիւղին ու բնութեան ներգործութիւնը շա՛տ զօրաւոր ու աչքառու կ'ըլլայ մանուկ Ահարոնեանի վրայ. այնպէս որ իր գրական գործունէութեան բովանդակ ընթացքին, անիկա իր ներշնչումի այդ ազդակները հարազատօրէն կը պահէ ու կը գուրգուրայ անոնց վրայ: Այս պարագան մանաւորաբար ճակատագրական կ'ըլլայ իր ստեղծագործութեան ու արուեստին համար: Անիկա երախտապիտութեամբ կը յիշէ իր մանկութեան ա՛յնքան թանկագին ու վաւերական յիշատակները, իր լոյս ընծայած *Իմ Գիրքը* հատորին մէջ:

Առանց այս գրքին, մենք քանի մը թուականներ միայն պիտի ունենայինք անոր կեանքին մասին, իբրեւ կենսագրական գիծեր, ու մեզի անծանօթ պիտի մնար գրչի անզուգական վարպետին մանկութեան տարիները, ու այն ազդեցութիւնները, որոնք կերտեր են անոր հոգին ու միտքը։ Առանց այդ նախնական ազդակներուն ու միջավայրի պայմաններուն, մենք չի պիտի կրնայինք հետեւիլ քայլ առ քայլ անոր կեանքի բոլոր հանգրուաններուն։

* * *

Փոքրիկն Ահարոնեան չորս կամ հինգ տարեկան է արդէն, երբ կը շրջապատուի ընտանիքի հարազատ դէմքերով։ Հայր, մայր, քոյրեր ու եղբայրներ։ Իր քայլերուն կը հետեւի մանաւանդ տատմէր Եղսօն, որուն ստուերը երկիւղ կ'ազդէ մանուկ Աւետիսին։ Անիկա ընտանիքի երես առածն է։ Անիկա իր օրերը կ'անցնէ գիւղական տան սաքուներուն վրայ, եւ դրացնութեանը մէջ ընտանի բոլոր կենդանիներուն, որոնց շունչն ու հեւքը կենդանութիւնն իսկ է գիւղական տան։

Բոլոր մանուկներուն պէս, անիկա կը հաւատայ որ փոքրիկ երախաները երկինքէն կ'իյնան արեւու ճառագայթներուն հետ, եւ կամ հարսները տուն կը բերեն ածուներէն՝ ջուրի սափորներով։

Բայց այս հաւատալիքը պատճառ մը չէր, որ անիկա չորս կամ հինգ տարեկան հասակին մէջ մահուան ու ծնունդի խորհուրդին առջեւ սիրտի մեծ ճմլումը չունենայ, տեսնելով իր սիրելի մայրիկին տառապանքը, և «հիւանդութիւնը»։

Անիկա երկար տարիներ, իր մանկութեան ու պատանեկութեան օրերուն, կ'ապրի հայրենական տան երդիքին տակ, հարուստ վաղեմի աւանդութիւններով, մտիկ ընելով գրան սողնակին ճռճռան ձայնը, իբրեւ երգի մը, «սուգի թէ խնդութեան ժամին, երբ դագաղ է դուրս գնում, թէ կարմիր հարս է ներս գալիս — կեանքի մի հին տրտունջ, որ ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վախճան...»։

Մանուկ Ահարոնեան շատ կանուխէն փնտռել կը սկսի իրերուն հոգին. ասիկա կը դառնայ անոր նկարագրին ու գրական ստեղծագործութեան հիմնական գիծը։ «Նայում էի, կը գրէ, հերդիկից և ամրան տաք գիշերներին, երբ մենք ընտանիքով կարանն էինք քնում։ Վախենում էի խաւար տնից ու մի անպիմապրելի մղումն ունէի նայել ներսը։ Ու կ'ուզէի, որ ոչ ոք չը տեսնէր այդ, ասես յանցանք էի գործում իրերի հոգին փնտրելով։ Երբ շուրջս ամենքը հանդչում էին խորը քնով՝ ես կամացուկ ու գաղտագողի դուրս

Էի սոլում անկողնից և կռանում հերկիկի վրայ, վար, վար. փնտրում էի խաւարի մէջ լինձ ծանօթ առարկաները, անկողինների ծալքը, յօրանջուն սափորները, մեր մեծ բղուղը, աղամանը։ Եւ բոլորի փոխարէն մթապաղաղ մթութեան մէջ տեսնում էի գալարուղ ձեւեր, որոնք շշնջում էին իրար։»

Եւ սակայն մանուկը մանուկ է։ Անիկա փայտէ ձին հեծած, ինչպէս մեզմէ ամէն մէկը, չափեր է այգիներուն ու դաշտերուն տարածութիւնը, հոգին արեւով ու խնդութեամբ լեցուն։ Շիներ է տնակ ու սայլակ, կրեր է հող ու աւազ, խաղցեր է դամի ու մուրճի հետ, և ամրան տաք օրերուն, նետուեր է առուակին մէջ զովանալու համար։

* * *

Ահարոնեանի ծննդավայր գիւղը, Իպլիրմաւա, կը գտնուէր Արարատեան դաշտին վրայ, Մասիսի ստորոտը։ Այս միակ փաստը կը բաւէր, որ Ահարոնեանի ո՛չ միայն մանկութեան ու պատանեկութեան տարիները, այլ անոր բովանդակ կեանքը ենթարկուէր այդ հսկայ ու աստուածային լերան կախարդանքին ու անոր վեհաշուք բանաստեղծութիւնն ու մեծութիւնը ներշնչէին իր արուեստն ու դրականութիւնը։

Անոր առաջին ուսուցիչն ուրեմն Մասիսն է եղեր, «Հայոց աշխարհի տիտանը»։ Անոր տեսքն ու պատկերը թափանցեր են անոր էութեան խորը. այս է եղեր պատճառը, որ «հոգու համակ զգացողութիւնը, սարսուռ թէ թախիծ, գեղ թէ խոկումն, բերկրանք թէ տրտմութիւն, միշտ Մասսի կապոյտ սուրերն ունի վրան։ Եւ այդ խորհրդաւոր սուրերի տակ է, որ ժամ առ ժամ, օր աւուր աճում են մանուկ հոգիները, յղկւում են զարմանահրաշ լերան ոգով, նրա ամպերի, նրա հովերի, նրա ձիւների ու սառոյցների, նրա անթիւ երանգների, յարափոփոխ ձեւերի ճնշող ու հրապուրիչ պատկերի ներքին, անվերծանելի խորհրդով։»

Միայն Մասիսի հողմերը չեն, որ օրօրեր են մանուկ Աւետիսի մանկութիւնը։ Անիկա դիտեր է նաեւ Հայկական Պարն ու Արագածը։ Ոչ միայն դիտեր ու այցելեր է, այլ լսեր է իր մօրմէն բազմաթիւ հէքեաթներ. հէքեաթը, Ս. Յակոբին ու շղթայակապ Արտաւազդին, Նոյեան տապանին ու Գաբրիէլ հրեշտակապետին, ու մանաւանդ Արարատեան դաշտի տիտանին, Մասիսի անօրինակ հէքեաթը։

Աւետիս Ահարոնեանի ապագայ կրթութեան ու դաստիարակութեան համար, իր հօրմէն աւելի մեծ դեր խաղացեր է իր մայրը։ Հայրը «անգրագէտ«

էր, այսինքն դպրոց և ուսում տեսած մարդ չէր։ Ընկճակառակն, իր մայրը վարժ կը կարդար Սաղմոս ու Նարեկացի, ու այն ատենուան համար իբրև բաւական երեւոյթ, շապիկ հագեր ու եկեղեցիին մէջ երգեր է։ Այն աստիճան որ առաջին ամուսինին մեռնելէն վերջ, երբ կ'ամուսնանայ երկրորդ անգամ, ծիսին իբրև օժիտ կը բերէ «առաջին ամուսնու սէրն ու յիշատակը, և իր գիրքերը — սաղմոս, շարական, Նարեկացի ու Յայսմաւուրք։»

Իր եղբայրներուն մէջ մինակ ինքն է, որ շատ կանուխէն որոշ ընդունակութիւն ու յարմարութիւն ցոյց կուտայ գիրի ու դպրոցի, բան մը, որ ուշիմ ու հեռատես հայ մօր ուշադրութենէն չի վրիպիր։ «Ես սրբազան երկիւղ ունէի գրքերից, կը գրէ, բայց և նրանք քաշում էին ինձ։ Մեր տան հաստափոր գրքերն ինձ համար հմայիչ սպառնալիք էին։ Ամենից աւելի ինձ վախեցնում էր Յայսմաւուրքը։ Կաշէ կազմով ուռած մի ահագին հրէշ, որ թառել էր մեր ակնատի մէջ ու նայում էր մեզ դիշեր ցերեկ իր կոյր աչքերով։»

Բայց այդ խոշոր ու ծանր գիրքերուն լեզուն հասկնալէ առաջ, եօթը տարեկանին է, որ հայրը փոքրիկ քերական մը կը բերէ անոր և այբ-բէն-գիմի դասը, առաջին անգամ, կ'առնէ իր ընթերցասէր մօրմէն։ Գիրքերու լեզուն ու խորհուրդը գինքը կ'առինքնեն ու անկից այդ տարիքին մէջ կը սկսի «անապատում մոլորածի պէս արեւը փնտռել»։

Ամբողջ տարի մը, մօրը առջև ծնրադիր, այբբենարանէն կարդալ կը սկսի, առանց անկէ բան մը հասկնալու։ Բայց ծնողները կ'որոշեն գինքը առաջնորդել Գիւլազիզ խալիֆային քով, ղեպի Իգդիր։

Ինչպէս որ աննման Ռաֆֆին մեզի նկարագրեր է Տէր Թողիկի դպրոցը և այն սովորութիւնները, որոնք յատուկ էին այն ատենուան, այնպէս ալ Ահարոնեան, որուն մանուկ հոգիին վրայ անջնջելի կերպով դրոշմուեր են Գիւլազիզ խալիֆային պատկերն ու իր դպրոցի կարգն ու սարքը, մեզի այսպէս կը նկարագրէ այդ ցածլիկ գոմ-դպրոցի պատկերը.

« Ո՛վ գիտէ, ի՛նչ սարսափելի մարդ է այդ Գիւլազիզ խալիֆան. լսել էի, որ ֆալախկայ ունի. անծանօթ էի պատժի այդ գործիքին, բայց գիտէի, որ նրանով տանջում են աշակերտներին։ Ու չարչարանաց այդ գործիքն ու ինքը խալիֆան իմ երեւակայութեան մէջ միացած էին իրար — մի հրէշ մշտապէս գաղազած։ Միակ սփոփանքս և քաջալերութեան աղբիւրը այն էր, որ մայրս հետը վերցրել էր մի տապակած հաւ, հացի մէջ փաթաթած և մի շիշ օղի։ Վերջապէս հասանք. սիրտս թունդ եւաւ, երբ մտանք խալիֆայի ընդարձակ բակը, ուր շատ կանաչի ու բանջար կար ցանուած։ Բակի խոր-

քում թոնրատունն էր. մայրս թեքեց, տան առջեւից անցաւ ու մտաւ ցածլիկ գոմը։ Անասուններ չը կային այնտեղ — ու խալիֆան վերածել էր դպրոցի...»

Բայց ի՞նչ կը ներկայացներ ինքը գոմը, որ Իգդիրի և շրջակայ գիւղերուն տղոց համար, իբրև դպրոց կը ծառայէր.

«Գոմը կիսախաւար էր, բորբոսնած, խարխլած ու ցածր առաստաղի տակ մի որոմաշուկ ու մեռելային բան ունէր. ամենախղճուկ գոմն իսկ անասուններով լեցուն, կենդանի ու հրապուրիչ տեսք ունի. բայց խալիֆայի գոմի կիսաստուերի մէջ, ուր լոյսը թափանցում էր առաստաղի մի փոքրիկ բացուածքից, երեւում էին յիսուն վաթսունի չափ փոքրիկ մանուկներ, որոնց դէմքերը հազիւ հազ էր նշմարում դրսից յանկարծ ներս մտնողը»։

Պատկերը աւելի կատարեալ պիտի ըլլայ, երբ ըսենք, որ մանուկ Ահարոնեան հոն ընկերներ կ'ունենայ ոչ միայն իրեն տարեկից ու հասակակից, այլ մինչեւ տասնևհինգ ու տասնևվեց տարեկան պատանիներ, որոնք բոլորն ալ տարբեր տարբեր գիրքերու վրայ հակած, բարձր ձայնով կը կարդան, ջանալով զիրար գերազանցել։

Փոքրիկ Աւետիսը տարի մը կը յաճախէ խալիֆայի դպրոցը։ Հոն երկու տեսակ զբաղումներ կ'ունենայ. գրաբար գիրքերու ընթերցանութիւն և գեղագրութիւն, որ շատ անգամ գիրքերէ ընդօրինակութիւն էր։ Այդ դպրոցի շրջանը աւարտելու համար տղաքը պէտք էր ժամագիրք, սաղմոս, Նարեկացի ու Ցայսմաւուրք վարժ կարդային, ինչպէս նաև գրի առնէին բարեւագիր նամակ մը և մուրհակ մը։

Բայց այս բոլորը զինքը չեն գոհացներ երբեք. անիկա ժժգոհ է ե՛ւ խալիֆայէն ե՛ւ դպրոցի պատիժներէն, որոնք իրարու կը յաջորդէին ամէն օր նորանոր ձեւերով. «սովորականը խճի վրայ ծնկաչոք մնալն էր. աւելի դաժանը կոճղը ձեռքերին բարձր պահելու պատիժն էր, որ մեծերին էր հասնում. յետոյ ձիպոտի հարւածները երախաների թիկունքին ու ափին. և վերջապէս ահաւոր ֆալախկան։»

Ժժգոհ էր անիկա այս բոլորէն, հակառակ անոր որ մէկ տարուան մէջ կը վերջացնէր սաղմոսը, կրնար կարդալ այլ եւս աւետարան, կը գրէր բարեւագիր ու մուրհակ, առանց կարենալ թափանցելու «գրքերու իմաստութեան»։

Ծնողքը այդքանը բաւական համարելով, կ'որոշեն հեռացնել զինքը այդ գոմ - դպրոցէն, ի մեծ ուրախութիւն մանուկ Աւետիսի, որ իր յիշողութեանը մէջ կը պահէ այդ օրերէն ծանր մղձաւանջ մը — «խստասիրտ ու բթամիտ խալիֆան, իր պատառատուն ու աղտոտ մուշտակը, կիսաւեր, խաւարչտին և գերեզմանային գոմը, մուխ մսուրը, այծի մորթին ու վայրենի ֆալախկան»։

Այդ թուականներուն Էջմիածնի գահակալն էր Գէորգ չորրորդ կաթողիկոսը, հայրենասէր և ուսումնասէր, որ ամենայետին գիւղին մէջ իսկ դպրոցներ բանալ կուտար: Իգդիրմաւայի դպրոցին ուսուցիչ կը կարգուի նոյն գիւղէն, Նշան վարժապետը, որ Իգդիրի կեդրոնական դպրոցին մէջ ուսում առած էր, աշակերտելով վանեցի Նշանաւոր Սարգիս վարժապետին:

Դպրոցը, ինչպէս միշտ, եկեղեցիին բակին մէջն էր, որ շա՛տ տարբեր էր խալիֆայի դոմէն. «Ընդարձակ սրահ, լայն, լուսաւոր պատուհաններով ու յարմար նստարաններով: Ցեռոյ՝ աշակերտները գրելու համար ունէին իրենց քարէտախտակները: Նե մեր դաստատուն խալիֆայ չէր, այլ գրագէտ, եռանդուն մի երիտասարդ՝ իրապէս վարժապետ գէթ այն ժամանակի համար: Ծեծը կար դարձեալ, բայց՝ քանակով ու ապտակով. նոյնպէս խիստ մարդ էր»: Ոչ միայն աւետարանի լմաստը աշխարհաբարի կը թարգմանէին այդ դպրոցին մէջ, այլ աշակերտները կը սորվէին նաև թուաբանութիւն:

Ինը տարեկան է արդէն Ահարոնեան և ուշադիր իր շուրջն անցած դարձածին: Անիկա Նշան վարժապետին ձեռքը կը նշմարէ սովորականէն տարբեր գիրքեր ու հատորներ: Գրիգոր Արծրունիին *Մշակ* լրագիրը, ինչպէս նաև Աբգար Յովհաննէսեանի *Փորձ* ամսագիրը հոն կը տեսնէ առաջին անգամ: Այդ տարիքէն իսկ այն համոզումն ունի, թէ ճշմարիտ կարդացող մը ա՛յդ գիրքերն ու թերթերն է, որ պէտք է հասկնայ:

Եւ սակայն իրեն համար, ճակատագրական դէպք մը տեղի կ'ունենայ: Իր ընկերը Նիկօլ, տասներկու տարեկան, օր մը ծալլուած թուղթի կտոր մը կ'երկնցնէ Աւետիսին, պատուիրելով գոյ ընել ու պատռել, առանց որ և է մէկուն բան մը ըսելու: Այդ թուղթի կտորին վրայ ընդօրինակուած էր մեծ հայրենասէր, Մ. Նալբանտեանի *Ազատն Աստուած այն օրից* ոտանաւորը:

«Քանի Նիկօլը կարդում էր, կը գրէ Ս. Ահարոնեան իր մանկութեան յուշերուն մէջ, խորհուրդն էր փռւում իմ հոգու առաջ. կեանքի իմաստը ծածկող քանձր վարագոյրը յետ էր քաշւում ու ես տեսնում էի անծայրածիր, խորհրդաւոր հորիզոն. դարձեալ խաւար էր այդ հորիզոնը, բայց նա քաշւում, դիւթում էր ինձ, ինչպէս մի կախարդիչ լեգենդա: Երեք տարի է կարդում էի, և այժմ, միայն այժմ հասկացայ, որ կարդալ գիտեմ, գրերի գաղտնիքը գիտեմ: Կեանքն ահաւոր ճիչն էր, որ հոգուս մէջ արձագանգեց:»

Այդ մէկ երգը, որ մեզմէ ամէն մէկը իր մանկութենէն ի վեր բիւր անգամ կրկներ է, կը փոթորկէ ինը տարեկան դպրոցականին էութիւնը, և ազատութեան ու գեղեցկութեան պայքարին հաւատարիմ մարտիկը կը դարձնէ զինքը մինչև այսօր իսկ, երբ տարիներու բեռը շալկած, դրի կ'առնէ այս-

պէս իր ճանկռտքեան ու պատանեկութեան ա՛յնքան փայփայելի ու ա՛յնքան թանկագին յիշատակները։ Այդ յիշատակները մեզի համար եւս թանկագին են, որովհետեւ անոնք ժամանակաշրջանի մը մտայնութիւնը, սովորութիւն-ները, ըմբռնումներն ու բարքերը կը ներկայացնեն ա՛յնքան հարազատ կերպով։

Դպրոց կը յաճախէ Ահեւիսը, սակայն իր կարողութեան չափով կ՛օգնէ նաեւ իր եղբայրներուն աշխատանքին, չէ՞ որ գեղի տղայ է «չար ու կայտառ, ուշիմ ու լեզուանի»։ Ինչպէս իր բոլոր տարեկիցները, գիւղի աշ-խարհին մէջ, կը դառնայ իր իսկ տան հովիւը շատ անգամ։ Իր առջեւը ձգած, դէպի դաշտ ու արօտ կը քշէ կենդանիներու խումբը։ Ու հեշտ բան չէ գլուխ ելլել ու հպատակեցնել ձեռքի երկար ճպռտով, դանդաղ գոմէշ-ները, անհանգիստ կովերն ու երինջները, թեթեւաքայլ ու խենթուկ հոր-թուկը, ոչխարներն ու գառնուկները։ Ու անոնց ձեռքէն քաշած ու կրած չարչարանքը..., երբ բոլորը խօսք մէկ ըրածի պէս, կը ցրուին ճամբուն երկու կողմը գտնուող ցանուած արտերն ու առուոյտի դաշտերը։

Արտի ու այգիի աշխատանքներէն զատ, անիկա իրեն համար սիրական զբաղումներ ու խաղեր ունի։ Փորձիքներ ունի, ուրագ, սղոց, շաղափ ու դուր, որոնցմով կը շինէ նետարաններ ու աթոռներ։

Իր վրայ մեծ ներգործութիւն կ՛ունենայ ռուս – թրքական պատերազմը, 1877 – 1878ի թուականներուն, երբ ռուսական բանակը բազմաթիւ սպանե-րով կուգայ հաստատուիլ իր հայրենի գիւղին մէջ։ Սպաներուն շքանշան-ները, ուսադիրները, զէնքերն ու զարդերը, մէկ խօսքով զինուորական կար-գապահութիւնը իր ուշադրութիւնը կը գրաւեն. այդ օրէն կը հրաժարի քա-հանայ դառնալու այն փափաքէն, զոր կը տածէին իր ծնողքը։ Հեռաւոր այս ցանկութիւնը օր մը իրականացած տեսնելու համար էր, որ անոր մայրը մանուկ Ահարոնեանի քայլերը կանուխէն դէպ ի եկեղեցի կ՛ուղղէր, հոն կար-գացնել և երգել տալու համար շարականներ ու սաղմոսներ։ «Գրոց մարդ պիտի դառնայի, կ՛ըսէ անիկա, և պրոց մարդու ճամբան եկեղեցւոց պիտի անցնէր երկնային խորհուրդի և լոյսերի միջից։ Եւ երկիւղով էի գնում այդ կախարդական աշխարհը, որ բացւելու էր իմ առջեւ, որպէս հէքեաթային յակինթէ մի այր, լուսաւոր ու անեղը։»

Որքա՜ն հարազատ ու բնական է նկարագրութիւնը հոգեկան այն մեծ ու անյաղթելի պայքարին, որուն ենթարկուած ենք գրեթէ բոլորս ալ. «Ման-կական խաղ ու զբօսանքներ թողին ինձ. ախորժակս կորաւ, քունս՝ նոյնպէս, ժպիտ չունէի, էլ մանուկ չէի, այլ կեանքի մեծ դպտնիքը դիմագրաւող մի

յոգնած ճամբորդ, որ գնում է դէպի ճակատագրական ու կախարդիչ անյայտը։»

Երբ դպրոցի պարտականութիւնը լմնցներ, փոքրիկ Աւետիսը կը շտապէր հօրը դարբնոցը, ուր ժամերով կը սպասէր։ Իրեն համար մեծ հաճոյք էր հետեւիլ հօրը և եղբայրներուն ճիդերուն, որոնց շնորհիւ աշխատանքի գործիքներ երեւան կուգային։ Ինքն ալ կը փորձէ անցնիլ փքոցին ետեւը ու օգնել իր հօրը, և սակայն ամբողջ շաբաթ մը յոգնելէն յետոյ, երբ կը պատրաստուի երկուշաբթի վերսկսիլ դարբնոցին մէջ իրեն յանձնուած աշխատանքը, հայրը կ'ըսէ.

«— Զէ, բալա, կռանն ու փուքս քո բանը չեն, քոնը գիրքն է։»

* * *

1877 – 1878 ռուս – թրքական պատերազմը, ինչպէս ըսի, ճակատագրական նշանակութիւն կ'ունենայ անոր համար։ Կանուխէն կը ճանչնար բոլոր այն զարիք – զուրբաթները, խայեր, զգրար, մշակ ու թափառական քահանայ, որոնք թրքահայաստանի զուլումէն փախչելով, դէպի Դովկաս կ'անցնէին, հոն ցամաք հացի մը համար աշխատելով։ Պայազիտ, Ալաշկերտ, Մուշ, Վան ու Վասպուրական, Կարին ու Բալէշ, իբրև գաղթավարներ կը խառնուէին անոր գլխուն մէջ։ Ճակատին ամէնէն պարզ հասկացողութիւնն իսկ չունէր։ Բայց «այս մարդիկ ինձ համար, կը գրէ, միշտ գերող մի գաղտնիք ունէին, մի անբացատրելի խռովք, որովհետև «էն աշխարհից» էին գալիս, սահմանի մեւս կողմից»։

Խորունկ ու անորոշ տրտմութիւն մը կը ծաւալի անոր հոգիին մէջ ապրելով այդ «մղձաւանջը», երբ մանաւանդ պատերազմին հետեւանքով «Բարդողեան ձեռնաշղթայի լանջերից պղտոր հեղեղի պէս յաւը ծփանք տւեց և գաւառը ալողեց»։

Գաղթականներու այս հոսանքը, որմէ մէջ հայրենի երկրի բոլոր ներկայացուցիչները կային, շա՛տ խորունկ ու անջնջելի ազդեցութիւն թողուց ինք – տասը տարեկան պատանիի հոգիին վրայ։ Անոր առաջին պատմուածքներն ու արձակ էջերը այդ շրջանի ապրումներուն անմիջական հետեւանքն են։ Եթէ Ահարոնեան չի տեսներ այդ իրականութիւնը, տալով մեզի գեղարուեստական էջեր, կեանքը ինքը պէտք էր ծնունդ տար ուրիշ Ահա-

ըռնեանի մը, անոր մատներուն մէջ դնելով գրիչ մը, մեր անօրինակ տա-
ռապանքն ու ցաւը երգելու համար։

Նուաղ տպաւորիչ չեղաւ նաև մանուկ Ահարոնեանի համար, ռուս –
թրքական պատերազմին ու նահանջին յաջորդող խաղաղ ու շինարար ժողո-
վուրդին խուճապահար փախուստը։ Փախստականներուն մէջն է նաև ապա-
գայ գրագէտը, որ կը կորսնցնէ նոյն իսկ իր մայրը. «Ձեի լալիս, կը գրէ,
այլ ճչում էի սրտապատառ. անհնարին է նկարագրել յանկարծակի անգղի
պէս գլխիդ նստած ողբութիւնը, երբ փոքր ես, ու ոտաբոբիկ, գլխաբաց, վա-
զում ես, չը գիտես ուր, և անկարեկիր, ուշակորոյս, խուժանը քեզ տրորում
է, աջ ու ձախ շպրտում ու անցնում։»

Տասներկու տարեկան է Ալեոիս Ահարոնեան, երբ կը կորսնցնէ իր
հայրը, ամէնուն սիրելի վարպետ դարբինը։ Հօրը մահով, անիկա կը զգայ որ-
քութեան ու մենակութեան ցաւը, ու կ'իյնայ մօրը գիրկը, իբրև միակ նե-
ցուկ ու զօրավիդ...։

* * *

Ալեոիս Ահարոնեանի մանկութեան մասին, մինչև իր տասներկու տա-
րեկանին մէջ թեւակոխելը, ինչպէս տեսանք, կարելի եղաւ քով քովի բերել
բաւականաչափ ճանաթութիւններ, անոր գիտակցութեան առաջին տարիները,
իր միջավայրը, և ընտանեկան պարագաները յատկանշող։ Պատանեկութեան
մասին, դժբախտաբար առայժմ բաւականաչափ կենսագրական ճանաթութիւն-
ներ կը պակսին. նոյնը նաև ամէնէն վաւերուն ու կեանքոտ շրջանին, երի-
տասարդութեան մասին։ Նէ սակայն այն քիչը, որ կայ արձանագրուած հոս
ու հոն, պիտի բաւէ, կը խորհիմ, կազմելու անոր յետագայ տարիներու կեն-
սագրական ամէնէն կարեւոր տեղեկութիւնները։

Նախնական ուսումը, ինչպէս տեսանք առաւ անիկա Իգդիրի հայկական
ժողովրդական դպրոցին մէջ, իսկ երկրորդական ուսումը լրացուց էջ-
միածնի Գէորգեան Ճեմարանը, ուրկէ շրջանաւարտ կ'ըլլայ 1885 թուին, երբ
քսան տարեկան է։

Հազիւ թէ կ'աւարտէ Գէորգեան Ճեմարանը, երբ ուսուցչութեան պաշ-
տօնի կը կոչուի իր հայրենի գիւղը, ուր կը պաշտօնավարէ վեց տարիներ։
Դրթական – մանկավարժական նմանօրինակ պաշտօններ կը վարէ նաև Նոր –
Պայազիտի և Գէորգեան Ճեմարանի մէջ մեկ մեկ տարի, մինչև 1898։

Այդ թուականներուն կը զուգադիպի կովկասահայ դպրոցներու երկրորդ
անգամ փակումը, կառավարութեան հրամանով։

Ուսուցչական պաշտօնը ընդհատելէն յետոյ, Ահարոնեան Եւրոպա կը մեկնի 1898ին ու նախապէս Լօզանի, յետոյ Փարիզի մէջ, մինչեւ 1903 թուականը, կը հետեւի Սօրպոնի համալսարանական դասընթացքներուն, գրականութեան, փիլիսոփայութեան ու պատմութեան մէջ բազմակողմանի հմտութիւն ձեռք բերելով։

Համալսարանական հինգամեայ շրջանէն յետոյ, կը վերադառնայ Կովկաս ու կը մտնէ հանրածանօթ *Մուրճ* ամսագրի խմբագրական կազմին մէջ, ղոր կը վարէ գրեթէ երեք տարի։ 1906էն սկսեալ վարած է նաեւ *Ցառաջ*, *Ալիք*, *Զանգ* և իրարու յաջորդող նման թերթերու խմբագրութիւնը։ Երկու տարի անընդհատ վարած է Թիֆլիսի Ներսէսեան վարժարանի տեսչութիւնը, մինչեւ 1909 թուականները, երբ նոյն տարին կովկասահայ մտաւորականներուն հետ ձերբակալուելով, գրեթէ երկու տարի կը մնայ Մետեխի բանտին մէջ, ուուս կառավարութեան կողմէ ամբաստանուած ըլլալով, որ ոչ միայն համիտեան բռնութիւններուն դէմ՝ այլ հայ ցեղի ճօտալուտ ազատագրութեան համար գրականութիւն կ'ընէր։

Ուրիշ կարեւոր պատճառ մըն ալ հետեւեալը կը նկատուէր։ 1907ին, Լահէի խորհրդաժողովին առջեւ հայկական հարցը ներկայացնելու և եւրոպական պետութիւններու համակրութիւնը շրաւիրելու համար, Թրիմեան Կաթողիկոսին կողմէ, իբրեւ հայկական պատուիրակ կը ներկայանար Եւրոպա. իրեն ուժ կուտար այս առթիւ մեզի բարեկամ Ֆրանսացիներու պատուիրակութիւնը, բաղկացած Անաթոլ Ֆրանսէ, Վիքթոր Պերարէ, Փրէսանսէէ և Փիէռ Քիլեարէ։

Այս առթիւ էր, որ 1910 Մարտ 1ին, քառասունէ աւելի Թրքահայ ծանօթ գրագէտներ խնդրագիր մը ուղղեցին Դուրեան պատրիարքին, Իզմիրլեան Կաթողիկոսին միջոցաւ ղինքը բանտէն ազատելու համար։ Ծանօթ է անշուշտ, որ այդ խնդրագիրը ոչ մեկ գործնական օգուտ ունեցաւ։ Անիկա արձակուեցաւ բանտէն 20,000 րուպլի երաշխաւորութեամբ միայն, 24 Փետր. 1911ին, և անցնելով Կարինէն ու Տրապիզոնէն, եկաւ Պոլիս ու անկէ Եւրոպա։ Թրքահայասանէն կրած իր տպաւորութիւններն էին, որ կազմեցին *Երազներիս աշխարհը* խորագրով յօդուածներու շարքը, հրատարակուած *Ազատամարտի* մէջ։

Գրեթէ հինգ տարի, Եւրոպայի մէջ աքսորականի մը կեանքը ապրած է ան, մինչեւ ընդհանուր պատերազմ, երբ ուուս կառավարութեան թոյլտուութեամբ, Ահարոնեան վերադարձաւ Կովկաս։ Այդ թուականէն յետոյ է մաս-

նաւորաբար, որ իր մէջ երեւան կուգայ քաղաքական մարդը, ժամանակի մը համար ականաւոր հրաժարելով իր սիրած գրականութենէն։

Թիֆլիսի մէջ կը կազմուի Կովկասի Հայոց Ազգային Խորհուրդը 1917ին, որուն նախագահ կ'ընտրուի եւ զոր կը վարէ մինչեւ 1918 թուականը, երբ կազմուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը։ Թուրքերուն հետ բանակցելու համար, նոյն թուին, Հայաստանի նորակազմ հանրապետութեան կառավարութեան կողմէ իբրեւ նախագահ պատուիրակութեան մը, կը մեկնի Պոլիս։ Իսկ զինադադարէն յետոյ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահն է դարձեալ, որ կը ներկայանայ Փարիզ, հաշտութեան վեհաժողովին։ 1920ին իբրեւ նախագահ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան, կը ստորագրէ Սեվրի դաշնագիրը։

Այն թուականներուն, որ իր հայրենի գիւղին մէջ ուսուցչութեան պաշտօն կը վարէր, շատ մօտէն շփման մէջ կը գտնուէր այն գաղթականութեան հետ, որ 1895 – 1896ի կոտորածներէն հալիւ ազատած, ինքզինքը ղէպի Կովկաս կը նետէր, ու ամէնէն առաջ սահմանագլուխին վրայ գտնուող Իգդիր գիւղաքաղաքը։ Ինքը անդամներէն մէկն էր, այն յանձնախումբին, որուն պաշտօնն էր հասնող գաղթականները պատսպարել ու խնամել։ Այս հանգամանքն իսկ պիտի բաւէր, որ անոնց մօտէն ու գիտակցօրէն շփուէր հայկական տառապանքին ու զայրոյթին հետ։ Այդ օրէն կը սկսէր գրել իր թղթակցութիւններն ու գրուածքները *Մշակին* մէջ, մասնաւորաբար իր աչքերուն առջեւ յայտնուող մերկ իրականութենէն, յուզիչ տեսարաններ ու պատկերներ, որոնց մէջ երեւան կուգային վիպագրի որոշ արժանիքներ։

Անկէ յետոյ է, որ *Մշակ*ի մէջ լոյս կը տեսնեն անոր գրական – գեղարուեստական առաջին գրուածքները, 1896էն սկսեալ, *Պուտ ըմ կաթ*, *Փշուր ըմ խաց*, *Բաշօն*, *Մայրերը*, *Խաւարե՛ս լուսին եւայլն*, որոնք յետոյ *Պատկերներ* վերնագրով եւ առանձին հատորով լոյս տեսան։

Ու հատորները կը յաջորդեն իրարու։

1895 – 1896ի հայկական կոտորածները տակաւին տեղի չունեցած, դրեթէ երկու տարի առաջ, 1894ին է, որ իր ուսուցչական տարիներուն, Հայաստանէն տխուր ու դժբախտ լուրեր առնելով, Ահարոնեան *Մշակի* ուղղած իր թղթակցութիւններուն մէջ, որոնք «Լուրեր սահմանի միւս կողմէն» վերնագիրը կը կրէին, ահազանգը կը հնչեցնէր գալիք սարսափներուն համար։ Ու տահայ հասարակութեան աչքը կը բանար այն վտանգներուն առջեւ, որոնք կը սպառնային Թրքահայերուն։

Նոյն թուականներուն Իգդիրի մէջ, Ահարոնեանի բնակարանը խուզար-

կութեան կ'ենթարկուի, որուն հետեւանքով, երեք տարի շարունակ ղինուորական հսկողութեան տակ կը մնայ։ Գիւղական ուսուցչի համեստ պաշտօնը կը վարէ մինչեւ 1898 թուականը։ Կէս բանտարկուածի այդ շրջանը անցնելէն յետոյ, երբ Թիֆլիս կը մեկնի, հո՛ն է որ առաջին անգամ կը հանդիպի Բրիստափոր Միքայէլեանի, որուն ներդործութիւնը, մանաւանդ յետագայ տարիներուն, Ահարոնեանի վրայ ճակատագրական նշանակութիւն կ'ունենայ։ Ժրնեւի մէջ կը կապուի Բրիստափորին ու Դրօշակ թերթին, որուն մէջ իրարու ետեւէ լոյս կը տեսնեն իր ա՛նքան ինքնատիպ ու սիրուն պատմուածքները։ Ու երբ Փարիզի մէջ հիմը կը դրուի Pro Arménia-ին, հայկական շահերուն ու հարցին նուիրուած թերթին, Ահարոնեան կը զործակցի Բրիստափորին։ (Յանօթ է անշուշտ, որ այս թերթը լոյս տեսաւ Փիէռ Քիյեարի խմբագրութեամբ, դիւաւոր աշխատակից ունենալով, Քլէմանսօ, Ժան – Ժօրէս, տը Քրէսանէ, Տրնի Քօշէն և Անաթօլ – Ֆրանս)։

1887 Ապրիլ 26ին Թիֆլիսի Արձագանգ շաբաթաթերթին մէջն է, որ առաջին անգամ լոյս կը տեսնէ իր մեկ յօդուածը Արաքսի յորդումը վերնագրով։ Անկէ յետոյ առանց ընդհատելու, ահաւասիկ քառասուն և երկու տարիներէ ի վեր կը շարունակէ իր զրական ու հրապարակագրական առաքելութիւնը ծերնին պէս խիստ աննպաստ միջավայրի մը մէջ։

* * *

Այն օրէն ի վեր, որ անակնկալ հարուած մը, իր աչքերուն լոյսը մարել կը փորձէր, տեսակ մը թախիծ բոյն կը դնէր իր հոգիին մէջ, և առաջին անգամը ըլլալով թերեւս, կը զգար ներկայութիւնը խաւարին տիրապետութեան, որմէ ա՛նքան երկիւղ զգայ, և որուն վերագրեց անբացատրելի չարիքներուն պատճառը։ Անիկա յաղթեց անոր։ Առաւօտ և երեկոյ, մեր հայրենական արեւէն լո՛յս պահանջեց, որպէս զի գեղեցկութեան յաւիտենական ուխտաւորը ճամբան չի մնայ և իրիկուն չեղած՝ օթեւան հասնի...։

Որովհետև իր միտքը կը գործէր տակաւին, և հոգիին աճենատես աչքերը իրենց պաշտօնը վերջացած չէին նկատեր։ Ա՛նքան գործեր կային լոյսին բերելիք։ Ա՛նքան ուխտարներ, որոնք մարմին պիտի առնէին։ Ա՛ճապառիլ պէտք էր։ Պէտք էր ճեղուներու պէս, հովին ու փոթորիկին նայնիսկ, հեւանալ, բարձրանալ աւելի վեր, շրջան ընել կանաչներուն ու ծաղիկներուն շուրջ, պատիլ, կապտութիլ, և բեմնափոշի հաւաքելով, վերադառնալ տուն, առեղծապարծ փոշին խնորել, կեանք տալ անոր եւ լեցնել բջիջ-

ներուն մէջ։ Այս եղեր էր արուեստագէտին կեանքը երկա՛ր տարիներ, այս-պէս ալ պէ՛տք էր շարունակուեր...։

Գարնանային կէսօրէ մը յետոյ վինքը կը գտնէի Rue de Passyի իր յար-կաբաժնին, լուսաւոր ու օդաւէտ աշխատասենեակին մէջ, որուն պատուհանը կը բացուի Փարիզի համայնապատկերին վրայ, մշուշի ու ստուերի մէջ կորսուած։

Գրասեղանը ծանրաբեռնուած էր վերածնունդի մեծ վարպետներուն հա-տորներով, ինչպէս նաև ձեռագիրներու բազմաթիւ թերթերով, որոնք՝ հոգիի ու միտքի տաժանքէն աւելի, աչքերու և մատներու տաժանքին հետքերը կը կրէին։

Պատուհանին քով, պատին առջև զետեղուած էր համեստ գրադարան մը, որուն մէջ շարուած էին իր միտքին զաւակները։

Ուրախութեամբ կը դիտեմ սակայն որ վերջին տագնապը շա՛տ քիչ չա-փով ազդեր է վաստակաւոր գրագէտին վրայ. անիկա կը պահէր միշտ իր երիտասարդական կորովն ու հաւատքը, այնպէս ինչպէս իր բովանդակ գրա-կանութեան մէջ։ Առոյգ պէմքը կը մատնէր սակայն իր մտածումին դրոշմը, կեանքի և իրերուն ու անոնց պատճառներուն քննութեամբը ազնուացած ու խորացած։ Կենսունակութեան մը ճառագայթը տակաւին կը յամենար հոն, որ այդ տարիքը հասնող մեր շատ քիչ արուեստագէտներուն վիճակուեցաւ։ Այդ կենսունակութեան ակը արդիւնքն է անշուշտ արուեստի ու գրականու-թեան նկատմամբ իր ունեցած ըմբռնումներուն ու հաւատքին։

Աւելի քան ջերմ հաւատքով կը խօսէր մեր գրականութեան նորագոյն արժէքներուն մասին։ Երանութեամբ կը յիշէր անցած օրերը, երբ, սկսնակ գրող, այն ատենուան մեծերէն համակրանքով կը ճանչցուէր։ Կը պատմէր իր հանդիպումը Վ. Աղաեանին, երբ վրայ կը հասնէր նաև «Նոր Դար»ական Պերճ Պուօշեան, կը յիշէր այս վերջինին քաջալերական խօսքերը, ուղղուած իրեն, քանի որ ինքն ալ մէկն էր այն գրողներէն, որոնք մեր ազգային գրականու-թեան վառուած ջահը ամուր կը բռնէին իրենց ձեռքին մէջ, գայն յաջորդ սերունդներուն փոխանցելու համար. ինք «Մշակ»ական էր, բայց Պուօշեան կը գրկէր վինքը ու համբուրելով, կ'ըսէր.

«Թող օրհնուի Հայոց Աշխարհը և իր բեղմնաւոր ժողովուրդը որ մեղ ծերերուս փոխարինելու համար, կը ծնի աւելի կայտառներ, կը ծնի աւելի ուժեղներ։ Թող օրհնուի Հայոց Աշխարհը, որ այնքան զարհուրելի ու անողորմ կայծակներէն յետոյ, ահա կը կանաչի նորէն։ Ճղակոտոր կաղնին ահա կը վերընձիւղի նորէն»։

Նոյն այս խօսքերն էր, զոր իր կարգին կը կրկնէր նոր գրողներուն, որոնք սրուեստի ու գրականութեան ջահը կը վերցնեն, վառ կը պահեն, զայն յանձնելու համար վաղը եկողներուն։

Որովհետև ջերմօրէն կը հաւատայ, որ սրբան կայինը գրականութեան անտառը մտնէ ու հինաւուրց կաղնիները գետին տապալէ, անոնց արմատները հողին մէջ տարածուն, հայ արեւին ջերմութեամբ, հայ հողին պաղատու և արդասաբեր նիւթովը կրկին պիտի կանչեան, ճիւղեր պիտի արձակեն, նոր ծաղիկ ու նոր պտուղ պիտի տան, բարձրացող ծառերու տուներներուն տակ նոր խոտեր ու ծաղիկներ պիտի ուռճանան, և այսպէս շարունակաբար, քանի որ մեր բազմադարեան յեղը իր էութեանը խորն իսկ կը պահէ գաղտնիքը յաւերեակական գեղեցկութիւններուն, երիտասարդացման ու վերանորոգման...։

Իր գրական գործունէութեան քառասնամեակը, որ կը տօնուի ամէն ուր որ հայուն սիրտը կը բաբախէ, համաժողովրդական արտայայտութեան թանկագին տուրք մըն է իր արժանաւոր արուեստագէտին, ժողովրդական անխոնջ գործիչին ու լաւատես մտածողին, որ հայ ժողովուրդին արդար գատին համար տքնեցաւ, անոր հոգին ցոլացուց ու անոր սիրտը բիւրեղացուց գրական բազմակողմանի ստեղծագործութեան մը մէջ։

Անոր՝ տակաւին պայծառ ու յստակ աչքերուն խորը արձանացած տեսայ հայուն հոգին ու սիրտը, հայ բնութիւնը՝ իր այլազան պատկերներով, ու մանաւանդ՝ ճանչցայ հայկական բարեխառն թախիծը, բնութեան հարուածներուն հանդէպ ղգայուն խորո՛ւնկ արհամարհանքը, և մարդկային տառապանքին առջև իր տկարութիւնը ղգացողի անբացատրելի վիշտը...։

.....

ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՒ ԱԶԴԱԿՆԵՐ

ՆԿԱՐԱԳՐԻ ԳԻԾԵՐ.— ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— ՀԱՅ ԳԻՒՂԸ.— ՀԱՅՐԵՆԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ.— ԸՆՏԱՆԻՔԸ.— ՕՏԱՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ.— ՌԱՖՖԻ.— ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ:

Մարդ մը իր լաւագոյն ուժերը հայրենի հողէն կը ծծէ, ինչպէս ծառն իր հիւթը՝ խոր արմատներէն:

ԻՊՍԷՆ-ՓՐԱՆՑ

Ակարոնեան նկարագրի բացառիկ գիծեր ունեցեր է, մանկական տարիներուն իսկ: Ապագայ կարելիութիւնները շատ անգամ անմեղութեան շրջանին կը յայտնուին, ու չեն վրիպիր ճնողներու ուշադրութենէն:

Այն ինչ որ կը պատմէ մեզի Ակարոնեան, տարիներ յետոյ, իր մանկական տարիներու ապրումներէն, եթէ երբեք երեւակայութիւնը իր դերը կը կատարէ, անուրանալի է, որ հոն յիշատակ շատ մը գիծերը, իրեն հետ մեծցեր, ձեւ ու գոյն ստացեր են, դառնալով իր անհատականութեան ու գրականութեան հիմնական տարրերը: Մեզի համար, հետեւաբար, անոնք թանկագին են, և որոնցմով պիտի փորձենք գծել Ակարոնեանի մանկական եւ պատանեկան տարիներուն կեանքը եւ նկարագրի այն գիծերը, որոնք իր ստեղծագործութեան մէջ ա՛յնքան աչքառու կերպով կը յայտնուին:

*
* *

Նախ խաղընկերներու շրջանակը:

Անիկա կը սիրէ խաղալ իր ազգականին, իրմէ վեց տարի աւելի մեծ Զարոյին հետ. կը սիրէ ու կը խաղայ անոր հետ մանկական անմեղութեամբ:

Եւ սակայն Զարօն հարս տանիլ կ'ուզէն, իրմէն, ու իր ընկերութենէն բաժնել կ'ուզէն։ Այդ օրը անհուն տրտմութիւն մը կը զգայ. սիրուածէն բաժնուելու զգացումը բոյն կը դնէ իր մէջ. «Զգում էի, կը գրէ, որ Զարօին խլում են ինձնից. ո՞րը, ա՞յս թէ այն գոմէշը — այդ չէր կարեւորը, այլ այն, որ Զարօին տանում են։»

Անիկա տխուր է, որովհետեւ այլեւս չի պիտի վազվզեն ծառերուն տակ, պտուղներ չի պիտի հաւաքեն մխասին, ու չի պիտի լողան։ Բնազդը կը խօսի իր մէջ, որ մէկը չարիք պիտի ընէ Զարոյին։

Ծասը տարեկան է, եւ անիրաւութեան դէմ ըմբոստ հոգի մը ունի։ Ուրբաթ օր մը պանիր ուտելուն համար, «Աստծու դրած օրէնք»ին դէմ գործելուն համար, երբ հայրը կ'ապտակէ, անիկա կը փախչի դէպի դաշտ, հայրն ու եղբայրները մատնելով մեծ մտահոգութեան։

Վրէժխնդիր է ան. դրացի Պետրոսէն կերած ապտակն ալ չի մոռնար դիւրութեամբ, եւ իր վրէժը լուծելու համար, երեք օր լրտեսելէ յետոյ, երբ «բարձրահասակ, բարձրավիզ, հեզ ու մխամիտ դէմքով, երկար, շատ երկար ոտներով, բարակ իրանով, լաւ եւ անուշ Պետրոսը» կ'անցնի,քարն է, որ կը թռի ու կը զարնուի անոր գլխուն...։

Ահարոնեան ըմբոստ է եւ վրէժխնդիր, որովհետեւ «հրեշտակների մէջ, կը գրէ, Գաբրիէլն եմ սիրել իր բոցեղէն սրի համար, եւ մեր հսկայ Արտաւազդին, որ այս անիրաւ ու մեղաւոր աշխարհը պիտի սրբի մի օր...։»

Ոչ միայն գեղեցիկը պաշտեր է պզտիկ տարիքէն, այլ նաեւ սիրեր է արիութեան ու քաջութեան բոլոր գործերը. հերոսներուն հանդէպ պաշտամունք զգացեր է. քաջութիւն, գեղեցկութիւն եւ ըմբոստութեան ոգի, այս երեք աստուածութիւնները իր հոգիին մէջ պարփակեր է, ու մինչեւ այսօր անոնց երկրպագուն է մնացեր։ Մանկական տարիներու շա՜տ որոշ ու տպաւորիչ զգայնութիւնները իրեն հետ մեծցեր են, մինչեւ այն պահը, երբ ան կրցեր է անոնց տալ կենդանի արտայայտութիւն, գեղարուեստական տպաւորիչ ու բովանդակութիւն։

Մայրական հերոսական էքթեաները վառ հետաքրքրութեամբ մտիկ ըներ, ու անոնց ոգիով մեծցեր է, հաւատացած ըլլալով, որ «քաղաքակրթութիւնն առանց հերոսութեան մեղկութիւն է, հերոսութիւնն առանց քաղաքակրթութեան վայրենութիւն։ կատարեալ ազգը քաղաքակիրթ պիտի լինի եւ հերոսական միաժամանակ։ Վա՜յ այն ազգին՝ որ մեռնիլ ու մեռցնել չի գիտէ մի վսեմ գաղափարի համար։»

Ծասը տարեկան է, եւ արդէն մխքը գործել կը սկսի, հոգին թեւեր

կ'առնէ, գիւղական աշխարհէն հեռանալու համար։ կ'ատէ գիւղը, իր խեղճութեան, իր «անճայր ու բթամիտ հնապանդութեան համար», երբ մարդիկ չեն կրնար բողոքել անարդարութիւններու դէմ, երբ չեն կրնար իրենց վրայ բարձրացող ձեռքերու հարուածն արգիլել։

Պէտք չի կայ փնտռելու պատճառը այն խորունկ ներգործութեան, որ *մարդկային աշխատանքը, արդար վաստակը, և ճակտի քրտինքը* շատ կանուխէն գրաւեր են ապագայ գրագէտին ուշադրութիւնը։ Կը բաւէ յիշել, որ անոր հայրը արհեստով գարբին էր, ու սիրուած, հեղինակաւոր դարբին։ Կը բաւէ յիշել, որ անիկա ժամերով ու օրերով լսեր է աշխատանքի բազմաձեւ օրօրը, այն աշխատանքին, որ տարուան գրեթէ բոլոր եղանակներուն, առաւօտէն մինչեւ երեկոյ բաժինն է եղեր բոլոր գիւղացիներուն ու մանաւանդ իր ընտանիքին, որուն ամէն մէկ անդամը, լարուած մեքենայի մը կանոնաւորութեամբ ստիպուած էր իր դերը կատարել։ Նախ դարբնոցին աշխատանքի օրօրը, յետոյ կալին ու արտին, այդիին ու պարտէզին, ինչպէս նաեւ իր մօրը ընտանեկան աշխատանքները։ Այս բոլորը անոր մանկութիւնը օրօրեր են, եւ ինքը, բնականէն արթուն ու հետաքրքիր տղայ, սիրեր է ո՛չ միայն աշխատութեան այս այլազան ձեւերը, այլ նաեւ աշխատաւորները, որոնցմէ ամէն մէկը ընդուներ է իբրեւ իր հայրը, կամ եղբայրները, արեւին դէմ, հովին ու փոթորիկին դիմաց, դարբնոցին հրաշէկ կրակին առջեւ, եւ կամ չրալացի երկանաքարին քովիկը։ Այս է եղեր պատճառը, որ Ահարոնեանի գրականութիւնը *Արդար աշխատանքին, Հալալ վաստակին* ու *Օրհնուած քրտինքին* ներբողին նուիրուած բազմաթիւ էջեր կը պարունակէ։

Աշխատանքին օրհնութիւնը իր կուրծքէն խլեր է ոչ միայն գոհունակութեան ճիչը, այլ նաեւ բողոքի ցասկոտ աղաղակ. կը յիշէ իր գիւղը, «ուր արդար, առաքինի, խաւար մարդիկ տաժանակիրներու պէս համր ու հնազանդ քաշում են իրենց բաղդի ծանր անիւը. ուր ճռնչում էր հինաւուրց յանկերգը՝ «Օրհնուած աշխատանք»։ Անիկա ամէնէն մեծ անէծքը կը նկատէ աստուածային ծանօթ պատգամը «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո»։

*
* *

Ահարոնեանի գրականութեան ամէնէն նշանակելի ու կարեւոր մէկ մասը արդիւնքն է անոր անմիջական ապրումին ու շփումին, զոր ան ունեցաւ

դէպի կովկաս ապաստանող, ուրէ եւ հուրէ փախչող բազմահազար գաղթականներուն հետ: Անիկա չէր կրնար դաւաճանել իր կոչումին, այդ անհո՜ւն տառապանքին ու ահաւոր պատկերներուն առջեւ կեանքի ուրի՛շ գեղեցկութիւններ ու եսասէրի հաճոյքներ երգելու, արուեստի տաճարին մէջ կղզիանալու, եւ դիւային քրքիջով մը հեգնելու համար համատարած թշուառութիւնը:

Իր գրականութեան այդ թանկագին գլուխը գնահատելու եւ մեր իրականութիւնը պատկերացնելու համար, առանց ո և է խորհրդածութեան, միասին կարդանք հետեւեալ քանի մը պարբերութիւնները, առնուած Իմ Գիրքը էն.

«Ալաշկերտի չարաբաստիկ Հայութիւնն էր սրի քաշուած թուրք եւ քիւրտ մարդասպաններէ ձեռքով: Բայազիտ, Թօրուն, Մօսուն, Ջուջան, դէպի Բագրեւանդի Ս. Յովհաննէսը, դէպի Բասէնի արդար ու յուրթի դաշտը, դէպի Թոփրագկալէ եւ Ղարաքիլիսայ եւ աւելի հեռուները, ամբողջ այդ սահմանամերձ գօտին թիւրք կառավարութիւնը քաղաքական նպատակներով յանձնել էր վայրագ ու արիւնարբու իր խուժանների կատաղութեանը: Հայրիւրաւոր շէն, բարգաւաճ գիւղեր քարուքանդ էին արուած ու ծոխորի վերածուած.

«Ու օրերով, շաբաթներով, ամիսներով գալիս էին գուլումից ծաղապուրծ բեկորները, դողդոջուն ծանուկներ, այծեամներէ պէս խրտնած աղջիկներ, երկու տակ ծալած ծերեր ու պառաւներ, որ մրմնջում էին այլեւս անիմաստ պարձած աղօթքներ, իրենց պատիւը հայրերի նախրական ձի՛ւնի պէս գրկած մատաղ հարսներ թանձր քօղը երեսներին, խոշտանգուած, վիրաւոր տղամարդիկ:

«Ու խմբերով, հատ-հատ, ընտանիքներով, ուշակորոյս մարդկանց այս բազմութիւնը սար ու ձորով, քար ու ժայռով, ինչպէս կենդանի ու փրփրուն ցաւի յորձանք, թափւում էր մեր գիւղերը: Գոմ ու մարագ, աւեր ու շէնների մէջ ծաւրում էին, ով ինչպէս կարող էր:

«Ծարիներից ի վեր գղրարների, վռշիկների, բոլոր ղարիբների հառաչանքն էր, որ հողմի պէս մեր դուռն էր ծեծում այժմ: Մանուկ հոգիս էր սրթսրթում այս գուլումի թեւերի շրշիւնից:

«Տառապանքի ծեծութիւնը նրանց պարձնում էր ծեղնից քարձր էակներ, նրանց լացը աւելի խորունկ էր և նւաղած մի կէտի սեւեռած նրանց հայեացքը, ղէմքերի գալկութիւնը, նրանց անձար վշվշոցը ինչ որ անդրշիրիմեան բան ունէր, սարսռազդեցիկ ու ահաւոր: Ձեռքը ծոցը ու գլխակոր*

թափառող այս բազմութիւնը աշխարհում մոլորած ու անծանօթ ճամբաները փնտռող հոգիներ լինէին ասես, որ լուռ ապերասում էին մի գիշերւայ ապաստան։»

Այս պատկերին դիմաց, ինքը դպրոցական մանուկ, բնազդով արցունք կը թափէ, կը զգայ որ այդ մարդիկն ալ իր ծնողքին, քոյրերուն ու եղբայրներուն կը նմանին, կը խօսին իր լեզուով, կ'ապօթեն, եկեղեցի կ'երթան ու կուլան իրեն պէս...։

Այդ օրէն ճակատագիրը իր դրոշմը կը դնէ ապագայ մեծ կարելիութիւններու համար։

Անիկա կը յիշէ մանաւանդ պատերազմներուն հետ կապուած անխուսափելի փախստը, ուրիշ խօսքով *փախի* տարին, կը յիշէ մարդկային հոգիներուն սարսափն ու երկիւղը, մութ ու խորունկ, «վատակող, արդար մարդկանց անճար սուգը իրենց մի կտոր հացի, իրենց բոյնի, օճաղի համար։»

Անկէ աւելի մարդկային ու իրական, ի՞նչ կ'ուզէիք, որ երգեր զգայուն բանաստեղծը։ Ո՞ր իրապաշտ գրողը, պիտի ուզէր, պիտի փորձէր խափանել զգայութիւններու այն հոսանքը, որ անխուսափելիօրէն պիտի յորդէր, տեսնելով ու վերյիշելով այս դժոխային պատկերները, որոնք կրկնուեցան և կրկնուեցան մեր դժբախտ հայրենիքին մէջ, եւ որոնց զոհ պարձաւ մեր մարտիրոս ժողովուրդը։

«Զարդ էր... Ու փախն սկսաւ, կը գրէ Ահարոնեան մանկութեան նուիրուած իր հատորին մէջ. հնձած ցորենը փռւած մնայ արտում։ Գութանն ակօսում, նախիրը անտէր նորէն ցրւեց դաշտերում բառաչելով, լծած անասունները կալերում փնչացնելով մնացին խայտի վրայ. թռչիրը վառ մնայ, խլթխլթան կերակուրը վրան. հունցած խմորը տաշտի մէջ ու մերը մանուկն ուրացաւ։ Փա՜ռ էր... Դիւական ձեռքի մի շարժումով աշխատանքի հրաշակերտ մեքենան յանկարծ կանգ առաւ ու սկսաւ խելայեղ, վայրենի, անասնական վազքը փոշոտ, կրակոտ ճամբաներով, յուլխեան կիզիչ արեւի տակ։»

Այս պատկերին առջեւ կ'ուզէիք, որ զգայուն սիրտը լուէր, ու իր գրիչը նուիրէր երեւակայական ու անիրական վէպերուն, երբ իրական ու բաբախուն հեքեաթը կը կաղմուէր մեր հարազատներուն տառապներովը, արիւնովն ու լաց ու կոծովը...։

Մանուկ Ահարոնեան կը մեծնայ ու հասակ կը նետէ այսպէս, զօրաւոր ներգործութիւններու տակ, որոնք կը պարբերեն անոր նկարագրին քանի մը աչքառու եւ շեշտուած գիծերը։

Քաջասիրտ, յանդուգն ու աներկիւղ մօր մը, եւ բնազդով հնազանդ ու աւաքչին, նոյնիսկ բռնատիրներուն անարդարութիւններուն առջեւ լռելու յօժարակամութիւնն ունեցող հօր մը ձեռքին տակ, ու անոնց տուներին մէջ խաղցող պատանին, շատ կանուխէն կը տեսնէ ու կը զգայ աշխարհի անարդարութիւնն ու անիրաւ ուժովին տիրապետութիւնը։ Անկարելի էր, որ յետագային իր գրական գործունէութեան բովանդակ ընթացքին, անիկա չառաջնորդուեր այն տպաւորութիւններով, որոնք ներգործեր էին անոր մանուկ հոգիին վրայ, ու անկարելի էր, որ անիկա չի դառնար այդ կերպով մէկը, եւ առաջնակարգը ընդդէմ անարդարութեան, անիրաւութեան, տարկուսութեան ու բռնութեան դէմ ճառագող, եւ որուն գրականութեան յատկանիշը մնաց, բոլոքն ու ցասումը յանուն անիրաւուած մեր ցեղին, եւ որուն համար վշտի երգիչ տիտղոսը տակաւ բացատրութիւն մը պիտի մնայ այն միւս աշխատանքին քով, որով անիկա յաւերժացուց իր ստեղծագործութիւնը։

Անիկա աշուղի մը պէս, որ իր սազը գրկեր է ու կը թափառի աւերակներուն մէջ, կ'երգէ.

«Թօսիր քնար... արար-աշխարհ Թէ լուի,
ցաւի, արեան, ու սարսափի լուռ ծոցում,
կոյր աշուղը ինառաչանքի պարտք ունի
Թշուառութեան ու անէծքի վայրերում։
Այսքան չարիք Թէ մոռանան մեր որդիք,
Թող ողջ աշխարհ հային կարդայ նախատինք։
երեք լար կայ, մէկը մէկից սգաւոր,
Մէկն արիւն, մէկն արցունք է քամում
Եւ երրորդը, այն ամէնից Թունաւոր,
Անէծք ունի իր Թրթռուն խաղերում։
Այսքան չարիք Թէ մոռանան մեր որդիք,
Թող ողջ աշխարհ հային կարդայ նախատինք։» (1)

Մանուկնէն բոյակէզ ու փոթորկոտ բառեր ունի երգիչը, երբ երեւակայութեան թեւերով, յանկարծ իրականութեան մէջ, կը թափառի մեր հայրենի բնութեան դիրկը, հոգին ու անուտուտին պատմելու իր վիշտը։ Անոր ձմեռնամուտ, մեր հայրերուն ձմեռնան է եղեր, մի՛շտ ամայի ու անկենդան, մահաբեր հողմերու արշաւներէն յետոյ։

Մարդոց պէս, բնութիւնն ալ, որուն դրկին մէջ մեծցեր ու անոր դա-

(1) Ա. Ահարոնեան, Ազատութեան ձանապարհին. Աշուղը էջ 86։

ժան պատկերը իր հոգիին մէջ քանդակուեր է, անգութ ու անհիւրընկալ է միշտ։ Այդ հայրենիքին ու միջավայրին մէջն է, որ «այրերը իրանց մութ ծոցերից խմբերով դուրս էին վիժում քաղցած գայլերին, որոնք սողում էին մեր յետեւից հոտոտելով մեր անցած շաւիղները, առաջները չէչէկացնելով իրար էին կրծոտում անզօր կատաղութիւնից, դունչերը վեր ցցած յուսահատ ոռնում էին սեւ խաւարի մէջ ու կրկին կրծոտում, կրկին բզկտում իրար։ Անատոլ երկինքի տակ՝ հեռաւոր խաւարի միջից նրանց աչքերը փայլփլում էին մահասարսուռ բոցով, երբ յոգնած, արիւնոտ ու անօգուտ պայքարից՝ նրանք իրար կողքի շարուում էին ձիւնոտ լեռնալանջի վրայ եւ հեւալով դողդողալով նայում էին դէպի անորոշ հեռուն գազանի ահաւոր յուսահատութեամբ։» (1)

Ահաւոր բան է գրագէտի կոչում ու շնորհ ունենալ, ու ստիպուած ըլլալ չի խեղդել ներքին ձայնը, որ կը հրամայէ հետեւիլ արիւն արցունք ճամբաներուն ու անոնց վրայ թափառող բաղմութիւններուն...։ Խեղդել երեւակայութեան գինովցնող ու հրապուրիչ խաղերը քու մէջդ, ու մտիկ ընել ժողովուրդին հեւքերուն ու սրտի զարկերուն։ Թափառի՛լ անոնց հետ գիւղերը, ուրկէ կոյրերն իսկ սարսափով խոյս կուտան, եւ «ուր ցերեկը՝ շարժում եւ դիշերը ճրագ չկայ։ Եւ ամէն տեղ սովն է իշխում, համատարած, աշխարհաւեր սովը, որ առասպելական հրէշի պէս թուխ է նստել կեանքերի վրայ, քամում, գալարում է աղիքները։ Հազար-հազար աչքեր մռմռում են քամում, սարից, քարից արցունք է գալիս։»

Այսպիսի դժոխք ու տանջալից միջավայրի մը մէջ, գրագէտին լաւատեսութիւնը կրցեր է գտնել հոգիի կազդոյր տուող ու անհատներու հպարտութիւնը փայփայող դրուագներ, դէմքեր ու տիպարներ, որոնք աստուածաչին ուժով ու ներշնչումով, կոչումն ունեցեր են շարժուելու այդ իրականութեան մէջ։

Անիկա ընդունակ է համատարած սովի ու աւերակներու մէջ տեսնել դէպի երկինք բարձրացող ծուխը, մեղմիկ, ժապաւէնի պէս թափանցիկ, որ իրեն կը գրաւէ, հեռուներէն եկող, անօթի, ծարաւ ու յոգնած ուղեւորը։ Որքան ալ աղօտ ու խեղճուկ ըլլայ ան, ուժ ու կորով կը ներշնչէ պարտասած հոգիներուն։

Անոր բովանդակ գրականութիւնը, մեր արիւնոտ իրականութեան, մեր

---

(1) *Ա. Ահարոնեան* Ազատութեան ձանապարհին, գ. տպագ. Պօստոն էջ 144։

պարտութիւններուն ու յուսախաբութիւններուն մէջ, Ծիրանի գօտին է, որ կամար կը կապէ մեր ամպամած երկինքին վրայ։

* * *

Գոյները քիչ մը աւելի խտացնենք, որպէսզի մեր արիւնոտ միջավայրին պատկերը աւելի խօսուն ու կենդանի դառնայ։ Գետեր ահաւասիկ, մեր գետերը, որ կարմիր կը հոսին, թանձր գոլորշի կը բարձրանայ, հոն ուր *ազատութեան ոգին* հալածական է դարերէ ի վեր, եւ որ պանդուխտի պէս, կը թափառի մեր աւերակներուն վրայ. հոն՝ մահուան տիրապետութիւնն է։ Ահաւասիկ գիւղ մը. լո՛ւռ, կեանք չկայ, ո՛չ խօսք, ո՛չ ճիչ եւ ոչ ծիծաղ...

Տուներուն մէջ սուսերներն աւելի սարսափելի են, «Նրանք խօսում են ինչ որ ահագին ցաւից, որ հազարդլխեան վիշապի պէս իր երկաթեայ ճիւրանիներում ճնշում է այս խրճիթները «ստիպում է, որ լուեն, չճչան, չհառաչեն իսկ։ Լուռ են այն պատուան ու ծերուկը, որոնք կծկուել են սառը քոների վրայ ցնցոտիների տակ»։

Հեռո՛ւն ուրիշ գիւղ մը, ծուխ ու բոցի մէջ, ուրկէ կը բարձրանայ մահուան մեղեդին...։ Ու բանաստեղծ վիպագիրը այս պատկերներուն առջեւ կ'արտասուէ իր վիշտէն, ցաւերուէն, նանաւանդ ամօթէն...։

Բայց *արցունքի հովիտին* երկու կողմերէն կը բարձրանան հսկայ լեռներ ուր *Ազատութեան Ոգին* ինքզինքն հալարտ ու իրոխտ, ապահով ու հանգիստ կը զգայ։ Վիպագիրը մեղի ա՛յդ ալ, այդ բարձրունքներն ալ կը ներկայացնէ, որոնց ազատարար հողմերը գգուելին իր ճակատը եւ ներշնչելին։ Ու կազդուրիչ է պատկերը, զոր կուտայ ան մեղի. «Նայիր։ Այստեղ այս հսկայ լեռների իրոխտ կատարների արծիւների հետ բոյն դրած մարդիկ իմ սիրահարներն են։ Այստեղ երբեմն մի քանի օրով ես հանգիստ եմ անում. այստեղ է, ուր ես չեմ ամաչում, չեմ դողում, չեմ արտասուում, մի քանի անգամ նոյնիսկ ժպտացել եմ։ Կայծակի թափից չեն հառաչում այս կարծր ժայռերը, փոթորիկի առաջ չեն ծռւում այս լեռները, մարդիկ այստեղ չեն դողում որոտից, եւ դնդակների տարափի տակ արցունք չթաճեցին։ Մեռան ընկճւած, բայց դա մի մահ էր... փառաւո՛ր ու վսե՛մ, եւ ես ժպտայի... Նրանք էլ ընկնում էին մի հպարտ ժպիտով. մեռելութիւնն այստեղ գործ չունի, ես այստեղ տէր եմ։» (*Ազատութեան Ոգին*)

* * *

Հողը, ուրկէ ապագայ գրագէտը կը ծծէր իր կեանքին աւիշը, բոլորիս ծանօթ միջավայրն է, այն աշխարհը՝ «ուր բնութեան ներդաշնակութիւնը խախտած էր մարդկանց ձեռքով։ Ապաշնչած, վայրենաբար այլանդակուած էր այն բոլորը, ինչ որ բնութեան մէջ վեհ է ու վսեմ, ինչ որ ոգի է ներշնչում, խորհուրդ տալիս կեանքին, բնութեանը, տիեզերքին։ Կապուտակ, անհուն երկինքը միշտ ժպտուն, միշտ գեղածիծաղ էր այնտեղ, բայց մարդկային գազանութիւնը նրան բանտի հսկայական կամար էր դարձրել. այնտեղ օդը մեղմ էր որպէս քնած մանկան շունչ եւ ջինջ՝ որպէս կուսական խորհուրդներ. բայց արիւնածարաւ մարդը այդ հրաշալի մթնոլորտը լցրել էր սրեան գոլորշիներով, — ծանր էր շնչել։ Լեռ ու դաշտ պճնուած էին դեղահրաշ ծաղիկներով, կանաչաւէտ հիւթալի սեղերով, հազարաւոր ալբիւրները գրգլալով վայր էին գլորում լեռներից իրանց բիւրեղեայ շիթերի ցնցուղները, բայց ծաղիկներն ու խոտերը ջրից աւելի արիւն էին ծծում, արիւնով սրուում, աղբիւրները շատ անգամ կարմիր, բառրային վտակներ էին կազմում։ Ամէն առաւօտ հսկայ լեռների թիկունքից բարձրանում էր արեւը եւ ոսկեզօծում սպիտակափառ բարձրութիւնների կատարները. ամէն երեկոյ՝ վերջալուսին արեւմուտքում գոյների մի սքանչելի մրցութիւն էր կատարւում, երկնակամարի այդ մասը վառւում էր՝ ասես հսկայական հրդեհով բռնուած. դիշերները լուսինն էր սահում բիւրաւոր աստղերի միջից և իր արծաթեայ շիթերով ողողում լեռ ու դաշտ։ Բայց բնութեան այս հրաշալիքներով մարդկիկ այդ երկրում չափշռակել չէր գիտէին, վսեմ երազներ չէր կային այնտեղ. բնութեան իսկական լեզուն անհասկանալի էր, երկնակամարի կարմրութիւնն արիւնից էր խօսում, երեկոն՝ խաւարի կարապետը, սարսափ էր պատճում, ջրերի կարկաչիւնը՝ հեծեծանք, գիշերային խոր լռութիւնը՝ մահ։» (1)

Պատկերը կատարեալ ընելու համար, թէ երիտասարդ գրագէտը ինչպիսի պայմանների մէջ ներշնչում պիտի գտնէր և առաս նիւթ՝ վերարտադրելու, պէտք կը զգամ քանի մը նախադասութիւն եւս ընդօրինակել հոս նոյն էջէն. «Այն բոլորը ինչ որ գեղեցիկ ու բարի, հալածւում էր այդ սարսափելի աշխարհում։ Չարը և մթնոլորտն չարն էր թեւատարած դեւի պէս իշխում այդ երկրի վրայ եւ նրա սեւ թեւերի ստակալի հովանու տակ գեղեցիկը, բարին խեղդւում, հեծում էին ինչպէս երկաթեայ օղակի մէջ։ Ճանչցանք էր

(1) Թողուածոյ երկերի, *հատոր բ.* Խեղճերը, Սեւ սրեր *էջ 10—11*։

գեղեցիկ սեփականութիւն ունենալ, այսպիսի սեփականատէրը իր ունեցածի հետ յաճախ վրկուռմ էր նաև իր կեանքից։ Գեղեցիկ արտը բարբարոսների ձիերի կոխան էր լինում, բուրմունքով լի, չքնաղ ծաղիկները մի ժամ էին միայն ապրում. դրախտանման պարտէզները մի քանի ժամում անապատ էին դառնում. ոտքեր կային, որոնց կոխած տեղն այլեւս ոչինչ չէր բուսնում։ Սրընթաց նժոյգն ու հաստավիզ եզն ու գոմշուկը խլուռմ էին և տէրերն առանց բողոքի, իրանց անասունների համբերութեամբ խողխողում էին։ Հարուստ և երջանիկ մարդը մի օրում մուրացիկ էր դառնում։»

Դուք ալ ինձի հետ համաձայն էք, որ այս տողերը հէքեաթէ մը փըրցուած չեն, եւ ոչ ալ երեւակայութեան ծնունդ են։ Այսպիսի միջավայրի մը մէջ գիշերներ լուսցնող մարդկային էակներու հոգիին պատկերը եթէ կ'ուզէք տեսնել, էջ մըն ալ դարձնենք ու մխասին կարդանք կրկին։ «Հարուստը շրջում էր ինչպէս մուրացիկ, ազատութեան սիրահարը՝ ստրուկ էր ձեւանում, բարի մարդը՝ չարագործութեան ջատագով, առաքինին՝ ծածկում էր իր հոգու խորքերում թանձր մրուրի տակ այն աստուածային կայծը, որ մեծագործութեան հուրն է բորբոքում ընարեալների սրտերում և բարւոյ յաղթանակի վսեմ նշանով դրոշմում ոսկեզարերի փայլուն ճակատները։»

Այս դաժան կեանքը սակայն բնական երեւոյթ մը կը թուէր, սերունդները մէկը միւսին կը յարջորդէին. ամէն բան, առօրեայ, սովորական դէպքի մը պէս կը մոռցուէր, ու գիւղին միօրինակութիւնը չէր խանգարուեր ուրիշ ոևէ դիպուածով։ Աշխատանքը ամէն բան մոռցնել կու տար, հակառակ անոր, որ «Էս վերան երկրի մէջ ամէն բան սեւ է, մեր երկիրը սե՛ւ, մեր արեւը սե՛ւ, մեր քաման էլ սե՛ւ, մեր սիրտն էլ սե՛ւ»

Աշխատանքը կեանք ու կենդանութիւն տուող միակ ազդակն էր։ Կը բաւէր որ արիւնէ ու հրդեհէ վերապրող քանի մը շունչեր գտնուէին գիւղին մէջ։ Կը բաւէր, որ աւերակներուն մէջ բահեր ու մուրճեր տեսնուէին։ Հետզհետէ նոր խրճիթներ կը շինէին, գիւղին մէջ ձայն ու աղաղակ կը լսուէին, դաշտերը կը մշակուէին, և հովիւն իր հօտը կրկին դէպի արօտատեղիները կ'առաջնորդէր։

Աշխատութեան հետ չէին մոռնար նաև աղօթքը, երկու ուժեր, որոնք անմոռ աւերակ ու փլատակ հոգիները կը բարձրացնէին նոր ուժով ու ոգեւորութեամբ։

Այսպէս բացատական ու դրական ներգործութիւններու շնորհիւ, չափազանց հարուստ մանկութիւն մը կ'անցնէ Ակարոնեան։ Իր կեանքի արշալոյսը հոն է որ կը ժպտի, և կեանքի թախիծը հո՛ն է, որ օրօրոցէն

սկսեալ կը դրոշմուի անոր ճակտին վրայ։ Անիկա արեւելքցի է, այնտեղէն կը քաղէ իր խորհուրդը, իր զգայութիւններն ու գեղարուեստի հասկացողութիւնը, բոլորովին տարբեր այն միւսէն, որուն հայրենիքը արեւմուտքն է։

* * *

Ապագայ կարելիութիւններով յղի մանուկ հոգիին վրայ հաւասարապէս ներգործեր են ընտանիք, ծնողներ, դպրոցական ընկերներ, մայր քնութիւնը արեան ու այդին, հօրը դարբնոցը, վեհափառ Մասիսը, որուն գաղտնիքը փորձեր է կարդալ, եւ փրփրերախ, յորդահոսան ու անսանձ Արաքսը։

Սահնք են եղեր Ակարեանի կենդանի դաստիարակները, և շատերէն կրած ներգործութիւնը ճակատագրական նշանակութիւն ունեցեր է իրեն համար։ Այդ ներգործութիւնը եւ առիթ բխած խորհուրդը, մանուկ հոգիին մէջ կազմուիլ սկսող առաջին բոլոր զգայութիւնները (ըմբոստացում անիրաւութեան դէմ, հերոսականին պաշտամունքը, աշխատանքի երգին փառաբանութիւնը, ատելութիւն պատերազմի հանդէպ, կարեկցութիւն տկարին ու թշուառութեան հանդէպ, պաշտամունք գեղեցկութեան ու արդարութեան, ուժի ու ճշմարտութեան եւայլն) ապրեր ու զարգացեր, ձեռներ ու հասունցեր են մինչեւ չափահասութեան տարիք, դառնալով *մեծ նկարագիրը Ահարոնեանի բովանդակ գրականութեան*։

* * *

Միասին կարդանք այն խոստովանութիւնը, որով անիկա կը բանայ մեր առջեւ, իր հոգիին գաղտնիքները և այն *ճամբան* ու *ճշմարտութիւնը*, որուն համար կրցաւ հասկնալ իր ներքին դերին լեզուն, և որուն գերի մնաց մինչեւ այսօր.

«Քնութիւնը գերեց ինձ, կը դրէ, մասամբ հասակիս. դաշտ ու անտառ, սար ու ձոր, գետ ու լիճ այնպէս էին նայում, ինչպէս մայրդ, որին ծնած օրից չես տեսել, որ յանկարծ յայտնւում է երազիդ եւ խակդին ճանաչում ես։ Աշտարերը ծաղիկները սիրեցի, որոնք որքան փոքր են, նոյնքան աւելի խոհուն ու գիտեն ժպտալ քեզ, ծիծաղել, հեգնել. գիտեն խաւղել, պլխիկները հակել եւ հայեացքիդ յարութիւնից ձեռնել։ Ուշանդ հովի ձեն–ձենակ թըրթռացող տերեւիկի վրայ եմ կուացել ու նրա դողդոջի գաղտնիքը փնտռել։ Գարնան կրքոտ փարթամութիւնը սիրեցի եւ աշունքների դալուկ մտածում-

ները, խաւար դիշերները փոթորկոտ եւ հողմերի տանջանքն ալեկոծ։»

Ուրիշ տեղ մը, նոյն հատուածին մէջ (Դեւը).

«Բնազդական եղբայրութիւն ունիմ հողմերի հետ։ Հոգիս ապրում է բնութիւնը, ինչպէս մայրն իր արգանդի զաւակը, որի թրթիռը քնարի պէս ձայն է տալիս իր էութեան խորքերում։»

Բնութեան այս անտեղիտալի ներգործութեան քով, որ հեղինակին հոգիէն իւեր է ամէնէն հարազատ ու ինքնատիպ վանկերն ու բնութենապաշտ էջերը, ընտանիքը ու մասնաւորաբար մայրական ազդեցութիւնը երկրորդ կարեւոր տեղը կը բռնէ անոր գգայուն հոգիի կազմութեանը մէջ։

Անկա կը հաւատայ մայրական խորունկ ներգործութեանը սերունդներուն վրայ որովհետեւ անոր համար մայր կը նշանակէ, *խորհուրդ, սէր ու տառապանք*, երեք անքակտելի օղակներ, որոնցմով կազմուած է մարդկային կեանքի խորհուրդը։

Իր էութիւնը այնքան մօտիկ ու կապուած կը զգայ շրջապատի իրերուն, որ անոնց հոգի կը հագցնէ. կը հաւատայ որ «հայրենի տուն ու հայրենիք անցած ու գալիք բոլոր սերունդների հոգու ոսկէ կաղապարն են», կը հաւատայ որ իրերը հոգի ունին, ու մեր հոգու մասերն են, «անշունչ առարկաներն իսկ լալ ու հառաչել գիտեն, երբ հոլն է մարակում». կը հաւատայ որ «Մարգարէները հողմերի սոյլերի մէջ են փնտռել իրենց ասածուն», ու հայրենի տունէ ու հայրենիքէ զրկուած բանաստեղծին համար աշխարհի ամենաթշուառ հիւղակն իսկ օրհնութիւն մը կը դառնայ։

Եթէ հերոսականին ու հերոսութեան հանդէպ պաշտամունք չունենար Ահարոնեան, դժուար թէ կարենար տալ մեզի այն գեղարուեստական ստեղծագործութիւնը, որուն մէջ առաջին տեղը կը բռնէ պաշտամունքի ու փառաբանութեան երգը, յօրինուած մարդ – աստուածներու քաջագործութիւններուն ու գերմարդկային հերոսութիւններուն համար։ *Ագատութեան ճանապարհին, Արցունքի հովիտը, Երկերի ժողովածու, Հայրենիքիս համար, Մրրիկի սուրբը* ու այնքան բազմաթիւ երկեր, մեծ մասով նուիրուած են հերոսականի փառաբանութեան, որովհետեւ գերբնական ու անբացատրելի խորհրդաւորը, երկիւղածութեան զգայումով համակած է միշտ մանուկ հոգիները։

Իր հայրենի տրտրուած ու քանդուած այգին ու պարտէզը նոյնքան վիշտ կը պատճառեն իր հոգիին, որքան օտարին կոմէ աւերակ դարձած մայր-հայրենիքը։ Անիրաւութեան դէմ իր ըմբոստ հոգին, զոր շատ շատերը չուզեցին ճանչնալ ու սխալ մեկնեցին, վրէժխնդրութեամբ կ'ուռեցնէ անոր

կուծքը։ Որովհետև հայրենիք ու ազատութիւն, ճշմարտութիւն ու արդարութիւն կորսնցնելէ ու վտարանդի դառնալէ առաջ, մանուկ տարիքին, հազար ու մէկ նեղութիւններէ յետոյ, երբ ուրիշին կողմէ յափշտակուած կը տեսնէ կարմրախայտ ծուկը, չի կրնար չի կորսնցնել հաւատքը կեանքին հանդէպ, այս անիրաւ աշխարհին մէջ։

Աշխարհի անիրաւութիւնը անոր ճակատը դառնացնել կը սկսի այն օրէն մանաւանդ, երբ իր հօրը դարբնոցին դրան առջև կանգնած, հօրը և եղբայրներուն արիւն քրտինքը կը տեսնէ կրակին դէմ, ծուխին նշաւակ։ Մուրճին ու սալին պայքարը կ'օրօրեն անոր մանկութիւնը. «Եւ այդ օրօրը հնոյի որոտ, անքացող աշխատանք, տաք, պղտոր քրտինք, շիկացած կայծկլտուն երկաթը կռաններուն տակ եւ դաշն ու հղօր զրնգոյը ղնռանի»։

Ու տակաւին տրտում տղայ լացով ու խոկումով, փնտռելու ելեր է «անցաւ ու գերազանց աշխարհ մը», որուն մէջ աշխատանքն է թագաւորողը, ուր ճշմարտութիւնն ու արդարութիւնը կը տիրապետեն, և որուն հասնելու համար, մանուկ հոգիին մէջ կը ծնի ուրիշ ղգայութիւն մը, թերեւս հակոտնեայ, «հղօր լինել, խորտակել բոլորը, ինչ այնքան թշուառութիւն է ծնում, հղօր լինել, բռնացողին ատամները փշրել»։

*
* *

Հայրը արհեստաւոր դառնալէ առաջ ժրաջան հողագործ մըն էր, հմուտ, ճաշակով ու գեղասէր պարտիզպան։

Թէև խիստ բնաւորութեամբ, բայց և այնպէս բարի ու գթոտ էր, ինչպէս կը վկայէ Ահարոնեան ինքն իսկ. «Սովորաբար նա քիչ էր ուրախանում, յանձուխեան յախուռն պոռթկումը նրան անծանօթ էր կեանքի նոյն իսկ բաղդաւոր ժամերին։ Ծօն օրերին, կամ ուխտի ու այցի, ճամբորդութեան ժամերին նրա հոգին ծփում էր ասես ներքին մեղմ կրակով և իր երջանկութեան մէջ պատրաստ էր աշխարհին բարիք ու քաղցրութիւն պատճառել, ծանօթ թէ անծանօթ։ Այն ժամանակ նա անհունօրէն երջանիկ էր, հաճոյախօս»։

Քիչ մը այս չէ՞ եղեր նկարագիրը մեր բոլորիս հայրերուն, որոնց հոգին չէր ապականուեր նիւթական հոգերով ու եսասէր ցանկութիւններով։

Հայրը արդարամիտ, աշխատասէր, բարեսիրտ էր և անձնուէր. ամէն օր սովորական ժամին, առտուան աղօթքը կը մրմնջէր. «Այդ ժամերին նա անհման էր. մէջահասակ, թուխ, լայնաթիկունք մի տղամարդ, դէմքը եղերւած սև, անխնամ մօրուքով, յօնքերը խիստ թանձր ու մռայլ, աչքերը խոր,

սիրուն և թախծոտ ու այնքան բարի, որչափ աշխատանքը»։

Անիկա ներկայացուցիչն է այն սերունդին, որ կը հաւատար, թէ թագաւորները Աստուծոյ ներկայացուցիչներն են, և հետեւաբար ամենակարող, ու ամենատէր. հողերէն մահկանացուն իրաւունք չունէր պէտ դնելու և չի գործադրելու անոր հրամանները։ Անիկա պարտականութիւն ունէր ծառայելու նաև սիրոջը ծառաներուն հրամանները։ Իրաւունք չունէր բողոքի մասին մտածելու և ոչ ալ ողբալու իր ցաւը։ Անիկա քրիստոնեայի կատարեալ համակերպութեամբ կը հաւատար, որ «Մեղքը մերն է՛... ուէսը թակի՝ մեղքը մերն է, իշխանը զրկի՝ մեղքը մերն է, շուն ու գել հայդ խլեն՝ մեղաւորը մենք ենք»։

Հայ մարդ էր Ահարոնեանի հայրը, եւ հնազանդ մարդ։ Տարիներ տաբիներու ետեւէ աշխատեր և տքներ էր, զաւակներ հասցուցեր, տուն ու պարտէզի, խանութի ու արտի տէր դարձեր, սակայն անիկա իրաւունք չուներ, ինչպէս մեր բոլորին հայրերը, «արար – աշխարհում մի անկիւն» ուենալու։

Անիկա արդար ու սրբակենցաղ մարդ մըն էր, որ կը հաւատար հանդերձեալ կեանքին, ու ատոր համար ամէնուն բարիք կը կամենար, ու իր փափաքն էր, որ իր զաւակներն ալ իրեն պէս դաստիարակուէին, իրեն պէս մտածէին ու գործէին։ Անիկա աստուածայնին կազքի իմաստութեան ապաւիներ էր, ու ցաւ ու տառապանքէն իր մարմինը ազատած կը թուէր։ Անիկա ժխտեր էր իր անհատականութիւնը, ուրիշները սիրելու և անոնց համար զոհաբերելու։

* * *

Հապա մա՞յրը...

«Դամ տղամարդ ես կամ կնիկ», այս խօսքով շատ որոշ կերպով կը բնորոշուի Ահարոնեանի մօր նկարագիրը, անլուսպ ու վրէժխնդիր՝ հակառակ կորզին հանդէպ։

Երկու անգամ ամուսնացեր էր։ Առաջին ամուսինը, Իգդիրցի յանպուզն ու քաջ երիտասարդ մըն էր, Շաչբազը։ Սահմանն անցեր, դէպի Թուրքիա մեկներ էր, ու ա՛լ չէր վերադարձեր, ինչպէս շատե՛րը մեր հերոսներէն։

Խառնուածքով խորհրդաւորն ու հերոսականը սիրելուն համար, «սեւաչեայ թխպէմ ու բարեկազմ» աղջիկը սիրով կը կապուի այն երիտասարդին, որուն չեզ տասը տարիներ կ'ապրի։ Պատանի հասակէն սիրեր էր «երգը, գեղեցկութիւնն ու արիութիւնը» տեսակ մը երազուն աղ-

ջիկ, որ «որպէս միակ օժիտ, իր գրքերը վերցրած, Էջմիածնից եկել, Արաքսն էր անցել ու արի, յանդուգն երիտասարդին իր բաղդն էր կապել։»

Երկրորդ ամուսնութիւնը տեղի կ'ունենայ Ահարոնեանի այրիացած հօրը հետ։ Ա՛նքան քնքշօրէն կ'ոգեկոչէ անիկա մանկական իր յիշատակները, որ նոր կենդանի ու խօսուն կերպով կու գան բացատրելու մեզի ապագայ Ահարոնեանի գրական ու գեղարուեստական ա՛նքան շնորհները, և այն ակը, որմէ անիկա շատ կանուխէն յագեցուցեր է իր պապակը։ Տարակոյսէ վեր է, որ մայրական ներգործութիւնը շա՛տ զօրաւոր եղեր է անոր վրայ։ «Նա հեւ ի հեւ պահում էր ոչ միայն իր առաջին ամուսնու ողբերգական վախճանի դրուագներով, հապա և նրա առնական առաքինութիւնների, նրա բազմատ տղամարդութեան նկարագիրներով։

«Իմ մանուկ հոգին լի էր այդ ինձ անծանօթ մարդու հերոսական հրապոյրներով։ Իմ ի՛նչն էր նա, չը գիտէի, չէի կարողանում նրա տեղը գտնել մեր ընտանիքում։ Հայր չէր, բայց հօր պէս հարազատ ու սիրելի էր ինձ. երբեմն նոյնիսկ հօրիցս աւելի էր։ Խորունկ յաւ ունէի նրա համար։ Նա դիւթում էր ինձ իր արուեստով ու գեղեցկութեամբ. իմ հարազատ ու արդար հայրը, մի առաքինի արհեստաւոր, երեւակայութեանս մէջ շփոթւում էր այն միւս «հօրս» հետ։»

Այս հարազատ հայ կինը յանդուգն էր ու քաջ, երկիւղ ըսուածը ի՛նչ էր չէր գիտեր։ Չէր կրնար հաշտուիլ այն մտքին հետ, որ թագաւորը, կամ իշխանը իրաւունք ունին ժողովուրդին աշխատանքովն ու քրտինքովը պահել իրենց գահն ու իշխանութիւնը։ Անիկա չէր վախնար նոյնիսկ բանտ ու Սիպիրէ, որովհետեւ բնազդով կը հաւատար արդարութեան ու մարդկային տարրական իրաւունքներուն։ Անիկա կը ղգայ, որ «Մեզ համա՛ր... ի՛նչպէս չէ, դարդ ու ցաւն է մեզ համար, արար–աշխարհ արունք է բռնել, մենք մէջը փոթորկում ենք, չորս կողմներս կրակ, աւեր, մահ, կռիւը մեզ համար է, տեսա՛ր փախստականները. սաղ Ալաշկերտ, Բայազիտ սրի են քաշել թիւրքերը, այ, է՛ս է մեզ համար։»

Ահարոնեան մանաւոր զուրգուրանք ունի մայրերուն հանդէպ առհասարակ։ Այդ սէրը շատ հինէն կուգայ ուրեմն։ Իր հարազատ մօր հանդէպ ղգացած խանդաղատանքն ու պաշտամունքն է պատճառ, որ իր գրականութեան մէջ, մայրերուն պիմադիութիւնը կու տայ միշտ չերմ քնքշութեամբ։ Անոնց կրած վիշտը, զաւակներուն կարօտը եւ իրենցներուն երջանկութեան համար կրած հոգերն ու մտահոգութիւնները լայն չափով կը գտնենք անոր գործին մէջ։

* * *

Ոչ մէկ աղբի մէջ յեղափոխական գրականութիւնը ա՛յնքան բարերար ու դրական ներգործութիւն ունեցեր է, որքան մեր մէջ։

Այդ գրականութիւնը պատկառելի բովանդակութիւն ունի, որ այլեւս անցեալին կը պատկանի։

Առաջին շրջանը, աւելի տարտամ ու անորոշ, Վէրք Հայաստանիով կը սկսի ու կը յանգի մեծանուն վիպագիր Րաֆֆիի ստեղծագործութեան։ Րաֆֆին կը դառնայ հայրը նոր ուղղութեան մը։

Այս շրջանին յատկանիշն էր հայրենասիրութիւնը։ Վիպագիրն ու բանաստեղծը, պատմաբանն ու հրապարակագիրը կորսուած փառքերուն եւ հայուն ջախջախուած երազին երգը կը թրթռացնէին։ Հայ տառապանքն ու հայ վիշտը լեզու կը հանէին Հայաստանի բնութիւնը, ոռոմն ծոցէն կը լսուէր արձագանգը կոտտացող վէրքերուն։

Խ. Աբովեան, Մ. Նալպանտեան եւ Քամառ – Քաթիպա հայրենասիրութիւնը աստուածացուցին իրենց երգերով ու արձակով։ Մինոլսրան ու ժամանակակից մտաւորականութեան տենչերը կը սպասէին հզօր ու կախարդ ձայնի մը, որ պիտի գար ներկայացնել բովանդակ յեղը, իր ձգտումներովն ու ըմբոստութեան կրակովը։

Այդ կախարդ ու մոգիչ ձայնը Րաֆֆին էր։

Մեր մէջ ոչ մէկ հեղինակ տիրացած է վիպագիր Րաֆֆիի ժողովրդականութեան։ Անիկա ոգին էր, որ կու գար մարմին ու կեանք տալու ըմբոստութեան ու խիղճահարութեան հնոցին։ Անիկա յեղափոխութեան կայծերը կը ցանցնէր խաւար ու ստրկացած անկիւնները, լոյս կը սփռէր յոգնած ու պարտասած ուղեղներուն մէջ, ու կը բանար յեղափոխութեան ճամբան։ Յեղափոխական առաքեալի նշանաբանով ու քարոզով, կը վառէր բոլոր ընդունակ ու ժրգոհ հոգիները, որոնցմէ պիտի յայտնուէին մեր ապագայ բոլոր գործիչներն ու անձնուէրները։

Ամբողջ երկու սերունդ Րաֆֆիի գրականութիւնը պատուաստեց հայ միտքն ու սիրտը, պողպատելով նաեւ հայ կամքը։

Րաֆֆին յեղափոխական գրականութեան երկրորդ շրջանը կը ներկայացնէ, երբ անորոշ ու տարտամ հայրենասիրութիւնը իր դերը կատարած, նշանաբանի մը եւ առաջնորդող աստղի մը փնտռտուքով կը տանջուէին դեռ չբացուած ու չյայտնուած հայրենասէր հոգիները։

Րաֆֆիի ներգործութիւնը խորապէս ղպալի է Ահարոնեանի ստեղծա-

գործութեան վրայ։ Ինչպէս Մ. Վարանդեան շատ լաւ նկատեր է, անիկա Բաֆֆիի «իմացական ժառանգն» է։ Ոչ միայն անոր գաղափարաբանութիւնը շարունակողն եղաւ, այլ նաև շատ մը աւանդութիւններ վերապրեցուց անիկա իր պատմուածքներուն ու վէպերուն մէջ։

Մեր հայրենի բնութեան նկարագրութիւնը երկու վարպետ կը ճանչնայ։ Նախ Բաֆֆին, այս աննման կախարդող ու խորհրդաւոր գրիչը, որուն հասար ոչ մէկ գաղանիք գոյութիւն ունի։ Անիկա մեր վիպագրութեան հայրն է։ Անոր յաջորդը Ակսրոնեանն է։ Անոր պէս կը սիրէ մեր բնութիւնն ու աշխարհը։ Երկուքին մէջն ալ հայ գիւղն ու գիւղացին են, որ վեպի նիւթ կը դառնան։ Եթէ Բաֆֆին, իբրեւ նոր օրերու մարգարէ մը ծրագիր կը կազմէ, ճամբայ կը հարթէ ու յեղափոխականներ կը պատրաստէ, Ակսրոնեան կուռի կը դրկէ իր տիպարները, արիւնին արիւնով պատասխանել կը սորվեցնէ։ Անոնք կ'իյնան անհաւասար կռուի մէջ, երբեմն սակայն հնարագիտութիւնը կը յաղթէ բազմաթիւ թշնամիներուն։

Ակսրոնեանի շատ մը տիպարները Բաֆֆիի կաղապարին վրայ ձուլուած են, անոնց հոգեկան ու մտաւոր աշխարհը, անոնց նկարագրի գծերը նոյնն են գրեթէ։ Ո՛չ միայն հասարակաց թշնամիին դէմ գործելու նոյն միջոցները կ'որդեգրեն, այլ նման դէպքերու կրկնութիւնը յաճախ կը գտնենք Ակսրոնեանի պատմուածքներուն մէջ։ Եթէ Բաֆֆիի ճէլալէտտին վէպին մէջ Սարհատը կայ, որ աւերող ու կոտորող թշնամիին ճամբան կը կտրէ, Ռաշիտը պատմուածքին մէջն ալ նոյն ինքն Ռաշիտը կայ, որ գնդակի հարուածով մը տեղն ու տեղը կը սպաննէ չարիքի պատճառ հանդիսացող Նապօն, քիւրտ աշիրէթապետը։

Ակսրոնեանի գրականութեան մէջ, երբեմն կան նկարագրութիւններ, որոնց ընտանի կը կարծես ինքզինքդ, և կը տարուիս խորհելու, թէ այդպիսի նկարագրութեան մը, էջի մը, դէպքի մը հանդիպեր ես նախապէս Բաֆֆիի ստեղծագործութեան մէջ։

Ա. Ակսրոնեան երրորդ շրջանը կը խորհրդանշէ, երբ յեղափոխական խօսքին ու քարոզին, *կենդանի գործը* կը յաջորդէր, երբ Բաֆֆիի գծած *ուղին*, յեղափոխական ճանապարհը, կը դառնայ փրկարար միա՛կ միջոցը, *դէպի ազատութիւն ու ազատագրում*։

Բաֆֆիէն յետոյ Ա. Ակսրոնեան կը ներկայանայ երկրորդ հեղինակը, որ հայ ժողովուրդի հոգիին մէջ կը գրաւէ որոշ ու տիրապետող անկիւն մը։ Զիկայ հայ ընթերցող մը որ կարդացած չըլլայ *վշտի երգիչէն* բազմաթիւ էջեր ու պատկերներ, որոնք հայութեան վերջին քառասնամեայ կեանքը կը ներ-

կայացնեն բաղմակողմանի կերպով, նկարագրի իր բացառական ու դրական դիծերով։ Բայց այս չէ բոլորը զոր ան տուեր է մեր գրականութեան. մենք այդ պիտի տեսնենք ուրիշ գլուխի մը մէջ մանրամասնօրէն։

Գրական թիւրիմացութեամբ մը Ա. Ահարոնեանը ներկայացուած է շատ անգամ իբրեւ Երգիչը վիշտի մը, տառապանքի մը ու պարտութեան մը, որ յոռետեսութեան, անկումի և ոչնչացումի կ'առաջնորդէ հոգիները, Ահարոնեանի գրականութեան մէկ մասին արտաքին ու երեւութական կողմն է այս։ Խորքով այդ ստեղծագործութիւնը կը մնայ բարձրացնող, կազդուրող, վերանորոգող, որ կը փառաբանէ ուժը, կռիւը, պայքարը — նոյն իսկ անհաւասար — ընդդէմ անարդարութեան։

* * *

Ահարոնեանի մտաւոր հորիզոնը և արուեստի ըմբռնումը չափազանց անձուկ պիտի ըլլար, եթէ անիկա օտար հորիզոններու կարօտը չունենար, եթէ անիկա ուխտի չերթար դէպի արեւմուտք, ճանչնալու համար արուեստի ու գրականութեան մեծ վարպետները։

Հակառակ անոր որ շեշտուած ձեւով մեր ազգային վիպագիրն է, բառին ամենալայն իմաստով, և սակայն արուեստի ու գեղեցկութեան նկատմամբ իր ունեցած մտահոգութիւններն ու գրական ստեղծագործութեան մէջ անոնց արդարացումները կը վկայեն, որ առանց իր ինքնատպութիւնը կորսընցնելու և իսկապէս ազգային գրականութեան մը տարրերուն կապուած մնալով մեկտեղ, ալնուացած, յղկուած, եւրոպականացած արուեստի մը յատկանիշներն ևս կը բերէ մեզի։

Այս կազմածին մէջ կը մտնէ, ըստ իս, ռուսական գրականութեան այն մասն ալ, որ նոյն իսկ եւրոպական գրականութեան անձուկ սահմանները կտրել անցնելով, վէպին մէջ կը դնէր համամարդկային խոհեր և հարցերու քննութիւնը, որոնք մինչեւ այսօր ալ կը մնան յատկանիշները ռուսական գրականութեան։

Այս տեսակէտներով է, որ ռուսական գրականութեան բոլոր աչքառու դէմքերը, ու մանաւանդ Թոլսթոյի ու Տօստոեւսկիի պէս միջազգային հանճարներ, համամարդկային արժէքներ են։ Միջազգային այս արժէքներէն մեծապէս ալդուած է Ահարոնեան իր ստեղծագործութեան մէջ։ Այդ ազդեցութիւնը սովորական ընթերցումով դժուար է երեւան հանել, ըլլայ խորքի, ըլլայ բովանդակութեան, ըլլայ ոճարներու ընտրութեան, ըլլայ նաեւ հասա-

բակագիտական, ընկերական ու բարոյական արժէքներու դնահատման տեսակէտով. անիկա շատ բան կը պարտի այս երկու հսկաներուն, որոնք Ասիոյ և Եւրոպայի միջև բարոյական ու մտաւոր օդակի դեր կատարեցին, ու իրենց ստեղծագործութեամբ շատ մը արժէքներ վերագնահատման ենթարկեցին։ Առիթներ տուին, որ մտածող մարդկութիւնը չնչէ բոլոր տախտակները, ու նոր նշանաբաններով, նոր պահանջներով քննէ բոլոր խնդիրները։

Այս հանգամանքներով կարելի է Ահարոնեանը աշակերտ նկատել անոնց, ինչպէս նաև Վիքթոր Հիւկօի, Մօրիս Մէթերլինկի, Լ. Անդրեեվի եւլն.։

Օտար հորիզոններէն կրած ազդեցութիւնը եղած է նաև անհիմնական։ Նախ իբրև համալսարանական ուսանող, յետոյ իբրև ուղեւոր մը, որ ուխտի գնացեր է քաղաքակրթութեան մեծ ոստանները. նախ յաւիտենական քաղաքը, Հռոմմ, որուն հրաշակերտներուն առջև քանի մը անգամ ծունկի եկեր ու երազեր է, յետոյ Զուիցերիա, ուր ապրեր է երկար տարիներ, և շարունակաբար, Փարիզ, Լոնտոն ու Եգիպտոս ունեցած բնակութիւններուն շնորհիւ, աշխարհն ու մարդիկը ճանչցեր է շատ մօտէն։ Տեսեր է դարաւոր յառաջդիմութիւնները, գիտութիւնն ու լոյսը, ապրեր է մարդոց հետ, որոնք ազատ, անկախ ու գլուխնին բարձր կ'ապրին, արժանապատուութեան և մարդկային զգացումները իրենց հոգիին մէջ տաքցուցած։ Եւ սակայն իր հոգիով միշտ թեւածեր է դէպի հայրենի խրճիթները, կարօտով յիշեր է մեր հարուստ ու գեղեցիկ բնութիւնը, արեւն ու երկինքը։

Իր սրտին ու հոգիին մէջ քնքշօրէն պահելով ամէն ինչ որ ազնիւ է, գեղեցիկ է, ճշմարիտ ու արդար, արժանի մարդկային սերունդի գուրգուրանքին, ապագայ մեծ հեռանկարներով գինովցած, ուխտեր է երգել հինաւուրց ծեղին առաքինութիւնները, պատկերացնել մոռցուած տիպարները, նկարել հայրենի բնութիւնը, պատմել մեր պարտութիւններն ու յաղթանակները, մի՛շտ հաւատքով, մի՛շտ խանդավառութեամբ։

Անոր հոգիին մէջ անմոռանալի է մանաւանդ այն ներգործութիւնը, որ կու գայ դէպի իրեն *մարդէ մը*, մարդերու անզուգական *դարբինէ մը*, որ մեր վերածնունդի պատմութիւնը գայն պատուանդանի մը վրայ պիտի բարձրացնէ, հոն փորագրելով ոսկեատառ *Քրիստափոր Միքայէլեան*։

Ահարոնեանի մեկ սիրուն պատմուածքը «Խայը» վերնագրով, գրուած է անոր թելադրութեամբ, ինչպէս նաև *Ազատութեան Ճանապարհին* պատմուածքներու հատորին գրեթէ շատ մը գրուածքները։ Կ'արժէ որ այս առիթիս հոս արտատպենք այն տպաւորութիւնները, զորս կրած է Ահարոնեան, և որոնք ա՛նքան գեղեցկօրէն կը յատկանշեն *Խորհրդաւոր մարդը* և իր

թաքուն կարողութիւնները, արժէքներ երեւան հանելու տեսակէտով.

«Քրիստափորը ծանօթանալով ինձ հետ, և իմանալով, որ շուտով, Զուիցերիա եմ գնալու, յոյս յայտնեց, որ ես էլ կ'աշխատակցիմ Դրօշակին, երբ տեղ հասնիմ։ Ակնոցների վրայից նայող այդ գունատ ու խորհրդաւոր մարդը ինձ խռովում էր։ Զգում էի որ արտասահմանում նա ինձ հանգիստ տալու չի։

« — Ժընեւ գնա՛, ասայ կրկին նայելով ակնոցների վերից, Ժընեւ շատ յարմար է ուսանելու...։

«Հասկացայ Նպատակը — Դրօշակի խմբագրութիւնն այնտեղ էր։ Եւ 1898 Յունիսին Զուիցերիա հասնելով՝ փոխանակ Ժընեւի, Լօզան ընտրեցի։

«Վախենում էի Քրիստափորից։

«Անօգուտ զգուշութիւն։ Վասն զի յետոյ ինքս պիտի Լօզանից Ժընեւ գնայի Քրիստափորին տեսնելու իր ձայնին հլու հպատակ։

«Արդարեւ հալիւ Ժընեւ հասած նոյն թուի աշնանը, նա մի օր եկաւ Լօզան, գտաւ ինձ, երկար խօսեց, բացատրեց մեր հարցի վիճակը, մեր ժողովրդի կրած հոգեկան ծանր տագնապն ու բեկումը, հաւատն ամրապնդելու անհրաժեշտութիւնը։ Խօսեց, համոզեց, հմայեց ինձ իր թաւ, ողբերգակ ձայնով և պարտադրեց փոքրիկ պատկերներ գրել Դրօշակի համար։ Եւ առաջին իսկ պատկերի նիւթը ինքը տուեց ինձ ու գնաց։

«Գնաց և ես մնացի խորունկ մտածումի մէջ։

«Դրօշակից ու Քրիստափորից չեմ ազատուի, ապա ուսո՞ւմը...։ Երկար խորհեցի — ճար չկար — պէտք էր անել ե՛ւ մէկը ե՛ւ միւսը. անհնարին էր մերժել Քրիստափորին։ Ոչ միայն նրանից ամաչում էի, այլ նոյն իսկ անբացատրելի, խորհրդաւոր վախ զգում։ Հեռանալուց յետոյ, նրա ձայնը երկար ժամանակ հնչում էր իմ ականջներում։

«Եւ վճռապէս գրիչ ձեռք առայ իմ առաջին պատմուածքը պատրաստելու Դրօշակի համար։ Գրեցի մի թափով, ոգեւորութեամբ, եւ այնպէս երջանիկ էի, որ կարող եմ այն ճառագայթել Քրիստափորին։ Ազատութեան Ճանապարհին սերիայի առաջին պատմուածքն էր։ Անմիջապէս պոստին յանձնեցի Դրօշակի հասցէով։

«Երկու օր յետոյ՝ շաբաթ ճաշից վերջ շտապեցի Ժընեւ հէնց այնպէս զբօսանքի, բայց իրօք միմիայն Քրիստափորի կարծիքը լսելու իմ առաջին գեղարուեստական պատմուածքի մասին։

«Նեբս մտայ Դրօշակի խմբագրատուն սրտի թրթիռով և կանգ առայ դրան առաջ։ Քրիստափոր բարձրացրեց գլուխը սեղանից, ակնոցների վերից

նայեց այն հմայիչ ժպիտով ու քաղցրութեամբ.

«— Հը, ասում էի՛ ախր, որ դա իր գործն է, լաղաթ տուեց «խայը», ղէ քշիր այսուհետեւ։

«Մեծագոյն գովեստն էր։

«Մի գողարիկ վարպետութեամբ, որ այնպէս սազում էր նրան, երկրից հասած սրտայոյզ կամ հերոսապատում նամակներ, ընկերների յիշողութիւններ, ղիտմամբ ղրկում էր ինձ կարդալու իբր թէ իմ հետաքրքրութեան համար, բայց իրօք ինձ գեղարուեստական երկերի նիւթ ճատակարարելու գաղտնի ցանկութեամբ։ Եւ ես քաղում էի այդ նիւթերը *Ագատութեան Ճանապարհին* իմ պատկերների համար։ Եւ ինչ որ պրեցի, ամբողջը Քրիստափորի բարձր, ազնուական ներշնչումով է եղած։

«Առանց Քրիստափորի *Ագատութեան Ճանապարհին* չէր գրուի։» (1)

.....

(1) Քրիստափոր Միքայէլեան, *գրէց Ա. Ահարոնեան, 1926, Մատենաշար Հայրենիք. Թիւ 2, Պոստոն։*

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

.....

Ա.

«ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹՐՔԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻՑ».— «ԱԶԱՑՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ».— «ԱՐԱՋԸ».— «ԽԱՒԱՐԻ ՄԷՋ».— «ԱՆԴՈՒՆԴԸ».— «ԳԱՅԼԵՐԸ ՈՐՆՈՒՄ ԷԻՆ».—

.....

Աշխարհում ամէն բան վերջ ունի, այդ լաւ գիտեմ, մէկ ցաւն է անվերջ:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Հայկական դժոխքը...:

Ինոր սարսափներուն մասին մեզի պատմեր են տակաւին շա՛տ տարիներ առաջ, երբ արհաւիրքը իր բոյնն էր հաստատեր մեր արիւնոտ երկնակամարին տակ ու հայկական բարձրաւանդակին վրայ, և երբ մեր գեղարւեստագէտ գրողներէն Խ. Աբովեան, անկէ չեմոյ Ռաֆֆի, անմահ գործերով նկարագրութիւնը տուին հայ դիւղին ու գիւղացիին, անոր հոգիին տուած յուսալքեցին, անոր չարչարալից կեանքին էջերը արեւուն տակ թերթատեցին:

Ահարոնեանի գեղարուեստական գրականութեան սկիզբը կը զուգադիպի հայ գաղթականական այն հոսանքին, որ 1896ի ձմեռը դէպքերուն հետեւանքով, կ'երկարէր դէպի Կովկասի սահմանները: Ուրիշ խօսքով հայ գաղթականութեան անօրինակ ու ահաւոր արհաւիրքն էր, որ արուեստագէտի խմոր ունեցող հայ մարդուն աչքերը կը բանար հայ իրականութեան մէջ, ու անոր հոգիին ու իմացականութեան կը թելադրէր գրի առնել այն բոլորը, որ երազի ու երեւակայութեան սահմաններէն դուրս կը մնային: Արուեստագէտը պէտք չունէր երբեք իր ենթակայական ձգտումներու միջամտութեան դիմելու, կը բաւէր որ մտիկ ընէր գաղթականներուն պատմածները, ու զանոնք

հարազատօրէն թուղթին յանձնէր։ Իրականութեան այլ հարազատ պատկերացումը պիտի բաւէր արդէն, որ ընթերցողները փոխադրուէին Հայկական Դժոխքը, որ սահմանին միւս կողմը, Մայր Երկրի երկինքն ու հողը կարմիրի կը ներկէր։

Արուեստագէտին առաջին հանգրուանն է ուրեմն, իր բոլոր մանրամասնութիւններով, հայ գաղթականութիւնը, որուն առաջին ալիքները կը հասնէին, իր ծննդավայր գիւղը։

Հետեւեալ նկարագիրը որ կու տայ մեզի Ահարոնեան, խտացումն է այլ արիւնոտ իրականութեան. «Սև էր տարին. սև էր պատել մեր երկրին. ամեն կողմից արեան հոտ էր գալիս։ Հայ քրիստոնէի գլուխը դարձել էր ծառի մը տերև։ Ենօրէնները չորս կողմից, ո՛վ գիտէ ինչի համար, գլուխ էին քարձրացրել և սուած գայլերի նման մեզ վրա էին վազում արեան ծարաւով։ Մեր լեռներն ու ձորերը, մեր դաշտերն ու հովիտները ամենն էլ պարձել էին «հարամիների» բուն, գիւղից երկու քայլ հեռանալ չէր լինում, էլ վար ու ցանք, հունձ ու կալ չէր կար, կեանքը թանկ է, ո՛վ սիրտ կանէր գլխից ձեռք վեր առնել դաշտային աշխատանքի գնալ մանաւանդ այն օրից յետոյ, երբ մեր ուէսի տղային անօրէնները ղէզլի մէջ վառեցին, երբ Ելոի Հարսն ու աղջիկը արտից տարան հա՜ տարան, գնդակահար անելով նրա մաճկալ որդուն (1)»։

Այս դժոխքէն է, որ մարդիկ մերկ ու անօթի, ամէն բան լքելով, և միայն իրենց կեանքը փրկելու համար, կ'ապաստանէին դէպի սահմանագլուխ։

Ահարոնեանի անհանգիստ հոգին խռովիլ կը սկսի, ու անիկա մէկը միւսին եռեւէն, թուղթին կը յանձնէ *պատկերները* բոլոր դժբախտներուն, բոլոր անոնց, որոնք երէկ տուն ու տեղ, այգի ու կալատեղ, հօտ ու հովիւ ունէին, ու այսօր ամէն բանէ զրկուած, կարօտութեան սև սուգը կ'ողբային. անոնց՝ որոնք օրհնուած սեղան ու մարագ, գինի ու կարագ, խնդութիւն ու քերկրանք ունէին, և այսօր գաղթական դարձեր էին, բառին ամէնէն ահաւոր իմաստովը...։

* * *

Գաղթական ընտանիքի մը թշուառութեան պատկերն է Պուտ-ըմ-կա՛թը, խոնաւ ու բորբոսած, փլած ու փլփլուած մարագ մըն է անոր բաժին ինկած բնակարանը, ուր չորս-հինգ տարեկան մանուկ մը հոգեվարքի նոպաներուն

(1) *Ա. Ահարոնեան*, Ժողովածու երկերի, *բ. տպ. 1909 Թիֆլիս, էջ 33։*

մէջ իր ցամքած շրթները զովացնելու համար պուտ մը կաթ կ'աղերսէ։ Անոր հայրը, որ նոյն օրն իսկ իր հովիւին երեք հարիւր ոչխար յանձներ էր, գիշերուան լուութեան մէջ, ղրացիներուն պատուերը կը զարնէր պուտ մը կաթ խնդրելու, և սակայն կաթը չի հասած, մանուկը վարդի մը պէս կը թօշնի իր մօրը գրկին մէջ։

Ուրիշ մը ահաւասիկ, Ծալագ Վուրդունին, ընտանիք մը, որ ձիւնապատ լեռներն ու կիրճերը կտրել անցնելով սարսափի երկրէն փախուստ կու տայ, տագնապը վիրաւորուած է ու ձախ ձեռքով կ'աշխատի կեցնել իր վերքին արեան հոսանքը...։ Կը հանդիպի մթին այր մը, ու հոն գիշերել կը փորձէն։ Հայր ու որդի կը սառին հոն ու կը մեռնին կողք կողքի, կինը կը խելագարի։

Բախտի խորթ զաւակներ են անոր ուէս Պէտօն, Մինօն ու Մուրատը, Ձիւնիկն ու Ծաղիկը։ Իսկ Ռաշիտը հայրենի սարերուն աննման հերոսն է, բարձրահասակ ու թիկնաւէտ, գանգրահեր գլուխով։ Միշտ ուրախ, ժպտուն դէմքով, մեծ, փայլուն աչքերով։ Անոր ծնողավայր գիւղը թշնամիներով կը պաշարուի, գիւղը նեղութեան պատճառութեան զոհ կ'երթայ, բարեկամութիւն կեղծող քրդական գիւղի մը մեծաւորին կողմէ։ Անողոք կռուի մը մէջ Ռաշիտը կը բռնուի ու կապուած ձեռքերով կ'առաջնորդուի իր սիրականին Զարէի հօրը, Նաղօ աղայի տունը։

Բանտի գիւղը համատարած աւերակի կը վերածուի, ամէն կողմ մահ ու արիւն։ Ահաբեկման յայտնատեսութեամբ մը, որ ղպայուն բանաստեղծ հոգիներուն յատուկ է, տարիներ առաջ, արիւնոտ նկարագրութիւնը կ'ընէ գիւղի մը վիճակուած դժբախտ ճակատագրին ու մարդկային էակներուն ենթարկուած անլուր անարգանքին ու տանջանքներուն, երբ երեք տասնեակ տարիներ վերջ նոյն ճակատագրին կ'ենթարկուի բազմապիսի հայկական բարձրաբանդակը։ Մահերու և սարսափներու բոլոր տեսակները թշնամիին ու ղեղէն ծնունդ կ'առնեն...։

Անմահ Տանդէի Դժոխքը կարդալու պէտք չի կայ, ոչ ալ երեւակայութեան պիտի լլլ։ Հայկական Դժոխքը... այս երկու բառերուն իրարու հետ ունեցած աղերսը, անոնց պատկերացուցած իրականութիւնը ըմբռնելու համար պէտք է ապրած ըլլալ միայն մեր հայրենի երկնակամարին տակ։ Ու մանաւանդ պէտք չէ մոռնալ աշխարհաւեր պատերազմին հետեւանքով հայկական ընդհանուր տեղահանութիւնը, և անոր հետ կապուած սարսափներուն ու կատարածներուն բացած անբուժելի վէրքը, ա՛յնքան խո՛ր... այնքա՜ն խոր...։

Վիպագրին գրիչը մեղմ տուեր է այս բոլորը, շարժանկարի ճշտու-

թեամբ. տուեր է նաև քաչասիրա հայ կնոջ, Ռաշիտի մօրը, Խաթունին նկարագիրը, որ կը յանդգնի թքնել պատճան քիւրտին երեսին, անապատելի կերպով։

Ռաշիտ շղմայակապ ձգտած է դոմի մը խաւար անկիւնը։ Բայց Զարէի մլուքը կը գործէ. անիկա իր սիրականը ապատելու հնարը կը գտնէ սարսափի ու աւերածի նոյն պիշերն իսկ, տանիքէն Ռաշիտի կ'երկնցնէ շղմանելու բանալին։ Ռաշիտ խեղդամահ ընելէ յետոյ պահապանը, կը պինտի անոր պէնքերով, և պիշերուան մութին օգտուելով, կ'անհետանայ։ Բնազդաբար իր քայլերը կ'ուղղէ դէպի աւերակ Ճնդամայրը, ներքին անդիմադրելի ուժ մը պինքը հոն կ'առաջնորդէ։ Անիկա հրացանը ձեռքը կը սպասէ այն Ճամբուն եզերքը, ուրկէ պիտի գայիմ անցնելու աւարով բեռցուած սայլերը, ինչպէս նաև Նազօն։ Ու կատպայ այս վերջինը։ Եւ ինչպէս որ նշանաւոր նետաձիգ Թէլը սարի մը կատարէն գետին կը փռէր բռնապետ Կէսլերը, այնպէս ալ Ռաշիտ հրացանի մը հարուածով գնդակահար կ'ընէ Նազօն։

Ռաշիտ կը գտնէ նաև իր քեռայրը, Աւօն, և երկուքը միասին, Ռաշիտի հօրը Տէր Մարուքի գերեզմանին վրայ կ'երդնուն վրէժխնդիր ըլլալ։ Անոնք ահ ու սարսափ կը տարածեն լեռներու վրայ, իշնամիներու մէջ։ Ու օրին մէկը Ռաշիտ կը պաշարուի հրացանաւոր ամբոխի մը կողմէն։ Անոր հաճարը առասպելական չափերու հասեր էր։ Անհաւասար կռիւ մը կը սկսի. վերջապէս կը յաջնուի Զարէն ու կրկին կ'ազատէ իր սիրականը։

Բաշօն պատմուածքին մէջ անօրինակ ու ինքնատիպ նկարագրի տէր է Ծերունի Դպրոն։ Կը սիրէ վրէժխնդիր ըլլալ ու գտնել իր որդին սպաննողը։ Կը գտնէ ոճրագործը ու անոր արիւնէն բուռ մը խմելով դիւղ կը վերադառնայ։ Երբ իր այրի հարսն ու ալջիկը կ'առհասնեն, պալ ու դպար չունենար, մինչև որ գանգք կը սպաննէ ու այդպիսով «բնտանեկան պատուի անարգանքը» կը սրբէ։ Ու հայրենի գիւղէն հեռանալէ առաջ, իր ունեցածը հաւաքելով խրճիթին մէջ, կրակի կու տայ։ Շատերուն պէտ ան ալ դաղթականի կը դառնայ իր որբուկ թոռանը հետ։ Ճակատագիրը կ'ուզէ, որ իրենց հատատվիզ եղը, որուն Բաշօ անունը տուած էին, քիւրտի մը կողմէն ծախուի բերուի հրապարակին վրայ։ Փոքրիկ Թաւմօն կը ճանչնայ իրենց եզը, կը փախիստի անոր վզին ու կը սիրէ դայն։ Միւս կողմէն, Ծերունի Դպրօի հոգիին մէջ կրկին կ'արթննայ վրէժխնդրութեան զգացումը, կը յարձակի քիւրտին վրայ ու կը փորձէ սպան ու սեզը խեղդել դայն։ Ու մինչ սասիկանը վինքը բանտ կ'առաջնորդէ արիւն թափած ըլլալու յանցանքին համար, կ'ըսէ.

«— Թորգ լաւ, Թորգ, Բաշօն մեր չի, քրդուն ի, Թորգ տանի, քէ մեռ-նիմ, մեր տուն լէ մերը չի, մեր արտ լէ մերը չի, մեր արուն լէ մերը չի, խայը բանըմ չունի, զըմմէն լէ քրդուն ի, էնոր արունը Թանգ ի։»

Դիշերապահ Նախոն, որ *խայ* անունով ծանօթ է գիւղին մէջ, չի հա-ւատար ճակատագրին։ Անէն մարդ ինքն է իր ճակատագիրը դարբնողը։ Եթէ խելք ու հնարիմացութիւն ունիս, վտանգի պահուն պիտի կրնաս անել վիճակի մը մէջէն փրկել ինքզինքդ. օձին ու արագիլին պատմութիւնը, քիւրտին ու հային պատմութիւնն է, ճակատագրի քմահաճոյքներուն հաւա-տացող անզօրութիւնն ու տկարութիւնն է։

Սրբազան զայրոյթն ու ոգեւորութիւնը, մարդը կարիճ կը դարձնեն։ Դե-ղացի Հայրօն ներկայացուցիչն է բոլոր անոնց, որոնք գոհ են իրենց վիճա-կէն, հակառակ անոր, որ հարստահարութիւնն ու հալածանքն անպակաս են իրենց վրայէն։ Անիկա անզգայ է, որովհետեւ ուրիշին ցաւը չի հասկնար. իր սիրտը չեն ծակեր, և իր քոյրը չեն անպատուեր։ Եւ սակայն երբ տեղի կ'ունենայ անպատուութիւնը, Հայրօն կը դառնայ քաջ և անձնուրաց, ու կը նահատակուի իր քրոջը պատիւին անարգանքը մաքրելէն յետոյ։

Թաթուլը էլ մի աղօթիր պատմուածքին մէջ, անիրաւութեան ղէմ ըմ-բոստ հոգի ունի։ Բանտին մէջ ահաւոր կերպով սպաննուած Մուրօի և Նա-լոյի անիսօս դէմքերուն վրայ կը կարդայ անոնց զարհուրանքի պատմութիւնը. «վա՛յ նրանց, որոնք չեն լսի»։ Թաթուլի հայրը քահանայ է, եկեղեցւոյ պաշ-տօնեայ, որ կ'աղօթէ աշխարհի համար։ Եւ սակայն Թաթուլի ըմբոստացած հոգին, կը մերժէ հօր աղօթքը. և աղօթքի փոխարէն, զէնքով կ'ուզէ գործել ու պաշտպանել արդարութիւնը, հաւատալով որ երկինքն ալ կ'օրհնէ այդ միջոցը ։

Հոգածու մտածումով, գորովով ու քաղցրութեամբ գծեր է Ահարոնեան մայրերուն վիճագծութիւնը։ Մայրական զգայուն ոչ մէկ գաղտնի էջ ունի անոր համար։ Անոնց վիշտը խորապէս ճանչցեր ու զգացեր է, երբ անոնք իրենց հոգեհատորները կորնչցուցին կուռի մէջ. մանաւանդ անոնց կրակէ բառերն ու անէծքները, շատ լաւ սերտեր է ան։ Եթէ անոնց վիշտը ու տա-ռապանքը անհո՛ւն է, անիծելու համար աշխարհը, անոնք կը դառնան նաև բարերար հրեշտակ, ապաստան տալու համար փախստականներուն, որոնք իրենց պէս մայրեր ունին, ու անոնց անէծքը կը փոխուի օրհնութեան։

Ապաւէ՛ն, լուսի՛ն ը մայրական սիրոյ փոքրիկ գլուխ գործոց մըն է։ Սէյիթ սպաննուած է և պիակը դաշտին մէջ քարի մը տակ ձգուած է։ Մայրը՝ Ծովինար ի զուր կը սպասէ անոր վերադարձին, նոյնը նաև Սէյիթի

սիրականը՝ Սօնան։ Կէս գիշերին, վախով ու դողով, երբ ամէն կողմ ուրուա-
կաններու ստուերները մահ կուգան, մայր ու որդի, բահը ուսերնին, իրարու
կծկուած, կ'երթան սպաննուած զաւկի դիակը թաղելու։ Անոնց կը հետեւի
մութին մէջ Սօնան։ «Դեռ երբեք խաւարի մէջ աւելի վսեմ գործ չէր կա-
տարուել. երկու սրտեր մրցում էին իրար հետ, մայրը գետինն էր ջանգուռմ
իր զաւակի համար, աղջիկը փորում էր սիրելիին համար, բայց իրօք իւրա-
քանչիւրն իր սեփական սրտի գերեզմանն էր փորում, և յուղարկաւորը մահ-
կանիւնն էր, որի անմեղութիւնը կարծես հովանաւորում էր նուիրական
գործը որպէս պահապան հրեշտակ»։

Ցանկարծ լուսինը կը բարձրանայ, և իր ալօտ ճառագայթները կ'եր-
կարէ մինչև դիակը, փորուած փոսը և յուղարկաւորները... Հեռուէն հրացա-
նաւոր մարդիկ ստուերներ կը տեսնեն, և ղէնքն է կը գոռայ, գնդակ մը
կու գայ ու անմեղ Սերոբը, տեղը կը գամէ, անձայն անշշունչ։ Ու մայրն է,
կը գոռայ սարսափէն ու վիշտին սաստկութենէն. — «Խաւարե՜ս, լուսի՛ն,
անիծո՛ւի քո շողերը, արար աշխարհում սրա՞ն տեսար, լուսաւորեցիր»։ Ու
մայրն ալ, ահաւոր վիշտէն ու ցաւէն կ'անշնչանայ հոն։

Ահարոնեանի կին տիպարները քաջ, պատուախնդիր ու որդեսէր են
ընդհանրապէս։ Գոհարը սարը կը փախչի։ Զաւօն իր հարսին ու տան պա-
տիւը պաշտպանելու համար նաւակի մը մէջ կ'ապաստանի ու «զոհ ու զա-
հիճ» ալիքներուն տակ կը թաղուին։

Մատնութիւնը ահաւոր մեղք է, մեր գեղացիները կը հաւատան ատոր.
իսկ մատնիչը՝ իր հոգին կորնչացած «արնապարտն» է. Դաւիթը ատոնցմէ է,
որուն տաշտին խմորը արիւնոտ է և դրացիները կը մերժեն հաց թխելու
Արիւնոտ թթխմորով։

Ահա ուրիշ մը, կոյր աշուշը, որուն հնօրեայ ապէն սուգ ու արցունք կը
կաթկթին. գերեզմանատան մէջ, կ'ողբայ անկիա բոլոր մեռելները, ու մա-
նաւանդ իր մեկ հատիկ զաւակը. հօրը երգին ձայնն առնելով, մանուկը խա-
ւար անկիւնէ մը դուրս կը նետուի ու կը փաթթուի մերուկի հօր պարանո-
յին, նոյն պահուն տասնեակ մը հրացաններէ դուրս արձակուող գնդակները
հայր ու որդի գետին կը տապալեն արիւնի մէջ։

Սովորական գիւղացի մըն է Բաղդօն, անոնցմէ որոնք խրճիթէն մա-
րագ, մարագէն խրճիթ, արտերու ճամբան ու իրենց անասուններըը կը
ճանչնան միայն։ Առանց ուղելու խումբ մը հայդուկներու թաքստոցը կը
մատնէ, անգիտակցաբար։ Հոգեբանական վերլուծումի չի կարօտիր տիպարը։
Ուրախ էր Բաղդօն, որ աստուածային արդար պատասխանով մը, «անճա-

նոթ մարդիկ» պատժեր էին ոճրագործ ու պատուհաս Քօռ-Հօխիկը. այդ անձանթները եկեր ապաստաներ էին մարագը, ուրախ էր, որ անոնց հայ սիրտ տանէր։ Եւ սակայն տագնապը և վախը, որ կը յայտնուին իր հոգիին մէջ հոդեբանօրէն, մտածելու և խօսելու հաւատարակշռութիւնը կորսնցնել կու տան։ Հայդուկները անհաւատար կուտի մը մէջ, ոմանք բոցերու և ծուխի մէջ, շնչահեղձ կ'իյնան։ Բարկօն չի զգար, չի հաւատար որ ինք «մատնիչ» է, որովհետև ինչ որ ըսեր ու խօսեր է, անգիտակցաբար ըրեր է. բայց Արիւնի ձայնը կը կանչէ վինքը, ու ինք կը մանէ հայդուկային խումբի մը մէջ, արեան հարկը տալու համար։

Այծեամի պէս վաղող Վազրիկին պատմութիւնը ո՞վ չէ կարդացեր արցունքոտ աչքերով։ Ինը տարեկան է, սիրուելու տարիքին ունի, խաղի ու կատակի շրջանը, ուրախութեան ու խնդութեան տարիքը, բայց մեր երկինքին տակ անո՛նց ալ դերեր վերապահուած են։ Անիկա սուրհանդակի դերը կը կատարէ, իր կուրծքին վրայ կը պահէ վտանգաւոր ու արգիլուած թղթի կտորներ ու լրագիրներ, տունէ տուն կը պտտի, մխիթարութեան ու յոյսի խօսքը կը տանի թագաւորի մէջ գտնուող վիրաւորներուն։ Վերջին անգամ թշնամիին գնդակը կը ծակէ այն կուրծքը, որուն վրայ շարունակ կը պահէր իրեն վստահուած թուղթերը։

Պատանի Վազրիկի քով հասակ առեր է Հազրէն «լեռների աղջիկը», որ երեք անգամ կ'ամուսնանայ, և երեք անգամին ալ կը մնայ անպատակ, «ժայռերի մէջ դուրս ցցուած մինակ ու անպտուղ ծառի» մը պէս։ Բայց դեղի բոլոր երիտասարդները իր զաւակներն են. անիկա կ'ողբայ ամուլ ու յուսահատ մայրութիւնը, և սակայն հոգին լեցուն է մարդկային սիրով, ուրիշներու օգտակար դառնալու և բարիք ընելու ղգայումներով։ Անիկա կենդանի ու շարժուն էակն է գիւղին մէջ, մանաւանդ անվախ կարիճներուն հանդէպ պաշտամունք ունի ու կը սիրէ զանոնք հարազատ մօր մը պէս։ Կուտի ձ'ակատագրական օր մը, երբ պինուսրի մը կուրծքը քարի մը եռեւ պաշտպանելու գործով զբաղած է, թշնամիին կողմէն արձակուած գնդակով մը կը փուռի գետին։ Հազրէն այլասիրութեան, մարդասիրութեան տիպարն է, այնքան գուրգուրանքով ու ճարտարօրէն գծուած։

Տիրացու Գրիգորը հայ ժողովուրդը կը խորհրդանշէ, այնպէս ինչպէս Ծերունի Դէմոն, Դեղօի արտը պատմուածքին մէջ։ Առաջինը դրի առած է, վիպագիրը 1900 թուին, իսկ երկրորդը ձիշտ քառորդ դար վերջ։

Տիրացու Գրիգորը քառասուն երկար տարիներ գիւղի եկեղեցիին սիրաւոյն է, ոչ միայն սիրացու՝ այլ գիտունը, երազ մեկնողը, «գրքացի ու

տեղը կարողը»։ Անոր մազերը ճերմակեր էին մեծաճաւալ գիրքերու վրայ։ Բովանդակ դիւղը կը պատկառէր անկէ։ Անոր սիրած զբաղումներն երկուք էին. որսորդութիւնը եւ տիրացութիւնը։ Օրին մէկը, այս ալեւոր ծերունին ոտիկաններու կը հանդիպի, որոնք ղինքը կը մերկացնեն, մօրուքը կ'այրեն, ու խաղով մը անոր երկու ձեռքերը ալուէսի թակարդին մէջ կը պահեն։ Տիրացուն հայ ժողովուրդի դարաւոր համբերութիւնը կը մարմնացնէ, Աւետարանին երկրպագու, իրեն ապտակ տուողին մէս երեսը կը դարձնէ, վերարկուն ուզողին՝ շապիկն ալ կ'երկնցնէ։ Ոտիկանները ոչ միայն կը կողոպտեն, այլ հեգնանքի ու ծաղրի առարկայ կը դարձնեն։ Ու Տիրացու Դրիգորը, ճարը հատած, գլորուելով՝ կը հասնի անդունդի մը եզերքը, ու ինքղինքը վար կը նետէ, վիրաւոր, այրած դէմքով ու արիւնաթաթաւ մարմնով։ «Անարգուած ծերութիւնն» էր, որ իններ էր այդպէս անդունդի մը խորը։

Եթէ մասնաւոր դիտումով գրուած չըլլար այս պատմուածքը, պիտի ըսէինք, որ հեղինակը երեւակայութեան ուժին ապաւինած, գրի առած է այս էջը, և սակայն անիկա ձգտումն ունի, սթափեցնելու հայ ժողովուրդը, ցնցելու անոր դարաւոր սարկութիւնը և համակերպող ոգին, հասկցնելու համար որ Աստուծմէ, երկինքէ, ու եկեղեցիէ փրկութիւն չի կայ, եթէ դուն ի վիճակի չես չարագործ ձեռքը կոտրելու և ոճրագին գանկերը պայթեցնելու։ Տիրացու Գրիգորին անպատմելի ճակատագիրը, հայ ժողովուրդին ճակատագիրն է եղեր դարերէ ի վեր։ Մերկ ու սարսափելի մարմինով, եկեղեցիին մէջ կանգնող տիրացուն՝ ինքը հայ ժողովուրդն է. «Թըշուառանե՛ր, կը գոչայ Տիրացուն, քաւասուն տարուայ աղօթքի, բարեպաշտութեան վարձն այս մարմնիս խոցերն են, այս արեան շերտերն են, այս ջարդուած ոսկորները, այս քրքրուած միսս է, այս բազուկներիս վէրքերն են...։ Սարսափեցէ՛ք խեղճ ողորմելինե՛ր, և Թո՛ղ ձեզ հետ միասին դողան և սարսափին եկեղեցին և Աստուած...» (1)։

Եթէ քաղաքական ազատութենէ զրկուած ու համակերպութիւնը միակ միջոց ճանչցող սերունդը *Տիրացու Գրիգորն* է, *Դեղօի արտը* պատմուածքին ծերունի Գէվոն տնտեսական գերութեան ու անապահովութեան մէջ տքնող, անհոգ ու անտէր, թափառական Հայութիւնը կը խորհրդանշէ, որուն աչքերուն մէջ կը կարդացուի հետեւեալ խօսքը. «Փրկութիւնը ո՞րտեղից պիտի գայ...»։

---

(1) *Ա. Ահարոնեան* Ազատութեան ձանապարհին, գ. տպագ. Պօստոն էջ 174։

* * *

Կեանքի դասը (1) պատմուածք մըն է, որուն մէջ հեղինակը համամարդկային սիրոյ ու կարեկցութեան, խղճահարութեան ու այլասիրութեան ոգիները կ'արձանագրէ։

Զգայութեան այս երակը Ահարոնեանի գրականութեան աչքառու մէկ երեւոյթն է։ Արուեստագէտին սիրտը հզօր ու տիեզերական սիրոյ համար կը բաբախէ։ Մարդուն տառապանքն է, որ հոգիները կը դաստիարակէ, կը դարբնէ։ Կեանքի հզօր ձայնին ու թշուառութեան առջեւ ամէնէն նիւթապաշտ էակն անգամ անընդունակ է իր մէջ խեղդելու հոգիի խորերէն բարձրացող ու հետզհետէ արտայայտուելու հակամէտ զգայութիւնները, որոնք ջերմ արցունքներ կը բերեն մինչեւ այդ օրը մարած ու անկենդան աչքերու մէջ։

Բժիշկ Արաքսեանը այդ տիպարներէն է։ Համոզուած մըն է նախապէս, «Վա՜յ պարտուածին» նշանաբանին. տկարները պէտք է մեռնին, ուժովները տեղ բանալու համար։ Այս բոլորը բնութեան օրէնք կ'ընդունի ան։

Եւ սակայն կայ կեանքի օրինակը շա՛տ աւելի ազդու, քան գաղափարապաշտ գիրքերու հատորները եւ ընկերական վիճաբանութիւնները, որոնք ո՛եւ է կերպով չեն կրնար տարհամոզել բժիշկ Արաքսեանը, որուն նպատակն է, ուսանողական այնքան զրկանքներէ վերջ, «հարուստ աղջիկ, շքեղ տուն ու կառք»։

Բժիշկին սենեակին կից կը բնակի գիւղական ուսուցիչ մը, իր երկու զաւակներով։ Ուսուցիչը հիւանդ է, կը հազայ...։ Իր աղջիկը, Շուշիկը, արցունքոտ աչքերով ու այլայլած, կու գայ յայտնելու բժիշկին իր հօր հիւանդութիւնը։ «Մի սառը բան անցաւ մարմնովս, կ'ըսէ բժիշկը, ես դողացի հասկանում ե՞ս, ես դողացի այդ խեղճ՝ այլ թոյլ, դողդոջուն արարածի առաջ։ Ինչո՞ւ դողայի, ես լսօ պլինկ ներվեր ունեմ. դու այդ գիտես, ես մինչեւ այժմ էլ չեմ կարողանում հասկնալ, թէ այն ի՞նչ սարսուռ էր, որ անցաւ իմ մարմնով»։ Ու աւելին՝ անիկա իր կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով կը համբուրէ *աշխարհի վիշտը, մերձաւորի ցաւը սրբազան, այդ անմեղ դէմքի վրայ...*։

Շուշիկի հայրը կը մեռնի, և երկու որբերուն պաշտպան կը կանգնի, երբեմն նիւթապաշտ և եսասէր բժիշկ Արաքսեանը...։

---

(1) Արազը, *Թիֆլիս 1904.*

Թերեւս անբնական կը գտնէք բժիշկին դիմագծութիւնը. երբե՛ք. կեանքի մէջ յաճախ կը պատահին նկարագրի այդ հակոտնեայ գիծերը, միեւնոյն մարդուն մէջ։ Մեր անգիտակից հոգիին մէջ պահուած զգայութիւնները առիթի մը կը սպասեն յայտնուելու համար, երբեմն բացասական երբեմն դրական. այս է պատճառը, որ երբ նկարագրի աչքառու փոփոխութիւն մը կը տեսնենք ո և է մէկուն վրայ, մեզի տարօրինակ կը թուի, քանի անծանօթ կը մնան այդ փոփոխութիւնը երեւան բերող ազդակները, որոնք շատ անգամ խիստ աննշան են։ Եթէ ծանօթանանք այդ ազդակներուն, այն ատեն երեւոյթը աւելի պիւրին կը բացատրուի։ Այսպէս է պարագան բժիշկ Արաքսեանի, որուն սիրտը կ'արիւնի և հոգին կը տարտաչայ, տեսնելով անմեղ մանուկ մը, և զգալով անոր հոգին տակն ու վրայ ընող փոթորիկը, որ քանի մը կաթիլ արցունքի մէջ հայելացած էր։ *Կեանքն է*, որ կը խօսի, և *իր դասը* կուտայ եսասէր մարդուն, յաճախ ակամայ, առանց այս վերջինին արամադրութիւնները շօշափելու։

* * *

Տեղ մը ըսած եմ արդէն, որ Ահարոնեան խորապէս ազդուեր է վերջին կէս դարու ռուսական գրականութենէն։ Մանաւորաբար Ծստէեվսկիի հոգեբանական վէպին ներգործութիւնը շատ մեծ է եղեր։ Առանց այդ տարբրին, առանց հոգիի խոր անդունդներու խուզարկութեան, անոր ստեղծագործութեան կարեւոր մէկ մասը դուրս ձգել պէտք պիտի ըլլար, և ժամանակէ մը յետոյ իր այժմէութիւնը կորսնցուցած գրականութիւն մը պիտի նկատուէր։

Բարեբախտաբար հոգեբանական մասը իր տիպարներու վերլուծումին, ուժ ու տեւականութիւն կու տայ, և ապրելու կը սահմանէ իր գործին կարեւոր մէկ մասը։

Այդպիսի էջերէն մէկն ալ *Արազը հասորին Անհաւատը* պատմուածքն է, որուն մէջ անհաւատ Աթօի հոգիին պատկերը յաջող կերպով վերարտադրուած է։ Հոն հոգեբան Ահարոնեան իր դերին մէջն է, տիպարը կը յիշեցնէ *Ոճիրը եւ Պատիժը* հասորին հերոս՝ Ռասքոլնիքովի։

Մարդկային հոգին շա՛տ բարդ ծալքեր ու գաղտնիքներ ունի. եթէ արուեստագէտը յաջողեցաւ այդ ծալքերէն մէկը բանալ ու լոյսին բերել ծածկուած գաղտնիք մը, արդէն իր դերին մէջ մտած կ'ըլլայ ու ժամանակներու մաշող ուժին առջեւ ինքզինքը փրկած։

Անհաւատ Աթօի հոգիին տանջալից պատկերն է, որ կը նկարուի մեր

առջև. գողութիւն մը ըրած է ան, ու այդ փաստը կը բաւէ, որ արդար ու ճշմարիտ մարդու մը անգիտակից աշխարհը փոթորկի, հանգիստը խռովի ու իր ներքին ձայնը զինքը հալածէ։ Իր խղճին ձայնը խեղդելու համար, անիկա ամէն կողմ թշնամի կը տեսնէ, տեսլութիւն կը զգայ ամէնուն հանդէպ, մէկ յանցանքը մխսին կը յաջորդէ. արտաքին աշխարհին մէջ, միջատ, կենդանի ու բոլոր մարդիկ իրեն թշնամի կը նկատէ, ու անոնց դէմ պայքարելով, կը յուսայ դադրեցնել իր հոգիին աղաղակները։

Աթոն գիւղական տիպար մըն է, և սակայն կը կրէ մարդկային հոգի մը, անկախ միջավայրէ, ժամանակէ ու հորիզոնէ։ Եւ արուեստագէտը տառապող Աթոն կը ներկայացնէ տան մը մէջ, ուր երկար տարիներ ապրեր ու ծառայեր է ինքը. մարդոց ծօտ, որոնք դժբախտութիւնն են ունեցեր կորսընդնելու իրենց մէկ եզը, և զայն փոխարինելու համար ընտանիքի կինը իր վարդեղէնները կը ծախէ, չխուն րուբլի կը գոյացնէ, այդ դրամով նոր եզ մը գնելու համար։ Դրամը Սէֆօի ձեռքի թուղթին մէջէն կը սահի գետին, Աթոն կը վերցնէ..., և որուն շնորհիւ կը յուսայ իր հարսնիքն ընել։

Թշուառութիւն ընտանիքին մէջ, տանջանք ու տառապանք Աթօի հոգիին մէջ։ Անիկա կ'ողբայ իր խեղճութիւնն ու թշուառութիւնը, և իր հոգիին բեռը թեթեւցնելու համար, կու լայ, կու լայ ծանաւանդ իր կորսնցուցած խղճին համար։

Ծառապող ու խղճահար սիրտը կը դիմէ անհատապակշիռ ու անպատասխանատու գործերու։ Նոյնիսկ վրէժխնդիր կը դառնայ իր սիրած աղջկան հանդէպ, որ մեկ աղբիւրը կը նկատէ թէ՛ իր թշուառութեան և թէ՛ իր երջանկութեան. տեսակ մը լեցուն բաժակ մեղրով ու թոյնով, որուն մէկ մասը լեցուած է մեղրով և յատակը կայ թոյն, աղջիկը անոր աչքին թէ զոհ է և թէ գահիճ։

Գոլ սիրտը գոլ. Աթոն հանգիստ չի կրնար քնանալ, կը կասկածի թէ իր շարժուձեւերէն, իր նայուածքէն պիտի գուշակեն ամէն բան։

Գիւղացիները հնարքով կը գտնեն գողցուած ղրամը, և սակայն Աթօի հոգիին մէջ մարդոց հանդէպ ատելութիւնը կը սաստկանար, զինքը կը զայրացնէին այդքան արդարութիւնն ու առաքինութիւնը, ինչո՞ւ համար ուրիշ մը բերեր յանձներ էր իր գողցած ղրամը։ Այդ ուրիշը իր ընկերը, Գասպարն էր։

Ամառուան սաստիկ տաք օր մը, Աթոն ու Գասպարը դաշտին մէջ են։ Գասպար կը խայթուի օձէ մը, ամբողջ մարմինը կը թունաւորուի ու տանջանքներու մէջ, մեռնելու պահուն կը գոչէ. «Անգո՛ւթ Աստուած, քեզ ի՞նչ

էի արել»։ Իսկ Աթօ կը մտածէ. «Ծէր Աստուած, փողը ես գողանամ, օձը Գասպարի՛ն կծի, իմ խեղճ, իմ Բարի Գասպարին. ո՞ւր է արդարութիւնը, ո՞ւր է հատուցումը»։

Այս դէպքը երեւան կը հանէ Աթօի հոգիին մէկ ուրիշ կողմը, խղճի խայթէ տառապողը թեթեւութիւն կը զգայ և ուրիշ կերպ տրամաբանել կը սկսի։

«Ընկերոջս մահը սակայն մի հարցը լուծեց ինձ համար. ես այժմս այլեւս չէի փնտրում փող տուողին. պէտք չէր իմանալ, թէ ո՛վ է այդ մարդը, որովհետեւ փողը յետ տալու մտադրութիւն չունէի այլեւս։ Եւ ինչո՞ւ յետ տամ, մտածում էի, ինչո՞ւ համար բարութիւն անեմ. մի թէ՞ կարող եմ այնքան բարի լինել, այնքան ճշմարիտ, որքան Գասպարը։ Վե՞րջը... ի՞նչ օգուտ դրանից, ի՞նչպիսի մահով մեռաւ նա, ի՞նչ տանջանքների մէջ. ո՛չ, ո՛չ, ես փողը ո՛չ մէկայն յետ չեմ տայ, այլ թէ կարողանամ՝ էլի կը գողանամ, աւազակ կը դառնամ, սար ու ձոր կ՛ընկնեմ, կը խլեմ, կը թալանեմ. մէկ չէ՞, երկնքի առաջ բարի լինեմ թէ չար, արդար թէ անարդար. գողի և առաքինի մարդու մէջ երկինքը խորութիւն չի տնում, էլ ինչո՞ւ պիտո, ո՛ղորմած, սիրող լինեմ, ո՞ւմ համար և ինչո՞ւ համար. ո՞ւր է հատուցումը, ո՞ւր է արդարութիւնը» (1)

Սրտին բեռը թեթեւցնելու համար իր գողութեան յանցանքը կը խոստովանի քահանային։ Բայց խղճին ձայնը չի կրնար լռեցնել։ Եկեղեցի երթալէ կը դադրի, և մարդիկ «անհաւատ» է կ՛ըսեն։ Իր չարագործութիւնը այնքան առաջ կը տանի, որ խեղճ ու թշուառ մուրացկան մը կողոպտել կը փորձէ։ Երկինքէն պատժուելու համար անգթութեան ու անխղճութեան գերագոյնը կը փորձէ, ու երբ մուրացիկին հեկեկանքը կը լսէ, իր կեցած տեղը կը քարանայ. առաջին անգամն էր որ կը զգար իր հոգիին խորէն, թէ ոճրագործ մըն էր։

Անհաւատը Ահարոնեանի լաւագոյն պատմուածքներէն մէկն է, որուն մէջ մարդկային տարրը, խորապէս ներկայացուած է. մանաւանդ չափուած է հոն մարդու հոգիին խորութիւնը, անյատակ խորութիւնը...։

* * *

Հոգեբանական ճիշտ պատկեր մը կը գծէ նաև Ահարոնեան, ներկայա-

(1) Արազը, էջ *112—113* Անհաւատը գրուածքէն։

յընելով մեզի հինգ տարեկան որբ Բարիկը, *Խաւարի մէջ* պատմուածքով։ Անիկա նախ չի հաւատար, որ իր մայրիկը գերեզմանատան ծանր քարը շրջելով, կրցեր է տուն գալ, երկա՛ր բացակայութենէ մը վերջ։ Ու մանաւանդ անոր մանկական սիրտը չի կրնար սիրել իր խորթ մայրը Սօնան, որմէ ա՛նքան կը վախնայ։ «Մի լուռ պայքար էր սկսւում այդ կնոջ և այս փոքրիկ երեխայի մէջ, կը գրէ Ահարոնեան, մէկը վարպետօրէն նենգ ու թունոտ, միւսը՝ անմեղօրէն վախկոտ, թոյլ և զինուած միայն իր յստակ հոգու բնազդով։ Սօնայի սկզբնական հակակրանքն ու սառնութիւնը դէպի այդ երեխան կամայ կամայ թանձրանում, պատնում էր բուռնատելութեան այն օրից, երբ նա իմացաւ, որ Բարիկն իր աչքերի մէջ կենդանի և հրապուրիչ պահում է մօրը» (1)

Նոյն էջին վրայ դարձեալ.

«Կատաղի խանդոտութիւնն ու ատելութիւնը օր աւուր աճում էր նրա հոգում զէպի փոքրիկ երեխան և այլեւս անտարբեր չէր կարողանում նայել նրան։ Այդ երեխան նրա աչքում իր կենդանի և ամենազօր հակառակորդն էր, որ առաւօտից երեկոյ շարժւում էր իր աչքերի առաջ, տիրում էր իր հօր սրտին, և անգիտակցաբար պինդ պահում էր նրա հոգում այն տեղը, որ մի օր իր հարազատ մօրն էր պատկանում։»

Այսպէս խորթ մայրը, Սօնան, իր հոգիին ատելութիւնը շատ անգամ ստիպուած էր ծածկել, նոյնիսկ կեղծել ու գուրգուրալ Բարիկի վրայ։ Եւ սակայն ի զուր. չէ՞ որ ատելութիւնն ալ սիրոյ չափ ուժով է մարդկային հոգիին մէջ ու անսանձ։

Բարիկին հայրը Թաթուլ, վարպետ քարտաշ էր. ստիպուած էր շատ անգամ մեկ երկու շաբաթ բացակայիլ տունէն։ Եւ Սօնան *խաւարին մէջ* կը խաբէր իր ամուսինը, որ իր սիրելի զաւկին պաշտպանութիւնն ու խնամքն անոր էր վստահեր։ Իսկ Բարիկ բնազդով կը զգար վտանգը, որ կը սպառնար իրեն ու կը մեծնար հետզհետէ այդ հիւանդագին մթնոլորտին մէջ։

Բարիկ աչքի հիւանդութիւն կ'ունենայ, անասելի տանջանքներու կը մատնուի. տատիկ յաւը մեղմօրէն իր աւերը կը գործէր անմեղ, ութը տարեկան տղուն աչքերուն մէջ, որոնք յաւէտ պիտի խաւարէին։

Հարուածն անսպասելի էր ու անբուժելի։ Թաթուլի մխիթը կ'ըմբոստանայ այս անարդարութեան համար, ու պատնալով իր Դասպար ընկերոջը կ'ըսէ. «Ախր տասներկու ժամի հիմք եմ տաշել, հարիւր խաչքար եմ շինել...

---

(1) Խաւարի մէջ, էջ 48.

կը փշրեմ բոլորը, լսո՞ւմ ես, էյ կապուտաւոր տէ՛ր, կը փշրեմ, կը վառեմ քո տները...»։

Դժբախտ հայրը ամէն մարդէ խորհուրդ կը հարցնէր ու ճար կը խնդրէր. մուրացիկ, թափառական մարդ ու ճամբորդ, որուն որ դիմեց, ոչ մէկը կրցաւ դարման մը ընել։ Բարիկը կոյր էր...։

Բայց կար նաև Թաթուլի ղօրաւոր հաւատքը։ Անիկա անհունօրէն կը սիրէր իր միակ զաւակը, իր առաջին կնոջ կենդանի յիշատակը. ատոր համար գնաց բոլոր ախտաւորեցիները ու եկեղեցիները, դիմեց նաև բոլոր սուրբերուն։ Բայց ամէն բան անղօր եղաւ Բարիկին աչքերուն լոյսը վերադարձնելու համար։

Հայրն է, Թաթուլը, որ լեռ ու ձոր կ'իյնայ այս երկրորդ հարուածին վրայ, որ երկինքէն կու գար...։ Իսկ Սօնան կը խաբէր իր ամուսինը անոր բացակայութենէն օգտուելով։ Կը խաբէր Բարիկի կուրցած աչքերուն առջև, թէև մանուկը կը զգար ամէն բան իր հոգիին գիտակցութեամբն ու արթնութեամբը։ Դժբախտ տղան կը զգար մանաւանդ, որ խաւարին մէջ բան մը տեղի կ'ունենար, անծանօթ ձայն մը կը լսուէր, և որուն կը յաջորդէին համբոյրներ։ Խաւարին մէջ պարկեշտ ու աշխատասէր արհեստաւորին տունը կը քանդուէր։

Օրին մէկը տեղի կ'ունենայ անխուսափելին։ Անծանօթ մարդը նորէն տուն է եկեր, Սօնայինը քովը։ Բարիկ չի կրնար պահել այլ եւս լուութիւնը, զոր խոստացեր է վաղէն իր խորթ մօրը։ Գիշեր է, կը տանջուի, չի կրնար քնանալ ու ինքզինքը բակը կը նետէ։ Բնազդաբար Զօմարին քովն է, իր միակ հաւատարիմ ընկերոջ, որ բնազդով կը նախազգայ ամէն բան։ Կը քակէ անոր շղթան, և շունը դրան քով կը սպասէ իր որսին, ընտանիքի պատիւը բռնաբարող «մարդուն»։ Եւ երբ այս վերջինը մեկնելու փորձ կ'ընէ, Զօմարն է, որ կը նետուի անոր վրայ ու պատառ պատառ կ'ընէ։ Մարդը ինքզինքը կը պաշտպանէ ու գնդակ մը շունը գետին կը փռէ արիւնլուայ։

Թաթուլ կը վերադառնայ, կը տեսնէ իր տան կործանումը, տեղի կ'ունենայ ճակատագրականը, կը խենթենայ...։ Մուրճի երկու հարուածներ առաջինը ձիուն գլխուն, և երկրորդը իր գանկին, վերջ կու տան այս տառապագին կեանքին։

Փոքրիկ, կոյր Բարիկը սազը շալկած, կը հետեւի աշուղ Սարհատին։

*
* *

Խաւարի մէջը Ահարոնեանի լաւագոյն գրուածքներէն է, որուն խորքը

ապգային նեղ շրջանակէն դուրս գալով, կը դառնայ համամարդկային։ Հոն անհատատարիմ ու արգիլուած սէրէն աւելի, խորթ մօր մը իր խորթ զաւկին հանդէպ զգացած նախանձն ու ատելութիւնը կը հասուննան, աւելի զօրաւոր ու հոգիին անպիտակցական աշխարհին յատուկ։ Մարդը մարդ է, և կինը կին, բոլոր երկինքներու տակ, բոլոր հորիզոններու վրայ։ Հոգին անյատակ է ու առեղծուածներով լի, ամէն աստղերու տակ, ըլլայ ան Ասիա թէ Եւրոպա, ըլլայ գիւղական թէ քաղաքի տուներուն մէջ ապաստանած։ Դրժբախտութիւնը ամէն տեղ է հաւասարապէս, երբ մէկ կողմը կայ խաբուողը, և միւս կողմը խաբողն ու դաւադիրը։

Սօնայի զգացած նախանձը, որ բնականօրէն կը վերածուի ատելութեան, անպաշտպան, թշուառ որբի մը հանդէպ, շատ բնական ու մարդկային զգացումներէն մէկն է։ Անիկա իր սնունդը կը գտնէ անմեղ մանուկի մը գոյութեանը մէջ, որ մղձաւանջի մը պէս կը յիշեցնէ մեռնող մայր մը, սիրելի էակը արհեստաւոր ամուսինի մը, որոնց երկուքին ամուսնութեան օրը, եթէ ոսկի ու մարգարիտ չի տեղայ, գէթ՝ արև ու կրակ սիրող, սէր ու ուրախութիւն փառաբանող երիտասարդութեան կողմէ երգերով ու գովքերով ողջունուեցաւ։

Բնական է այդ զգացումը խորթ մօր մը համար, որ կը զգայ անցեալին յարութիւնը տակաւ ու ազատուն մանուկի մը աչքերուն խորը, բիբերուն ծայրը, շրթունքներուն եզերքը, որոնք բոլորն ալ կը յիշեցնէին, այնքան հարազատօրէն իր մեռնող մայրը, Մարանը, գեղի այն աղջիկը, որ երգերու մէջ ապրեցաւ իր աննման գեղեցկութեամբ։

Նոյնքան բնական է ուրեմն ատելութիւնը, զոր Սօնան կը զգայ Բարիկին հանդէպ։ Այս երկու զօրաւոր զգացումները իր կուրծքին մէջ կրող կինը ընդունակ է անշուշտ մինչև ծայրը երթալ, տունը օտար «մարդ» ընդունիլ, դաւաճը պարպել մինչև վերջին կաթիլը, ու զայն փշրել ոտքերու տակ...։

Ահարոնեան մեզի պատմեց նման ընտանեկան դէպք մը *Երբ ծիւնն է իջնում* պատմուածքին մէջ։ Գիւղական աշխարհը անպայման հարուստ է նման մեղքերով, որոնք կը գործուին *խաւարին մէջ*։ Այդ մեղքերը մեզի պատմեր էլին ուրիշ գրագէտներ ալ, որոնք գիւղի աշխարհն ու գիւղացի տիպարին հոգին վերլուծել փորձեցին մեր գրականութեան մէջ։ Ռ. Զարդարեանի *Սեւ հաւը կանչեցը* և կամ Թլկատենցիին շատ մը պատմուածքներուն մէջ, անհատատարմութեան ու անխոստովանելի մեղքերուն, նախանձի ու ատելութեան կրակովը քանդուող հոգիներու փլուզումը հինէն կու գայ։

Գալով Թաթուլի դիմագծութեան, անիկա մարդկայնօրէն ճիշդ է։ Ճա-

կատագրի հարուածներէն ընկճուող մարդը, ընդունակ է ճակատը վեր բարձրացնել, չափել անհունութիւնն ու հոն փնտռել այն էակը, որ կը տնօրինէ ոտեզերքը։ Անիկա ընդունակ է փնտռելու ուժ մը, որ կը նախանձի համեստ ընտանիքի մը, արհեստաւորի մը ճակտին քրտինքովը կազմուած օճախի մը գոյութեան ու կայծակ կը թափէ անոր գլխուն։

Հարուածը նախ կը հասնի գեղեցիկ ու սիրուած կնոջ մը, որ հազիւ թէ տարի մը կեանքեր էր իր ամուսնին հետ։ Երկրորդ հարուածը անմեղ մանուկի մը վերապահուած է. պէտք է որ կուրնան այն աչքերը, որոնք յիշատակի մը համար կը շողան. պէտք է վերջապէս աղարտուի պատիւը քարտաշին, որ երկրորդ անգամ հարս կը բերէր տունը, անոր խնամքին յանձնելու համար որբուկ մը։ Իրարու ետեւէ թափուող այս կրակներուն տակ ի՞նչպէս կ'ուզէք որ Թաթուլի սիրտն ու հոգին դիմանան։

Նախ կը խախտի անոր հաւատքը բոլոր աստուածութիւններուն վրայ, որոնք կը վարեն աշխարհի բախտը. ո՛չ միայն չէի հաւատար այլեւս, այլ հակադարձօրէն, կ'ուրանայ գոյութիւնը ո և է ուժի, որ բարիք կը կամենայ մարդոց՝ դժբախտութեան այս հովիտին մէջ։

Այս բոլորէն վերջը ճակատագրական է, որ անիկա կորսնցնէ իր բանականութիւնը, իմացական ուժերը կորսնցնեն իրենց հաւասարակշռութիւնը, ու մուրճի փրկարար հարուածով մը կը փոխադրուի անծանօթին գիրկը... կարծես արդարացնելու համար Շոպէնհաուէրի հետեւեալ խօսքը, իր գրքին համար իբրեւ յառաջաբան ընտրուած. «Մենք նման ենք գառների, որոնք խայտում են մարգագետնի վրայ. մինչդեռ մսագործը կանգնած՝ լուռ դիտում է և ընտրում մէկն ու մէկին»։

Ահարոնեան խաւարին տիրապետութեան, չարին յաղթանակին համար, որ կը գործէ միշտ մութին մէջ, մի՛շտ սարսափ զգացեր ու նզովք կարդացեր էր իր գրականութեան առաջին տարիներէն խակ։ Այս պատմուածքով անիկա անգամ մըն ալ կը մոլորի անոր ճանկերուն մէջ, չի կրնար գտնել իմաստը որ կայ անոր գոյութեան մէջ, չի կրնար տալ ճիշտ անունը անոր, որ կը դաւադրէ մարդկային բոլոր առաքինութիւններուն դէմ, գեղեցկութեան ու սիրոյ, բարիին ու ճշմարտին, արդարին ու կատարեալին դէմ, ուժ մը որ կը գործէ աներեւոյթին մէջ ու կը ծիծաղի դիւային ծիծաղով մը...։

*
* *

Աւետիս Ահարոնեան շարք մը գործեր ունի, որոնց մէջ կը յայտնուի

ան բոլորովին տարբեր փիլիսոփայութեամբ։ Այս շարքէն կարելի է ընդունիլ *Անդունդը*, *Գայլերը ոռնում էին* և *Աստուծու կրակը* պատմուածքները։ Այս գրուածքներուն մէջ երեւան կու գայ մէկ կողմէն հասարակական մարդը, կեանքը ճանչցած ըլլալու խոր գիտակցութեանք, և միւս կողմէն՝ մտածող մտաւորականը, որ կեանքն ու գոյութիւնը կը նկատէ առհասարակ շա՛տ նեղ, ճնշիչ ու նզովուած։ Ծռեւտեսութիւնը և կեանքին բացասական կողմերը տեսնողի վիշտը կը կարդացուի անոր այս էջերուն մէջ։

Անդունդը (1) պատմուածքն է դարաւոր կարօտութեան ու չքաւորութեան, որ հայ երիտասարդը պանդխտութեան կը տանի, հեռու իր ծննդավայրէն։ Այս գրականութեան լաւագոյն ու ապրող էջերը տուաւ մեզի ժամանակին Հրանդ (Մելքոն Կիւրճեան), պտտելով Պոլսոյ խաները ու մտիկ ընելով լքուած գաւառացիներուն պատմութիւնը։

Անդունդին հերոսը Արութն է։ Անիկա գիւղը ձգեր ու հեռացեր է պէսպի օտարութիւն, աշխատելու ջերմ փափաքով։ Երկար բազուկներ ու հզօր կուրծք ունի, և սակայն ոչ ոք իրեն գործ մը կ'առաջարկէ։ Ոչ միայն ինք պէտք է ապրի, այլ նաեւ պարտաւոր է ապրեցնել իր պառաւ մայրը, որ փոքրիկ ու մխոտ խրճիթի մը մէջ, հիւն օրերէն մնացած ճախարակի մը վրայ կը մանէ ու կը մանէ, իր վշտագին երգը միացնելով ճախարակին միօրինակ ձայնին. ու նաեւ գեղանի հարս-Ծովիկը, «որի գեղեցկութեան հրապոյրը փայլ տուեց մուայլ խրճիթին և պառաւ մօր կնճիռների վրայ խաղաց որպէս վաղորդեան արեւի ցոլքը»։ Ու նաեւ զաւակները, որոնց կարօտը շուտով կը մոռնան մեր դարիպները...։

Արութ վտարանդի, հալածական ու քաղցած կ'իյնայ մեծ քաղաքի մը անդունդին մէջ, ուր կուլ կ'երթան բոլոր անոնք, որ թոյլ են, միամիտ ու արդար, և որոնք կը հաւատան թէ ճակատագրին սահմանածը կարելի չէ փոխել։ Արութ կը հանդիպի մանկութեան իր ընկերոջ Թորոսին, ուրիշ անունով՝ Բուլատին։ Այս վերջինը տարբեր խմոր ունի. չի հաւատար որ ուրիշներուն հարստութիւնը, փառքն ու շքեղութիւնը երկինքէն է տրուած. ընդհակառակն համոզուած է, որ մէկը միւսէն յափշտակեր է, մէկին աշխատանքին ու քրտինքին պտուղը կը վայելէ միւսը։

Բուլատի խորհուրդներն ու թելադրութիւնները հաճելի չէին Արութին։ «Քանի գնում էր, կը գրէ հեղինակը, նրան դուր չէր գալիս. նրա ասածները իր համար մուայլ անդունդ էր, ուր նայիլ չէր կարողանում առանց գլխի

---

(1) *Ա. Ահարոնեան*, Անդունդը, տպ. Թիֆլիս, 1910 ին։

պտոյտի։ Այդ անդունդը՝ ահաւոր ու խաւար, լի էր իր համար անհասկանալի հազար ու մի պատկերներով, որոնք ինչպէս մրրկի շնչով պառնում էին ու քաշքշում իրար։»

Բայց մարդ արարածին մէջ կայ թաքուն տկարութիւն մը։ Արութ կը տարուի Բուլատի խոստումներէն, հարստանալու և դրամ դիզելու համար։ Նախ կը հետեւի անոր, դէպի հասարակաց տուն մը. իր անպաղարտ հոգին կ'անարգէ հոն. և ապրուած գիշերուան մը գիտակցութիւնը շատ սուղի կը նստի իրեն։

Քիչ մը դրամով դէպի հայրենիք պառնալու երազին իրականութեան համար, Արութ կը մտնակցի նաեւ արկածախնդրութեան մը, հարուստէ մը դրամ կորզելու վտանգաւոր ձեռնարկին։ Զախողանք։ Արութ կ'իյնայ գնդակէ մը, արիւնլուայ ու ջախջախուած դանկով, ու երկար զառանցանքներէ վերջ, հոգին կ'աւանդէ։

Արութի հոգիին հոգեբանական վերլուծումը յաջող է դուրս եկեր։ Գիւղացի տիպար մըն է, աստուածավախ ու առաքինի, նոյնիսկ իր մոլորած վիճակին մէջ անգիտակցութիւն մը կայ անոր բոլոր շարժումներուն մէջ, մանաւանդ մեղքի գիտակցութիւնը զինքը յուսահատութեան կը մատնէ։ Չի հաւատար, որ աշխարհի մէջ անարդարութիւն գոյութիւն ունի. կը բաւէ որ ինք արդար աշխատանք մը ունենայ, արդար քրտինք թափէ ու իրենները ապրեցնէ։ Ուրիշներուն անարդարութիւնը զինքը մտահոգ չըներ երբեք։

Այս վիճակին մէջ, երբ անսովոր դէպքերու յորձանքին մէջ կ'իյնայ, կը կորսնցնէ իր կամքին ուժը, որ առանց ատոր ալ միշտ թոյլ եղեր է իր մօտ, ինչպէս իր նմաններուն մօտ։ Արութի հոգին տագնապներու կը մատնուի մանաւանդ, երբ անմեղ մարդ մը սպաննելու հաւանականութիւնը կը ներկայանայ. անիկա ինքզինքը մարդասպան ու ոճրագործ կ'անուանէ, մեկը, որ ուրիշին անմեղ արիւնին մէջ մատը պիտի թաթխէ։ Արութը չէ անոնցմէ, որոնք կը հաւատան աստուածային հատուցման գերագոյն գեղեցկութեան։ Հոգին մէջ մեծցած, և անոր բարիքները վայելած, երբ մեծ քաղաքներու անդունդին ու կրակին մէջ կ'իյնայ, անխուսափելիօրէն կորսուելու կը պատապարտուի։

Ահարոնեան հետեւեալ կերպով կատայ մեղի անոր հոգեկան տագնապին պատկերը, գիշեր մը անխոստովանելի ընկերութեան մը մէջ անցնելէն վերջ. «Մշուշը պատել էր նրա ուղեղը, չընայելով իր բոլոր ջանքերին վերապրել այդ անիծուած գիշերուայ գարշելի պատկերները և տանջել, խարազանել իրեն զարթնած գիտակցութեան մտրակով։ Շատ բան չէր յիշում, բայց

ինչ որ յիշում էր, այն էլ բաւական էր, որ նրան գեղեցիկ, անաղարտ հոգին անօթից կարմրէր, ինչպէս բարկ Թանիր։ Պատկերները, ինչպէս այլանդակ ճիւաղներ, խօլ ձեւերով երեւում էին շամանդաղի մէջ և արագութեամբ ծածկւում. ու նրանց տեղը մնում էր անարգանքի մի խորին զգացմունք, որ համակել էր նրա ամբողջ էութիւնը ինչպէս մինչեւ ոսկորները թափանցող ցուրտը։ Ու նրան թւում էր, թէ մէկը մահացու անարգանք է հասցրել նրա կնոջը, պղծել է հօր գերեզմանը, նրա բոլոր մեռելներին, թէ նրան ծեծել են, տրորել ցեխերի մէջ, ինչպէս ազատ փալաս, ու թքել վրան։ Կ'ուզէր փախչիլ այդ անասելի անարգանքից, բայց զգում էր, որ նա սողում, գալիս է իր յետեւից ինչպէս ազատ հեղեղ».

Անդունդի մէջ Ահարոնեան մեզի պատկերացնել կը սկսի, թէեւ աղօտ ու տակաւ գոյներով, կեանքի մէջ գոյութիւն ունեցող անհաւասարութիւնները, ինչպէս նաեւ անարդարութիւնները։ Առաջին անգամն է, որ ընկերաբանօրէն ճօտենալ կը փորձէ աշխատող անօթիներու և վայելող ծոյլերու, երկու դասակարգերու խորո՜ւնկ հակամարտութեանը, և անոր հետեւանք եղող Թշուառութեան և քաղցածութեան դժոխքին։ Խորապէս կը զգայ, ինչպէս առ հասարակ իր բովանդակ գրականութեան մէջ, որ «ջլախտաւոր ու հիւանդ կեանքը լողում էր հեշտանքի ախտաւոր ծփանքներում և նրա բոց գրկի մէջ, որպէս հսկայական հնոցում լուծւում, շոգիանում էր հարիւր հազարների քրտինքը»։

* * *

Կեանքի դառնութեան, աշխարհի նեղութեան ու նզովուած ըլլալու հարցին կը ճօտենայ անիկա անգամ մըն ալ *Երբ գայլերը ոռնում էին* (1) պատմուածքին մէջ։ Իմաստասէր Ահարոնեանն է, որ մեզի կու գայ ըսելու թէ անիմաստ է երջանիկ ըլլալ անհատական այն ազատութեամբ, որ յարաբերական ըլլալով մեկտեղ, կախում ունի ուրիշներուն մահէն ու կորուստէն։

Բանտէն փախստական մըն է, որ կը պատմէ իր գլխուն եկածները, բանտին կեանքը, փախուստը և բարեկամ գինուոր մը խեղդամահ ընելը, իր փախուստը ապահովելու և ազատութիւն ձեռք բերելու համար։

Այս սովորական դէպքը սակայն առիթ մը կը դառնայ, որ Ահարոնեան իր մտքին կաշկանդումներն ու շղթաներն արձակէ, նզովելու համար աշխարհն ու իր կարգերը, որոնք մեր ազատութիւնը սանձելու համար ըս-

(1) *Ա. Ահարոնեան*, Երբ գայլերը ոռնում էին, տպ. *Թիֆլիս 1906թն։*

տեղծուած են, որովհետեւ անիկա կը հաւատայ, որ անտառի վայրի կեն-դանիներուն համար իսկ նեղ է այս նզովուած աշխարհը...:

Այս երկու պատմուածքները փիլիսոփայական պատմուածքներու շարքին մէջ պէտք է դասել, ուր գգացումներու յորդումէն աւելի, միտքը կը գործէ, և ուր մտածող գրագէտը ընկերային խնդիրներու քննութեան կը ծանեռնայ դիտակցաբար:

Երբ գայլերը ոռնում էին պատմուածքին մէջ, Ահարոնեան ընկերա-յին – հասարակական զանազան խնդիրներու քովէն կ'անցնի, հարցը կու տայ, միտքերը կը հրահրէ, քեզ մտածելու կը մղէ, ու անմիջապէս կ'անցնի ուրիշ հարցի մը: Պատերազմի դաշտին վրայ իյնող հազարաւոր անմեղ հա-հատակներուն ստուերները կը յաճախեն, երբ ան կը պատմէ անտառին մէջ աշնան գիշեր մը, կրակի մը շուրջ, բանէն փախչողի մը յուշերը:

Մեզ դարձեալ խորհրդածութեան կը մղէ, բանալով բանի սովորա-կան մեկ զինուորին հոգին, ուր բարութիւն ու ազնուութիւն, բարեկա-մութիւն ու ընտանեսիրութիւն կը բնակին, և որ սակայն հրացանը ձեռքին մէջ, կը սպասէ ազդանշանի մը, թերեւս անմեղ բանտարկեալ մը գետին տա-պալելու համար. բանտարկեալ մը, որ իրեն պէս, հեռուն սպասող ու ար-տասուող մայր մը ունի...:

.....

Բ.

«ԼՌՈՒԹԻՒՆԸ» — «ԻՏԱԼԻԱՅՈՒՄ». — «ԻՏԱԼԱԿԱՆ ԷՍԿԻԶՆԵՐ». — «ՇՎԼԷՑՑԱ-ՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ». — «ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ». — «ՄԱՅՐԵՐԸ». —

.....

Հայ գրականութեան ու իր վաստակաւորներուն մասին մեր ունեցած գաղափարները շա՛տ հինէն կու գան։ Մեր պատանեկութեան շրջանին կարդացեր ենք ղիրենք, ու անկէ ի վեր վերաքննութեան ենթարկած չենք մեր ստացած տպաւորութիւնները։

Պարագան նոյնն է նաեւ Ահարոնեանի նկատմամբ։

Մանաւորաբար անոր Լռութիւնը վէպին կրկնակի ընթերցումը, անհրաժեշտութիւն մը դարձաւ ինծի համար, երբ ձեռնարկեցի այս քննադատական – վերլուծական ուսումնասիրութեան։

Լռութիւնը հեղինակին երիտասարդ տարիներու ստեղծագործութիւնն է, և իբրեւ այդպիսին, իր վրայ կը կրէ ուսանողական տարիներու ապրումներուն ու որոնումներուն կնիքը։ Երբ զգայուն մէկը կեանքի յորձանքին մէջ կ'իյնայ, անոր հոգին կը տառապի բազմաթիւ հարցումներու առեղծուածին առջեւ, սիրտը կը բաբախէ զեղեցկութեան ու սիրոյ զգացումներէն ու բանականութիւնը կը փնտռէ պատասխանները այն բազմաթիւ բնազանցական խնդիրներուն, որոնք մեր առօրեայ կեանքի սահմաններէն դուրս կը մնան։

Լռութիւնը վէպն է թէեւ երկու զգայուն սիրողներու հոգեկան տառապանքին և սակայն առիթ մը կը պատնայ, որ հեղինակը հոն արձանագրէ քննութիւնը բոլոր այն հարցերուն, որոնք իր միտքը կը տանջեն։ Արտաքին պատճառներով, որոնք վէպին ընթացքը կ'երկարաձգեն, անիկա գեղարուեստական գործի մը դրոշմը կը կրէ։ Սակայն մէկտեղ, գործը կեղծ ու արուեստակեալ չէ, քանի որ երիտասարդ տարիքի անկեղծութիւնը, զգայումներու յորդումը, աշխարհը, իրերն ու մարդիկը ճանչնալ սկսողի հոգեբանութիւնը կայ, լաւատես ու յուսեռես միտքերու յորձանքին առջեւ տարուբերուող՝ տառապող մարդը կայ հոն։

Դարաշրջանի երիտասարդ նկարիչ – արուեստագէտ մըն է, որ բնութեան գեղեցկութիւններուն մէջ, կը փնտռէ իտէալ – գեղեցկութիւնը, տիպարը, որ իր տանջահար հոգիին պապակը և փնտռտուքի կրակը պիտի յագեցնէ։ Անիկա կը հաւատայ որ բոլոր մեծ ու ապրող գործերը լռութեան մէջ կը յայտնուին. լռութեան մէջ է, որ երկու սիրող սիրտերը, անդիտակցաբար ու առհասարութեամբ, զիրար կը փնտռեն, ու մադնիսական զօրութեամբ իրարու կը ձօտենան։ Մարգարիտը կը դառնայ իտէալ – էակը, տիպար գեղեցկութիւնը, որ արուեստագէտին սիրտը կը թրթռացնէ. և այդպէս իրարու նախասահմանուած երկու հոգիներ զիրար կը գտնեն։

Ժամանակակից մտածողութեան, մանաւորաբար Ծօտօեէվսկիի ազդեցութիւնը խորապէս զգալի է այս վէպին վրայ։ Արուեստագէտին ու Մարգարիտին հոգեբանութիւնները շա՛տ ճիշդ գծուած են հոն, ոչինչ անբնական և անկարելի է անոնց հոգիներու վերլուծման մէջ։ Այս պատճառով է, որ քիչ մը շա՛տ յաճախուած հռետորութիւնը չի նեհանցներ վէպին կատուցուածքը և արուեստը։

Ինչ որ հարազատ են Ահարոնեանի արուեստին ու գրական խառնուածքին, բանաստեղծական այն զգայութիւններն են, որոնցմով վէպը խորապէս կ'ազդէ ընթերցողներուն. իրականութեան հոգերէն վերջ, երբ երազով կը տարուին մարդիկ, երբ կեանքի մակերեսոյթէն իրենց ոտքերը կը կտրուին, անոնք աւելի հեշտութեամբ կը փոխադրուին արուեստի վերնագաւառները։

Հոս մեծ դեր կատարեր է անշուշտ երիտասարդական և ուսանողական ամէնէն փափուկ և պատասխանատու տարիքը, որ հեղինակին է եղեր, վէպը գրի առնուած պահուն։

Մարգարիտին և նկարիչին հանդիպումը վէպին մէջ, անկարելի և անհաւատալի զէպքերէն չէ կեանքին մէջ, երբ յաճախ անսպասելին ու անակնկալը կը հիւսեն մեր առօրեայ կեանքին ոտայնը։ Ինչ որ յաճախ անհաւատալի կը թուի, անիկա ճիշդ է հոգեբանական տեսակէտով։ Եւ հեղինակը երջանիկ է, երբ անհաւատալի թուող պայմաններու մէջ կը կերտէ իր ճըշմարիտ ու իրական տիպարները, իրենց հոգեբանական կառուցումով, հոգիի բարդ խորհուրդներով։

Ամբողջ վէպին մէջ խորունկ տրամութիւն մը կը ծաւալի, որ կը գրաւէ էութիւնդ, այնպէս ինչպէս երազուած երջանկութեան մը իրականացումէն յետոյ, անոր կորուստը հոգիդ աւերակի կը վերածէ։

Քնարական ու փիլիսոփայական, Ահարոնեանի այս վէպը, ճակատագրապաշտական բան մը ունի իր մէջ, որուն համաձայն այն ինչ որ տեղի

պիտի ունենայ մեր կեանքին մէջ, տեղի պիտի ունենայ. դէպքերն ու պա-
րագաներն են, որ կը փութացնեն զայն։ Մենք ստիպուած ենք հնազանդիլ
այդ խաւար ուժին, ու քալել, միշտ քալել...»

Եւ սակայն արուեստագէտը առանձնաշնորհեալ այն էակն է, որ իր
տաղանդին շնորհիւ, դիտէ կերպարանափոխել մարդիկը, բնութեան տեսա-
րանները և իր վէպին սիրոյ և թաղձութեան պահերը, հոն կաթեցնելով լոյսի
ու ջերմութեան, զգացումի և երազի մոգական խաղերը։

Այս վէպին մէջ կայ նաև երրորդ անձնաւորութիւն մը, Կլարան, Մար-
գարիտի քոյրը, որ երկու սիրող էակներուն մէջ, իր գոյութեամբ, իր երեւա-
կայութեամբ ու յանկութիւններով, իր հիւանդագին զգայութիւններով պատ-
մուածքին ամբողջութիւնը տրամութեամբ կ'ողջէ։ Հոգեկան հիւանդ մըն է ան,
կարծելով թէ նկարիչը իրե՛ն սիրահարած է, և իր քոյրն է, որ վարպե-
տութեամբ զայն խլեր է իր ձեռքէն։ Նման դէպքի մը և կասկածներու զոհն
է ինք արդէն, երբ նկարիչին հետ ունեցած հանդիպումէն առաջ, Մարգա-
րիտին ամուսինը իրեն սիրահարուած կարծեր է, որուն յիշատակովը այրի
է Մարգարիտը։

Արուեստագէտը եթերային ու աննիւթ էակը փնտուած պահուն է, որ
առաջին անգամ կը հանդիպի հիւանդ Կլարային «Ահա՛ նա, կը մտածէ, այն
երազը մարմնացած մի չքնաղ արարածի մէջ. բայց անմիջապէս այն սպա-
նիչ ժպիտը, նրա խախտուած, խեղաթիւրուած հոգին, նրա փշրուած բանա-
կութիւնն ինձ յետ մղեց»։ Բայց երբ Մարգարիտը կը յայտնուի, նկարիչը կը
հրաժարի մեկնելէ, որովհետեւ անոր մէջ կը գտնէ իր սեփական հոգին, այն՝
որուն երազովը կը ապրէր, և որուն պատկերը գտնել կարծեր էր հիւանդ
ու դժբախտ Կլարայի մէջ։

Դիտակցութիւն և բանականութիւն չեն գործեր նկարիչին մէջ։ Սիրտն
է, որ իր պահանջներն ունի։ Անոր համար սէրը կը նմանի թռչունի մը, որ
իր բոյնն է հիւսեր հոն, երբեք չի հեռանալու համար։ Ճշմարիտ սէրը ար-
ուեստագէտին համար կը պատնայ ներշնչումի աղբիւր. «Եւ վրձինս շարժում
էի, կը գրէ(1), առանց նայելու։ Ինքնաւն ու բուռն զգացմունքով փոթոր-
կուած իմ հոգին յատիշատակութեան այս դերապոյն վայրկեանում իր ծոցից
դուրս է մղում կանացի սքանչելի ձեւերը ինչպէս ստեղծագործող, հզօր ոյժ,
ինչպէս մայր բնութիւնը, որ երկունքի անդուլ ճիգերով կերտում է այնքան
աշխարհներ, ծնում է այնքան կեանքեր։ Ուշքս նոտած հմայիչ կինը իս-

(1) Լուսինը, էջ 145։

կապէս իմ հոգումս էր ապրում, և նրա բոլոր ձեւերը իմ ներքին ղգայմունքի բոցերի մէջ զտուած՝ անխառն ու կատարեալ գեղեցկութեամբ դուրս էին գալիս և աչքիս առաջ կանգնում։ Դեռ երբեք ես այսպէս խորունկ կերպով չէի ղգացել ստեղծագործող արուեստի մեծ պօէզիան»։

Վիլպպերը հոգեբանական այս բարդ հանգոյցը շնորհալիօրէն ու շատ բնական ներկայացուցեր է, ու այս իրողութիւնը իր վէպին գեղարուեստական ստեղծագործութիւն մը դառնալուն մեծ չափով նպաստեր է։ Աստուածութիւնը, կասկածը և նախանձը, հոգիները թունաւորող և ենթակաները ցաւագինօրէն տառապեցնող բացասական այն ուժերն են, որոնք մարդկային ջղային դրութեանը վրայ վատ ազդեցութիւն կը գործեն։ Կլարային տիպարը ախտաբանօրէն շատ ճիշդ գծուած է. այսպիսի տիպարները բոլոր մարդիկը իրենց դէմ դաւեր նիւթող կը կարծեն։

Կլարային չանկարծական նոպայի մը բռնուելուն պատճառը, երկու սիրող հոգիներու գիրկ գրկի հանդիպումը կը դառնայ, որ գինք կ'առաջնորդէ դէպ ի մահ։ Եւ Մարգարիտը իր հոգիին խորը կը պահէ այս մահն ալ, առաջին ամուսինին չիշատակը պահելուն պէս. ամուսնանդ իր քրոջը պարագան աւելի զօրեղապէս կը ներգործէ անոր վրայ, որովհետեւ ուրուականի մը պէս կը հալածուի անկէ։ Եւ երկու սիրող սիրտերը, նկարիչն ու Մարգարիտը իրարմէ բաժնուած կ'ապրին յաւէտ, մաքուր ու անխարդախ սիրոյ չիշատակը պահելով միայն իրենց հոգիներուն մէջ։ Երկուքն ալ կը դառնան «կենդանի ողջակէզներ, այն աստուածուն, որի անունն է կոյր պատահականութիւն, և որ այնքան հզօր է մարդկային բախտերը տնօրինելիս։»

Հապա Լոտի՞ն ... «Նրա տակ է թագնուած իսկական կեանքը. նա է, որ իր առանձին օրէնքներն ու տրամաբանութիւնն ունի որ փշրում է և անցնում դէպ ի մի գերագոյն նպատակ, և մենք այդ չենք տեսնում, չենք հասկանում, խաբում ենք մեզ։ Օ՛, կեանքի մեծ ճշմարտութեան մասին մենք ամենքս չենք խօսում երբեք. լուռութիւնը նրա հսկայական գերեզմանն է։ Այդպէս են ե՛ւ մեր հոգիները ...»։ «Եւ այդ բոլորի վրայ իշխում է միշտ մեծ լուռութիւնը, համր հսկայական վհուկը, միակ ինքնակալը, միակ տէրը, միակ անհասանելին, որի թեւերի տակ անհատներ և հասարակութիւններ սողում են երջանկութեան երազների յետեւից՝ երբեք չհասնելու համար։» (1)

* * *

Ակարոնեան այն օտարականներէն է, որոնք Իտալիոյ ու Զուիցերիոյ

(1) Լոտիինը. էջ 176։

բնական ու արհեստական գեղեցկութիւնները տեսնելով ու սքանչանալով, անկէ կը վերադառնան, աշխարհին պատմելու այդ երկիրներուն հիանալուց համբաւը։

Վենետիկի հրաշալիքներու արտաքին մասը նկարագրած առեն, ուղեւորը անտարբեր չէ երբեք ծայրայեղ այն թշուառութեան հանդէպ, որ գոյութիւն ունի այդ գեղեցկութիւններուն շուրջը, և որոնք կեանքի հակադրութիւնն աւելի՛ կը շեշտեն.

«Այս քանդակաւոր մարմարներէ տակ, կը գրէ անիկա, թագնված ծայրայեղ խեղճութիւնն է, որ երբեմն դուրս է սողում ջրանցքների տաճուկ խաւարից՝ դունատ ու դողդոջուն, շարժվում է այն սակեզօծ ալիքների վրայ և խիուսջներ որսում, երերվում է հարուստ հիւրանոցների դռների, լուսամուտների առաջ, փռվում է պալատների աստիճանների վրա և իր երկրի արեւի տակ՝ իր տեղը և իր սիրուն ջրանցքների ափին, իր փոքրիկ անկիւնն է խնդրում։» (1)

Իր այնքան շահեկան ու հետաքրքիր մանրամասնութիւններուն մէջ, Ահարոնեան մեզի կու տայ արուեստի, գրականութեան, բարոյականի ու պատմութեան շուրջ իր տեսութիւնները։ Բայց այս հատորին մէջ աչքի կը զարնէ մանաւորաբար այն գլուխը, որ նուիրուած է Սուրբ Ղազարի Միխիթարեան Միաբանութեան ու մխաբաններուն։ Ո՛չ միայն կը խօսի ան վանքի դպրոցին, խմբագրատան, տպարանին ու գրադարանին և առհասարակ արտաքին նիստ ու կացին մասին, այլ՝ ինչպէս ինքը կ՚ըսէ «յանդուգն փորձ» մը կ՚ընէ տալու վանականներուն ներքին հոգեբանութեան ուրուագծերը, որովհետեւ «այս սեւ հագած մարդիկ մի մի մութ աւեղծուածներ են. չեն խօսում իրանց մասին, չեն բայ անում իրանց հոգին, չեն գանգատւում, չեն ուրախանում, չեն տխրում, չեն երջվում, որ մատնեն իրանց ներքինը։»

Անիկա կ՚ողջունէ Իտալիան, մէկը պատական երկիրներէն, «Հայրենիք նոր գեղարուեստի, նոր կեանքի, հայրենիք բոլոր նրանց, որոնք գեղեցիկն ու վսեմն են փնտռում, որոնք ճանաչեցին փառքի ալեխիւ հպարտութիւնը և անկման բոլոր դառնութիւնն ու յաւը, որոնք անարդարութեան և այլ ոճիրների համբէ նուիրական յաւումն են կլում կրծքերի տակ, տառապում են քեզ ճանաչք, քո լացած յաւերով և քեզ սէր ղեկ ի վերածնութիւն, ղեկ ի լոյս, ղեկ ի խոհեմն են դիմում։»

Ինչպէս իր գեղարուեստական գրականութեան, այնպէս և իր ուղեւորի

---

(1) Իտալիայում, էջ 77։

նօթերուն մէջ, Ահարոնեան կը սիրէ ներկայացնել կեանքի հակադրութիւն-ները։ Իտալական քաղաքներու անցեալ քաղաքակրթութիւնը և հիմն դարերէն մնացած գեղարուեստական հրաշալիքները ներկայացնելու առթիւ, որոնց առ-ջեւ օտարականը չի կրնար իր հիացումը զսպել, կը խօսի նաեւ մարդկային թշուառութեան մասին, որ այդ յիշատակարաններուն առջեւ իր խեղճ գո-յութիւնը կ'ապրի, առանց գիտակցելու իր պապերէն մնացած հրաշակերտ-ներու արժէքին։ Երբ մէկ կողմէն փարթամ ու ճոխ կեանքը կը թաւալի, անոր աչքերուն կը հանդիպին կեանքին անժառանգները, մեծ մասով մուրացկանները, ամէն տարիքէ ու սեռէ, որոնք կենդանի բողոքի մը պէս, կը խանգարեն սովորական նկատուած ներդաշնակութիւնը։

Ահարոնեանի ճամբորդի տպաւորութիւնները կարդացողը կը զգայ, որ անիկա շա՛տ բաներ տեսեր ու զգացեր է, մանաւանդ խիստ կարճ ժամա-նակամիջոցի մը մէջ աւելի խոր ապրումներ կ'ունենայ, գիտակցօրէն կ'ապրի կեանքը օտար հորիզոններու տակ, կը ճանչնայ հո՛ն ալ մարդը իր տառա-պանքին ու խորունկ վիշտին մէջ, չքաւորութեան ու զրկանքի մէջ, մարդը՝ հանճարի երիվարը հեծած, որ կը սուրայ դէպ ի արուեստի բարձունքները, մարդը՝ աշխատանքէն պարտասած ու քրտնած ճակատով, ու այս բոլորէն յետոյ, ամէն անգամ կը յիշէ, որ հորիզոններէն անդին, ուրիշ երկինքի մը տակ, կա՛յ իր հայրենիքը, ճակատագրէն մարդուն սահմանուած հոգերով ու անլուծելի առեղծուածներով . . . ։

Արուեստագէտին հոգին կուշտ մը խմած չէր գեղարուեստներուն աղբե-րակէն։ Կարօտով կը յիշէր հանճարի բոլոր հրաշակերտները։ Աչքը միշտ եռեւն էր, ու օրին մէկը, տարիներ յետոյ, կախարդուած ու հրապուրուած հին աստուածներուն հմայքէն ու գեղեցկութենէն, անգամ մըն ալ ուխտի գնաց դէպ ի հարաւ, դէպ ի Իտալիա, ու անկէ վերադարձաւ, մեղի բերելով *Իտալական էսկիզները*, որոնք լոյս տեսան *Հայրենիք* ամսագրին մէջ։

Գեղարուեստագէտն է, որ կը թափառի Ցաւիտենական Քաղաքին մէջ, ու երկրորդ անգամ ըլլալով երկրպագելու կ'երթայ աստուածներուն։ Այս էջերուն մէջ անիկա հասուն գիտունն է ու փիլիսոփան, դրագէտն է ու գե-ղապաշտը, պատմաբանն ու ընկերաբանը, ու մանաւանդ մարդասէրը, որուն սիրտը կը փղձկի ամէն անգամ որ վաւերական ու շօշափելի փաստերու առջեւ կը գտնէ ինքզինքը, մարդկային ոճիրներու և բռնապետական անար-դարութիւններու հանդէպ։

*
* *

Իտալիայում և Իտալական Էսկիզներ ու շարքը գրի առած է Ահարոնեան, աւելի շատ իր հոգեկան պահանջներուն բաւականութիւն տալու համար. արուեստագէտն է, որ վերածնութեան հրաշակերտները ճանչնալու կ'երթայ, իր հոգին կը բանայ անոնց առջեւ ու կը հաղորդուի դարերուն մեզի կտակած գլուխ–գործոցներով։

Ընկերական գիւղը, նախապէս հրատարակուած *Մուրճ* ամսագրին մէջ, տարբեր շարժառիթներով երկնուած աշխատութիւն մըն է։ Անիկա ամէն բանէ առաջ, «որպէս ընթերցանութեան պիտանի գիրք» ժողովուրդին համար գրի առնուած է, անոր մէջ արթնցնելու համար սեր դէպ ի քաղաքակրթութիւնը, և բանալու անոր առջեւ կեանքի նոր հորիզոններ և ուղիներ։ Ամբողջ գիրքը քսան նամակներէ կը բաղկանայ, և բացառաբար նուիրուած է գոլիցերական գիւղի ու գիւղացիի նիստ ու կացին, արտաքին ու ներքին պայմաններուն, որոնցմով ան ա՛յնքան ուշագրաւ դարձեր է։

Անիկա անհրաժեշտ կը նկատէ գիւղը ուսումնասիրել ու ծօտէն ծանօթանալ գիւղական աշխատաւոր ժողովուրդին հետ, որովհետեւ ան է, որ «բոլոր դարերում, բոլոր աշխարհներում իր ուսերին է կրել իր հայրենիքի ճակատագրի ծանրութեան մեծագոյն մասը, որի քրտինքի կաթիլների քանակութիւնից է կախուած այս ու այն երկրի բաղդն ու դժբաղդութիւնը։»

Ամէն անգամ որ կը նկարագրէ հեռաւոր երկինքի մը տակ կեանք ու արեւ տեսնող գիւղը, կը յիշէ միշտ այն միւս գիւղը, հայկական գիւղը, կը յիշէ մեր գիւղացին, «ոգեւ ու խաւար ամբոխը, որ սողում է իր յաւերի ծանրութեան տակ»։

Իր տպաւորութիւններու նկարագրութեան համար, անիկա նկատի կ'առնէ մասնաւորաբար աննշան դիպուածները, աննշան ծանօթութիւնները ու պատահական խօսակցութիւնները, որոնցմով կը փորձէ ճանչնալ անհատներուն ու հասարակութեան հոգեկան աշխարհը։

Այս գիրքը կը խորհուրդ տայ հեղինակին ընկերային, քաղաքական ու բարոյական խորհրդածութիւնները, որոնցմով անիկա կը ջանայ գիտակցութիւն ներշնչել իր հայրենակիցներուն, ըսելու համար, որ կան հեռաւոր հորիզոններ ու հանգրուաններ մարդկային կեանքի զոյութեան ընթացքին, երբ մարդը իր աշխատանքին համեմատութեամբ իրաւունքը պիտի ունենայ նաեւ վայելելու իր քրտինքին արդիւնքը, երբ պիտի դադրի իր վիճակը անխուսափելի նկատել ու ճակատագրական։ Անիկա կը բաղձայ, որ հայ գիւղացին ալ երազէ աւելի բարձր քաղաքակրթութիւն մը, աւելի նախանձելի վիճակ մը, թէ քաղաքական և թէ տնտեսական, որուն անմիջական հետեւանքը պիտի ըլլայ

նաեւ հոգեւոր ու մտաւորական բարձրացում մը։ Կը հաւատայ, որ մեր ցեղին մէջն ալ թաքուն ուժեր կան, որոնք ժամանակի ու պայմաններու համաձայն երեւան պիտի գան. կը հաւատայ աշխատող ձեռքերու, մտածող գլուխներու ու զգացող սիրտերու գոյութեան, մեր հայրենի երկինքին տակ։

Անոր ուղեւորի տպաւորութիւններուն մէջ ընթերցողը կը գտնէ պատկերներ, երազ, երեւակայութիւն, զգայութիւններ ու յիշողութիւններ, իբրեւ թէ այդ էջերն ըլլային արձակ բանաստեղծութիւններ։ Պէտք է թափանցել անոնց մէջ, գտնելու համար ղինքը՝ իր բարոյական ու մտաւորական որոնումներուն անձնատուր, իր անհատականութիւնը՝ տարուած այնքան խորհրդածութիւններով։ Ուղեւորին հոգին կը նմանի հայելիի մը, որ իր մէջ կ'անդրադարձնէ այն բոլորը, զոր ան կը տեսնէ, կ'ապրի, կ'երազէ, կը վերանայ, ու յետոյ, այս բոլորը կը յանձնէ թուղթին։

* * *

Մրրկի Սուրբերին մէջ Ասօի նկարագրին մասին, մանկական տարիքէն, գիտենք, որ կը սիրէր հազուագիւտ ծաղիկներ ժողվել, նոյնիսկ անմատչելի ժայռերու կատարներուն վրայէն, գոյնզգոյն թիթեռնիկներ բռնել, պլտել ամպերն և իրենց խաղերը։ Պզտիկ տարիքէն երազող էր ու սիրահար գեղեցկին։

Անիկա սովորական նկարագիրներէն չէր, անորինը խենթութեան կը մօտենար աւելի, բայց իր բացառիկ հանգամանքով իսկ սիրելի էր ան պիւղի հասարակութեան։ Անոր նայուածքին, խօսքերուն, վարմունքին ու բովանդակ արտաքինին մէջ տարօրինակ ու խորհրդաւոր բան մը կար, որ կը մատնէր հոգիին փոթորկայոյզ վիճակը։

Կը սիրէր նոր հարս մը, ուրիշին կինը, ոչ այն Շողերը, որ Ասոյի երէց եղբօր նշանածն էր նախապէս, և անոր մահէն յետոյ, հօրը փափաքին համաձայն Ասօն պէտք էր առնէր։ Անիկա Սառան կը սիրէր, և անոր սէրը ղինքը խենթ դարձուցեր, լեռներն ու ձորերը ձգեր էր։

Բայց ուժը չունէր խոստովանելու ամէն բան, բանալու իր սրտին ծալքերը, թեթեւնալու համար։ Ամօթ բան էր ուրիշին կինը սիրել, չա՞տ ամօթ. աւելի լաւ էր ծանր հոգերու մէջ տանջուիլ, քան կրել այդ նախատինքը, այդ ամօթը։

Թափառական Ասօն կ'ապաստանի Գապէ ամիի ջրաղացը, որուն մէջ

երկա՛ր տարիներ մինակը ալիւր աղացեր էր, ձնունդի, հարսնիքի ու մահուան ալիւր։ Անիկա փորձառու էր, և գեղի հին ու բարի իմաստուններէն էր։ Յորհուրդ կու տայ կապուիլ աշխատանքին և ուխտի երթալ լերան կատարին թառած *Մրրկի Սուրբին*, որուն աղօթքովն ու օրհնութիւնովը, աշխարհի վրայ խաղաղութիւն կը տիրէր, մրրիկները կ՛անցնէին առանց վնաս պատճառելու ժողովուրդին։

Գրաքննութեան հետքերը իր վրայ կրող և ձգձգուած այս վէպի իմաստը, կարելի է խտացնել երկու խօսքով. նախապէս կնոջ մը սէրն է, որ երիտասարդ Ասօն թափառական կը դարձնէ. և սակայն այդ կինը, Սառան անպտուղ կերպով կ՛անհետանայ անոր մխիթէն ու սիրտէն, և անոր տեղը կը բռնէ գեղեցիկ և մխիթարիչ «սարսափելի» բան մը։ Անիկա անդամ կը պատնայ ուխտուածներու խումբի մը, որ բիւրաւոր լացող մայրերու, սարսափէն խելագար հայրերու և անտէր մնացած զաւակներուն համար պիտի ղոհուէր, երբ փոթորիկը պայթէր և մրրիկը իր գոյութիւնը զգալի ընէր։ Ասօն կը նախընտրէր մեծ ցաւին, համայնական ցաւին համար մեռնիլ քան մնալ իր մօրը և քրոջը քով, ու անոնց պզտիկ ցաւովը տապկուիլ։ Իր հարազատ մօրը արցունքը սրբելու տեղ, բիւրաւոր մայրերուն արցունքը սրբող ուխտուածներուն կը պատկանի։ Անիկա զինուորն է այն անճանօթ ու անյայտ գալափարին, որուն մասին մայրերը անգիտակ են։ Ընտանիքի մինակ յոյսն ու ապաւէնը, անոր երջանկութեան նեցուկը, Ասօն կը հեռանայ տունէն, միանալու համար իր ընկերներուն, *Մրրկի սուրբ*ին ուխտուածներուն, որուն խաչքարը լերան կատարին է։

Մրրիկը կը պայթի գիւղի գլխուն, թշնամին կը մօտենայ բազմութիւնով։ Ասօն կ՛անցնի երիտասարդութեան գլուխը. կը դիմադրեն, ու կը փրկուին։

* * *

Մայրերը փոքրիկ գլուխ-գործոց մըն է, գրուած 1904ին։

Սուսանը իմ ու քու մայրն է, մեր ամէնուն մայրն է, տանջուած ու դժբախտ, և իր զաւկին կարօտէն աչքերը ջուր կտրած։ Անիկա յոյսով ու հաւատքով կ՛անցնէ իր օրերը, աւտուռ իրիկուն Տիրամօր պատկերին առջեւ ծնրադիր։

Անոր աղօթքը Հոգիին խորերէն դուրս կը ժայթքէ նման հրաբխային լեռան մը, որ անգիտակցօրէն դուրս կը պոռթկայ իր կուրծքին մէջ ամբարուած ճանրութիւնը։ Սուսանը հայ մայր է, որուն աչքի լոյս զաւակը պէպի ան-

յայտը, պէպի հեռուն կ'երթայ...։ Այդ անձանօթ ճամբաներուն խորհուրդը միշտ թաքուն մնայ անոնցմէ, անոնք զգայի միայն, թէ բան մը կայ իրենց ըմբռնումի սահմաններէն դուրս, և օտարութեան դիմող ու գաղտնի ծրագիրներու համար հրաժեշտ տուող իրենց սիրելիները օր մը պիտի վերադառնան հայրենի տունը, տէր ու տիրական դառնալու համար իրենց հայրերէն մնացած ու որբացած ժառանգութեան։

Այդ հաւատքով է, որ Սուսաննները մեր ժամերուն մնայուն ընակիչներն են միշտ, ու չեն կրնար հաշտուիլ այն մտքին հետ, որ Աստուածածինը, իր գեղեցիկ ժպիտին տակ, դժբախտութիւն կրնայ ծրագրել դժբախտ մայրերու զաւակներուն։

*Մայրական սիրոյ գեղեցկութիւնը և հաւատքին չհրմուտիւնը ըմբռնելու համար, կրկին ու կրկին կարդալու է **Մայրերը***։

Սովորական պատմութիւն մը չէ ան, որուն մէջ մայր մը իր պատդուխտ զաւկին վերադարձին կը սպասէ, երկա՞ր տարիներէ ի վեր։ Անիկա հոգեբանական վիպակն է բոլոր մայրերուն, որոնք հաւատալ չեն ուզեր չարիքի գոյութեան, որոնք չեն կրնար հաշտուիլ, որ սարերու արծիւը, կտրիճ ու քաջ երիտասարդ մը, կրնայ վիրաւորուիլ իր կրծքէն, և որուն մարքուր ու անմեղ արիւնով գետինը կրնայ ներկուիլ։ Ու մանաւանդ, Սուսաննները զոհաբերութեան, զրկանքի, յոյսի ու կարօտի այդ կենդանի տիպարները, կ'ըմբոստանան չանուն անսպասելի անարդարութեան ու յուսախաբութեան, նոյն իսկ Աստուծոյ դէմ, կրօնի ու եկեղեցիի դէմ, աւետարանի ու տէրտէրի դէմ։ Հոգեբանական այս զարտուղութիւնը, մանաւանդ հայ կնոջ հոգիին մէջ, շա՜տ յաջող ներկայացուած է այս պատմուածքով։

Մայրերը միայն գիտեն զգալ ուրախութեան ճառագայթը, որ կու գայ անսպասելիօրէն դրան մը բաղխուելէն, մանաւանդ գիշեր առեն, երբ տարիներէ ի վեր, հսկումի մը պէս, ամէն առաւօտ եկեղեցիին մէջ մոմեր վառեր ու խունկ ծխեր են, և գիշերն ալ դրան սողնակը փակելէն վերջ, ականջը դրան ու պատուհանին, սպասեր են իրենց զաւկին վերադարձին։ Ուրախութեան ու անակնկալին պատճառած սրտի բաբախումը անո՛նք միայն գիտեն զգալ ա՜յնքան հարազատ ու անխարդախ կերպով։

Սուսանին զաւակը Սաքօն է, որ Գարահիսար լերան կրծքին կ'իյնայ վիրաւոր...։ Սաքօին երգը քերնէ քերան երգուեր է տարիներ շարունակ, աշուղներն ու գուսաններն են, որ տունէ տուն կը պատմեն այս երգին կրակն ու սարսուռը։ Ու Սուսան մայրը կ'իմանայ միայն այն ատեն, երբ իր զաւկին համար մասնաւոր պատրաստած անկողինը վար կ'իջեցնէ գուսանին աւջեւ,

անոր բուրդը աւելի փափկացնելու համար։ Գղրարին երգին վանկերուն ու շեշտերուն հետ, թուխաւոր նեան է, որ կը մխուի Սուսանի կուրծքէն ներս։ Ինչպէս հաւատար անիկա երգին դաժան բառերուն, որոնք մէկ անգամէն կը փլչնէին, տարիներէ ի վեր անոր կերտած յոյսի, հաւատքի, կարօտի ու որ-ղեսիրութեան երազէ շէնքը...։ Ու դուք սիրող մայր եղէք ու դիմացէք այդ լափող կրակին...։ Սուսան կը կորնչնէ իր մտքին հաւասարակշռութիւնը։ Եւ սակայն բանականութեան ու տրամաբանութեան մէկ կայծը արթուն կը հսկէ անոր ուղեղին մէկ անկիւնը։ Այս բոլոր չարիքին ու յուսախաբութեան միակ պատճառը Տիրամէրն է, որ խաբեց զինքը։ Անիկա անհաւատ է այլեւս։ Կը նախընտրէ դժոխք երթալ, այրուիլ, կրակ դառնալ ու իրեն պէս անի-բաւուած մայրերու կրակին մխանալով՝ հրդեհել անօրէն աշխարհը, մեր սե-ւաւոր հայրենիքը։

Սուսանի մտքի հաւասարակշռութիւնը սակայն խախտուած չէր բո-լորովին։ Կրնար լսբռնել քահանայի մը բացատրութիւնները։ Իր աչքերուն առջեւն է Աւետարանը, որուն վրայ կայ խաչելութեան պատկերը, խաչուած Յիսուսի ոտքերուն առջեւ կը սգայ Աստուծոյ մայրը...։ Կը ճանչնայ պատ-կերը, գիտակցութիւնը ճամբայ բանալ կը սկսի։ Մարդու Որդին է խաչ-ւածը, որ մեռաւ աշխարհի համար, մեզի համար։

«— Սաքօն, որդի, է՛հ, նա էլ մեր սեւ ու վերան աշխարհի...։ Այդ-պէս է որդի, մայրերը ծնում են երկունքով, պահում են ցաւերով, մարդա-կեր աշխարհը տանում է, տանում, ի՞նչ անենք։»

Ու Սուսան Աւետարանին կը մօտեցնէ իր տոչորուն շրթունքները։

.....

Գ.

«ՃԱՄԲՈՐԴԸ». — «ԿԱՁՈՒՇԿԸ». — «ՄՈՒԻՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ». — «ԻՄ ԳԻՐՔԸ». — «ԱՍՏԾՈՒ ԿՐԱԿԸ». — «ՊԱՐՏՈՒԱԾՆԵՐ». —

.....

Ահարոնեանի նոր ժամանակներու գրականութիւնը շատ կը տարբերի իր ստեղծագործութեան քառորդ դարու գրականութենէն։ Տարբեր ժամանակներ ու մտայնութիւններ, տարբեր թելադրութիւններ կ'ընեն արուեստագէտին։ Այս տեսակէտով ուշագրաւ են Ահարոնեանի վերջին աշխատութիւնները. մանաւանդ անոնք, որոնք զուտ գեղարուեստական երկեր են։ Այդ մենք պիտի տեսնենք նոյնիսկ անոր բանաստեղծական ներշնչումով ու աւիւնով գրած էջերուն մէջ։

Արուեստագէտը կը նմանի ճամբորդի մը, որ հանգրուան մը հասնելէ վերջ, յետադարձ ակնարկ մը կը նետէ իր կտրած ու անցած ճամբուն վրայ։ Աչքը կ'ուղղէ հորիզոնին եռեւը կորսուող մշուշապատ ճամբաներուն, ու երազի մը անձնատուր, աչքէ կ'անցընէ բոլոր այն պահերը, որոնք իրեն եղան, տաժանքոտ այդ ուղեւորութեան ընթացքին։ Հաշուի կ'առնէ ուրախութեան ու տրտմութեան վայրկեանները, որոնք անխուսափելիօրէն կապուած են եղեր իր կեանքին։ Կը գտնէ որ երկա՛ր ճամբայ կտրած, սերունդներու ցանկութիւններն ու կարօտները զգացած ու ապրած, եկեր հասեր է նոր անկիւնադարձի մը, ուրկէ իր առջեւը կը բացուին նոր հորիզոններ։

Արուեստագէտը այդ նոր հորիզոններուն ուխտաւորն է։ Իր քնարը, նոր արուեստով ու ներշնչումով, պիտի հնչեցնէ նոր երգեր ու փափաքներ, իրրեւ վիպագիր, նոր կեանքին պահանջներն ու կարելիութիւնները, իրականութեան նոր ճշմարտութիւնները պարտաւոր է գրի առնել, և նոր օրերու, թաւալ-պղտոր իրարու եռեւէ անցնող նոր օրերու խռէալները, տառապանքը պէտք է ապրեցնէ, մանաւանդ ճակատագրին մութ ու անհասանելի խաղերուն ու խորհուրդներուն առջեւ, մարդկային ցեղին անպօրութիւնն ու մինակութիւնը երգէ...

Պէտք է հպարտութեամբ արձանագրել, որ Ահարոնեան աւելի քան երիտասարդ արուեստով մը կը մօտենայ յաւիտենական հարցերուն, որոնցմով մարդկային հոգին, վիրաւոր թռչունի մը պէս, անյուսութեան ու հոգերու մէջ, կը գալարուի շարունակ։

Այսպէս օրինակ նախանձի զգացումը, որ յանկարծ, դէպքերու և պատճառներու բերումով, մեր հոգին կ'ասլանէ ու կը տանջէ անգիտակցաբար, անոր ներշնչեր է հոգեբանական թանկագին էջ մը, ճամբորդը վերնագրով, որ համանուն գրքին, առաջին «հայրենի զրոյցն» է։ Կարելի է ըսել, որ վերջերս լոյս ընծայած իր արձակներուն մէջ, այս պատմուածքը գլուխ-գործոց մըն է, ուր կը գտնենք սովորական տխլարի մը, գիւղական տիրացուին հոգիին պատկերը։

Այդ տիպարը ծանօթ է բոլորիս մեր եկեղեցիներուն մէջ, անոր անունը Սօղո է։ Զինքը կը ճանչնանք մեր պզտիկ տարիքէն։ Խունկ ու մոմ կը հոտի։ Զանգակ կամ կոչնակ զարնել, ժամ աւելլ, մեռել լուալ, շարական կարդալ, փոխասացութիւն ընել քահանային հետ, տունէ տուն պտըտիլ, քահանային յանդիմանութիւններուն արժանանալ ու կենդանի սուտերի մը պէս եկեղեցիին մէկ դասէն անցնիլ միւսին, խորանին ետեւը բարձրանալ ու իջնել։ Ու երեւակայեցէք հնութիւնը, որ անոր կապուած է երբ անիկա քառասուն երկար տարիներ, առտուընուն օրը, առաւօտ երեկոյ այդ պաշտօնը կատարեր է մեքենայի մը ճշդութեամբ, ու այս բոլորը իր հոգու փրկութեան համար։

Յանկարծ, օրին մէկը զարկած ճամբորդ մը կու գայ գեղը, ու իր շունչը կ'առնէ եկեղեցի։ Յուսօ է նորեկին անունը, երգել ու կարդալ գիտէ. երիտասարդ մարդ է ու աշխատելու ընդունակ։ Սօղօ կը հիւրասիրէ զինքը, առաջարկելով, որ շաբաթ երեկոյ «Լոյս զուարթ»ը ինքն երգէ։ Յուսօն կ'երգէ. «հրաշք երգիչ» է եղեր ու անհման երգիչ։ Նորեկը շուտով ամէնուն հիացմունքին առարկայ կը դառնայ ու հետզհետէ կը գրաւէ պիրքերը։ Նախանձի որդը կրծել կը սկսի Սօղոյի հոգին. արդար Ձերունի մըն էր, որ իր հոգիին համար քառասուն երկա՜ր տարիներ, Աստուծոյ և մարդոց ծառայեր էր, և սակայն ատոնցմէ կը մնայ իր ներսը, ու ամէն բան կը քանդէ իր մէջը։

Վերջապէս կը հասնի դունբայեքի արարողութիւնը, որ Սօղոն իրեն կը համարէր, ինչպէս տարիներէ ի վեր։ Սակայն քահանան այդ պաշտօնը կը յանձնէ Յուսոյին։ Ծերունի Սօղոն չի կրնար կրել այդ հարուածը ու դէմքը ժոլվուրդին ցարմացած «սրտապատառ աղաղակ» մը կը փրցնէ ու կը գոչէ.

«Քառասուն տարի բանալին իմ ձեռքին է... չեմ բացի, ո՛ղ յաւիտեան փակ մնայ... գնացէ՛ք, գնացէ՛ք հուրը յաւիտենական։» Այս խօսքերուն վրայ ուշաթափ կը փուռի գետին, խելագարի մը պէս։

* * *

Ահարոնեանի այս պատմուածքը հոգեբանական վիպակի մը բոլոր պայմանները կը լրացնէ։ Եկեղեցիին խաղաղութեան ու նուիրականութեանը մէջ Սօղօն քառասուն երկա՛ր տարիներ տքներ է «իր հոգու» համար միայն։ Բարի, աստուածավախ ու պարտաճանաչ է, նաեւ միամիտ ու հիւրասէր։ Օրին մէկը իր հոգիի լճակին մէջ քար մը կը գլորի, ալիքներ կը բարձրանան։ Օտարական մը կու գայ, ճամբորդ մըն է, երիտասարդ ու աննման երգիչ։ Աշխարհը նոր սերունդինն է միշտ, ծերութիւնը հրաժեշտ տալու է, ու իր դիրքերը պէտք է յանձնէ երիտասարդութեան։ Նորեկը կը գրաւէ Սօղոյին դիրքերը ու ծերունիին հոգին նախանձի զգացումին անձնատուր կը դառնայ։ Թաղաղութիւն ու բարութիւն խոյս կու տան անոր հոգիէն։ Ժողովուրդը սիրել ու փնտռել կը սկսի նորեկը, կը սիրէ անոր ձայնն ու երգեցողութիւնը։ կեանքի ու փառքի հին ծարաւը այրել կը սկսին Սօղոյի հոգին, նախանձն ու չարութիւնը կը կրծեն անոր էութիւնը։ Մարդկային հոգիին բոլոր տանջանքները կը զգայ ան, ինքզինքը նսեմացած տեսնելով։ Փիշեր ու ցորեկ քուն ու հանգիստ չունի այլ եւս, կասկածի ու պարտութեան թոյնը կը վարակէ զինքը։ Կը հիւանդանայ։ «Դատողութիւնը խառնուում էր, գլխում շփոթ էր իրար հերքող, իրար մարակող մտածումների։ Հոգին չարչարուում էր թակարդի մէջ ինկած թռչունի պէս. չարչարուում էր ահագին ատելութիւնից և Ամօծու սարսափից որ բռնել էր նրա ողջ էութիւնը։»

Այսպէս, վիպագիրը մեղի կը նկարագրէ ճարտար կերպով Սօղոյի հոգիին անդունդներուն մէջ բորբոքող հրաբուխին սաստկութիւնը։ Այդ անգիտակից աշխարհին պատոնիքները մեղի ներկայացնելը ժամանակակից վիպագրութեան արժանիքներէն առաջինն է, որուն մէջ երէկ ա՛նքան վարպետ դարձաւ Հանճարեղ Տօստոեէվսկիին, ինչպէս նաեւ նոր ժամանակներու յայտնի դէմքերէն Մարսել Բրուստ ֆրանսացիին։

Այս մարդին մէջ դէմք մը դառնալու սահմաններուն մէջ կը պտտի Ե. Օշական, մասնաւորաբար իր վերջին վէպով, Մակ պտուկը։ Եւ Շանթը, իր թատերգութիւններուն մէջ։ Ահարոնեան իր փոքրիկ պատմուածքներուն մէջ, երբեմն կը փորձէր մօտենալ այդ անդունդին եզերքը, և սակայն,

Նանկական դողով, հաղիւ խճաքար մը կ'արձակէր այդ պարապութեան մէջ, ուրկէ արձագանգ մը կը հասնէր մեր ականջին։ Չէր ուզեր խորացնել հոգիներու ախտաճանաչումը։

Այս տեսակէտով, Ճամբորդը յաջողութիւն մըն է։ Անիկա նախանձի ղգացման զանազան փուլերը և անոր՝ մարդկային հոգին աւերակի մը վերածելը չէ որ կը ներկայացնէ մեզի։ Սօղոյի հոգիին պատմութիւնը մե՛ր ալ պատմութիւնն է։ Մենք բոլորս ալ Ճամբորդներ ենք այս աշխարհին վրայ, մէկը կ'երթայ, միւսը կու գայ. յոգնած ու զպրած, մէկը միւսին ճամբայ կը բանայ. յաւիտենական օրէնքն է այս տիեզերքին մէջ, մէկին մահը՝ կեանքն է միւսին . . .։

Ճամբորդը հատորին երրորդ պատմուածքն է, երբ ծիւնն իջնում է։

Խեչանենց Եղնակի կինը կը մեռնի անզաւակ։ Տունը կը մնան երկու հոգի միայն, Եղնակ ամին ու իր քոյրը, ամուրի Հէքօն։ Եղնակը վաթսուն և վեց տարեկան ծերունի է, անբաւ հարստութեան տէր. իր գլխուն վրայ ձիւնն է իջեր, անմխիթար է ան, որովհետեւ ժառանգ չունի, և իր օճախի կրակը վառ պահողը կը պակսի։ Քոյրը կը խորհի իր եղբայրը ամուսնացնել իրենց կովերը կթող, երիտասարդ և այրի մնացած Գոհարի հետ, այն յոյսով որ այս երիտասարդ կինը Եղնակին մանչ զաւակ մը պիտի պարգեւէ։ Գոհար իր առաջին ամուսինէն զաւակ մը ունի արդէն, և երկուքը միասին կ'ապրին ծերունի Ջուլհակ Մրնոյի խրճիթին մէջ։ Հէքօն օճախի ցաւը ողբացողն է. եղբօրը խորհուրդ կու տայ կրկին ամուսնանալ, այն յոյսով, որ «լոյս մը» կը ծագի։ Եւ հակառակ անոր որ Եղնակ ամին կատակ կը կարծէ նախապէս, «միրուքով ու մազերով» գլուխը խաչ ու աւետարանի տակ բռնել, հետզհետէ կը հաշտուի Հէքօյի ըսածներուն հետ, և օրին մէկը անկարելին կարելի կը դառնայ։ Գոհար հարս կու գայ Խեչանենց տունը։ Հոն կը մնայ նաեւ հօտաղ Սէթօն։

Գիւղի սահմանափակ աշխարհը տակն ու վրայ կ'ըլլայ. պառաւները լեզու կ'ելլեն. Եղնակ ամին ամուսնացեր ու Գոհարի պէս երիտասարդ կին մըն է առեր . . . ։ Երկրորդ անգամ փոթորիկ կը բարձրանայ, աւելի ուժգին, երբ լուր կը տարածուի որ Եղնակ ամին շէկ մանչ զաւակ մը ունեցեր է, մինչ ինքը շէկ չէ . . .։

Նախապէս կարեւորութիւն չի տար, բայց երբ շշուկները կը շատնան, երբ գեղին աղջիկները երգեր կը յօրինեն, ու իր տան պատիւը խնդրոյ առարկայ դառնալ կը սկսի, այն ատեն Եղնակ ամին, իբրեւ պատուախնդիր ծերունի, ինքզինքը ջրաղացին բարձրէն վար հոսող ջուրին մէջ կը նետէ,

խելագարուելէն վերջ, աչքին չերեւելով ո՛չ հարստութիւն, ո՛չ կին, ո՛չ զաւակ և ո՛չ ալ քոյր։

Հեռվհետե յորդող ալիքի մը պէս, Նղնակ ամիին դիմագծութիւնը կը յայտնուի այս զրոյցին մէջ։ Անոր հոգիին պատկերը կատարեալ յաջողութեամբ գծուած է. երբ ծիւնն իջնում է ծերունիի գանկին վրայ, երբ աշխարհի հաճոյքները իրենց երախները բացած զինքը կուլ տալ կ'ուզեն, հակառակ անոր որ իր ընտանեկան օճախը շէն ու կենդանի պահել կ'ուզէ, և որուն համար գեղին ու գեղացիին աչքերուն առջեւ երիտասարդ հարս մը ընտրեց, *պատիւը* սակայն, իբրեւ աստուածային հարստութիւն, վերադանց է անոր համար, մինչեւ ինքնասպանութեան դիմելու աստիճան։

* * *

Այս շարքէն է 1926 *ին, Գահիրէ, Յուսարեր* մատենաշարին լոյս ընծայած փոքրիկ մէկ պատմուածքը, *Կաթուշկը*։ Տիպարը՝ Անտոն, թշուառութեան մարմնացումն է, հակառակ անոր որ գիւղին մէջը յարգուած է ու խօսքը կ'անցնի, բայց անոր հոգիին մէջ պառնութիւն կայ աշխարհի ու մարդոց դէմ։ Որովհետեւ սովորաբար մարդ կը նկատուի այն, որ դրամ ունի, լաւ հագուստ ու կապուտ։ Խելք ու իմաստութիւն երկրորդական ու երրորդական արժէք կը ներկայացնեն։ Անոր ուզածն ուրիշ բան չէ, եթէ ոչ *իր արդար տեղը* այս արեւուն տակ։ Անոր հոգին ալեկոծութեան կը մատնըւի, երբ դուռ ու դրացիի հանդէպ չի կրնար կատարել իր պարտքը։ Անիկա հպարտ ալ է, իր խնայած դրամը ամբողջովին նուէր տալու համար գեղի բրուտի հարսանիքին։ Անտոն այն տիպարներէն է, որոնք երկար տարիներ կը հալածեն բախտը, անոր հասնելու, պայն բռնելու համար, և սակայն բախտը, յաջողութիւնը խոյս կուտան իրմէ, և ինք իր մէկ մուշտակովը, որ իրմէ չի բաժնուիր, ասոր ու անոր հեգնանքին ու ծաղրին առարկայ կը դառնայ։ Բայց Անտոնի հոգին իր խորհուրդները ունի, որոնք կը յայտնուին անակնկալ կերպով և դէպքերու ազդեցութեան տակ։ Մանաւանդ քանի մը դաւաթ գինին, իր մէջ կ'արթնցնէ այն հին հաշիւները, որոնք առկախ մնացեր էին գեղի մեծաւորներուն ու իշխաններուն հետ։ Անտոն քակով հարուստ չէ, բայց սիրտով հարուստ է ու չի հանդուրժեր ո և է արհամարհանքի։

Դժբախտութեան հետ զոյգ կը քալէ թշուառութիւնը, տուն մը ունի, որուն առաստաղէն անձրեւի կաթիլները հաճաչափ ու դաժան, ինչպէս

բախտի հարուածները, վար կը թափուէին։ Կաթուշկն է որ կը շարունակուի անձրեւը դադրելէն վերջ խակ։ Ընոր կեանքը նման է իր կէս–աւերակ տանը, որուն չորս պատերէն խոնաւութիւն կը մաղուէր ընտանիքի անդամներուն վրայ։

Երգիծանք պրեր է հեղինակը այս գրուածքին մէջ, կծու, խայթող ու խոհեր արթնցնող երգիծանք։ Ծիպարը կենդանի է իր միջավայրին ու շրջապատին մէջ, հոգիի մեծութեամբ, աշխարհն ու իր հարստութիւնը արհամարհող իր վեհանձնութեամբ։ Անարդարութեան ու անարգանքի առջեւ անիկա «ամեհի երիվարի» մը կը նմանի, խորտակելու համար իր երասանակները, երբ մանաւանդ գեղին մեծերուն ու «իշխան»ներուն քով, ու անոնց շարքէն դուրս ձգուած է հարսնիքի մը ժամանակ։ Հոգիի մեծութիւն ամէն մարդ ունի, կը բաւէ, որ այդ անգիտակից ուժը երեւան հանող պատճառները յայտնըւին։ Անոնն այն տիպարն է, որ կը հաւատայ արդարութեան, կը հաւատայ որ հաւատցման օրը պիտի հանի։ Ու երբ ձիւնախառն մրրիկէն և կաթուշկէ մը յետոյ իր տան մէկ պատը կը փլի ու կը բացուի ճեղքուածք մը, անիկա «կատաղօրէն բռունցքը մեկնեց դէպի բացուածքը պատին. ո՞ւմ էր սպառնում, բաղդի՞ն, աշխարհի՞ն, երկնքի՞ն, Աստծո՞ւն, ինքն էլ չը գիտէր։»

* * *

Նոյնքան յաջող հոգեբանական վիպակ մըն է նաեւ *Մոխիրների Տակից* գրուածքը։

Դերակատարներն են երկու ուսանողներ, Սուրէն ու Սօֆիա, երիտասարդական տարիքի մէջ զիրար կը ճանչնան, բուռն կերպով զիրար կը սիրեն. սակայն երիտասարդը, Սուրէն ի ծնէ յետփոխական խառնուածքի տէր և հանրային գործիչի մը յատկութիւններով, մարդկային թշուառութեան համար կարեկից սրտով օժտուած, կեանքի ձայնին հետեւելով կը բաժնուի Սօֆիայէն, ինչ վերջինը, իր կեանքը կը կապէ փաստաբանի մը։

Հետզհետէ ձանձրոյթն ու թախիծը բոյն դնել կը սկսին անոր էութեան մէջ, ան կը տառապի, մէկու մը պէս, որուն երազները չեն իրականանար, ու իր անցած օրերու պարապութիւնը կ'ողբայ։ Ի բնէ ապրելու համար զգայուն սրտի տէր, Սօֆիա կը տեսնէ օր մը յանկարծ, որ ոտիկանները ձերբակալած, բանտ կը տանին Սուրէնը, և որուն դատին քննութիւնը յանձնուած է իր փաստաբան ամուսինին։

Սօֆիա կը յիշէ Սուրէնին խօսքերը «վայրկեաններ կան, որոնք յաւի-

տեղականութիւն կ'արժեն», և կամ «յաւիտեանն ապրել մի վայրկեանում». հիմա մեզ կը սկսի ըմբռնել այս խօսքերուն իմաստը։ Երիտասարդական առաջին Սէրն է, որ արծիւի մը պէս իր ալեցքները կ'ուղղէ Սօֆիային, անոր մոտցնել տալու համար ամուսին, ընտանեկան պարտականութիւն, և զաւակ։

Սօֆիա ինքզինքը զոհ մը կը նկատէ մարդու մը ճանկերուն մէջ ինկած, որ առաքինութիւնը չունի իր դլուխը խոնարհելու անձնազոհ հերոսուհերու հպարտ ու ազնիւ խոյանքներուն առջեւ։

Ամուսինէն բաժանումը վճռական կ'ըլլայ, ճանաւանդ իրենց հիւանդակաի զաւկին մահէն վերջ. «միշտ հիւանդ, միշտ դալուկ, որ այդպէս էլ ծնուած էր, իր տարակուսանքներէն, հոգեկան գալանի տագնապներէն, լուռ ցաւերէ այդ խղճուկ պտուղը, ասես մայրական արդանդում ապրել էր ծնողի բոլոր տանջանքը։»

Իր պատմուածքներու այս նոր շարքով, Ս. Հարոնեան մեր գեղարուեստական գրականութեան մէջ նոր հորիզոններ նկարեց։

Համամարդկային հարցերն են, որ իր գրչին տակ թեւ առնել կը սկսին։ Մէկ տեղ սիրոյ պարտուած զգայումը, ուրիշ տեղ մը ընտանիքի գոյութիւնը, և ծաթախի կրակը վառ պահելու և ջահընչեհատրելու տիեզերական զգայումը, ուրիշ տեղ մը նախանձի ահաւոր ուժը, անոր ստեղծագործութեան լաւագոյն էջերը կը մնան։ Հոգիներու պայքարն ու տարակոյսները, չի յաղեցած սէրերն ու անցեալի դառն ու կորսուած օրերն է, որ անիկա կ'երգէ դեղեցիկ արուեստով, սահուն լեզուով ու բազմակողմանի դիտողութեամբ։

* * *

Աստծու Կրակը (1) իր խորքով ու իմաստով կը մօտենայ Անդունդին։

Աբարանցի Մուքելը իր տունն ու տեղը, ծնողքն ու նշանածը դիւղը ձգեր, եկեր է նաւթահանքերուն մէջ աշխատելու, դրամ շահելու և վերադառնալու համար։ Միամիտ ու կեանքի պայմաններուն հետ հաշտուող հոգի մը ունի ան։ Իր գոյութեան միակ երազն էր հարիւր յիսուն րուպլիով տունը նըշան գումարը անտեսել, վերադառնալ հայրենիք, յիսուն րուպլիով հօրը պարտքը վճարել, որպէս զի տակռանները չի շահագործէն ալ իր հարանիքն ընել։

---

(1) *Ա. Ս. Հարոնեան*, Հանրային Մատենադարան թիւ 3, տպագ. Թիֆլիս, 1912թ։

Անոր մխաքը չի դործեր քնաւ, համակերպող է, «մխեւնոյնն է, մտա-ծում էր նա, հօրդ տունը չի, ծառայող ես, արա՛, ինչ որ պատւիրում են, դարձի՛ր, ուր կ՛ասեն, միայն թէ...», երազուած գումարը կարենալ ձեռք բերել...:

Բայց Մուքելը ոչ միայն այդ երջանկութեան չի հաւնիր, այլ զոհ կ՛եր-թայ արկածի մը: Ընկերանուր խոհանոցին մէջ, երբ հնոցի մը առջեւ կանգ-նած կը տաքնար ու ընթրիքի համար թէյի ջուր կ՛եռացնէր, տարուած ըլ-լալով իր նշանածին Սաթոյի վառ սէրէն և կարօտէն, չէր նկատած որ իր նաւթազօծ զդեստը բռնկեր էր: Ի զո՛ւր. վառուած զդեստները մարելու իր փորձերն անօգուտ անցան. անիկա կը նմանէր կենդանի մոմի մը, որ կը վառէր.

«Անասելի ցաւերու ղէմքն աւերակ, բերանը լայն բացած, ծուխ ու բոց շնչելով, բազուկները՝ որպէս վառ ջահի երկու ճաղեր օդի մէջ տա-րածած ու ծխացող թաշկինակը (ստացուած իր նշանածէն) միշտ բարձր, գլխի վերեւ փողփղուն, Մուքելը ազեխարշ, այլանդակ ոռնոցով մրրկի պէս դուրս ընկաւ խաւար բակում տարածելով մահուան կարմիր սարսափը: Կա-տաղի հողմը գրկեց նրան, բոցերը ձմռնացին տարերքի ուժգին շնչով ու այլեւս մարդ չէր նշմարւում, այլ մի հսկայ հրեղէն սիւն. Մուքելը փախ-չում էր, խելայեղ պտոյտներ էր գործում փոթորիկ, լափող կրակից ազատ-ելու համար ու իր խուլ վայրկեան հրահրում, բորբոքում էր բոցերը. կենդանի մարմինը եփւում, ճարճատում էր, մորթին ճաքճքւում ու կախկխւում էր ցնցոտիների պէս և թռթռուն կարմիր մխերի ճենճերահոտը լցնում էր բա-կը» (1)

Երբ մարդիկ օգնութեան կը հասնին «մխերի ու ոսկորների սար-սեցուցիչ կոյտ» մը կը գտնեն միայն:

Գեղէն քաղաք կու գայ Մուքելի ծերունի հայրը իր զաւկին գերեզմանին հողը հաւբուրելու: Դործարանին կառավարիչը դրամական նուէրով մը կը յուսայ կոլաքամակ ծերունիին փոխարինութիւն մը ընել, բայց ծերունին կը մրմնջէ. « — Փո՛ղ... Մուքելիս համար... հայ հո՛ւ, երած չիգեարիս գի՞-նը... իմ էրւած չիգեարը կարա՞ ուտի... տուն իմ գլխին, վախ չիգեարս, չիգեարս...:»

Ծերունին վիշտէն խելագար, բակին մէջ կը թափառի, կ՛անցնի այն տեղերէն, ուր երկու շաբաթ առաջ իր հոգեհատորը, կենդանի կրակի մը

---

(1) Ա. Ահարոնեան, Աստծու կրակը, էջ 22:

պէս, հովի պէս անցեր էր երկինքէն ու մարդոցմէն օգնութիւն սպասելով։ Կ'անցնի այն տեղերէն, ուր իր դժբախտ զաւկին արեան կաթիլները թափուեր էին. եղունգներով կը ճանկռտէ սառած գետինը «կը հոտոտէ ու կը համբուրէ հողը, և մինչև ուշ գիշեր լսուում էր նրա աղեկտուր ձայնը. Աստծու կրակը լափեց քեզ, բա՛լա... ո՞ր մեղքիս համար...։»

Այս փոքրիկ պատմուածքով, Ահարոնեան մեզ կ'առաջնորդէ նաւթահանքերուն մէջ, այն միւս անդունդը, ուր մարդկային արիւնը, արցունքն ու քրտինքը, եւացող կաթսայի մը մէջ լեցուած, ահաւոր երկունքով դուրս սղոթիլ կը ջանան, և ուր բիւրաւոր մարմիններ «խանձուած, բզիկ–բզիկ ձւաուած, կախկխուած միսերով» կը հեկեկան ու կը տքան ահաւոր ցաւերու մէջ...։

Երկու իրարու հակոտնեայ նկարագիրներ կան այս պատմուածքին մէջ։ Մուքէլը և Ալմաղեանը. առաջինը գիւղացի բանուոր, երկրորդը հաւթահանքերուն ընդհանուր կառավարիչը։ Եթէ ուրիշ վէպերու մէջ բանուորին դիմագիծը կը ներկայացուի ըմբոստ, տիրող կարգերուն ու օրէնքներուն դէմ բողոքող ու աշխարհի անարդար կարգերը տապալողի դերին մէջ, հոս, այս պատմուածքին մէջ, իր դասակարգի հոգեբանութեան հակոտնեայ պատկերով կը ներկայանայ մեզի Մուքէլը։ Ասիկա, մեր իրականութեան համար, կատարելապէս ճիշտ է, որովհետեւ աշխատաւորներու մտքի կարողութիւնն ու գիտակցութիւնը այն բարձրութեան չեն հասած, որ անոնք զանազանել գիտնան աշխարհի չարն ու բարին, և եթէ վանազանել գիտնան իսկ, մտածեն իրենց վիճակը բարւոքելու միջոցներուն և աղդակներուն մասին։ Այս է պատճառը, որ թէ այս պատմուածքին Մուքէլը և թէ Անդունդին Արութը, իրենց նիւթական թշուառութեան մէջ իսկ, չեն կրնար ղդալ անդունդն ու վիհը, որ զիրենք կը բաժնէ այն միւս առանձնաշնորհեալներէն, անոնցմէ, որոնք միամիտ գիւղացիին համար Աստծու կրակ են, ամենակարող, ամենագէտ ու ամենատես...։

Որովհետև «նրանց յամր շարժումների, վեհերոտ, ճնշուած ընթացքի մէջ չը կար կատարուած աշխատանքի գիտակից հրճուանքը, որ այնպէս քաղցր ու հրապուրիչ է դարձնում հանդստեան ժամերը։ Բուռ յոգնութիւնը, յաջորդ օրուայ դաժան վաստակի հեռանկարով ծանրացած էր ամէնքի ուսերին այդ թաց, լպրծուն խաւարի մէջ. ո՛չ կատակ, ո՛չ քրքիջ, ո՛չ երգ։»

Մուքէլի հոգին խաղաղ էր ու խղճը հանդիստ, որովհետեւ այն գիտակցութիւնն ունէր, որ աշխարհի մէջ հարուստները պէտք էին, իրենց պէս խեղճերը կերակրելու համար։ Կը զդար, որ ինք գիւղացի մըն է, և

ուրիշին հաշուոյն աշխատելու ճակատագիրն ունի։

Հակոտնեայ դեր ունի նաև կառավարիչ Ալմազեանը։ Կը հաւատամ, որ անիկա կրնայ ըլլալ «խառնուածքով արի ու շիտակ, գործունէութեան մէջ ճշտապահ ու մանրակրկիտ, սրտշմմունքի մէջ խոհական ու հաստուն»։ Եւ սակայն բացատութիւն մը կը թուի ինձի համար այս տիպարը, որ «նեղել ու խաբել, կեղծել ու կեղծաւորել չը գիտեր։ Իւրովի ստորադրեալները, դէպի բանտրները խստապահանջ՝ բայց և արդարամիտ էր ու իրաւախոհ»։ Կը թուի թէ արուեստագէտը տիպարը այդպէս կերտած ըլլալու փափաքէն տարուած է, որ կ'աւելցնէ տակաւին անոր նկարագիրը ամբողջացնելու համար. «Ատում էր վաստակաւորի զրկանքի վրայ հիմնուած գճուճ, տմարդի տընտեսութիւնը և ծագող վէճերին արագութեամբ լուծումն էր տալիս բարեխղճ կերպով։» Նկարագրի այս հակոտնեայութիւնը աչքի կը զարնէ մանաւանդ այն ատեն, երբ այս ազնուական առաքինութիւններուն անմիջապէս քովիկը կը գտնենք, որ կառավարիչը կը նմանցուի «հեռաւոր ճամբի այն ղգաստ ձիաւորին, որ մի բարձր նպատակ հետապնդելով, թէեւ մտրակ ունի ձեռքին ու քշում է սրարշաւ, բայց և չի մոռանում աննպել, խնամել իր երիվարը։»

Հակառակ այս մատնանշուած հակասութեան, կառավարիչին տիպարը արուեստագէտին իտէալին կը համապատասխանէ։ Անոր ցանկութիւնն է, որ անոնք նկարագրի այս աղնուական ու մարդկային դիծերն ունենան, ընդդէմ *Աստծու կրակ . . .* գործարանատէրերուն, որոնք «գլխացաւանք» են, բանուորական դժգոհութիւններէ, գործարանի խուովութիւններէ և գործադուլներէ կը վախնան։

Ահարոնեանի համար այս պատմուածքին երկրորդ դերակատարը, կառավարիչ Ալմազեանը, մէկն է այն մաքուր ու դիտակից հոգիներէն, որոնց հոգեկան աշխարհը կը մատնուի տագնապներու, իրենց պատողութիւնը կը կորնչնէ հաւատարակշռութիւնը, դտնելու համար անդուժելին։ Այն ատեն, որ բանուոր Մուքելի այրուիլն ու անշնչանալը, դինքը ներքին չարչարանքներու կ'ենթարկեն. կը սպասէ դուրսէն աղօտ լոյսի մը մէկ ցոլքին, որպէս դի լուսաւորուի իր ուղեղը, հնարք մը գտնելու և բաւականութիւն տալու համար ծերունի հօր մը։ Մէկն է անիկա, որ չի կրնար բացատրել, կատարուած զարհուրելի անցքը, ու կը տանջուի ներքին անհնարին տագնապով, որովհետեւ երկատարդ տարիքէն գիտութիւններու լայն պաշար ամբարեր էր, ու պրպտող հոգի մը ունէր, կեանքի մէջ գոյութիւն ունեցող դէպքերուն պատճառի ու հետեւանքի տրամաբանութիւնը գտնելու համար

Իր այս քանի մը պատմուածքներով, ճիշտ է որ Ահարոնեան կը փորձէ մօտենալ նիւթական ու տնտեսական աշխարհը յուզող ամէնէն մեծ առեղծուածներուն, և սակայն տկար է իր շունչը, անզօր իր ձայնը, կարենալ ընդգրկելու համար համայնական աղէտը, որ կը բղխի կեանքի գոյութենէն ու ահաւորութենէն իսկ։ Բարոյագէտ ու ընկերաբան, գաղափարապաշտ ու իրապաշտ հոգիներու կսկիծն ու արցունքը տակաւին ուժը չունին պատկերացնելու անդունդն ու վիհը, որ կը բաժնեն դասակարգերը, այնպէս ինչպէս իրականութեան մէջ անոնք գոյութիւն ունին ու կ'ապրին։ Գեղարուեստական ստեղծագործութիւններու աննշան մաս մըն է միայն, որ վեր առած է վարագոյրին մէկ ծայրը, որուն ետեւը դժոխք մը կայ կենդանի մարմիններու, դժոխքը իրականութեան, որ աւելի ահաւոր է քան անմահ ստեղծագործութիւնը ծանղէին . . .։

* * *

Հայ տառապանքին երգիչը պէ՛տք էր, որ բանտին դառնութիւնն ալ ճաշակէր, պէտք էր, որ իր աչքերով տեսնէր ու մորթին վրայ զգար այն տանջանքները, որոնք ի գործ կը դրուին մարդոց կողմէն մարդոց վրայ։

Անոր Պարտւածները ըմբոստութեան աղաղակ մըն է։ Անիկա վիրաբուժի մը հաւատարմութեամբ ու պաղարիւնութեամբ, գրիչը ձեռք կ'առնէ ու կու տայ մեղի բոլոր պարտուածներուն վերջին վայրկեանները, և չերմօրէն կը հաւատայ որ անոնք վաղուան յաղթողներն են։

Հաւատեսութիւնը չէր կրնար դիմաթափ ըլլալ, տեսնելով շղթաներն ու ճահուան գործիքները, որոնք բանականութեան դէմ սարքուած դաւադրութիւններ են։

«Բանտում գրեցի այս գիրքը, կը գրէ ան իր յառաջաբանին մէջ, որ իմ վիրաւորուած հոգու ու տանջուած իմացականութեան ըմբոստացման ճիչն է։

«Աշխարհը հանդուրժում է բանտ ու կախաղան, դահիճ ու բանտապետ, որոնց իր արիւնոտ ծոցում սնուցանում է ներկայ հասարակական նզովուած կազմը։

«Թո՛ղ այս գիրքն էլ լինի։

«Մարդու հոգու մէջ հանգչող հին գաղանը տակաւին սուր ժանիքներ ունի արդարութիւն և իրաւունք բղկտելու համար. իսկ հասարակական խաւար խղճմտանքը կարօտ է թեկուզ մի հատիկ ցոլքի՝ բռնութեան դէմ ճառանալու համար։

«Թո՛ղ այս գիրքն էլ լինի։»

* * *

Տաւտապանքի տարիներէն, պայքարներէ ու յուսախաբութիւններէ յետոյ, արուեստագէտը անհեղհեղալի պահանջ մը կը զգայ ապրելու իր յիշատակներու յարութիւնը։ Իր հոգիին ամէնէն անգիտակից ծուռները կը բանայ, ու հոն կը գտնէ մանկութեան ու պատանեկութեան սիրուած երկիրը, բոլո՛ր սիրուած հոգիները։ *Ուրիշ խօսքով* անգեալին է որ կը գտնան իր աչքերը. անիկա հոն կը գտնէ բոլո՛ր ճշմարիտ ու գեղեցիկ զոյութիւնները, որոնց քովէն անցեր էր անտարբեր ու անոնց մտերմութեան քաղցրութիւնը չէր զգացեր։ Հասուն ու փորձառու մարդը սակայն կը փոխադրուի այդ երազ օրերը, և կեանքին դաժանութիւնն ու դառնութիւնը կը տաքցնէ անցած օրերու կորսուած պահերովը։

Ահարոնեանի *Իմ գիրքը* կարդալու է այս լմաւտով։ Անիկա խտացումն է իր բովանդակ գրականութեան, մտածումներուն ու զգայուն հոգիին։

Սովորական ընթերցողին համար *Իմ գիրքը* յիշատակներու փունջ մըն է, փրցուած *մանկութեան* շրջանէն։ Գիրք մը, որ շարժանկարի մը պէս, մեր աչքերուն առջեւէն կը սահեցնէ *կեանքի առաջին առեղծուածէն*, ծնունդէն, ինչպէս *մահը*, ընտանեկան ու գիւղական կեանքի բազմաթիւ եւ բեւեռները. գիրք մը, որ կը պատմէ մեզի մանուկ հոգիներուն ուրախութիւններն ու հիասթափութիւնները, խաղերն ու կռիւները, և վերջապէս սրտի հատորներու կեանքին գիծերն ու դառն պահերը։

Եւ սակայն *Իմ գիրքը* ասոնցմէ դուրս, հայերէն նմոյշն է գրական այն սեռին, որուն լաւագոյն օրինակը տուաւ Թօլսթօն. (*Մանկութիւն և Պատանեկութիւն*) անկէ ի վեր միջազգային ուրիշ հանրածանօթ գրական դէմքեր, յիշատակներու ձեւով պատմեցին մեզի այն կապը, որ կար իրենց և ընկերներուն շրջապատող միջավայրին միջեւ, խօսեցան մեզի իրերուն ու մարդկային հոգիին միջեւ գոյութիւն ունեցող աղերսը. գրի առին նիւթական աշխարհին ու համայնապարփակ բնութեան զօրաւոր ներգործութիւնը՝ կազմուիլ սկսող իմացականութիւններուն վրայ. մէկ խօսքով՝ տուին մեզի *ոսկի բանալին* իրենց մտաւորական ու զգայական աշխարհին, որուն կազմութեան հանգրուաններուն, հեշտութեամբ պիտի կրնայինք հետեւիլ, ու թափանցել անոր խորհրդաւոր փիթիւնին։ Հոգիի տաւտապանքը և մտքի անհանգիստ հարցասիրութիւնը մէկ խօսքով, յաւուկ՝ ճշմարիտ բանաստեղծներու։

Գրական այս սեռը ունեցաւ իր լաւագոյն ներկայացուցիչը յանձին

աւստրիացի բանաստեղծ Rainer Maria Rilkeի, որուն Les Cahiers de Malte Laurids Brigge հատորը մանաւորաբար իր վրայ հրաւիրեց միջազգային գրական հետաքրքրութիւնը։ Կը յիշեմ դարձեալ ֆրանսացի գրագէտ Gilbert de Voisinsի Les Miensը, որուն վերնագիրն իսկ կը բացատրէ թէ ի՞նչ է գրքին բովանդակութիւնը։ Յիշենք դարձեալ Կօրքին ու Բանայիթ Սթրաթին։

Այսպէս ուրեմն Ա. Ահարոնեանի Իմ գիրքը կը միանայ գրական այս սեռի հրատարակութիւններուն, վաւերական արժէքով մը։ Անիկա կը լերէ մեզի մանուկ հոգիներուն բոլոր ծանօթ ու անծանօթ գիծերը, որոնցմով կը կազմուի հետզհետէ նկարագիրը պատանի, չափահաս ու ծերունի մարդուն։

Պատմողը, բանաստեղծ արձակագիրն ու արուեստագէտ մտածողը հաւասարապէս կը յայտնուին Իմ գիրքիին մէջ։ Մէկ ծայրէն միւսը անկարելի է չի տեսնել ու չի զգալ ամէն բան պիտելու և ուշադրութենէ ամէն բան չի կորնչելու մտահոգութիւնը, կազմելու համար իր գիրքը, իր ինքնակենսագրութիւնը։

Արուեստագէտ մտածողին քով չի նեմանար երբեք բանաստեղծ արձակագիրը, որ մեր գրականութեան մէջ ունի արդէն իր առաջնակարգ ու պատուաւոր տեղը։

Իմ գիրքը ին մէջ բազմաթիւ են այն էջերը, որոնց մէջ կը յայտնուի վաղեմի արձակագիրը։ Բայց էք օրինակի համար երկրորդ գլուխը, Մեր տունը, ու կարդացէք. ամէնէն անշուք իրերն իսկ լեզու կ'առնեն, կը կենդանանան ու կը գեղեցկանան, շնորհիւ այն ճկուն ու արուեստի նրբութեան, այն սահուն երաժշտութեան, որուն գաղտնիքը իրեն սրտեցաւ։ Ահաւասիկ սովորական Ճրագկալը, զոր կը նկարագրէ այսպէս. «Փաքրիկ ու ծռմռւած մի խեցի, որ գիւղի բրուտն է շինել մի կոտր կաւից. կոտչ ունի, նեղլիկ որկոր ու որովայն. ձէթը խմում է եւ լոյս է ժայթքում. անօրինակ կենդանի, խօսուն ու յարաշարժ, որ նոյնպէս իր հոգին ունի իր բոցի շարժումների ու խաղերի մէջ։ Հիմքը թուխ, կեղրոնը դեղին և ծայրը կարմիր այդ բոցը վառելուն պէս, ողջ տունը կերպարանափոխուում, խորհուրդ է զգենում մի անծանօթ ու դերագոյն կեանքի համար»։

Եւ երբ մեզի կը նկարագրէ փոթորիկէն առաջ բնութեան պատկերը, պատերազմին ահաւորութիւնն ու սոսկումը պատկերացնելու համար, կը զգանք, որ իրա՛ւ դաշտի մը մէջ կը գտնուինք ու շատ չանցած, փոթորիկ, կայծակ ու որոտ պիտի պայթին մեր գլխուն վրայ։ Հոս ալ բնութեան տարերուն լեզուն ու գաղտնիքը հասկցող իրապաշտ նկարագրողն է անիկա։

Հոգեկան խորունկ վիշտ և փշրուած երազի հիասթափութիւնը զգացող

մանուկին հոգին աւելի լաւ չէր պատկերացուեր, ինչպէս ան պատկերացուեր է Ահարոնեանի գրչին տակ, *Զուննկն* հատուածին մէջ: Բարձր երգիծանք մըն է այս էջը: Մեզմէ ամէն մէկը նմանօրինակ հիասթափութեան ենթարկըւեր է անտարակոյս: Շաբաթներ տքնիլ, սաղմոսներ ու շարականներ գոց սորվիլ, եկեղեցիին մէջ, տէրտէրին ու ժամկոչին քովն ի վեր, աղօթող հասարակութեան առջեւ արտասանելու համար..., ու յանկարծ, անծանօթին ու խորհրդաւորին առջեւ զգացած վախն ու սարսուռը պատճառ կ'ըլլան, որ գիրերը պարեն տղուն աչքերուն առջեւ, ու ամէն բան մոռնայ, ենթարկուելու համար մեծերու նախատինքին, տարեկիցներու չարախնդութեան, ու ամէնէն աւելի, սեփական եսի ու հպարտութեան առջեւ՝ ինքզինքն զգայ ամօթահար:

* * *

Ա. Ահարոնեան ունի նաեւ թատերական գրականութիւն մը:

Արցունքի հովիտը լոյս կը տեսնէ 1906ին, որուն մէջ խորհրդաւոր պատկերներով ու բանաստեղծական ներշնչումով, կը ներկայացուի բռնապետութիւնը և պայքարը ազատութեան համար: *Արցունքի հովիտը* ռուսերէնի կը թարգմանուի և սակայն կառավարութեան կողմէն կը գրաւուի: *Սեւ թռչունը* Թիֆլիսի մէջ կը խաղցուի 1907ին, որուն մէջ կը ներկայացուի սէրը, իբրեւ աղբիւր անհատական ու մարդկային տառապանքին: 1909ին բանտին մէջ կը գրէ *Նախասահմանուածները*, որուն մէջ հեղինակը կը զբաղի անոնցմով, որոնք սահմանուած են իրականացնելու արդարութեան ու մարդկութեան մեծ իտէալը: Դարձեալ բանտին մէջ գրուած և Թիֆլիս խաղցըւած է *Մեռելները որ կը խօսին* 1910ին, որուն նիւթը հետեւեալն է. սիրոյ ճակատագրին հետեւանքով, էակ մը իր ճամբուն վրայ արցունք ու դժբախտութիւն կը ցանէ, հասնելու համար վտանգաւոր ու ցնորական երջանկութեան մը:

.....

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ
Ե Ւ
ՀՈԳԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ

.....

Ա.

ԵՐԵՔ ՇՐՋԱՆՆԵՐ.— ՀՈԳԻՆ ՆՈՅՆՆ Է ԱՄԷՆ ՏԵՂ.— ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐՐԱՆԸ.— ՄՈՒԹ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՒՆ ՊԱՏԿԵՐԸ.— ՑԵՂԻՆ ԴԱՐԱՒՈՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

Մարդկային հոգին նման է ծովին, որի մակերեւոյթը խաղաղ է, սիրուն, հարթ-հաւասար, բայց իր ներսում, յատակեան խաւարի եւ խորհրդաւոր անյայտութեան մէջ, բազմաթիւ պատկերներ, հրաշալի երեւոյթներ ունի թագցրած:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ինչպէս որ անհատ մը իր պատանեկութեան, երիտասարդութեան, չափահասութեան ու ծերութեան շրջաններն ունի, այնպէս ալ գրական ստեղծագործութիւն մը, իր որոշ շրջաններն ունի, տրուած ըլլալով, որ այդ ստեղծագործութիւնը արդիւնքն է, արտաքին ազդակներէն անկախաբար, մարդկային մտքի շարունակական բարեշրջութեան, զգացումներու զանազանութեան և տարիներու ընթացքին, կեանքը ուրիշ ակնոցներով դիտելու անխուսափելի պատճառներուն:

Այս անտեղիտալի օրէնքին կը հպատակի նաև Ահարոնեանի գրականութիւնը, որուն բովանդակութիւնը կը համապատասխանէ մարդկային կեանքի զանազան տարիքներուն:

Նախ և առաջ ունինք անոր պատմուածքները, հերոսապատումի պըղուպգները, որոնք կը յատկանշեն գրականութեան մանկութիւնն ու պատանեկութիւնը:

Հեղինակին աչքը կը թափառի ամէնէն դաժան ու արիւնոտ իրականութիւններուն մէջ. ըմբոստ է հոգիով ու արդարութեան ծարաւի. ասպետական սրի ունի հանդէպ անիրաւութիւններուն ու մարդկային տկարութիւններուն։

Իրականութենէն փրցուած այս էջերուն մէջ, տիպարներն ալ միամիտ ու լաւատես են հոգիով։ Անոնք գիտեն տոկալ ու հանդուրժել ամէն տեսակ լունութեան ու զրկանքի, մի՛շտ լաւագոյն օրերու հաւատքովը. ժպիտ ու արցունք անոնց կեանքի արշալոյսին գեղեցկութիւնը կը կազմեն հաւասարապէս։ Անոնց մտքի հորիզոնը սահմանափակ է իրենց ապրած աշխարհին պէս։

Երկրորդ շրջանը, Ահարոնեանի գրական երիտասարդութիւնն է։ Գիւղի հորիզոնը և մարդկային հոգիները պահելով մէկտեղ իրենց հրապոյրն ու հետաքրքրութիւնը, գրողը խեղդուիլ կը սկսի այդ անձուկ միջավայրին մէջ, նոր հորիզոններ կը փնտռէ, դուրս նետուիլ կ՛ուզէ։ Եթէ ուսանող է, հասմամարդկային հարցերու և գերբնական խնդիրներու առջև կը գտնէ ինքզինք, անոնց համար իր հոգին ու միտքը կը բանայ։ Սիրտն ալ իր դերը կը կատարէ, սիրոյ համար կը բաբախէ, գեղեցկութեան ու ճշմարտութեան համար տառապիլ կը սկսի։

Ահարոնեանի երիտասարդ տարիքի գրականութիւնը ա՛յս յրոշմը կը կրէ։ Եւ երբ օտար հորիզոններ ու երկիրներ կ՛այցելէ ու կը տեսնէ արեւմուտքի քաղաքակրթութիւնը, ղարերու հրաշակերտներն ու գեղեցկութիւնները, հոգին կը տառապի ու սիրտը կը փղձկի. իր ցեղին ղարաւոր կեանքը վերապրելով, մեծ փափաք մը կ՛արթնայ իր հայրենակիցներն ալ տեսնել յառաջդիմութեան ճամբուն վրայ, որովհետեւ կը հաւատայ մեր ցեղային բոլո՛ր կարողութիւններուն և անոնցմէ յառաջ գալիք կարելիութիւններուն։ Իր ճամբորդի յուշերն ու տպաւորութիւնները ալ այս նպատակով գրի առնված են։

Կը հանդիպինք արդէն չափահասութեան շրջանի ստեղծագործութեան։

Արուեստագէտը իր եսեն ունի տարիներուն բեռը։ Ոտքերուն շղթայ մը, որ կազմուած է պայքարներէ, հոգերէ ու տառապանքէ, յոյսերէ ու հիասթափութիւններէ։ Կեանքը, մարդիկը, և շրջապատը ճանչցած ըլլալու փորձառութիւնը ունի. անիկա կը թափանցէ իրերուն խորն իսկ. երիտասարդութեան ու պատանեկութեան երազները՝ երազ մնայեր են, անոնց իրականացման ծառեցեր՝ և սակայն անոնք կրկներեւոյթի մը պէս անյայտացեր են։ Կը զգայ, կը գիտակցի, որ յաւիտենական են միայն արուեստն ու գեղեցկութիւնը, անմահութեան մէջ իսկ պահելով իրենց յարաբերականութեան իմաստն ու բնոյթը։

Այս գիտակցութիւնը անոր թուիչք կու տայ. պրպտող ու որոնող իմաստականութիւնը նոր հորիզոններ կը փնտռէ, ու կը գտնէ, որ ամէն ինչ յարաբերական արժէք ունի։ Կը վերագնահատէ ամէն բան։ Կը հասնի հանգրուանի մը, ուրկէ անվին ցնորքն ու երեւակայութիւնը արժէքներ չեն։ Ու իր ոտքերը հաստատ կերպով կը կոխեն իրական հողի վրայ։

Արուեստագէտը զգայուն մարդ է, ու կը փնտռէ այն ամէն զգայութիւնները, որոնք իր արուեստը կը սնուցանեն։ Նախ կը թափառի օտար հորիզոններ, կը տեսնէ, որ կեանքը ամէն տեղ նոյնն է, անհնչան տարբերութիւններով, որոնք արտաքին երեւոյթներու կապուած են միշտ։ Նոյնիսկ քաղաքակրթութիւնները ալ վաղանցիկ արժէքներ են, յաւիտենական հոլովոյթին մէջ։ Կը դառնայ կրկին իր հայրենի հողին գիրկը, հայրենի արեւին ու երկինքին, լերան ու ջուրին, վտակին ու ձորերուն, ու անոնց ներդաշնակ ու բնական խաղաղութեանը մէջ լուծուիլ կը տեսնէ իր էութեամբ։

Ասով ալ չի բաւականանար. կը փոխադրուի իր կեանքին երազ օրերը, մանկութեան ու պատանեկութեան օրերը, ու կը վերապրի այդ երջանիկ օրերու կրակով ու ջերմութեամբ։ Կը փնտռէ ինքզինքը մանկական անմեղութեան մէջ, ու կը զգայ որ որքա՜ն փոխուեր են ինքը, իր էութիւնը, իր մտածումներն ու զգացումները։

Պաշտամունքն է, որ կը սկսի անցած օրերուն, և այդ պաշտամունքը տուն կու տայ նոր ստեղծագործութեան մը, մէկը ամէնէն հարազատ ու ջերմին, ամէնէն անխարդախ ու բնական ստեղծագործութիւններէն։

Ահարոնեանի գրականութեան վերջին շրջանը ա՛յս յատկանիշը ունի, նուազ ձգտումնաւոր ու օգտապաշտ հետեւաբար, զգալու և արտայայտելու նուազ արուեստակութեամբ։ Ըլլան անոնք ուղեւորի յուշեր, տպաւորութիւններ թէ պատմուածքներ, անոնց մէջ զգայուն մարդն է որ կը տառապի, համամարդկային զգայութիւններ փնտռող ու խոշտանգուող էակը, որ միջոցէ, ժամանակէ ու տարածութենէ դուրս, մի՛շտ գոյութիւն պիտի ունենայ, ու պիտի դառնայ սիպարը իր ժամանակի գրական ստեղծագործութիւններուն։

Այս երեք տեսակէտներով ուրեմն պիտի փորձենք վերլուծել Ահարոնեանի քառասնամեայ գրականութիւնը, որ ժամանակագրական կարգով իսկ կ'արդարացնէ յիշուած բաժանումը։

*
* *

Ահարոնեանի գրականութեան միջավայրը հայ գիւղն է, և անոր

տիպարներն ալ գիւղացիներ են գերազանցապէս։ Մթնոլորտը, ուր անոնք կը շնչեն, ուր անոնք կը գործեն, կը տառապին ու կը մեռնին, գիւղական աշխարհն է, հարուստ՝ բնական գեղեցկութիւններով։ Հոն՝ ուր հսկայ Մասիսները կան, Արագածը կայ, Արաքսն ու Եփրատ գետերը։ Կայ նաեւ Արարատեան լայնարձակ դաշտագետինը, որ դարերէ ի վեր անուշեր ու մեծցուցեր է հայ սերունդները։ Հայ հոգին, իր աւանդութիւնները, իր պայքարներուն վաղեմի արձագանգը, առօրեայ կեանքը, նիւթ ու կացը, արցունքն ու ժպիտը, ծիածանի մը գոյներուն պէս գրաւիչ ու խօսուն, — այս բոլորին հզօր ներգործութեանը տակ ապրեր ու մեծցեր է ինքը Աւետիս Ահարոնեան, որուն բովանդակ ստեղծագործութիւնը, բառին ամէնէն չարազատ իմաստովը, հայկական է, ազգային է։

Իր գրականութեան համար գիւղի միջավայրը, և հոն ապրող մարդիկը տիպար ընտրելով, Ահարոնեան արտայրեր է իբրեւ արուեստագէտ։ Զէ արհամարհած այս շատ «սովորական», «տափակ» ու «միամիտ» կարծուած աշխարհը, ինչպէս կը պատահի ոմանք, խորհելով, որ արուեստի սահմանէն դուրս կը մնայ այդ անձուկ միջավայրը..., խորհելով նաեւ որ հոն ապրող մարդիկը քաղաքներու մէջ ապրողներուն բարդ ու առեղծուածային նկարագիրը չեն կրնար ունենալ...։

Ասոր հակառակը ապացուցանելու համար, պէտք չի կայ օրինակներ տալ միջազգային գրականութենէն։ Մեր գրականութեան վերջին չիսուն տարուան համայնապատկերն իսկ պիտի բաւէ, տեսնելու, թէ քիչ շատ լաւագոյն գործերը, գլուխ-գործոց համարուող ստեղծագործութիւնները ներշնչուեր են բացառաբար այդ «միամիտ, անձուկ ու սահմանափակ» կարծուած միջավայրէն ու այն տիպարներէն, որոնք հոգի մտնին, ինչպէս քաղաքներու մէջ ապրող մարդիկը, բարդ, առեղծուածային ու խորհրդաւոր։

Ուրիշ տեսակ ալ չէր կրնար ըլլալ։ Հայ մարդը, հայ հոգին, իր հարատեւութիւնը միայն հայ հողին ու հայրենիքին վրայ պահեր է, և հետեւաբար ճշմարիտ արուեստագէտն է, որ այդ տարրին հոգիին խորհրդաւոր ճամբերը պիտի բանայ արեւուն, պիտի թափանցէ անոր վարպետի ճիգերով ու պրպտումներով։ Քաղաքներու մէջ ապրող մարդոց արտաքին պայմանները ճիշտ է, որ կը տարբերին առաջիններէն, սակայն ինչ որ քաղաքին մէջ կայ, գիւղին մէջ չի կայ, և փոխադարձաբար։ Իսկ հոգին նոյն կիրքերն ունի երկու տեղն ալ. քաղաքին մէջ նրբացած, եղծուած ու արուեստակեալ, գիւղին մէջ հարազատ, բնական, անխարդախ, մուխ ու ստուերի մէջ կորսուած։

Հոգիի այդ իրականութեանը մօտենալ արուեստագէտի խմոր ու խառ-

նըւաճք կը պահանջէ։ Ու ծիծաղելի է, եթէ ոչ ողբալի, կարծել թէ այդ իրականութիւնը արուեստի սահմանէն դուրս կը մնայ։

Հայ մարդուն հոգիին հարազատութիւնը գիւղին մէջ փնտռելու է, քանի որ բառին իսկական նշանակութեամբ հայ քաղաք, ու քաղաքացի, իր հոգեբանութեամբ, իր ապրելակերպով գոյութիւն չունի, և ինչ որ կայ եւրոպականին ընդօրինակութիւնն է։

* * *

Նախ գիւղական աշխարհը...։

Ահաւասիկ գիւղը, որ աշխատանքի լծուեր է։ Ով որ կրծելու ակռայ և շարժելու ոտք ու ձեռք ունի, ստիպուած է աշխատիլ։ Դաշտերուն ու այգիներուն մէջ կեանքը եռուզեռի մէջ է։ Ամէն կողմ գալարուած ու ծռուած մէջքեր, յոգնած ու քրտնաթոր ճակատներ, արեւին առջեւ այրած ու տանջուած դէմքեր, մեղմ ու իրենց դաժան ճակատագրին հնազանդ աչքեր, ուր հազիւ թէ կը փայլին հեռաւոր յոյս մը, և կոր մը հայ ունենալու հաւատքը։

Հայկական գիւղը սեւ ու լայտոլ ամբոխն է, միայն լայտող. ան չի ճանչնար, կամ ճանչնալ չուզեր յայտնի ճշմարտութիւնը. չի խոստովանիր, որ պինքը կը կոլոպտեն, կը խաբեն ու կը զրկեն, գիտակցութիւնը չունի, որ ինքը խեղճ, տանջուած, անտէր ու անճար է. անոր խիղճը չի բողոքեր, չի ըմբոստանար, անկիւններու մէջ միայն գանգատող ու լայող է։ Այդ ամբոխին մէջէն, անհատներ միայն, բայաւիկ դէմքեր երբեմն խորապէս կը ցաւան, որ գիւղը կը լողայ ծով ցաւի մէջ։ Գիւղը կը համակերպի առհասարակ իր ճակատագրին։

Նոյն ամբոխը սակայն հասարակայ ցաւին ու կարօտութեան համար մէկ կամք կը ներկայացնէ. այս անգամ գիւղը ահեղավազ Արազին քանդած ամբարտակները պիտի կանգնէ անկէ ջուր գողնալու համար։ Բոլո՛րը, բոլո՛րը կ'աշխատին մրջիւններու պէս. վտանգը հասարակաց է յոգնութիւնն ալ հասարակաց պէտք է ըլլայ. կարօտութեան առջեւ մէկը կ'աշխատի բոլորին համար, և բոլորը՝ մէկին համար։

Նոյն գիւղն է և իր հասարակութիւնը սակայն, որ երբեմն, կ'ամփոփուին իրենք իրենց մէջ, կ'ապրին իրենց համար միայն։ Փակուած տուներէն ու պատուհաններէն դուրս՝ կարօտութիւնը, անօթութիւնն ու թշուառութիւնը, որոնց ճանկերուն մէջ կը գալարուի ուրիշ բազմութիւն մը մարդոց, որոնք հեռուներէն կու գան, որոնց տունն ու տեղը քանդուեր ու աւերակ դարձեր

են: Կ'անցնին բոլորը, խեղճ ու ծարաւի. դներն ու պատուհանները գոց կը պահեն. իրենց աղբանքին ու հեծեծանքներուն պատասխանող չի կայ: Գիւղը ծախեր է իր խիղճը, իր կամքը ու մանաւանդ ազատութիւնը: Գիւղը չարին ու սատանային անձնատուր է: Նոյնիսկ չի խնայեր ծերունի արդար հովիւին, որ իր հարիւրամեայ պատկառելի հասակովը երկիւղ չազդեր, խըղճահար չըներ զիրենք:

Ինչպէս որ անհատներու հոգին կը տանջուի չարիք մը գործած, անիրաւութիւն մը ըրած ըլլալուն համար, այնպէս ալ հաւաքականութիւն մը, *ինչպէս* կը տեսնենք այդ աւանդութեան մը մէջ (*Վիշապաձոր, Արագը հատորին մէջ*) կամ հին կոտակարանի *Սոդոմ–Գոմորի* աւանդութիւնէն, անօրինակ տանջանքներու և դժբախտութիւններու կը մատնուի:

Հովիւը անմեղութիւնն ու արդարութիւնը կը խորհրդանշէ, լեռներու և ձորերու ազատութեան մէջ հասակ նետած մարդկային քաղաքակրթութիւնը, որուն չէ հպած տակաւին *սատանային* մատը, և որուն վրայ չէ ծանրացեր անիրաւութեան ու թշուառութեան անէծքը:

Իր խղճին ձայնը խեղդելու համար, ամբոխը ողջ ողջ կը թաղէ հարիւրամեայ արդար ծերունին, որ մխակը չէ ծախեր իր խիղճն ու ազատութիւնը. այդ ծերունին անէծքն է, որ աւանդութեան գիւղը գաղաններու կեր դարձուց ու ապաւաժներու մէջ գերեզմաններ փորել տուաւ անոնց համար . . .:

Այդ անէծքը տակաւին կը սաւառնի աշխարհի վրայ, քանի որ «ո՛ր կողմէ նայում ես, աշխարհում մարդիկ իրար կրծոտում, ոտրոտում, չանգըռտում են, ու իրանք էլ չը գիտեն ինչի՞ համար: Ծաւ ու դարտ է չորս կողմներս: Գազաններըդ մեղ վրայ էլ իրաւունք ունին արդյունք թափելու:»

* * *

Գիւղը մարդկային քաղաքակրթութեան առաջին օրրանն է: Գիւղը, քաղաքներէն առաջ, մարդկային հոգիին աւանդապահն է եղեր: Իրրեւ այդպիսին, ո՛ւր է, որ պիտի կրնանք փնտռել այսօրուան հասակ առած մարդկութեան առաջին գիծերն ու օղակները: Հո՛ն է, որ հոգիներու անգիտակից աշխարհի խաւարին մէջ մրափած զգայութիւնները, լոյս աշխարհ կը բերուին, շնորհիւ սրուեստագէտներուն տանջալից խուզարկութիւններուն: Լուծեան ու հանդարտութեան այդ հորիզոնին մէջ է, որ հոգեբանին խորաթափանց աչքերը երեւան կը բերեն նոր յայտնութիւններ, նոր գիծեր ու գոյներ, որոնք կ'ամբողջացնեն *մեծ հաւմրին*, ամբոխին մտաւորական, բարոյական ու հոգեկան աշխարհը:

Այդ աշխարհը սակայն իր օրէնքներն ու կանոններն ունի, իր առանձնայատուկ կեանքն ու ճաշը, իր սովորութիւնները ճանաւանդ, որուն պատերուն առջեւ կը փշրուին բոլոր թափանցող փորձերը. լոյսը տեղի կուտայ հոն խաւարին, բարութիւնը՝ չարիքին, արդարութիւնը՝ անարդարութեան, տկարը՝ ուժին, սէրըատելութեան ու նախանձին։

Գիւղի աշխարհը, աւանդապահ, խստապահանջ ու անողոմ է «որ հաղար բերան ունէր, հազար խօսք, ու ամէն մի խօսքը թունաւոր նետ, պա մի հոգի էր, աւերիչ ու ահագին, որ թափով սրբում, տանում էր բոլոր անհատական տենչերը, երջանկութեան երազները, որոնք դէմ էին ամօթին, սովորութիւններին։»

Այսպէս էր գիւղը, հայկական գիւղը, որուն «հատ գլուխը» ընդունակ էր պիմանալու անարդարութեան բոլոր հարուածներուն, որ իր արտն ու այգին կը ջրէր արիւնով ու քրտինքով, և որ չէր հանդուրժեր անարդարութեան, անիրաւութեան ու բռնութեան դէմ անհաւասար պայքար մղող բացառիկ ըմբոստներուն, մարդկային արժանապատուութեան համար մեռնիլ գիտցող իր զաւակներուն աստուածային վրէժխնդրութեան։

Որովհետև գիւղը ամէն բանէ առաջ կը հաւատայ Աստուծոյ արդարութեան, կը հաւատայ, որ անիկա «իր անչափ ողորմութեամբ մի պուռ է բայ անուամ, փրկում, ազատում»։ Այս հաւատքին խորը թաղուած են իր ահաւոր տգիտութիւնն ու միամտութիւնը։ Անիկա կ'ապրի ցաւի ու տանջանքի մէջ, առաւօտէն մինչեւ երեկոյ ոտքով ու ձեռքով չարաչար կ'աշխատի, քարը բարձ կ'ընէ, արիւն քրտինք կը թափէ, իրիկունը կը վերադառնայ յոգնած և ուժասպառ անդամներով. վաղուան հոգն ունի, պարտատէրին ու կառավարական պաշտօնեաներուն ստուերը կը թափուի տուներուն շուրջը, և սակայն «փա՛ռք քեզ Աստուած, հաղա՛ր բերան փառք» աւանդական աղօթքը մրմռալէն կը նեստւի անկողին, վաղը նորէն նոյն միօրինակ կեանքը վերսկսելու համար . . .։

Միամիտ է գիւղը, որովհետև արտաքին երեւոյթներուն կը հաւատայ առանց թափանցելու իրերու ներքին հոգիին. ինչուն և ինչպէսը գոյութիւն չունին անոր անձուկ իմացականութեան մէջ։ Տարերային կերպով տեղի կ'ունենայ ամէն բան։ կը բաւէ որ խելօքին մէկը ըսէ, թէ գիւղը *Մարդագէզ*(1) է եկեր. ամէնն իրար կ'անցնին, կը հաւատան առասպելական կեանքին գոյութեան, առանց հարցնելու և փնտռելու ժխտութեան մը

(1). Արազը. Մարդագէզը էջ 267 - 309

պատճառը։ Անտարբերութիւնն ու մխամտութիւնը, անհոգութիւնն ու եսասիրութիւնն են պատճառը, որ անիկա անգիտանայ գոյութիւնը թշուառ ընտանիքի մը, որ գիւղին մէկ աւերակ անկիւնը, խրճիթի մը չորս պատերուն մէջ ահաւոր օրեր կ'անցընէ, անօթի, ծարաւ, կարօտ՝ չոր հացի ու կաթիլ մը տաք ապուրի։ Ամբոխը կը հաւատայ, որ այդ թշուառ ընտանիքի Ծուռ-Փարին է պատճառը գիւղի տակնուվրայութեան։ Ծուռ-Փարին կը զոհուի «խաւարի ու սարսափի աստծուն» և սակայն Մարդագէլին վախն ու սարսափը կը տիրեն տակաւին հոգիներուն։

Դիւղը մխամիտ է, երբ պառաւ կնոջ մը խօսքին կը հաւատայ, թէ երկինքէն օձի շապիկ իջեր է չար կնոջ մը գլխին. երբ կը կարծէ, թէ մէկ հրացան կը բաւէ, որ ինքը փրկուի։ Անտարբեր է ու անգութ յաճախ, կ'ատէ առանց գիտակցութեան ու առանց իրաւ ահարութեան, «ոգէտ մարդկանց բերտ, անարուեստ, բայարձակ առելութեամբ, որ երբեմն արտայայտում էր շատ անսիրտ ձեւով։»

Դիւղը կը մնայ ամէն բան, և սակայն երբ «չահիլութիւնը մի յանցաւոր բիծ թողու ժամանակին՝ դիւղական առաքինի կեանքի վրայ, ամէն բանում մոռացկոտ, ներողամիտ գիւղը այդ անարգանքը մոռանալ չէ կարողանում։» Նոյնիսկ հակառակ մարմնացած թշուառութեան, որ իր աչքերուն առջեւ կը փուռի։

Դիւղացի մարդը գիտակցութիւնը չունի իր իսկական վիճակին. դարսէն նայողները և իր մէջ ապրող օտարականներն են, որ կը զգան այդ վիճակին դառնութիւնն ու անբնականութիւնը։ Դիւղացիին համար մեծ, կեանքի ու մահուան հոգեր են, երբ սղութիւն տիրէ, կարկուտ գայ, անձրեւ չի տեղայ ժամանակին, և կամ գոյգ գոմէշներէն մէկը մեռնի, եղներն ու ոչխարները աւազակները յափշտակեն, բերքը իր ակնկալութիւնները չի պատկէ, և պահանջատէրին դաժան պէմքը երազին մէջ տեսնէ։ Այն առեն անիկա կը խեղճնայ, վիզը ծուռ, ձեռքը ծոցը, թափառական կը դառնայ ու այս չարիքներուն համար իր գործած կամ մոքէն անցած մեղքերը պատասխանատու կը բռնէ։ Բայց գօրաւոր հաւատքն ունի ան դալիք լաւագոյն օրերու, իր տնտեսութիւնը վերականգնելու համար։

Այս հոգերէն դուրս, իր տան չորս պատերէն անդին, ուրիշ հոգ ու աշխարհ չի ճանչնար ան։ Կը հետաքրքրուի իր դրացիներուն վիճակով, անոնց մանաւանդ տկար կողմերով, որոնք գեղի սահմանափակ աշխարհին մէջ ընդունակ են երբեմն մեծ ալիքներ բարձրացնել...։

Երբ խաղալ ու յաջող տարիներ գան, բերքն ու հունձքը առատ ըլլան, գոմը լեցուն անասուններով, կրկին ուրախութիւն կը տիրէ հոն, ան-

գիտակից ուրախութիւն մը, որուն համար կրկին աչքերը կը դարձնէ դէպի անսահման կապոյտը և փառք կուտայ Արարիչին: Այն ատեն շէն է անոր օճախը, ճրագը միշտ վառ, ցուրտը բայց, սեղանը միշտ պատրաստ օտարական ճամբորդներուն, գիւղի մուրացիկներուն ու թափառական աշուղներուն համար:

Ու այսպէս, գիւղացիները պատանեկութենէ երիտասարդութեան, չափահասութենէ ծերութեան կը հասնին, հեռաւոր հորիզոններուն դիտութիւնը անտեսելով, առանց երազներու, առանց թռիչքներու. գերեզմանատան ճամբան կը բռնեն, այն մխիթարութեամբ, որ սերունդ մը կը ձգեն իրենց ետեւ. իսկ անոնք, որ այդ մխիթարութենէն ալ զրկուած են, այդպիսիներուն համար գեղը հոգեհայ կը բաժնէ իր ճեռելներուն հանգիստին համար . . . :

Ահարոնեան ա՛յս աշխարհին ու հորիզոնին վիպագիրն է:

Անիկա մեզ կ՛առաջնորդէ խրճիթներէն ու դոմերէն ներս, ուր գիւղացին կ՛ապրի իր անասուններուն հետ, անոնց մասին շատ անգամ աւելի կը հոգայ ու կը մտատանջուի քան իր հարազատ զաւակներուն մասին, որով հետեւ դարերէ ի վեր համոզուած է հաւատքի մը չափ զօրաւոր կերպով, թէ այդ անասուններուն շնորհիւ կանգուն կը մնան իր տունն ու օճախը, արտն ու այգին, կինն ու զաւակները:

Եթէ հիւանդութիւն գայ գիւղին մէջ ու կենդանիները վարակուին այդ ցաւով, իր սիրտն է, որ կը բզքտուի, գիշերն անքուն կ՛անցընէ, ու խղճի խայթով կը յիշէ հիւանդ անասունին հանդէպ գործած իր անիրաւութիւնը, և կ՛արտասուէ յաճախ մեռած կենդանիի մը դիակին վրայ, իբրեւ թէ իր զաւակն ըլլար:

Գիւղացին անօրինակ սիրով կը սիրէ իր գոմին բոլոր կենդանիները: Անոնք իր տան նեցուկն են. քնաղով չէ որ կը գտայ այս բանը, կեանքի դառնութիւնը, կեանքի օրէնքը շօշափելի, ղրական, սորվեցուցեր են այդ դասը, այդ պարտականութիւնը: Իր ձեռքովը մեծցուցած անասունները մասնաւոր հպարտութեամբ կը դիտէ ան: Գէվօն այդ տիպարներէն է Ծաւը պատմուածքին մէջ. «Նա ցած էր իջնում և դէպի գոմէշները գնում, կանգնում էր մի քիչ հեռու և հիացած սիրահարի հայեացքով նայում էր նրանց երկար–երկար, յետոյ մօտենում էր և փայփայում նրանց գլուխները, բռնում սուր եղջիւրները, գրկում էր հատ ալարանոցները և ձեռքը քսում ըստ իր սովորութեան նրանց մէջքերին: Կենդանիների հոտիւտ տեսքը դարձեալ սըրտապնդում էր, յոյս էր տալիս նրան» (1)

---

(1) Արազը, *Ժողովածու երկերի* Ցաւը, էջ 328:

Իր հոգիին անբողոք մրմունդն ու անբարբառ վիշտը ծանրօրէն կը ճնշէ սակայն իր շրջապատին վրայ. անիկա սաքուին մէկ անկիւնը նստած, ծեր բունիի մը դէմը, աչքերով իրարու կը հասկցնէին օճախին գլխուն եկած դժբախտութիւնը. «Երկու ստուերներ լինէին ասես այդ երկու մարդիկը, մէկը ծերութիւնից և միսը վշտից չարպուած, մէկը խուլ էր ժամանակի երեսից և միսը չէր խօսում, համաբեայ համր էր յաւերի երեսից: Նստում էին վառ բուխարու այս ու այն կողմում ժամերով լուռ, նայում էին իրար և ծխում, ծխում: Նրանց վառ չիբուխներից բարձրացող ծուխը ձգւում էր դէպի բուխարին, խառնւում էր կրակի ծխին՝ տանելով իր հետ այնքան մտքեր, այնքան խոհեր, այնքան վշտեր, որքան կարող էր ունենալ մի հին գիւղ, մի յաւապատ, ոգաւոր գիւղ: Ի՞նչ ասես չը կար այդ ծխի մէջ, դարերի նախապաշարմունքներ, անլոյս տգիտութիւն հզօր ճակատագրի հանդէպ, անարատ աղօթք, մրմունջներ և մի արտասուելի անտերութիւն չախչախիչ չարիքի առաջ:» (1)

* * *

Գիւղական հաւաքականութեան, այսինքն ժողովուրդին, իբրեւ տիպար, կը հանդիպինք Երբ ծիւնն իջնում է պատմուածքին մէջ: Հաւաքական և ստեղծագործ աշխատանքին անձնատուր, և կամ ընդհանուրին վիշտ ու ցաւը պատկերացնող հոգեկան պատկերը չէ, զոր ունինք հոս: Ընդհակառակն: Ամբոխային կիրքը և անգիտակից բնազդն են, որ կը գործեն այս անգամ:

Ինչպէս անհատը, որ իր սեփական հոգն ու կարօտութիւնը, թերութիւնն ու մոլութիւնները, մեղքերն ու տկարութիւնները մոռցած, ցիւանդադին կերպով կը հետաքրքրուի ուրիշներու կեանքով, նիստ ու կացով և ընտանեկան գաղտնիքներով, այնպէս ալ ժողովուրդը, իր ամբողջութեանը մէջ, իբրեւ թէ մէկ տիձ ըլլար, կ'ապրի ու կը շնչէ, բնազդին թելադրութեամբ, կը փորձէ մտնել ընտանիքներու սեմէն ներս, անոնց հոգեկան աշխարհը, և կը չափէ ու կը ձեւէ իր կշիռովն ու ըմբռնումներովը:

Հակառակ սահմանափակ աշխարհ մը ըլլալուն, ուր պառաւ Կաքաւ Թէլլիներն ու Ալմաստները սունկի պէս կը բուսնին, և գիւղական այդ միջավայրին ան ու պղպեղն են, անհատներուն բացառական գիծերը ընդհանրացած կը գտնենք հաւաքականութեան վրայ: Ուրիշներով հետաքրքրուելու այդ զգայնութիւնը անգիտակցօրէն գոյութիւն ունի: Տեսակ մը ցիւանդութիւն է,

(1) Ալազը, Յաւր, էջ 327:

որ կը վարակէ բոլորը։ Անոնց ժամանցի աղբիւրն ալ այդ է, — ի՛նչ կ'անցնի կը դառնայ ուրիշներու երդիքներուն տակ, և գոց պատուհաններուն ետեւ. ո՞վ որու հետ ի՛նչ յարաբերութիւն ունի, ո՞վ որու ի՛նչ աչքով նայեցաւ։

Հոգեկան այս վիճակը յատուկ է գիւղական միջավայրերուն, ուր կեանքը կը սահի մխրճնակ ու խիստ սահմանափակ. ուր մարդիկ, մանաւանդ ձմեռները, երբ աշխատանքը դադրած է, ու գարնան համար բոլորը կը հանդրսատանան, ուրիշ ոեւէ զբաղում չունին, իրարու քով կու գան այս ու այն քամբասելու համար։ Թունաւոր օձ մըն է, որ կը ծուարի բոլորին մէջ, ու կը թունաւորէ հոգիները։

Երբ ծիւնն իջնում է գրոյցին մէջ ամբոխային հոգեբանութիւնը իր դերին մէջն է, որուն ճանկերուն մէջ իյնող և հոգեկան արիութիւն ու կորով չունեցողները, այլ եւս ազատում չունին, նման այն միջատներուն, որոնք աարդի ոստայնին մէջ կը բռնուին ու հոն ալ կը վերջանան։ Անոնց համար հասարակաց կարծիքը սիրապետող է իրենց կամքերուն, որոնք մի՛շտ թոյլ են եղեր, երբ խնդիրը պատուոյ շուրջ դարձեր է։ Նոյն իսկ ամէնէն ուժովներն անգամ չեն կրցեր իրենց հոգին ազատել այդ շղթայի պրկումներէն։

Ամբոխը գիտէ երդ հնարել ու երգել նաեւ, երբ սովորականէն տարբեր դէպք մը կը պատահի, երբ գիւղին ու գիւղացիին համար «գայթակղութիւն» մը կը պայթի։ Այդպիսի առիթներուն է, որ աւերող փոթորիկ մը, չի տեսնըւած կայծակ մը կը յայտնուին։

Ծերունի Եղնակ ամին ամուսնացեր է երիտասարդ Դսհարին հետ... կ'անցնին ամիսներ, ու այս զոյգը կ'ունենայ իր մանչ զաւակը...։ «Գիւղը եռում էր, ինչպէս վառ հնոցի վրայ լի կաթսան։» Եւ երգն է, որ «գալարւում, փռւում էր գիւղի փողոցներում, պաշտերում, ճամբաներում, երգում էին խնջոյքներին, հարսանիքներին և ուխտատեղերում, ամէն տեղ՝ ուր ջահիլ տղայ, աղջիկ հրճուանքի ու հեղնանքի պէտքն ունէին։»

Ամբոխը լեզու և երգ ունի, «մէկ տեղ թունաւոր ցնծութիւն հարեւանի ամօթանքի համար, մէկ տեղ կեղծաւոր ցաւում, մէկ տեղ հեգնութիւն. բոլոր կատրներէի տակ եռում էր ամբոխի կիրքը, ու հրապարակներում, փողոցներում խեչանեց տան պատիւը աղբի հետ շաղախւած տրորւում էր անցորդների ոտների տակ։» (1)

Այդ նոյն ամբոխը (*Խաւարի մէջ*), ուրիշ անգամ, հակառակ ներունիններուն ու պառաւներուն բողոքի արտայայտութիւններուն, ծատաղ աղջիկ-

---

(1) *Ա. Ահարոնեան*, Երբ ծիւնն իջնում է, տպգր. Հայրենիք, *Պոստոն 1924*

ներու և երիտասարդ հարսներու բերնով, ուրիշ երգ մը կ'երգէ, երգը անվախ ու համարձակ սիրոյ, որ անճանօթ էր գիւղի հորիզոններուն մէջ։ Այդ երգը «ծաղկի պէս անուշ, դաշտերի պէս արձակ ու վայրի» էր, չէր այն միւս երգը, որուն բառերը կազմուած են հեգնութեան վանկերով, և որուն մէջ ամբոխի հոգին կը դնէ իր թոյնը, խայթոցը և սուր ակնարկութիւնը։ Այդ երգը սիրոյ յաղթանակի երգն էր։

Եթէ գրագէտին սիրտը կ'արիւնի ու հոգին կը փոթորկի տեսնելով ամբոխները, որոնք երկաթէ կրունկներու տակ կը գալարուին ու քրտինքներու մէջ հազիւ չոր հայ մը կը շահին, որոնք ուժովներու գարշապարին տակ կը տրորուին ու կը հիւծին, անոր հոգին կ'ըմբոստանայ ու սիրտը արհամարհանքի կրակովը կը բռնկի, տեսնելով այդ նոյն բազմութիւնները խաղալիք՝ բնազդներու մութ ու անբացատրելի ուժերուն ձեռքը։ Այդ պահերուն անիկա խարանող բառեր ունի, ու կ'ատէ «Ամբոխը՝ բութ ու գունատ ամբոխը, մերթ լկտի, որպէս կինը վաճառքի. և մերթ ընկճուած ստրկօրէն ու սոդոմ՝ հզօրների ոտների տակ գետնամած և՝ մերթ կեանքի աղբերի մէջ անասնօրէն խայտացող, ստոր ու գարշ կրքերի սեւ ամբոխը։» (1)

Եւ սակայն Ահարոնեան պաշտամունք ունի ամբոխին հանդէպ. կը սիրէ դայն հոգիով, կը հետաքրքրուի անոր նիստ ու կացով, հոգեկան ապրումներովն ու կեանքէն անոր բաժին ինկած տառապանքովը։ Մարդկային տարերային այդ ուժէն դուրս «գունատ միակերպութիւն մը կայ, կ'ըսէ, աւելի ճնշող քան ամբոխին քրտինքին հոտը»։ Անոր համար անհրաժեշտութիւն մըն է ամբոխին գոյութիւնը, յոգնած ու պարտասած և որուն ներքին էութիւնը փոթորկող ալիքները անդունդներու մէջ եռեւեփող ջրջէժներուն կը նմանին։

Այս պաշտամունքին հետ զուգընթաց, գրագէտ ու ընկերաբան մարդուն սիրտէն արիւն կը հոսի տեսնելով, որ ժողովուրդներն առ հասարակ իրաւունքի մասին գիտակցութիւն չունին, անոնք կ'աշխատին ու կ'արտադրեն, բայց և այնպէս վայելողը չեն։ «Այս կնճռուած, բիրտ ճակատների տակ, կը գրէ Իտալիայում հատորին մէջ տեղ մը, դարերի փորձառութիւնը կայ, ասում են, բայց այդ փորձառութեան վրայ նա հիմնել է իր բացասական փիլիսոփայութիւնը, հնազանդութեան և լոկ հնազանդութեան և պարտքի բարոյականը»։

Ուրիշ անգամ հաւատացեալ ամբոխին կը հանդիպինք կիսախաւար ու

---

(1) Խաւարի մէջ, էջ 148

խունկի ծուխով կազմուած մթնոլորտի մը մէջ, հոն՝ ուր մարդիկ կը վե-րանան և հոգիները կը փոխադրուին անհասանելի բարձունքները։ Ծոցնած ու դաղրած գիւղական ամբոխն է ան, եկած ու խմբուած եկեղեցիին կամար-ներուն տակ. ո՛չ հարսանեկան թափորը և ոչ ալ մեռելական արարողու-թիւնն է զանոնք այդտեղ հաւաքմբողը.— ուխտաւորներու կարաւանն է ան, «որ իր սեփական, փոքրիկ եկեղեցւոյ անբաւական, եկել է այս մայր տա-ճարի կամարների տակ, այս սեւ խաչափայտի կողքին փռել իր իղձերը, իր աղօթքն ու հառաչանքը։ Խաչափայտը կրող քահանան դարձեալ հանդիստ է. յուզուղը, տանջուղը, աղօթողը այս սեւ ամբոխն է, դարերից հետէ աւերձածների ետեւից վազող, իր անհամար ցաւերի ճարը փնտռող։» (1)

Ամբոխ–հաւաքականութեան կը հանդիպինք մենք դարձեալ ուրիշ տեղ մը։ Դուրսը, ամէն կողմ, ցաւ ու արցունք, տագնապ ու մղձաւանջ, հրդեհ ու կոտորած. դիակներ ամէն կողմ ու աւերակ . . . ։ Այս բոլորին փոխարէն ժողովուրդն իր հոկումի օրն ունի. աղօթք ու շարական, զոհաբերութիւն ու մեծ պատրաստութիւն։ Եկեղեցիին բակը, մեծ–մեծ կաթսաներու մէջ մորթուած եղներ։ Ամէն կողմ ծուխ և իրարանցում։ Բովանդակ գիւղը «սո-ղում» էր եկեղեցի, կ'աղօթէր ու կու լար։ Կենդանի մնացածներն ու մեռ-եալները դանազանել անկարելի էր։ Գիւղը աղօթքի ելեր էր և երկինքէն ողորմութիւն կը մուրար դողալով ու երկիւղով։ Գիւղը հարթավայրն էր, երկչոտ ու խոնարհ, հնազանդ ու աստուածավախ. իսկ հեռուն լերան կա-տարին, վիրաւորի մը առջեւ ծնրադիր, ուխտած մը արցունք կը թափէր, ամէնուն համար։ Իսկ ամբոխը կծկուած տուներուն մէջ, լոյսերը մարած, դռները փակած, չէր ուզեր լսել դուրսի յուսահատ աղաղակները, օգնու-թեան ձայները, արիւնոտ մորիկը, որ չորս կողմը բռներ էր։ Գիւղը օգնու-թեան չի փութար ազատելու համար քանի մը ուխտաւորներ, որոնք կը կո-տորուին բլուրին վրայ, առանց գիտակցելու, որ այդ մորիկը վաղը պիտի պայթի իր դլխին, աւելի ուժգին, աւելի արիւնոտ։ Գիւղը կը հաւատայ, որ մորկի պահուն, Մորկի Սուրբը օգնութեան պիտի փութայ . . . ։

Հասարակութիւնը խռնուած է եկեղեցի, և ամէն մէջոցներով երկինքի դթութիւնը կը հայցէ. «բազմութիւնը երկիւղածութեամբ փուռում էր գետին մակաղած ոչխարների պէս, կնճռոտ ճակատները քսում էին խոնաւ գետ-նին, անյոյս մարած աչքերը փակուում էին, բոլոր շրթունքները մրմնջում էին, բոլոր ճնշուած կրծքերից միաժամանակ դուրս էր գալիս միատեսակ

---

(1) Իտալիայում, էջ 332։

խոլ մռմռոց, որ վեր էր բարձրանում և խառնւում սեղանից հնչող «խաղաղութեան հետ» (1)

Այս նոյն ամբոխն է, որ ճակատագրական պահուն, շնորհիւ մարդու մը սիրական ձայնին, ոտքի կ'ելլէ թշնամիին դէմ, ինքզինքը կը պաշտպանէ և գիւղը կը փրկէ . . .:

* * *

Ահարոնեան մեր ձեռքէն բռնած մեզ կ'առաջնորդէ փոքրիկ քաղաքի մը հրապարակը, ուր շաբթուան մէջ, որոշ օրեր, գիւղացիներ ու քաղաքացիներ առուծախ կ'ընեն: Զմրան համար պաշար ամբարող մարդկային մըրջիւններու կարաւանն է, որ կը շարժի այս ու այն կողմ, «բազմալեզու և բազմատարազ խայտաբղետ ամբոխը» որ կը գնէ ու կը ծախէ: Բայց նոյն հրապարակին ուրիշ մէկ անկիւնը, պատին տակ, աշնանային արեւուն ջերմութեան կարօտը զգացող, գաղթականներու անօրինակ խումբն է, որ շնչել կը սկսի. յոգնած դէմքերով, մերկ ու նիհար մարդկային էակներ, որոնք երէկ հարուստ ու շէն էին, այսօր թշուառ ու անօթի . . .:

Կեանքի հակադրութիւնն է, որ անգամ մը եւս, մեզի կը ներկայացնէ Ահարոնեան: Անհատ տիպար մը չէ անոր ներկայացուցածը, զրկուած ու կողոպտուած գաղթականներու ամբոխն է, որ իրեն վիճակուած այդ կացութեան պատճառն ու ինչուն չի կրնար տրամաբանել ու գտնել: Անիկա քաջութիւն ու յանդգնութիւն իսկ չունի աշխարհին պոռալու և մարդոց բողոքելու իրեն հասցուած անարդարութեան մասին: Շատ չեզտ ալ չէ անոր մտքին համար, մտնելու հարցերու և խնդիրներու քննութեան մէջ, որոնք իր ըմբռնումի սահմաններէն դուրս կը մնան: Միակ պատասխանը, որ կրնայ տալ այդ ա՛յն է, որ ճակատագիրն է պատասխանատուն անցած դարձածին: Այս գաղափարը թեթեւութիւն կու տայ անոր ալեկոծ սիրտին. «Ատուած է այդպէս կամեցել, ուրիշ ճար չը կայ»

Ահարոնեանի գրականութեան մէջ անգամ մը միայն, *Ատծու կրակը* պատմուածքին մէջ, մենք կը հանդիպինք բանուորներու բազմութեան, այնպէս ինչպէս անհատ բանուորը, իր մութ ու ահաւոր ճակատագրին անձնատուր: Խօսքը տանք իրեն. «Եւ ամէն կողմ՝ աղբ ու մուրի մէջ կորած մի բազմութիւն, տարտամօրէն խոհուն, սրնոտ, եւում էր հնազանդ այն վիթխարի մութ ոյժին, որ անողոք ու բիրտ մռնչում էր հնոցների, մեքենաների, ճա-

(1) Մրրկի սուրբը, *էջ 320*:

խարակների ժխորի մէջ, թնդում էր երկրի մութ անդունդներում կամ ժայռ-քում ղէպի վեր, որպէս թանձրացած գայլոյթ։ Անհրապոյր ու հողմածեծ յարկերի տակ չլուռ բազուկներ կային, որոնք կծկւում ու բացւում էին հարւածների հետ ներդաշնակ. հասո, հզօր թիկունքներ, որոնք գալարւում, կուանում ու բարձրանում էին մեքենաների քմահաճոյքով և ծով քրտինքը ծորում էր խոժոռ ճակատներից, յօնքերից, ակօսում էր դէմքերի մուրը, ընկնում, տրորւում էր ոտների տակ ադտոտ շաղախի մէջ։ Եւ անվերջ, հա-մատարած մի տնքոց, երկունքի պէս ծանր ու խորունկ, բարձրանում էր հա-զար կողմից, խառնւում էր հողմերի սոյլերին, փարում էր ծխնելոյզների կատարներին ու գնում էր խեղդւելու թաց մթնոլորտի մէջ։» (1)

* * *

Անհատներէն անկախաբար, անոնցմով կազմուած, հաւաքականութիւն-ներն են ուրեմն, որ շատ անգամ Ահարոնեանի գրականութեան մէջ հանդէս կու գան, կը տառապին, կը տաղնապին, կը ճգնին, կ'աշխատին, կը քրտնին, կը պայքարին, կ'իյնան ու կը բարձրանան, կ'աղօթեն ու կ'աղերսեն։ Ան-հատներուն պէս, հաւաքականութիւնն ալ իր կամքն ունի, նկարագրի գնահա-տան կողմերը, իր բացասական ու դրական յատկութիւնները։ Անոր դիմա-գծութեանը մէջ շա՛տ հեշտ է գտնել մեր ցեղին դարաւոր նկարագիրը, իր միջավայրին ու հոգեբանութեան յատուկ յատկանիշներով։

Ու դարերով, այդ դժբախտ ժողովուրդը, քրիստոնէական համբերութեամբ կրեր է իր ուսին Խաչը, դէպի Golgotha։ Այն ինչ որ մեզի կու տայ վիպա-գիրը, այդ մարտիրոսագրութեան ու դիւցազներգութեան կենդանի վկայաբա-նութիւնն է։ Ամէն մէկ պատմուածք մէկ օղակը կը կազմէ ընկճանուր շըղ-թային, որով կը ձեւաւորուի այդ պատմութիւնը։ Ամէն մէկ պատմուածք ինքնիրմով արժէք մը կը ներկայացնէ. իսկ ամբողջութիւնը մեր համայնա-կան ազգային ցաւին, ու մարդկային տառապանքին ողբերգութիւնն է։

Այս ողբերգութեան մէջ համր ժողովուրդը կը ներկայանայ տիպարի մը բոլոր տարողելիներով։ Հետաւոր թէ ինչպէս դրի առեր է վիպագիրը կիւ-ղի մը հատարակութիւնը տարիներ առաջ, կարծես գուշակած ըլլար, որ տա-րիներ յետոյ ալ աննշան տարբերութիւններով, և աւելի շեշտուած ձեւերով ու խտացած գոյներով, նոյնը տեղի պիտի ունենար մեր բովանդակ ժողո-վուրդին համար։

---

(1) Ա. Ահարոնեան, Աստծու կրակը, էջ 4։

«Անտրտունջ ու համր ինչպէս ուխտաւաճներ՝ այդ երկաթէ ժողովուրդը, թողնում էր իր տունն ու տեղը, վերցնում էր իր ունեցածից ինչ կարող էր, և ձմրան վերջի կատաղի հողմերի շնչի տակ, ձիւների մէջից, սառուց կըտրած առուակարները ջանդռելով՝ ոլոր-մոլոր կարաւանով խաղում էր դէպի լեռնակատարները և լուծւում ժայռերի ու ամպերի հետ։ Խմբապետի հետ միասին գիւղից վեր դիրք բռնած գինւած տղամարդիկ՝ պաղ ու մռայլ ճակատներով, խոժոռ յօնքերի տակից նայում էին, թէ ինչպէս իրանց ծեր հայրերը, կանայք և երեխաները անխռով ու հաստատ քայլերով անցնում են առաջներից։ Ոչ ոք չէր համարձակում քաջալերական մի խօսք ուղղել խուսափող բազմութեանը, ոչ ոք խորհուրդ չէր տալիս, թէ ո՞ւր գնալ և ի՞նչպէս. ամէն մէկն իր գործը գիտէր, անթիւ տարիներից ի վեր կուռի մշակւած ձեւն էր այդ — կին ու երեխաներ ծերերի հետ դէպի անմատչելի կատարները, իսկ կռուող մասը՝ հրացանը ձեռքերին քարերի յետեւում՝ պատրաստ թշնամուն հանդիպելու։

«Եւ ոչ մի տրտունջ ծերերի շրթունքներից, որոնք գուցէ վերջին անգամն էին թողնում հինաւուրց օջախը, որի հետ կապուած էին այնքան յիշողութիւններ. և ո՛չ մի կաթիլ արցունք կանանց աչքերից, որոնք այնքան տարիների տնտեսութիւնը ձգում էին թշնամուն և նրա հետ միասին գուցէ և իրանց ամուսինների և եղբայրների կեանքը. անգամ փոքրիկները ո՛չ մի ձիչ չէին արձակում, նրանք մրսում էին, կպել էին մայրերի փէշերին և պողպղալով քաշւում էին դէպի լեռների ձիւնոտ կատարները եղնիկների ձագերի պէս։» (1)

Անշուշտ մեր օրերու տեղահանութենէն կը տարբերի այս։

Այսպէս նաև անհատները, որոնց տիպարները գծելուն մէջ եւս Ահարոնեան անզուգական արուեստագէտը կը մնայ։ Անիկա իբրեւ շարժանկարի մը մէջ, մեր աչքերուն առջեւէն կ'անցընէ մարդկային էակներու համայնապատկերը, մարդիկ «որոնք լալ են ուզում, բայց արցունք չունին, հառաչանք ունին, բայց կրծքերն է փլած, սեւ կսկիծ ունին, առանց սփոփանքի, դանդատներ ունին, որոնց սիրտ չի դիմանայ, և անթարթ աչքերով նայում են հեռուն, հատուցման ու վրէժի սասանեցնող ու ահաւոր օրին են սպասում։»

.....

(1) *Ա. Ահարոնեան*, Ազատութեան ձանապարհին, գ. տպագ., *Պօստըն*, էջ 135—136։

Բ.

ԱՄԷՆ ԲԱՆԷ ԱՌԱՋ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ. — ԱՆՀԱՏԸ ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.— ԴԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ.— ՆԱՀԱՏԱԿ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ.— ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ՝ ՈՐ ՀՈԳԻԻՆ ՄԷՋ ԱՐԵՒ, ԵՒ ՋԵՌՔԻՆ ՄԷՋ ԿՌԱՆ ՈՒՆԻ. — ՔԱՓԱՌԱԿԱՆ ՈԳԻՆ.— ԳԻՒՂԷՆ ԴԵՊ Ի ԲԱՆՏԸ

****

> Մեր ֆեուտուր քաղաքակրթական անցեալից՝ եղիշէի, Խորենացու, եզնիկի ժամանակներից մի կայծ կայ թագնուած հայկական ամենախոնարհ օճաղների մոխիրի տակ, որ ծխում է անմեռ որպէս դարերի կանթեղ:
>
> Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ահարոնեանի տիպարները աչքի առջեւ ունենալով, կը տեսնենք, որ անոնք նկատի կ'առնէ բացառիկ պարագաներ ու վիճակներ, որոնք իր նկարին համար կը դառնան կուռ խորքեր, հոն յուցադրելու համար աւուրեայ կեանքը։ Ուրիշ խօսքով, մասնաւոր պարագաներ առիթ կը դառնան, որ անոնք խորասուզուի մարդոց սովորական կեանքէն ներս, ընդլայնէ անհատներուն հոգին կրծող վիշտը, ու զայն տարածէ ամէնուն վրայ։

Այս տեսակէտով, սխալ է այն ենթադրութիւնը, թէ Ահարոնեանի գործին մեծ մասը արդէն սկսեր է կորսնցնել իր գեղարուեստական արժէքը։ Բոլոր գրագէտներու գործին մէջ կայ մաս մը, որ չի դիմանար ժամանակի ու տարածութեան անդիմադրելի յեղաշրջումին։ Ժամանակի անիւներուն տակ իյնող բոլոր արժէքները ուշ կամ կանուխ, կը կորսնցնեն իրենց ձեւը, գոյնը, բովանդակութիւնն ու դիմադրականութիւնը. շատերը կը փոշիանան, կը մանրանան, և շա՛տ քիչ մաս մը կայ, որ կ'ապրի, կրնա՛յ ապրիլ։ Նոյնիսկ այդ քիչը վերապահուած է բացառիկ հանճարներուն, մտքի բացառիկ տիտաններուն։

Առանց մեծցնելու համեմատութիւնները, առանց ընդարձակելու շրջանակը, մնալով համեստ սահմաններու մէջ, մեր գրականութեան երէկն ու այսօրը ու վաղուան կարելիութիւնները նկատի ունենալով, պէտք է արձանագրել, որ Ահարոնեանի ստեղծագործութեան մէջ կայ տարր մը, որ կը գոհացնէ գեղարուեստական գրականութեան բոլոր պահանջները, նոյնիսկ եթէ այդ տարրը կապուած է մեր ազգային ցաւին ու տառապանքին, մեր ցեղին ահաւոր մարտիրոսագրութեան ու այն տիպարներուն՝ որոնք մարդկային են, ըլլալով մէկտեղ հայկական։

Ասիկա կը պատշաճի մանաւանդ գրագէտին այն էջերուն, որոնք կը կապուին հայ գաղթականական կեանքին, ու կը բղխին անոր անմիջական հետեւանքներէն։ Այդ էջերուն մէջ կան տիպարներ, որոնք մեծ զուլումին յորձանքին մէջ իյնալով ու քշուելով աշխարհի չորս հովերէն, զգացեր են անտարակոյս իրենց հոգիին մէջ ու մանանանդ իրենց մարմինին վրայ, հարստահարութիւններու և հալածանքներու, զրկումի ու անլուր տառապանքի աւերները, և սակայն, իրենց էութենէն ու նկարագրէն, իրենց առօրեայ սովորութիւններէն ոչինչ կորսնցուցեր են։ Վտանգի պահուն այդ տիպարները շատ բաներէ կը զրկուին, սակայն կը պահեն իրենց կիրքերը, վէճերը և իրենց անձնական փոքրիկ հոգերը։ Անոնք մարդիկ են, ամէն տարիքէ ու սեռէ, մանաւանդ զրկուած դասէն գիւղացիներ ու արհեստաւորներ, որոնց կը հանդիպինք մենք ամէն օր ու ամէն ժամ։ Ասոր համար է, որ այդ տիպարները մեզ կը յուզեն, մեզի ծանօթ կը թուին, ու իրենց վիճակը մարդկային ճակատագրին մէկ երեսը կը ներկայացնէ։

Ահարոնեանի գրականութեան առաջին շրջանի էջերը կը բնորոշեն խիստ յատկանշական թուական մը և դէպքերու ժամանակաշրջան մը, յայտնի մեր պատմութեան մէջ։ Գաղթականական անօրինակ կեանքին հետ կապուած զուլումն ու թշուառութիւնը մեր օրերուն ալ կրկնուեցան շա՞տ աւելի ընդարձակ սահմաններու մէջ, աւելի մեծ տարողութեամբ ու խորութեամբ, և սակայն մեր գրականութեան մէջ տակաւին կը սպասենք աստուածային ձայնի մը, որ իր քնարին վրայ երգէր մեր ցեղին անօրինակ Golgotha։ Այս տեսակէտով, Ահարոնեանի մեզի տուածները նեմացնող ու մոռցնող գեղարուեստական արտադրութեան տակաւին շատ երկար պիտի սպասենք։ Երբեմն հետևանքն մեզմէ, այդ դէպքերը, գոյները կ'աղօտանան թէև, բայց անոնք մեր մէջ կ'արթնցնեն երէկի արիւնոտ յիշատակները։ Ուրիշներ ալ փորձեցին այդ բացառիկ վիճակին նկարագրութիւնն ու հոգեբանութիւնը տալ. մի՛շտ անզօր գտնուեցան մեր համակրութեան արժանանալ, պայծառ

կերպով և ուժգնօրէն տալ նկարագիրը այդ օրերուն։ Ոչ ոք կրցաւ յաջողիլ «կամուրջ մը ձգել այն հեղեղին վրայ, որ մեզ կը բաժնէր միւս եղերքէն». ոչ ոք կրցաւ ներկայացնել մարդիկն ու անոնց տառապանքը։

Ահարոնեանի պատմուածքները այլազան դէմքերու համայնապատկերը կը ներկայացնեն։ Ցաճախ կը հանդիպինք այնպիսի պատկերներու, որոնց առջև մեզի կը մնայ բերանաբաց սպասել, լսելու համար ճշմարտութիւնները, որոնք փնտռուեցան դարերէ ի վեր։ Քանի մը պարզ բառով անիկա կը պատկերացնէ հոգեկան վիճակ մը, ուր մարդկային թշուառութիւնն ու տառապանքը կը խտանան։ Մարդկային կարօտութիւնը, քաղցն ու ծարաւը, ոչ մէկ պատկեր աւելի հարազատ ու բնական, աւելի ուժեղ ու գունագեղ պիտի ներկայացնէին, քան անոր սա երկու պատմուածքները, *Պուտ ըմ կաթը* և *Փշուր ըմ խացը*...։

* * *

Իր պատմուածքներուն կենդանութիւն ու գոյն տալու համար, Ահարոնեան պէտք չէ ունեցեր մլշտ երեւակայութեան դիմելու։ Այս տարրը շատ քիչ դեր խաղացեր է իրականութենէն առնուած այս պատմուածքներուն մէջ։ Բնականէն հռետոր իր ոճով ու արուեստով, ճշմարտութիւնները փընտրելու համար անիկա դիմեր է աւելի բանաստեղծական շունչին, որով օծեր է մարդկային պատմութիւնները։ Անիկա իր նպատակին հասեր է արդէն, ընթերցողը հետաքրքրելով և յուզելով։ Այս երկու ազդակները իր պատմուածքներուն հիմնական շաղախը կը կազմեն։

Այդ պատմուածքները կը ներկայացնեն անհատներու խղճմտանքին ու ճակատագրին տառանները։ Հոն կը նշմարենք աղօտ լոյս մը, որով ճանչնալ կը սկսինք անհատներու հոգին։

Վիպագիրը իր դերին մէջ յաջողած պէտք է նկատել, երբ իր անձնաւորութիւնները կերտելու պահուն, հաւատարիմ կը մնայ *ճշմարտութեան* և *իրականութեան*։ Այս տեսակէտով վիպագիր Ահարոնեան յաջողած է։ Անիկա կու տայ մեր իրականութիւնը, ա՛յնքան ճիշտ ու հարազատ, ուր տեղի պիտի ունենայ գործողութիւնը և ուր գործելու պիտի դան անձնաւորութիւնները։ Անոր տիպարները երեւակայական չեն երբեք, ու անոնց դիմագծութիւնն ու նկարագիրը՝ հարազատ։ Եթէ կայ մաս մը, որ կը մոտենայ երեւակայութեան ու հնարքի, ատիկա ալ վիպագրին իրաւունքն է, կը բաւէ, որ այդ կալուածին մէջ անիկա մնայ բնական, ու մանաւանդ անկեղծ։ Իբրեւ ստեղծագործող, անիկա պատասխանատու է այն բանին, որ իր

տիպարներով ու միջավայրով ընթերցողին հետաքրքրութիւնը կենդանի պահէ, ու անոր հիացումին առարկայ դառնայ։

Ահարոնեանի առաջին պատմուածքներուն մէջ աչքի զարնող հետեւեալ պարագան կայ. հոն անհատները կը ներկայանան իբրեւ մարտիրոսներ, հաւաքականութեան համար, իրենց հոգիին մէջ մարմնացնելով այդ գաղափարին բովանդակ իմաստը։ Անհատներուն տառապանքը հաւաքականութեան համար է, անոր ազատագրութիւնն է ցիրենք խթանողը, կռուի մղողը, զէնք բարձրացնողը. անոր սիրուն է, որ կը մեռնին անոնք։ Իրենց հոգիին տառապանքը, մարդկային ուրիշ զգացումներ դեր չեն խաղար տակաւին։

Հեղինակին յետագայ գործերուն մէջն է, որ երեւան կ'ելլէ հետզհետէ աւսր հակառակը, երբ անհատները կ'ապրին ու կը զգան իրենց եսին համար, իրենց հոգիին համար։ Հոն ալ ուրեմն անհատներուն դէ՛րը գերազանցօրէն փնտռուած ու ներքողուած է մի՛շտ։

Սովորական են այդ տիպարները, գիւղին սովորական բնակիչները, խաղաղ ու հանդարտաբարոյ մարդիկ շատ անգամ, որոնք կը դառնան բացառիկ պէմքեր։

Արեւելքի նախնական բարութիւնն ու անկեղծութիւնը կը ճառագայթէ անոնց սիրտերէն. անոնք մտահոգ են, որ իրենց չէ տրուած վայելել դաշտերու և պիւղերու խաղաղութիւնը. անոնք ի ծնէ տխուր են, որ ստեղծագործ իրենց աշխատանքին մէջ միշտ խանգարուած են։ Հոգեկան ու ֆիզիքական անդորրութիւնը անծանօթ է իրենց։ Նոյնիսկ բնութեան տարրերը քէն պահեր են կարծես անոնց դէմ։

Ահարոնեանի պատմուածքներուն մէջ կայ սակայն խորապէս մարդկային տարր մը, որ կարմիր գծի մը պէս կը յայտնուի, ու դուրս կու գայ իր անձուկ սահմաններէն, հակառակ անոր որ անհատական ու ազգային տառապանքը, հարստահարութեան, բռնութեան ու անարգանքի տեսարանները ներկայացնէ մեր սահմանափակ միջավայրին մէջ։

Ահարոնեան կը սիրէ իր տիպարները, կը կարեկցի անոնց վիշտին ու տառապանքին, իր սիրտն ալ կ'արիւնի անոնցմէ հետո. ինքն ալ կ'արտասուէ անոնց հետ, որովհետեւ ինքն ալ մէկն է անոնցմէ, որոնք տեսեր են մարդկային թշուառութիւնը, հոգիներու գերութիւնը, զգացեր են պակասը, կարեկցող ու մխիթարող սիրտերու։ Այս տեսակէտով Ահարոնեան կը մնայ մեծ ողբերգակը։ Անիկա կը փնտռէ մարդկային բարութիւնն ու կարեկցութիւնը, որոնք հալածուած են, ո՛չ միայն մեր հայրենի երկնակամարին տակ, այլ բովանդակ մարդկութեան մէջ...։

Իր տիպարներուն հետ կուշտ կուշտի կը քալէ, վտանգները կը դիմաւորէ, կը դիտէ անոնց անկումները, կը քննէ անոնց վէրքերը, բայց մի՛շտ մխիթարութեան ու սիփոփանքի խօսքն ունի իր շրթունքին, որովհետև կը հաւատայ մարդկային սրտի բարութեան և հոգիի ազնուական թուիչքներուն։

Վերջին տասնամեակի ընթացքին անոր դրի առած պատմուածքներն ու պրոյցները մասնաւորաբար, կը բերեն մեզի արուեստի նորագոյն տարրեր։ Հոգիի վերլուծումը, անոր թաքուն ծալքերը խուզարկելու աշխատանքը, նորագոյն ստեղծագործութիւններուն մէջ երեւան կու գան։

* * *

Իրարու յաջորդող սերունդները, իրենց հայրենի օճախին շուրջ քոլորուած, հայրենի երկինքին տակ ու Մասիսի սառոռտներուն, քաղաքական հոգերէ ու տնտեսական տագնապներէ մասամբ ձերբազատուած, երբ ուզեն վերապրիլ ու վերյիշել իրենց նախնիքներուն պատմութիւնը, արիւնոտ այս պլուցպներգութիւնը պիտի թերթատեն, որուն մէջ քաջութեան, վեհանձնութեան ու բարութեան մեկէ աւելի օրինակներ պիտի գտնեն։ Այս իրական դէպքերը, անոնց հէքեաթ պիտի թուին. հայ մամիկը իր թուներուն պիտի պատմէ, ինչպէս հայ խմբապետը ժամանակին պատմեր է արուեստագէտին ականատեսի իր բազմաթիւ դրուագները։

Հարոնեանի դիւցազներգութիւնը ունի իր սկիզբը, միջոցը և վախճանը։ Սկիզբը մշուշի մէջ յայտնուող ու անհատներու հոգիներուն մէջ արթընցող ըմբոստութիւնն է, որ կը յանգի անհատական կռիւներու և զոհաբերութեան. սկիզբը՝ տառապանքը և մարդկային անարդարութիւնն է, հեռըզհետէ կերպարանք, ձեւ ու գոյն առնող։ Միջոցը կամ տեւողութիւնը անհատական, խմբական ու հասարակական պայքարն է։ Իսկ վախճանը, արուեստագէտին խոհեմն է, ամէնուս խոհեմը. խոհեմը՝ դէպի ազատութիւն, դէպի տնտեսական ազատագրութիւն, հոգիներու ձերբազատում։ Այս յաւտակազմով կը քալէ անոր ստեղծագործութիւնը։

Տառապանքի երկրին մէջ, ուր «գիւղերը չեն քնում, այլ մեռնում են գիշերները վտանգի ահից», հոն ուր «ամէն առաւօտ գիւղի երդիկներից ծխի պտոյտները, որպէս թանձրացած սեւ հոգսեր ու յաւեր, ձգւում են դէպի վեր», մարդկային հոգիներու համայնապատկերն է, որ հետզհետէ գոյն ու ստուեր կ'առնէ, կը լուսաւորին *ազատութեան* համար իյնող նահատակ-

ներուն դիմագիծերը, քովէ քով կը շարուին անոնք իբրեւ կենդանի անէծք, հաշիւ ու արդարութիւն պահանջելով երկինքէն . . . :

Մարդիկ են, բանական արարածներ, «որոնք խիզախ կեանքով դաժան մահը հեգնեցին եւ հպարտ մահով մեր սեւ կեանքին փայլ տուին:» Ու ճակատագրօրէն, իրարու ետեւէ կ'իյնան շարքերը, ազատութեան բոլոր նախավկաները, բո՛լորը, բո՛լորը, առանց տարիքի, դիրքի ու սեռի խտրութեան, երկրի մը մէջ, «ուր ժպիտը յանցանք է, արցունքը՝ անէծք, ու մահը փրկիչ:»

Անոր տիպարները տանջուած հոգիներ են, յաւահաւտ աշխարհի անարդարութեան ու բռնութեան համար: Անոնք շիտակ ու բարձր մարդիկ են, պարզ հոգիով, ջերմ հաւատքով դէպի իրենց գործը: Ընդհատ են անոր տիպարները, որոնք մեր նախնիքներուն արիւնը կը կրեն ու անոնց արիւնի աղնուութիւնը կը մարմնացնեն: Անոնք վստահելի ու մարդասէր էակներ են ընդհանրապէս:

Մեր հայրենիքին ամէն մէկ անկիւնը, խրճիթներու մէջ, աշխարհի գործերուն անձանօթ, յաւիտենական, գիւղերու եւ նոյնիսկ քաղաքներու մէջ վրէժի ծարաւ բիւրաւոր հոգիներ կան:

Անոնց մէջ կան նոյնիսկ ծերունիներ, խորհրդաւոր ու լուռ, քաւամաղ ու խոժոռ նայուածքով, յաղթ հասակով ու կնճռոտ ճակատով, որոնց պատմութեանը ոչ ոք տեղեակ է: Անոնք տրտունջ ունին նոյնիսկ Աստուծոյ դէմ, եւ կենդանի բողոքն են, մարդկային անարդարութեան դէմ ծառացող:

Անոր շարք մը պատմուածքներուն մէջ, կռիւի, արիւնի, սպանութեան, հրդեհի ու աւերածի ղեկքերը շատ անգամ կը կրկնուին: Եթէ նկարագրութեան այդ մասերը չէզոքացնենք, մնացածին մէջ կը գտնենք հոգիներու, այլազան ու բազմազան հոգիներու համայնապատկերը, նկարագրութիւնը անոնց պարզուկ արտաքինին, եւ վերլուծումը անոնց նկարագիրներուն, որոնք բարդ չեն գրեթէ: Կը գտնենք հոն մեր աշխարհի, մանաւանդ գիւղական աշխարհի կենցաղն ու նիստ ու կացը:

Մանուկներն ալ տարիքէն առաջ մեծացեր են. խորհուրդը պրոշմուեր է անոնց ճակտին: Անոնք գտնատ այտեր ու շրթունքներ ունին. անոնց աչքերուն մէջ դարաւոր վիշտ մը բոյն դրեր է: Վազրիկն անոնցմէ է, վրէժխընդիր, նոյնիսկ խաղերու եւ ընկերական շրջանակի մէջ, կանխահաս հաւատարիմ ու պաղատապահ, առաքինի ու անբիծ իր հոգիին պէս: Անիկա մութին թէ լոյսին մէջ, հնարամիտ է, իրեն վստահուած աւանդը տեղ հասցընելու համար, ու կ'իյնայ վերջապէս թշնամիին գնդակէն արիւնահոս: Պա-

տանի ու մանուկ Նահատակները . . . : Հայ–աշխարհը միայն ունի անոնցմէ, առանց շիրիմի, առանց հողակոյտի . . . :

Ահարոնեան իր առաջին դրութիւններուն մէջ, իրեն համար սիպար կ'ընտրէ մարդկային այն տարիքը, որ մանկութիւն կը կոչուի: Օրհասական չորս–հինգ տարեկան մանուկ մըն է, որ Պուտ ըմ կաթ աղերսելով իր շունչը կ'աւանդէ և կամ փոքրիկ Սաթօն, որուն ձայնը չլհորին խորէն կու գայ: Տակաւին կայ նորածինի մը պատմութիւնը, որ սեւ օր մը աշխարհ կու գայ, խոտերու մէջ կը փաթթուի, սաստիկ ցուրտէն կը կապուտնայ, եւ իր շունչը կը փչէ:

Հոգեբանական խորունկ պատճառ մը ունի հեղինակին այս վերաբերմունքը հանդէպ անպաշտպան այդ տարիքին: Երեւակայութեան դիմելու պէտք չի կայ պատկերացնելու համար մանկութեան ու պատանեկութեան ապրած սարսափները, վախն ու դողը, զոր անոնք զգացեր են հալածանքներու, գաղթականութեան, տարագրութեան ու կոտորածներու օրերուն, երբ մեծերը ստիպուած են եղեր չաճախ մտածելու իրենց մասին:

Խորունկ է պատճառը անոր համար, որ մարդկութեան սիրովը բաբախող զգայուն էակը միայն կը զգայ ու կը գիտակցի տառապանքը, որ կը կրծէ մանուկներուն ու պատանիներուն էութիւնը, երբ անոնք ականատես կ'ըլլան իրենց ծնողաց ապանութեան, երբ թշնամին գիրենք կ'առեւանգէ կամ կը մահացնէ մահերուն ամէնէն անօրինակովը . . . :

Շատ անգամ անոնք կանխահաս ծերութեան մը դրոշմը կը կրեն իրենց չարչարակոծ դէմքին վրայ, նման այն որբերուն, որոնք լուութեան մէջ համբօրէն կը հալին ու կը հատնին, և որոնց դէմքը պերճախօս կերպով կը յոլացնէ թախիծը, որ բոյն դրեր է փափուկ ու վախտ մարմիններու մէջ:

Երբ Ահարոնեան գրի կ'առնէ զաղթականներուն պատմածները, իր ուշադրութիւնը կը գրաւէ ամէնէն առաջ այդ փափուկ ու անմեղ, անդիտակից ու տկար տարիքը, և իր սիրտը խորապէս կը տառապի: Իր գեղարուեստական գրականութեան առաջին էջերը անոնց նուիրուած են, ու կը կրեն գրագէտին երբեմն միամիտ, բայց չաճախ անկեղծ շեշտերն ու չերմութիւնը: Այս տեսակէտով, եթէ անիկա երբեմն կը վրիպի արուեստի պահանջներուն մէջ, կը մնայ սակայն մարդասէր գրողը, որ ամէն բանէ առաջ ճշմարտութիւնը կը փնտռէ:

Երկունքի ցաւերով բռնուող կին մըն է, որ կը մագլցի լեռներն ի վեր. այդ ցաւին առջեւ խորապէս գիտակից բաղմութիւն մը ծունր կը դնէ, հակառակ անոր որ թշնամին կը մօտենար: Անոնք «բնութեան մեծ գործին»

հանդէպ պատկառանք կը ղդան ու կը կարեկցին տառապող կնոջ: Ահաւասիկ ճշմարտութիւնը, մարդասիրութիւնը, այլասիրութիւնը, զոր կը փնտռէ արուեստագէտը:

Շարքը կ'երկարի: Դալօն ու Մրտօն երկու եղբայրներ են եօթը և տասը տարեկան: Երկունքն ալ գալթական օրքեր: *Փշուր-ըմ-խա՛ց* պատմուածքի երկու դէմքերն են, և մուրացկանութեամբ կ'ապրին:

Անբախտութեան ու խեղճութեան տարիքին մէջն է նաեւ Դալօն, (*Դարձը, Ժողովածու երկերի բ. հատոր*) որ դունէ դուռ կը պտտի, իր մեւնոյն հօր պատանքին համար կաւ կը մուրայ: Ժամկոչին հետ դերեզմանատան մէջն է, և իր մանկական ձեռքերով հողը կը փորէ ու դուրս կը նետէ, մինչ՝ երկինքէն ձիւն կը տեղար անընդհատ . . . :

Ահաւասիկ ինը տարեկան Շողիկը (*Արագ*), որ գլուխը խոտերուն մէջ թաղած, բամբակի արտին մէջ կ'աշխատի իր ծնողքին հետ: Գիւղական կեանքը դաժան է և կարօտութիւնը կը տանջէ, որ ան ալ աշխատի: Քրտինքը կաթիլ կաթիլ կը հոսի անոր փոքրիկ այտերէն վար, փոշին կը բարձրանայ ու կը ծածկէ անոր մազերն ու արտեւանունքները:

Մանկական անմեղ դէմք մըն է Շուշիկը, (*Կեանքի դասը, հատոր Ա. Արագ*) որուն արցունքները, աւելի համոզիչ ու յուզող, քան պերճախօս ու անհերքելի փաստերը, մարդասէր կը դարձնեն բժիշկ Արաքսեանը, որ կեանքի մէջ մարդկային գոյութիւնը կ'արդարացնէր միայն նիւթապաշտական առեւելներով: Անոր եսասէրի սիրտը կը փլի տեսնելով գրաւիչ ու անմեղ Շուշիկը, որուն դողահար շրթունքները կը մրմնջէին. «Հայրիկը հիւանդ է»: «Տէր Աստուած, այն ինչ դէմք էր, ո՞վ, ո՞ր հոգեբանը, ո՞ր բանաստեղծը, ո՞ր նկարիչը կարող է նկարագրել մի մանկական դէմք, ուր գծագրուած են անմեղութիւն, երկիւղ, վիշտ, յուսահատութիւն և բոլորը միասին կազմում են մի այնպիսի խառնուրդ, մի այնպիսի պատկեր, որի առաջ մարդ ակամայ գլխարկը պիտի հանի, ասես աստուածութիւնն է ուղարկել իր հրեշտակը քեզ ասելու ինչ որ մոռցած ճշմարտութիւններ:»

. .

Ահարոնեան կը սիրէ երիտասարդութեան այն տիպարը որ իր հոգիին մէջ *արեւ* ունի և ձեռքին մէջն ալ՝ կռան, որ վաճառի պահոն կը ժպտի ու կը կատակէ: Կը սիրէ ժողովուրդին զաւակը, որ կեանքի վայելքներն ու բաղդրութիւնները մոռնալով, կը նետուի *կռտի դաշտը*, հայրենիքի սիրուն,

ու կը սիրէ նաեւ ապրեցնել տուները այն աղջիկներուն, որոնք իրենց կեանքը կը զոհեն, կը հրաժարին կեանքի ընկերէ ու սիրահարէ, որպէսզի այս վերջիններուը աւե՛լի բուռն, աւե՛լի կորովով սիրեն հայրենիքը։ Հայրենիքի սիրուն քով, կնոջ սէրը. նիւթ մը, որուն շուրջ դիւցազներգութիւններ, վէպեր ու թատերգութիւններ երկներ են տաղանդաւոր գրողներ։

Ահարոնեանի համար պատմուածքի մը համեստ տարածութիւնը կը բաւէ, որ երկու տիպարներու, — երիտասարդ մը եւ իր սիրելին, — բաբախուն ու կարօտակէզ սիրտերուն մէջ ապրեցնէ բովանդակ ժողովուրդ մը իր ցաւերով, իր անլուր տառապանքներով։ Երիտասարդ, խանդավառ հոգիներուն ներքին աշխարհը իր փոթորիկներով, անոր տրուեցաւ կարդալ. անիկա ճօտեցաւ հեռաւոր սարալանջին վրայ իյնող անվեհեր տղամարդուն, ականջ դրաւ անոր վիրաւոր կուրծքէն բարձրացող հեւքերուն ու կրցաւ կարդալ մեկ կաթիլ արցունքի մէջ բիւրեղացած համայն տիեզերքի գաղտնիքը . . . ։ Անիկա յոյս ու կորով կը ներշնչէ խոնջ ուխտաւոծներուն, որոնք ձիւնապատ լեռան կատարէն պիտի անցնին. «տե՛ս, կ'ըսէ, աստղը հեռու չէ լերան կատարից. էլի մի փոքր — եւ Նոր տարի կը լինի . . .»։

Արուեստագէտը Ատուռոյ ընտրեալն է իրաւամբ. անիկա կայծ կը դնէ փակ շրթունքներուն, եւ պլպլան բոցեր՝ անոնց սիրտերուն մէջ։ Այս է եղեր պատճառը, որ տասնեակ մը տարիներէ ի վեր Ահարոնեանի արձակներէն շատերը արտասանուեր են հրապարակով, բազմութիւններու առջեւ, յոյսի կրակը վառելով անոնց հոգիներուն մէջ, խանդավառութեան ու ոգեւորութեան բարիքը ներարկելով վհատած սիրտերուն։

Անոր սիրած կորիճ երիտասարդներուն մէջ կենդանի է մարդկային ջերմ սիրոյ, բարութեան ու կարեկցութեան զգացումը։ Անոնք չեն խնայեր նոյնիսկ իրենց ընկերոջ, երբ անմեղ ու անվնաս մեկուն արիւնը կը թափէ։ Այնքան թանկագին ընկերներու մահուան առջեւ ճակատագրական համակերպութիւն կը ցուցնեն, և սակայն երբ անծանօթ ու անմեղ օտարականի մը գնդակահար դեռին կը փուռի, մանուկի մը պէս գիտեն արտասուել ու սգալ. մարդկային խղճմտանքն է, որ արթուն կը հսկէ անոնց մէջ։ Այդ զգացումը արթուն պահակի դերը կը կատարէ, երբ անպաշտպան կիներ ու մանուկներ վտանգի մէջ կը գտնուին։

Այդ զգացումը կը դառնայ մարդարէական մանաւանդ, երբ գալիք պայքարներուն եւ փոթորիկներու խորհուրդը կ'երգէ, հաւատալով, որ հեռո՛ւ, հայրենի լեռներուն վրայ արծիւներ կան, քաջեր եւ ուխտաւոծներ. երբ փոթորիկը պայթի ահագնացղորդ, երկինքին վրայ սեւ ամպ չի մնար այլեւս . . .։

Ու մարտիրոս ժողովուրդին արժանաւոր զաւակները ա՛յն ատեն, միայն ա՛յն ատենն է, որ ծունկի գալով պիտի գոչեն, «ցարգա՛նք քեզ, յարգա՛նք քո արիւնին, քո ցաւին, քո լաց ու արցունքին, յարգա՛նք նոյնիսկ քո հսկայ համբերութեանը, որ քո զրահն եղաւ սեւ օրերուն, յարգա՛նք քո մեծ հաւատքին դէպի բարւոյ յաղթանակը։»

* * *

Ռաշիտը իր զրահանութեան առաջին տատնաձեակին լաւագոյն դրուագներէն է։ Հոգեբանական խոր կառուցում մը ունի ան։ Հերոս մը, քաջ մըն է անիկա, որուն համար գիւղի գեղուհիները, ինքզինքնին երջանիկ պիտի համարէին անկէ սիրուելու համար։ Եւ սակայն բախտի խաղ, Ռաշիտը կը սիրէ ասլանցի սեւաչեայ Զարէն, ոխերիմ թշնամիին աղջիկը։ Զարէի սէրը դրաւեր էր անո՛ր սիրտը։ Բայց դաւաճանութեան հաւասար, ու անլծուած սէր մըն էր անիկա գիւղացոյ համար։ Ռաշիտ կը տառապի, անիկա բըռնուած է սիրոյ ցանցերուն մէջ, սէր մը, որ անկարելի է հանրային մտայնութեամբ ու ըմբռնումով։ Բայց «քանականութեան բողոքն անկարող եղաւ խեղդել նրա մէջ սիրոյ զգացմունքը։» Անիկա իր զգացումներուն գերին է և կամքը ընկճուած է։

Արուեստագէտը պէտք չունի հոգեբանական բարդ ու խորին վերլուծումներու դիմել, բացատրելու համար հոգեկան պայքարը, որ կը տառապեցնէ Ռաշիտը։ Կը սիրէ անիկա Զարէն, իր աչքին լոյսն է ան. սակայն կու գայ պահ մը, որ գիւղացի Ռաշիտին ճաքուր ու անխարդախ սիրտը տեղի տալ կը սկսի ուրիշ զգացումներու առջեւ։ Գնոջ ու սիրուածի սէրին քով կայ ծննդավայրի սէրը, ծնողներու, ազգականներու և հայրենիքի սէրը։ Մեծ տատմները երեւան կուգան հոն, ուր երկու հակոտնեայ զգացումներ իրարու կը բաղխին։ Ռաշիտի հոգին այդ յորձանքին մէջ տարուբեր, ճաքէն իսկ չանցնիր ամարդօրէն ձգել իր հայրենիքը վտանգի ու կրակի մէջ, և փախչիլ իր սիրելի Զարէին հետ։

Ծերունի որսորդ Դպրօն, Բաշօն պատմուածքին մէջ ուրիշ տիպար մըն է, նկարագրի բացառիկ գիծերով, անօրինակ ու անբացատրելի։ Մարդկային հոգիին թաքուն կողմերը որո՞ն արուած է կարդալ, ո՞վ կրցեր է լուծել կնճռոտներուն իմաստը։ Վրէժինդիր հոգի մը ունի ինչպէս նաև պատասխանատուութիւն մը, որուն նշանակութիւնը դեղի տարէց ծերունիները միայն կրցին հասկնալ ու բացատրել։ Դպրօն պատասխանդիր է սպաննելու ատելի մը բլուրներու կողմէ առնւանգուած իր հարսն ու աղջիկը, երկու անմեղ

Էակներ։ Բայց անիկա կը տառապի անսահման խղճահարութեամբ այս ա-բիւնոտ, անհիրտ ու զարհուրելի սպանութիւններուն համար։ Ժամանակ է անցեր այդ դէպքէն ի վեր, ու ամէն բան փոխուեր է Ծերունիին մտքին մէջ, ամէն արժէք նոր կշիռով մը կշռել սկսեր է, ու չի գտներ ոչ մէկ ար-դարացուցիչ պատճառ իր գործած ղոյգ ոճիրին համար։ Անոր դաժան ու այլասած դէմքը աւելի զարհուրելի կը դառնար, երբ իր անմեղ թոռնիկին Թու-մոնի աչքերը կը հանդիպէին իրենին, այն աչքերը, որոնք իր մօրը աչքերուն կը նմանէին ա՛նքան հարազատութեամբ։ Անմեղ զոհերուն ուրուականները կինքը կը հալածեն ամէն րոպէ, կ՚ըսեր թէ ցորեկ։

Նշովք մը բոյն դրեր էր որսորդ Ղզրոյի կուրծքին տակ. անիկա բազ-մաթիւ գործերու հեղինակն էր, որոնց մասին աշխարհը բան մը չէր գի-տեր։ Ո՞վ հաշիւ պիտի պահանջէր իրմէ. ո՛չ ոք. թերեւս խիղճը, որ տան-ջել սկսեր էր արդէն, և որուն հալածանքէն ազատուելու ուրիշ հնար չի կար, բայց եթէ անձնասպանութիւնը։

Յուսահատ այդ մարդն ալ, որուն սրտին ծանօթ չէին լայ ու թուլու-թիւն, պիտի արտասուէր, յիշելով իր անցեալն ու խաղաղ կեանքը։ Աչքերու զոյգ ակերէն առատօրէն արցունքներ հոսելու համար աննշան պատճառ մը պէտք էր, ու այդ պատճառը այն հատաւիղ ու կարմրագոյն եղէն էր, որ հրապարակին վրայ ծախելու բերեր էին օտարները։

«Նայում էին իրար այդ կենդանին և այդ մարդը, կը գրէ Ահարոնեան, նայում էին յամառութեամբ, առանց յոգնելու և ասես թէ լուռ խօսում էին իրար հետ, բաներ էին պատմում և հասկանում իրար։ Ի՞նչ էին խօսում նրանք, ո՛վ կարող էր իմանալ, ո՞վ էր ուշադրութիւն դարձնում նրանց վրա, ո՞վ կարող էր կարծել անգամ, թէ մի անասունի և մարդու մէջ մըտ-քերի փոխանակութիւնը հնարաւոր է։ Բայց այդ երկու էակները շարունա-կում էին նայել իրար, նրանց հայեացքների միջոցով կարծես ելեքտրական հոսանք էր հաղորդւում. մարդն արտասւում էր, իսկ եզը կարծես դիտում էր այդ արտասուքները (1)։»

* * *

Ահարոնեանի տիպարներու աշխարհին մէջ դասակարգեր գոյութիւն չունին գրեթէ։ Այս պարագան քննադատութեան աչքին և՛ արժանիք է, և՛ թերութիւն։ Արժանիք է անոնց համար, որոնք կը փնտռեն մարդկային հո-

(1) Երկերի ժողովածոս, Բաշոն էջ 261։

դին և հոն գործող անգիտակից ուժերը։ Անոնց համար դասակարգերու գոյութիւնը կեղեւն է մեայն, արտաքին կողմը, տեսակ մը ղգեստ, որ կը ծածկէ մարմնոյ մերկութիւնը։ Հոգին աղատ է այդ արտաքին կապանքէն. անիկա ամբողջութիւնն է այն գիտակցական ու մանաւանդ անգիտակից բոլոր տարրերուն, որոնք կը կազմեն մարդ էակին ներքին աշխարհը, իր հանդարտ ու փոթորկոտ, պաղարիւն ու բորբոքած վիճակներուն մէջ։ Այդ ներքին աշխարհը ճիշդ է, որ կախում ունի շատ անգամ ժամանակի, միջավայրի ու դաստիարակութեան պայմաններէն, և սակայն իր էութեանը մէջ, իր թաքուն ծալքերուն մէջ անիկա բացառիկ բան մըն է, յատուկ բոլոր մարդոց՝ անկախ մտածումներէ ու զգացումներու կրակէն։ Այս է պատճառը, որ քննադատը հարցնելու իրաւունք չունի, թէ ներկայացուած տիպարը որ դասակարգին կը պատկանի, եթէ կը փորձէ փնտռել տիպարին հոգեբանական խառնուածքը և այն պատճառները, որոնք զայն շարժման մէջ կը դնեն։ Անկէ դուրս քննութեան ենթարկուող միւս բոլոր աղղակները աւելի կամ պակաս չափով մեայն կ'ամբողջացնեն տիպարին նկարագիրը։

Դասակարգերու բացակայութիւնը, կամ՝ աւելի ճիշդ, դասակարգերու ներկայացուցիչ – տիպարներու բացակայութիւնը Ահարոնեանի ստեղծագործութեան մէջ պակաս կամ թերութիւն կը նկատեն այն քննադատները, որոնք անտեսելով մարդկային էակին հոգին ու ներքին աշխարհը, ամէն բան նիւթապաշտական հայեցողութիւններով բացատրել կը մտին։ Այդպիսիներուն համար դաղափարական շարժառիթներ գոյութիւն չունին, ամէն բան դասակարգերու պայքարով կը բացատրուի։ Այս տեսակէտով նոյնիսկ, երբ քննադատը Ահարոնեանի ստեղծագործութիւնը աչքի առջեւ ունենայ, պիտի նկատէ, որ քառանասնեայ երկար ու յոգնավատակ վերելքի մը ընթացքին, Ահարոնեան իր համայնապատկերին յառաջամասին վրայ, արժանի ու աչքառու տեղ մը տուեր է նախ հայ գիւղացիին ու անկէ յետոյ, երկրորդ աստիճանի վրայ, հայ աշխատաւորին։ Արդէն մեր իրականութեան մէջ առաջինը այնչափով աշխատաւոր է, որչափով որ երկրորդը գիւղական աշխարհին թէ քաղաքներու մթնոլորտին մէջ, արհեստաւորի կեանքը կ'ապրի։

Պատկերին գլխաւոր ու առաջնակարգ տեղը հեղինակը վերապահեր է գիւղացիական դասակարգին, դասակարգ բառը գործածելու համար. սակայն գիւղացիութիւնն ալ իր մէջ բաժանումներ ունի, նայելով ամէն մէկուն նիւթական պայմաններուն։ Ահարոնեան այս վերջին պարագան նկատի չառներ առհասարակ, և իր ստեղծագործութեան մէջ այդ տարրը կը ներկայանայ իր բովանդակ հասակովը։ Մանաւանդ հայկական գուղումին ու տա-

ռապանքին առջեւ բոլորն ալ հաւասար չափով կ'արժանանան դրագէտին համակրանքին, գուրգուրանքին ու հետաքրքրութեան։

Ու հոն ալ գարձեալ քննադատը պէտք է փնտռէ մարդկային տարրը, մարդկային հոգին ամէն բանէ առաջ, մերկացած արտաքին բոլոր կապանքներէ ու պայմանադրականութիւններէ։

Տիպարներու այս համայնապատկերը, շեշտուած գիծով, իր հարազատութիւնը պահեր է դրագէտին ամբողջ գործին մէջ։ Ուրիշ խօսքով, Ահարոնեան իր արուեստին ուիշը ծծեր է հայ գիւղէն ու գիւղացիէն։ Այդ աշխարհը իր սիրած ու փայփայած աշխարհն է, որուն վրայ շա՛տ վստահ կը կոխէ, առանց վախնալու, թէ կրնայ սայթաքիլ։ Առաջին պատմուածքներէն մինչեւ ամէնէն վերջին գործերը երկնած պահուն, ըլլայ անիկա Արարատեան դաշտին մէջ, Մասիսի սառոռաներուն թէ Արաքսի ափերուն, ըլլայ անիկա պանդխտութեան մէջ, հեռո՛ւ հայրենի երկինքէն, որուն կարօտովը կը տոչորի բանաստեղծին սիրտը, անիկա մի՛շտ կը փնտռէ իր հայրենի Քաւթառական Ոգին, որուն ձայնին արձագանգները հարազատօրէն պատկերացուց իր գործերուն մէջ։

Այս էր պատճառը, որ անիկա այդ անմահական Ոգին պոռցուց իր դիրքերուն մէջ, և անոր հպատակեցաւ, ինչպէս իր անմոռան վարպետը Րաֆֆին։

Անիկա անտարբեր է անտարակոյս, երբ քննադատներէն ոմանք իր գործը նսեմացնել կը ջանան, և գինքը կը նկատեն շեշտուած ազգային դրագետը։ Հպարտ է անոր համար, որ համոզուած է, թէ մարդկութիւնը սիրելու համար պէտք է սիրել նախ իր ազգը, իր հայրենիքը և իր հայրենակիցները։ Ու ասիկա պատճառ մը չէ, որ անոր սիրտը չողբայ մարդկային դժբախտութիւնը, սեւ տառապանքը, որ բաժինն է առհասարակ համայն մարդկութեան, վիշտն ու թախիծը, որ կը ճնշէ մարդ էակը, աշխարհի բոլոր մասերուն մէջ։

Ահարոնեան մեզ կ'առաջնորդէ դնտանին ու բանտերը, որոնց մէջ մարդը իր նմանն է բանտարկեր, և ուր դժուար է ճշդել մեկուն կամ միւսին յանցանքին աստիճանը։ Աշխարհ մըն է բանտն ալ, ուր կողք կողքի, առանց ազգութեան ու կրօնի խտրութեան, մարդիկ դատապարտուած են քաւելու իրենց գործած յանցանքները։ Հո՛ն է, որ մարդկային հոգին շատ անգամ կը յայտնուի իր անգիտակից ուժերով, երբ այդ ուժերը մակընթացութեան մը պէս կը յորդին, գուրս կը պոռթկան, աւերակ ու ավիւն կը սփռեն ամէն կողմ։ Երբ շատ անգամ եղբայրն իր եղբայրը կը դաշունահարէ, երբ ուժովը

կը հարստահարէ տկարը, և երբ ահաւոր ծեղքեր բոյն կը դնեն մարդոց կուրծքերուն տակ, և ուրկէ երիտասարդները ծերացած երեւոյթով մը դուրս կ'ելլեն իրենց ազատութիւնը գտնելու համար . . .։

Հոս մարդասէր գրագէտն է, որ իր ապրումները կը յիշէ բանտին մէջ, երբ սեւ օր մը, իրե՛ն ալ վիճակուեցաւ այդ դժոխքին դունէն նեբս ոսք նետել . . .։

.....

Գ.

ԿԵԱՆՔԻ ՎԷՊԸ.— ԴԱՐԵՐՈՒ ՃԱՄԲՈՐԴԸ.— ՃԱԿԱՏԱԳԻՐԸ.— ԱՇԽԱՐՀԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԻԲՐԵԻ ՆՈՐ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ.— ՎՐԻՊԱԾ ԿԵԱՆՔԵՐ.— ՍԵՐԸ ԵՒ ՄԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԾԵՐՈՒԹԵԱՆ ԴՐՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ.— ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒՆ ՍՏՈՒԵՐԸ

.....

Ամէն մի պայքար մի նոր ֆորիզոն բաց կա-
նի, եւ ամէն մի ֆորիզոն մի նոր արշալոյս:
Ա. ԱՇԱՐՈՆԵԱՆ

Իր գրականութեան մէկ մասին մէջ, Ահարոնեան կը մնայ պատմիչը մեր ազգային վիշտին ու տառապանքին։ Անիկա կու տայ մեզի հայ գիւղացի մարդուն հոգիին պատկերը, բոլոր հոգերն ու կարօտութիւնները, անոր բոլոր երազներն ու յուսախաբութիւնները, կրած հալածանքն ու թափած արիւնը։ Կու տայ տակաւին հայ կորիճ ու անձնուէր տղամարդուն քաջութեան ու հերոսութեան դրուագները։

Երբեմն սակայն անոր մտքին պատուհանները կը բացուէին համամարդկային համայնապատկերին առջեւ, ազատ ու անորոշ ակնարկներ միայն կ'արձակէր հոն, տրուած ըլլալով, որ իր հոգին գրաւուած էր առաւելապէս մեր աշխարհով ու հոն տքնող բազմութիւններով։ Հոն տակաւին շեշտուած չէր տնտեսական անհաւասարութեան ճնշող հարցը, կարեկնալ տալու անոր պատկերը իր բովանդակ խորութեանը մէջ։

Բայց անիկա ուխտաւորն է արեւմտեան քաղաքակրթութեան ու մշակոյթին։ Իր սովորական սահմաններէն անդին, այն միւս հորիզոններուն կատարը կը վառէ իր մխիթն ու սիրտը։ Ու օրին մէկը աչքերը կը բանայ եւ-րոպական մեծ քաղաքներուն մէջ։

Հոն կը ճանչնայ կեանքի վէպը, կեանքի մեծ ու արիւնոտ վէպը, որուն դրուագները մեզի պատմել կը սկսի։ Գիրքը որ կը կազմէ անոնցմով, կու գայ մեզի ըսելու, որ հեղինակին սիրտը կը բաբախէ նաեւ մարդկային

զգացումներով։ Անիկա նոյնքան կարեկցող ու զգայուն կը դառնայ օտար հորիզոններու տակ, երբ մարդկային տառապանքը կը տեսնէ, այն տառապանքը, որ ո՛չ անուն ունի և ո՛չ սահման, ո՛չ տարիք և ո՛չ աստիճան։ Դիտող ու քննող արուեստագէտին համար ի՛նչ աւելի ճշմարիտ ու իրական, կեանքը՝ որ կը թաւալի իր աչքերուն առջեւ։

Կեանքը ամբոխին, նկուղներու, գետնափոր հանքերու, գործարաններու, լուացարաններու մէջ քրտինք թափող ու անօթի քնացող բազմութիւններուն։ Կը տեսնէ ստուերները անապատան թափառաշրջիկներուն, անգործ բանուոր ու բանուորուհիներուն։ Թշուառութեան ու զրկանքի այս պատկերին հակադրութիւնը շեշտելու համար, անիկա շատ անգամ քով քովի կու տայ այն միւս պատկերը մարդկային էակներու, որոնք ճակատագրէն նպաստաւորուածներն են։ Անիկա քով քովի, կուշտը անօթիին, հարուստը աղքատին, առողջը հիւանդին, աշխատողն ու տքնողը ծոյլ ու յղփածին քով կը կեցնէ, ու չի ներեր, որ առաջիններուն թունաւոր ու հեգնող ակնարկները արհամարհեն երկրորդները։ Տանջանքին ու տառապանքին հետ կ'եղբայրանայ ու իր համակրութիւնները կ'երթան բոլոր զրկուածներուն ու մերժուածներուն։ Անոնց հետ կը հեծեծէ, անոնց հետ կ'ողբերգէ, անոնց հետ սեւ ու դաժան պահեր կ'անցընէ։

Անիկա կը հետեւի քայլերուն այն դժբախտ մեհնաւոր մարդոց, որոնց արուաքինը կը մատնէ իրենց մինակութեան բովանդակ տառապը, կեանքէն ու աշխարհէն մերժուած, և որոնց դէմքին վրայ թառած անտարբերութիւնը ամէն բանի հանդէպ, կը վկայէ անխուսափելի աղէտը, որուն կը սպասեն անոնք։ Կեանքի այս զժնդակ պայմաններուն մէջ կրկին չի մոռնար աղտ ու մուրի մէջ կորսուած ու թափառական, տանջուած դէմքով այն մանուկները, որոնք ցաւի ու զրկանքի մէջ հասակ կը նետեն, և որոնց հոգիները կ'այլանդակուին կանխահաս ու անբնական և սակայն կարեկցութեան արժանի վիճակի մը մէջ։ Չի մոռնար հակապատկերը, որ կայ հարուստ ու աղքատ երկու մանուկներու միջեւ, որոնք կը մեծնան ընկերութեան երկու խաւերու որոշ հոգեբանութեամբ ու պաստխարակութեամբ, և որոնցմով կը կազմուին երկու հակամարտ բանակները վաղուան կեանքին և անոր անխուսափելի բախումին։

Կեանքի անօրինակ ու խորհրդաւոր վէպին հերոսները մասնք չեն միայն։

Ահաւասիկ գիտուն բժիշկ մը ու անոր քովը իր մեկ ոտքէն զրկուած մուրացիկ մը։ Առաջինը գիտութեան մարդն է, երազներու անձնատուր, որ

դիտական փորձերով մարդկային երջանկութեան փիլիսոփայական քարը գըտնելու համար կը տքնի ու կը տանջուի։ Մուրացիկը նախապէս ուժ և առողջութիւն ունէր, որոնց շնորհիւ կրնար աշխատիլ ու ապրիլ, սակայն արկածի մը հետեւանքով կը կորսնցնէ իր մէկ ոտքը. ու հիմա չոր հաց մը ճարելու համար պատապարտուած է *սողալու*, ենթարկուելու ամէնուն արհամարհանքին ու հարուածներուն։ Բիւրաւոր են դաժան իրականութեան մէջ գալարուած թիկունքները, մազոտ ու սեւցած բազուկները, ինչպէս նաեւ ընկճուած ու յոգնած դէմքերը, որոնց համար շատ անգամ երջանկութիւն է մահը, քան այն կեանքը, որ ուրիշէն կախում ունի, ուրիշներուն ձեռքին կը նայի։

Ահաւոր է տանջանքն այն էակին, նախապէս հուժկու և առողջ, որ յետոյ չի կրնար աշխատիլ. անոր զգացած արդար պատուութեան մէջ, խոր՛ունկ ճշմարտութիւն մը կայ պահուած. զգալ որ մարդ է, և սակայն իրեն վիճակուած չէ նոյնիսկ կենդանիի մը հոգածութիւնը ...։ Այս տառապանքն անուն ու բացատրութիւն չունի և ամէն օր կը թաւալի մեր աչքերուն առջեւ, կեանքի բոլոր քառուղիներուն և մեծ ոստաններու հրապարակներուն վրայ ...։

Համայնապատկերին վրայ քով քովի կը տեսնուին աշխատանքի ծանրութեան տակ տքացող մարդկային բոլոր մարմինները. ահաւասիկ վոխտ ու հիւծախտաւոր մանուկներ, իրենց մայրերու ցամքած ստինքներուն փարած՝ թոյն կը ծծեն. իրարու սղմուած բազմութիւնը յաւապարներու, որոնց կապուցած շրթունքներուն վրայ իջեր են ցաւումն ու անէծքը. ահաւասիկ շղթայակապ ու ըմբոստ տարագիրները, սուինաւոր զինուորներու հսկողութեան տակ, ու բանտարկեալները՝ ծանր շղթաներու բեռան տակ ընկճուած։ Հեռո՛ւն, ծովն է, ալեկոծ ու փրփրերախ, որ կը խուժէ դէպի ափերը, աւազներու անձրեւ մը մաղելով գլխուն վրայ որբացած մանուկներու, որոնց ձկնորս հայրերը ալիքներուն մէջ կորսուեր են ...։

Բայց երազող վիպագիրը կը հաւատայ արդարութեան յաղթանակին, որովհետեւ «ամէն մի պայքար մի նոր հորիզոն բաց կանի, և ամէն մի հորիզոն մի նոր արշալոյս»։

Անիկա կը հաւատայ նոր մարդկութեան մը ծնունդին. բայց անհրաժեշտ է կ'ըսէ «մի ջրհեղեղ, աշխարհաւեր, համայնատարած ջրհեղեղ, առանց տապանի, որպէս զի մեռնող մարդկութեան երակների թոյնը չը կարողանայ պատուաստել նոր և լաւագոյն մարդկութիւնը։ Մի նոր արշալոյս, որի ցոլքերի առկ այլեւս թունաւոր օձերը չը տաքանան, մի նոր աշխարհ, ուր կուշտ

անգղերը էլ չը բղկտեն աշխատաւորի քրտնաթոր կուրծքը, ուր սերը աճուրդի չը հանւի և չը տրորւի ցեխերի մէջ իւղոտ խոզերի ոտների տակ։» (1)

Այսպէս, հիւանդ ու անարդար կարգերուն և աշխարհի մէջ գոյութիւն ունեցող դժբախտութեան ու կեանքի տխուր վէպին էջերը թերթատած պահուն, ցաւումի ու բողոքի երկաթէ հրաշէկ բառեր ունի իր գրչին ծայրը։ Իր համակրութեան չափը կը նուազի հանդէպ անգղայ ու անգիտակից ամբոխներուն ու ճակատագրէն հալածուած անհատներուն, որոնց հոգին փոթորիկ չունի և անահնման հնազանդութեան շղթաներովը կաշկանդուած է։ Անիկա կը ցաւի անոնց վրայ, որոնց մէջ մարդկային արժանապատուութիւնը մեռեր է, որոնք ստամոքսին հոգն ունին միայն ու կը դողան իրենց նմաններուն առջեւ։ Հաճոյքով կը դիտէ մուրացիկի մը դժբախտութիւնը, երբ անիկա գիտակից է այդ ցաւին ու տառապանքին, որովհետեւ կը հաւատայ, որ անոր մէջ հոգի մը կ'ապրի, մարդ մը կը շնչէ, որուն սիրտն ու հոգին վիրաւոր են թէեւ, սակայն պիտի կրնայ օր մը մռնչել ու բողոքել...։

Անիկա կ'ընկերանայ *դարերու ճամբորդին*, որուն մաշած ու վիրաւոր կռնակին վրայ դրուած է բեռը բիւրաւոր տանջուողներուն, աշխատանքէ յոգնած ու պարտասած մարդկային էակներու։ *Դարերու ճամբորդն* է, թափառական ու մոլորած անապատներու մէջ, որ կը խօսի. «Արցունքի, արեան, հառաչանքի մի խաւար զանգւած է դրւած իմ մէջքին, աւելի ծանր, քան լերան ժայռ։ Դու տեսե՞լ ես այն անիծւած մեռելները, որոնց վրայ տարիների ընթացքում ճամբորդները մի մի քար են ձգում և կազմւում է մի ահագին բլուր. ա՛յ այն մեռելներն այնքան իրաւունք չունին տրտընջալու, անքալու անէնքով շաղախած իրանց բեռից, որքան ես իմ մէջքի այս մուխ զանգւածից. նրանց ոսկորներն այնպէս չեն ճարճատում ցաւով, որքան իմ այս խեղճ, տառապած մէջքը։» (2)

Բայց *դարերու ճամբորդը*, այն որ աշխատեր ու քաղցած մնացեր է միշտ, իր ուսին կրելով անհնարին ծանրութիւնը արցունքի ու արիւնի, գիտակցութեան գալ կը սկսի, ու հեռուէն կը լսուի անոր երգը, որ երգն է բոլոր տառապողներուն։

Ահարոնեան մոխիկ կ'ընէ անոնց երգերուն, ու կը ներշնչուի անոնցմով. «Մենք երգում ենք ու ծառանում. չէ՞ մենք շատ ենք աշխատել ու միշտ

---

(1) Կեանքի վէպը, էջ 220։

(2) *Ա. Ահարոնեան*, Կեանքի վէպը, էջ 140։

ենք քաղցած. ճանապարհ, ճանապարհ նրանց, որոնք տքնել են՝ առանց վայելելու, արիւն-քրտինք են թափել ու միշտ ժլքախտ են, որոնք վաստակել են ու լացել, քաղցից ապարանքներ են կերտել անապատան մնալու համար. ճանապարհ, աշխատանքն է անցնում հզօր ու ստեղծագործող, որ այլեւս քաղցած չի ուզում մնալ: ճանապարհ . . . :» (1)

* * *

Գիւղի աշխարհը իր ամբոխային տրամաբանութիւնն ունի: Հոն մարդը փակ դիրք մըն է, և իր հոգին առեղծուածներով հարուստ: Հոն լռութեան մէջ է, որ մարդկային էակը կը գործէ անգիտակցաբար: Ամէն մարդ իր վիշտն ու ցաւն ունի, ոչ մէկը կրնայ թափանցել ուրիշին վիշտին ու հոգերուն: Գիւղական հինաւուրց ճշմարտութիւններն ու անմշակ մնացած զգայութիւնները գրականութեան կալուածին մէջ արժէքաւորելու և լոյսին բերելու համար, արուեստագէտը ստիպուած է հաշուի առնել այդ աշխարհն ու հոն գործող հոգեբանութիւնը, եթէ չուզեր որ իր ընտրած նիւթավայրն ու հոն գործող տիպարները արուեստակեալ դառնան:

Ակարոնեանի գրականութեան մէջ, երբեմն երեւան կու գան դէպքեր ու իրողութիւններ, որոնց պատճառները չեն քննուած ինչպէս որ պէտք է: Մակերեւոյթէն դիտողին համար, արուեստի ու գրականութեան տկարութիւն մը պիտի նկատուին այդ բոլորը. և սակայն՝ ճիշդ այդ պատճառով է, որ արուեստագէտը իր կալուածին մէջն է, ու իր տուածը պիտի կրնայ դիմանալ ժամանակի տեւողութեան:

Կարծուածին չափ ալ հեշտ չէ վերլուծումը գիւղական աշխարհին մէջ ապրող տիպարներուն, որոնք դարերու բարեշրջութեան ու փոփոխութիւններուն արդիւնքն են: Այդ տիպարներուն հոգին նոյնքան բարդ է ու բազմակողմանի, որքան հոգին այն մարդոց, որոնք քաղաքներու մէջ կ'ապրին, ու իրենց վրայ կը կրեն զանազան քաղաքակրթութիւններու ներգործութիւնը:

Գիւղական աշխարհին մէջ մարդկէ ամէն բանի բացատրութիւն մը կու տան, և հոն ուր իրենց իմաստութիւնը չի զօրեր թափանցել, անոնք կը կապուին նախապաշարումներու, որոնցմով թրծուեր է իրենց էութիւնը: Հոն «Մենաւոր ծառը թեւեր ու գլուխ է ստանում և բառնցք է ցոյց տալիս ուշացած ճամբորդին. սարի կատարին չար աչքեր են պլպլում, ժայռը գալարուում է, օրօրուում, մայտառները հաչում են, թմբերը՝ տնքում, փոսերը՝

(1) Կեանքի վէպը, էջ 280:

հեւում, տերեւները փսփսում են չար բաներ, առուներն օձերի պէս քսսում են, վիշապները բաղմանում, դեւերը լցնում են շրջակայքը և ողջ բնութիւնը զառնում է հազար աչքերով, հազար ճիրաններով մի հրէշ, որ խեղդել, լափել է ուզում ուշացած ճամբորդին»։ (1)

Այս աշխարհին ներգործութիւնն ա՛յնքան զօրաւոր է եղեր, որ Ահարոնեան կը մնայ մեր գրականութեան մէջ, առաւելապէս գիւղի վիպագիր. անոր համար այդ աշխարհը գաղտնիք չունի, իր հոգին նոյնացեր է անոր հոգիին հետ, ու իր գլուխ գործոցները, մանաւանդ վերջին ստեղծագործութիւնները, այդ միջավայրին ծնունդն են։ Հոն արուեստականութիւն չի կայ, եթէ նկատի չառնենք այն քիչ մը չափազանցուած խորհրդածութիւնները, որոնցմով կը սիրէ Ահարոնեան ճամբայ բանալ իր գրական պտոյտներու ընթացքին։

Հակառակ երկար տարիներու ժամանակաշրջանին, անիկա աւելի քան երիտասարդ ու թարմ է իր վերջին երկերուն մէջ. գիւղական հորիզոններու, արշալոյսներու և վերջալոյսներու բոյրն ու գոյները ճարտարօրէն կը խաղցնէ իր երանգապնակին վրայ, մեղի տալու համար մշուշներու և տարտամութեան մէջ անյայտանալ սկսող հայ գիւղական կեանքը, որ տակաւին երէկ գոյութիւն ունէր։

Անոր տիպարներէն մեծ մասը, այր թէ կին, կեանքի անիրաւութիւններուն առջեւ միշտ համակերպող են. իրենց մխոքէն չանցնիր ըմբոստանալ ճակատագրի խաղերուն դէմ, և բախտի անիւը շրջել։ Շատ քիչ անգամ առնանք զարտուղութիւն մը կը կազմեն ընդունուած սովորութիւններուն հանդէպ, վախնալով աչքէ իյնալ ու խենթ անուանուիլ։

Գոսպէ ամէն այդ տիպարներէն է, հակառակ իր փորձառուի իմաստուն խրատներուն։ «Ի՞նչ անենք կ'ըսէ, ճակատագիր է, ինչ որ վերեւից գրած է, մենք փոխել չենք կարող. մենք տէր և տիրական չունինք, իսկ անտէր մարդու ձեռը ծոցը, վիզը ծուռ կը լինի. մենք խեղճ ենք, շա՛տ խեղճ, անտէրութիւնը մեր ճակատագիրն է։» (2)

Հոգիներու թշուառութիւնը կը բնորոշէ նաեւ հետեւեալ պարբերութիւնը, որ գիւղական աշխարհի միակ հաւատալիքն է, միակ կրօնքը, միակ համոզումն ու սերունդներու դաստիարակութիւնը։ *Սեւ օրեր* պատմուածքին մէջ քահանայ մըն է խօսողը. «Մեր ճակատագիրն է, մի՛ տրտնջացէք.

---

(1) Մրրկի Սուրբը, էջ 23։

(2) Մրրկի Սուրբը, էջ 105։

Աստուած կամեցել է, որ մենք սեւով ծնուենք, լացով ապրենք, սպով գերեզման իջնենք. ի՞նչ անենք, թէ բեռը ծանր է, աւելի կը կռանանք, որ չքնկնենք, հարուածը խիստ է՝ կը կծկենք մեր մարմինները, կը ձգձգենք մեր ջղերը, որ պլմանանք։ Մենք չենք բողոքի, այլ կ'արտասուենք, չենք նզովի, այլ կ'ազօթենք։ Ինչ որ այնտեղ՝ վերեւում վճռուած է, այստեղ ներքեւում փոխել չի կարելի։»

Հաւաքական այս ստրկամտութեան անապատին մէջ սակայն, Ահարոնեան վրէժխնդիր Մուսաներուն (1) և Մելիք-Քեալաշներուն (2) ստքերուն ձայնը կ'առնէ, որոնք արիւնը արիւնով կը մաքրեն, և «Երանի՛ սգաւորաց զի նոքա մխիթարեսցին. երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից» աւետարանական ճշմարտութեան իբրեւ պատասխան, «աչքի տեղ աչք, և ատամի տեղ ատամ» ճշմարտութիւնը գոռալ կը սկսին։

Ահարոնեանէն առաջ, հայ վիպագրութեան անզուգական վարպետը, Րաֆֆին մեզի սորվեցուց *աշխարհի իմաստութիւնը*։ Աշակերտը վարպետէն եւս չի մնայ. ընդհակառակն կենդանի օրինակներով, ժողովուրդին ծանոյցն ծնունդ առած հերոսներուն գործերովը, եկաւ մեզի սորվեցնելու որպիսներուն նոր գործելակերպը հայրերու ընդունած «առաքինութեան» հակառակ։ Զարին հակառակ չի կենալու սկզբունքը սերունդներ գերեզման տարաբաղձութեան, ստրկութեան ու հալածանքի մէջ։ Ուշիմ որդիները սակայն, բնութեան մէջ կը տեսնեն ինքնապաշտպանութեան նուիրական օրէնքը։ Անոնց համար առաքինութիւն չէ տեսնել հանդարտ սրտով անօրէն մարդիկ, որոնք կու գան արիւն քրտինքով ձեռք բերուած արդար վաստակիդ արդիւնքը կը խլեն և օճախդ կ'անարգեն։ Անոնք կ'ըմբոստանան ծերունիներուն ընդունած սխալ նուիրականութեան դէմ, հակառակ անոնց անէծքին։ Պիտակցութեան եկած նոր սերունդն է, որ ամօթ կը զգայ այլեւս հնազանդութեան ու հպատակութեան խորհուրդներէն։ (*Մասիսը*, աւանդութիւն մը, *Դարաւոր կաղնին*)։

Վա՛յ անոր որ թոյլ, խեղճ ու անզօր է, աշխարհի վրայ տեղ չունի և ո՛չ ալ պատիւ ու համբաւ...։

* * *

Ահարոնեան հոգիի արիութեամբ մեզ կու գայ այն տեղերը, ուր մար-

(1) Սեւ. օրեր. (2) Դարաւոր կաղնին։ (Ժողովածու երկերի, *հատոր բ.* Խեղճերը։)

դիկ չեն կրնար զանազանել կեանքը մահէն. դերեզմաններու վրայ ուխտի եկողները կարծես մեռելներ ըլլային։ Այդ կեանքը մեր հայրենի իրականութեան վիճակուած կեանքն է, ծանր ու դժնդակ։

Այդ միջավայրին մէջ ապրողներու մտայլ արտաքինին տակ միշտ ծածկըւած է մարդկային զգայուն սիրտ մը։ Մարդիկ կ'ապրին հոն իրենց ներքինին մէջ, ծածուկ ու անորոշ։ Այդ հոգիները կը նմանին հրաբխային լեռներու, որոնց ներքինը կը բորբոքի, կ'եռայ ու կ'ուռի, կ'աւերէ անգիտակից ու փակ աշխարհը, առանց դուրս ժայթքելու։ Ներքին այդ եռուզեռին ու փոթորիկներուն նշանները շա՛տ քիչ անգամ կը յայտնուին։ Իսկ երբ կը պատահի անխուսափելին ու ահաւորը, երբ ներքին հեղեղը այլեւս զսպել անկարելի կը դառնայ, պայթումն ու ժայթքումն ալ ահաւոր ու անակնկալ կ'ըլլան։

Այս է պատճառը, որ գիւղի կեանքը եւ գիւղացիին ներքին աշխարհը պատկերացուած պահուն, ընթերցողը կը կարծէ թէ տիպարներուն հոգեբանութիւնը սխալ ներկայացուած կամ վերլուծուած է։ Պատճառը գիւղացիներու հոգեբանութեան վերագրելու է, քանի որ այդ աշխարհին մէջ դէպքերը բոլորովին տարբեր ձեւերով կը կազմուին, տարբեր շարժառիթներու արդիւնք են. մարդիկ հոն քիչ կը խօսին, բայց շատ կը տառապին, ու այդ տառապանքին ո՛չ անուն կրնան տալ եւ ոչ ալ բովանդակութիւն։ Այս տըւեալներով է, որ գիւղացիներուն հոգին արտացոլացնելու աշխատանքը գեղարուեստական ստեղծագործութեան մը մէջ, շա՛տ աւելի դժուար է ու պատասխանատու։

Այդ տիպարներուն արտաքին կեանքը, — խօսք, գործ, շարժուձեւ, յարաբերութիւն, ժպիտ ու արցունք —, շատ քիչ անգամ կ'օժանդակէ, բացատրելու համար հոգիի բարդ կեանքը, զգայութիւններու անգիտակից աշխարհը, ուր օձերու պէս ծուարեր, դիրք բռներ են նախանձը, ատելութիւնը, սէրը, վիշտը, վրէժը, ոխն ու քէնը, եւ որոնց յայտնութիւնը շատ աւելի մեծ աւեր կը գործէ, քան ուրիշ ոեւէ հորիզոնի տակ։

Այսպիսի տիպարներէն են *Մրրկի Սուրբըլին* մէջ, ձկնորս Նաւօն, Ջրաղացպան Գալէ ամին ու Ասօն։ Երեքն ալ կը սիրեն «վայրենի միայնութեան» մէջ ապրիլ, առանց քաջութիւնն ունենալու, մէկ անգամէն վերջ տալու իրենց դժբախտ ու վրիպած կեանքին։ Մանաւանդ ձկնորս Նաւօն բացառիկ նկարագիր մըն է գիւղի իրականութեան մէջ։ Իր մէկ հատիկ աղջկան, Շողերի համար որ ինքզինքը լիճը կը նետէ խեղդամահ ըլլալով, ատելութեամբ կը լեցուի դէպի աշխարհն ու մարդիկը։ Ամէն կողմ մահ կը

սիրէ ու աւերում։ Ծերունի վիճակին մէջ կ'ուխտէ ամէն բան քանդել։ Տեսակ մը խելագարութիւն Նաւոյինն ալ, ինչպէս Նաւարին մէջի և Երը ծիւնն իջնում էրի հերոսները, Թաթուլն ու Եղնակ ամին։

Մտքի հաւասարակշռութիւնը կորսնցնելու դէպքերը յաճախակի են Ահարոնեանի գրականութեան մէջ։ Ճակատագրին հարուածները տանել չեն կրնար անոնք, ու կը կորսուին անոնց ծանրութեան տակ։

Ոչ միայն տանել չեն կրնար, այլ անոր խաղերը կը վերագրեն իրենցմէ դուրս ուժերու, ազդակներու։ Ջրաղացպան Գասէն առոնցմէ մէկն է, որ իր ու գիւղացիներուն գլխուն եկած դժբախտութիւնները կը վերագրէ խեղճուկ թուչունի մը, բուի մը վույ – վույին։ Նախապաշարմունքներու աւերն ա՛յնքան ուժեղ է հոգիներու վրայ, որ Գասէն չարէն ու սատանայէն ապատուելու համար կատաղաբար կը յարձակի բուին վրայ, կը բռնէ անոր ոտքերէն, վեր կը բարձրացնէ ու գետին կը զարնէ։ Առով չի բաւականանալով՝ արիւնաթաթախ ու ջախջախուած դիակին վրայ կը կոխկրտէ, ոսկորները կը սրորէ, փետուրները կը փետռէ, ու սրտի անգիտակից գոհունակութեամբ կը թափառի ձորերուն մէջ ու դաշտերուն վրայ։

* * *

Ահարոնեանի գրականութիւնը մարդկային հոգիներու թանգարան մըն է, ուրիշ բառով համայնապատկեր մը, ուր ամէն տարիք իր ներկայացուցիչն ունի։

Տեսէ՛ք, հոն չեն մուցուած Եղնակ ամին ու իր պառաւ քոյրը, կաղ Հէքօն։ Առաջինը եօթանասունին մօտիկ, ու անկէ տասը տարով պակաս, ու տունը մնացած Հէքօն։ Երկուքն ալ ծանր ու անմեկնելի հոգ մը ունին։ Հոգը տան մը կործանումին, որուն ժառանգը կը պակսի։ Անբաւ հարստութիւն, և սակայն, ոչ մէկ յաջորդ ու ժառանգորդ։ Եղնակ ամիին գլխուն վրայ ծիւն է տեղացեր, ու երիտասարդ կնոջ մը հետ ամուսնանալու, իր քրոջ խորհուրդը կը նկատէ «չարի թելադրանք»։ Անիկա ինքզինքն անզօր կը զգար «անմահական աղբիւր»էն ջուր խմելու, ֆիզիքապէս կազդուրուելու... և դուրսի աշխարհէն ծածուկ, կեանքի ու մահուան պայքարը կը բռնկէր իր ծերացած սիրտին մէջ։

«Բայց ներսում, մի հեռաւոր անկիւնում ծուխ կայ. կրակ էր մնում մի տեղ. չապրած կեանքը, խեղդուած կրքերը իրար վրայ երկար ժամանակ կուտուած կանաչ տերեւների պէս կամայուկ վառւում էին առանց կրակի։»

Դաղտնի տագնապ մը, վախի պէս, որուն իմաստին թափանցել ա՛նքան դժուար է, դող մը, սարսուռ մը կը բռներ իր էութիւնը, քանի գովքը կ'ըլլար երիտասարդ հարսին, որուն ստուերը կը սահէր ամէն օր, իրենց տան մէջ։

Դեւը բոյն կը դնէ իր հոգիին մէջ ու կը տանջէ զինք. կը գայթակղի այս բոլորէն։ Իր սովորութիւնները կը փոխէ. տարբեր մարդ կը դառնայ. ինքզինքը կը փնտռէ, հին օրերու բարեպաշտ ու հաւատացեալ Եղնակը, ու չի գտներ։ Բովանդակ էութիւնը փոթորիկի կը բռնուի ու կը հարցնէ. «Դեռ տին ընկած վիրաւոր կռունկն ինչո՞ւ է նայում երկնքից թռչող երամին. կաթից կտրած մանուկն ինչո՞ւ է փնտռում մօր ստինքները. անտառում մոլորուած ճամբորդը ինչո՞ւ է իր հայեացքը բեւեռում մայր մանող արեւի վերջին ցոլքին...»։

Եղնակ ամին կը վախնայ հասարակաց կարծիքէն, սակայն երիտասարդ տարիքի դողն ու սարսուռը իր սիրտը կը գրաւեն։ Հինաւուրց օճախի սուգը կրակի պէս կը մխայ իր հոգիին խորը։ Տունի յարատեւութեան զգացումը նախ կը մտրակէր, խորհրդաւոր կերպով, պաւաւ Հէքդուի, և անոր շնորհիւ նաեւ՝ Եղնակ ամիին էութիւնը։ Պէտք չէր որ սերունդներուն վատ պահած կրակը իրմով մարէր ու վերջանար։

Իր հոգիին խաղաղութիւնը կորնչցնող ձերունին է Եղնակը, մէկը տարիքն առած ձերունիներէն, որոնք աշխարհի համն ու ճաշակը հեռաւոր յիշատակի մը պէս կը յիշեն, մանաւանդ երբ ծիւնն իջնում է ձերունիներուն գանկին վրայ, և հեռո՛ւն, մենաւոր խրճիթի մը մէջ, ուրիշ ձերունի մը, գիշեր ու ցորեկ պատանք կը հիւսէ, երգելով ջուլհակին տանջանքի երգը...։

Եղնակ ամին այն տիպարն է, որ երբ «հրաշքը տեղի կ'ունենայ» երիտասարդ հարսը տուն կու գայ ու ժառանգ մըն ալ կը պարգեւէ, անոր աչքին, հարստութիւն, կին, զաւակ, ամէնը կշիռին մէկ կողմը դրուելով մէկտեղ, աւելի թեթեւ կը կշռէ քան ընտանիքի և անունին պատիւը։ Աշխարհը չար է ու կը սիրէ խօսքը, երդ կը հնարէ ու կ'երգէ... «Դոխարի շէկլիկ տղան» Եղնակէն չէ... բամբասանքը շրջան կ'ընէ բերնէ բերան... ու ձերունիին կեանքը աւերակի կը վերածէ։ Եղնակ ամին ջրաղացի ջուրին մէջ կը նետէ ինքզինքը, խելագար վիճակի մէջ...։

1903ին էր, որ Ուեսիս Ակարոնեան հինակութեան, ծերացած տարիքի մէջ այրի մնալուն, որբութեան վիշտը անգամ մըն ալ կը պատմէր մեղի *Օհանի վիշտը* գրուածքով, հրատարակուած *Արագը* հատորին մէջ։ Մարդկային հոգիին այդ ողբերգութիւնը մեր գրականութեան մէջ Ակարոնեանէն

գաւո ոչ մէկ գրագէտի միտքը չարչարած է. գոնէ ես չեմ յիշեր կարդացած ըլլալ գրուածք մը, որուն մէջ անկիւնը նստելու դատապարտուած ծերուբեան հոգին ասղնտող, և կեանքի մէջ միայնակ մնացած ըլլալուն ահաւոր վիշտը մարդկայնօրէն պատմուի մեզի։ Բոլոր տարիքներն իրենց վէպն ու տուածն ունին, բայց վերջալոյսին գտած կեանքերուն հոգիին տուածը, — երբ մանաւանդ ձիւնն է եկեր նստեր մազերուն վրայ, երբ մանաւանդ դիւղի հասարակութեան սովորութիւնները, աւանդութիւնները, ամօթի զգացումը ծերունիները կենդանի դերեզման կը տանին ու թափառական կը դարձնեն, — ամէնէն խորունկն ու ամէնէն քնականն է։

Հակադրութիւնը մանաւանդ ահաւոր է, երբ մէկ բարձի վրայ ծերացող, ձմրան գիշերներուն շունչ շունչի տուող, բնաւորութեամբ, ձայնով, խօսելու եղանակով, նստելու, ելլելու բոլոր ձեւերով միրար լրացնող երկու ծերերէն մէկը կանուխ մը կը մեկնի այս աշխարհէն ու իր եռեւը կը ձգէ զգալի պարապ մը։ Երբ հասած սերունդ մը, զաւակներ, հարսներ ու թոռներ կեանք ու կենդանութիւն կու տան, կ'ուրախանան, կը հրճուին, կը զուարճանան, կ'աշխատին ու կը վայելեն, ու միևնակ մնացած ծերուկը իր մէջ արթընցած կը զգայ հին սէրը, որ գլուխ կը յուշնէ, արիւնը, որ կը խլրտի իր երակներուն մէջ, և իր իրաւունքը կը պահանջէ, ու գատապարտուած ըլլալ հեռուէհեռ մեռնելու, պատրաստուիլ բաժնուելու աշէն բանէ ... մըղձաւանջի պէս հասարակաց կարծիքի ճնշումին տակ գոնուիլ ու չկարենալ արհամարհել աշէն սովորութիւն ...։

Օհանի վիշտը, մարդկային վիշտն է, բոլորիս վիշտը. միևնակութեան, հոգիի որբութեան, սիրոյ բացակայութեան ահաւոր վիշտն է. վիշտը հաւածուած անհատին, որ իր երջանկութեան, յարաբերական երջանկութեան ցանկութիւնները չի կրնար գոհացնել, որ ժամէ ժամ կը հասնի, կը դպրի ապրելէ։ Որովհետեւ «հին տերեւներն էլ չեն կանաչի ...», որովհետեւ մարդիկ կը հաւատան, որ ամէն բան ի՛ր ժամանակին պէտք է, որ «մարմինն իր ժամանակը, հոգին՝ իրը» ունի։ Որովհետեւ քնութեան օրէնքին աւջեւ մարդը բացառութիւն չի կազմեր. «նայիր էս ծառերին, ձմեռ է, նրանք տերեւաթափ են. դու էլ գիտես, գարուն կը գայ, բայց թափուած տերեւները էլ երբեք վեր չեն բարձրանայ, նրանց տեղ նորերը կը ծլին, նորե՛րը ... աղօթիր ու միայն աղօթիր գարնան ու նոր տերեւների համար ... իմն ու քոնը անցաւ, էլ չի դառնայ» (1)

---

(1) Արազը, Օհանի վիշտը, էջ 254։

* * *

Նոյնքան վարպետօրէն գծուած են Մոխիրների տակից պատմուածքին, Մուրէնի և Սօֆիայի դէմքերը։

Առաջինը գաղափարական ու մտաւորական երիտասարդ մըն է, որ կեանքի ծով-տառապանքին դիտակցութիւնն ունի։ Ահարոնեան շա՛տ լաւ ընտրած է իր տիպարը, որ ժամանակակից «խենթ»երէն է, և որուն, առաջին անգամ ըլլալով մենք կը հանդիպինք այս կարճ, բայց խիստ հետաքրքրաշարժ վիպակին մէջ։ Անիկա կը մտածէ տանջանքի գեղեցկութեան մասին։ Խորհրդաւոր ծրագիրներ ունի։ Աչքերովը կը տեսնէ հսկայ տղամարդը, որ երկաթէ բազուկներ, լայն կուրծք ու հզօր կռնակ ունի. դիմեր է աշխատանքի բոլոր դուները... ի զո՜ւր... անոր յոյսի բոլոր ճամբաները փակուր են. կու լայ յաւէն ու ցայրոյթէն, որովհետեւ՝ հեռու տնակի մը մէջ խումբ մը մանուկներ, մերկ ու անօթի, իրեն կը սպասեն...։

Անիկա կը տեսնէ պառաւ մայրեր, որոնք իրենց զաւակներու կորուստը կ'ողբան...։

Անոր տիպարը մէկն է անոնցմէ, որոնք աշխարհի չարն ու բարին գանազանել գիտեն. իրենց աչքերուն առջեւ յաւէն համայնապատկերը կը տեսնեն. «Երաշտ է, երկինքը պղնձուած, արտերը՝ ցամաք, դաշտերը՝ խոպան. հարթութիւնը տնքում է մօտալուտ քաղցի սոսկումից, մարդ, կին, մեծ ու փոքր, ծեր ու երախայ երկինք են նայում, ազաղակում, լալիս, աղօթում մի կաոր չոր հացի համար...։» (1)

Մուրէն գաղափարական երիտասարդ մըն է, որուն համար մարդկային սէրը, իր նմանին հանդէպ ղգացած պարտականութեան դիտակցութիւնն աւելի զօրաւոր է քան սեռային սէրը։ Անիկա կը գործէ մտքի ու բանականութեան թելադրութեան տակ, խեղդելով իր մէջ ղգացումները։

Իսկ Սօֆիան Ահարոնեանի Նորան է, որ «պիտում էր իր անցած օրերը, ինչպէս մի հին նուիրական գիրք, որի փոշոտ ու գունատ թերթերի արանքներում շարուած են մաղկի թերթիկներ, վալուց հեռէ չորացած, դալկած, բարմունքից զրկուած, և որոնք սակայն պահում են հին յուշերի պատկերները։» (2)

Սօֆիան ժամանակակից կինն է, պարաշրջանի աղջիկը, որուն հոգին շատով պաշարել կը սկսին թախիծը, ձանձրութիւնն ու հոգիի խաւարները։

---

(1) *Ա. Ահարոնեան*, Մոխիրների տակից, տպ. «Հայրենիք» Պօստոն, 1924։

(2) *Ա. Ահարոնեան*. Մոխիրների տակից։

Ընցեալի մոխիրներու տակէն, կայծեր են, որ դուրս կու գան, անոր հոգին բորբոքելու համար։ Հին սէրը, ուսանող Սուրէնի հանդէպ, որուն հանդիպեր էր տարիներ առաջ, անդարձ թաղուեր էր, կեանքի հոգերը ղիրենք բաժներ էին, և Սօֆիա ամուսնացեր էր փաստաբանի մը հետ։ Բայց տասը տարուան կեանքը, զաւկի մը գոյութիւնը, թէեւ հիւանդկան, չէին զօրած մարելու երբեմնի կրակը, և երբ ատելութիւնը բոյն կը դնէր իր ամուսինին հանդէպ, «Հոգու խորքում մոխիրների տակից, իրենից ծածուկ, բարձրանում էր «մխսի» պատկերը, այնպէս, ինչպէս տեսել էր նրան տասրիներ առաջ, այն ահաւոր պատկերը, հմայիչ ու սարսափելի դիշեր, մռայլ ու խորհրդաւոր անտառ, անդունդում եռացող կատաղի ջրվէժ, բարձունքները խոյացող արծիւ . . .»։

Եւ տեղի կ'ունենայ անխուսափելի փոթորիկը երկու տարբեր հոգիներու միջեւ։ Սօֆիան կը հեռանայ տունէն, հակառակ անոր, որ իր ամուսինը կատարեր էր անոր բոլոր քմահաճոյքները, սիրեր էր դինքը առանց թուիչքի, սովորական մարդու մը պէս, մի՛շտ բարի, աղնիւ ու անապարա հոգիով։ Սօֆիա ժժգոհ էր, որ իրրեւ «խաղալիք, զարդարուած սիկնիկ» մը մնացեր էր ընտանիքին մէջ, կորսնցնելով հետզհետէ իր գեղեցկութիւնն ու կնոջական թարմութիւնը։

Ահարոնեան տեղի կու տայ այսպիսով մեր օրերու տառապներէն մէկը, այնքան յաջող. տառապ մը, որ կնոջական հոգիները տարակոյսի առջեւ կը դնէ, անոնց հոգին ձանձրոյթի թոյնովը կը վարակէ ու թախիծը կը կաթեցընէ անոնց աչքերուն մէջ . . .։

* * *

Բացառական նկարագիրներ ալ կու տայ մեղի Ահարոնեան։ Առաքինի դէմքերը աւելի կարկառուն դարձնելու համար, ճիշտ անոնց քով, կը բերէ մեղի դաւաճանութեան, փոքրոգութեան, անհաւատարմութեան ատելութեան ու նախանձի մեղքերով ծանրաբեռնուած հոգիներ։ Պիւղի աշխարհը, ուրիշ տեղ մը ըսեր եմ, լուութեան մէջ կ'ողբայ իր տառապանքը. ճիշտ նոյն ձեւով, բացառական զգայութիւնները հոն, խաւարին ու լուութեան մէջ կը գործեն իրենց աւերները։

Ենթակաները գիտակցութիւնը չունին իրենց ըրածին, և հետեւանքները նասին մտահոգ չեն երբեք։ Դատողութեամբ չէ որ կը գործեն, այլ բնազդով կ'առաջնորդուին։ Կը բաւէ, որ *վայրկեանը* փրկուի. կը բաւէ, որ իրենց եսին գոհացում տան։ Ինչպէս որ դրական, գեղեցիկ, բարի ու առա-

քինի գործերը կը վարակեն անհատները, այնպէս ալ հոգեբանական, բայաստական գիծերուն առաջին զոհերն են անհատները։

Այսպիսի դիմագծութիւն մըն է Քաչալ Սրքէն։ (1) Անոր առաջին ճեղքը դինքը կը տանի երկրորդին։ Իր կեանքը փրկելու գնով կը մատնէ ուրիշներուն կեանքը։ Նախապէս գործած ճեղքը, աղջկան մը տիրանալուն, և անոր սիրովը տոչորող երիտասարդին վնաս հասցնելու համար էր։ Մէկ դէպքէն միւսը, ճամբան լպրծուն է։

Բայասական այս տիպարները վարողը երկչոտութիւնն է։ Այս զգայութիւնը ցեղային չէ բարեբախտաբար։ Միջավայրի, խառնուածքի և դաստիարակութեան արդիւնքն է։ Հայ գիւղը վախկոտ ու կասկածոտ, զգոյշ ու խոհեմ ճակատագիր մը ունի։ Բարեբախտաբար ըսի, որովհետեւ արիութեան ու կորիճութեան, ըմբոստութեան ու անձնազոհութեան առաքինութիւնը շատ առիթներու մէջ բարձր պահած է ճակատները գիւղացի տիպարներուն, որոնք հոգեկան հակոտնեայ զգայութիւններ ունին, որովհետեւ խիստ անոնպաստ պայմաններու մէջ ծներ ու մեծցեր են։

Տարբեր պայմաններ ու տարբեր դաստիարակութիւն մը անհրաժեշտ են, նկարագրի այս բայասական գիծերը սրբագրելու համար։ Հայրերուն որդիները պիտի յաջորդեն անխուսափելիօրէն, ու ասոնք մեր հինաւուրց առաքինութիւնները պիտի ոչնչեն։ Տեսակ մը պատուաստ տեղի պիտի ունենայ, որուն ենթական հայ վերապրող գիւղացիութիւնը պիտի ըլլայ, վաղուան հայ նոր գիւղը վերակազմելու և քաղաքակրթութեան բարիքներէն մեծ չափով օգտուելու համար։

Սրգէն դաւաճանութեան ու մատնութեան կը միացնէր ստախօսութիւնն ու կեղծիքը։ Ձիւնագունդը լերան կատարէն գլորուելէն յետոյ, մինչեւ յատակը հասնիլ սոխուած է բնական օրէնքի մը հպատակելով, շարունակ գլորիլ ու գլորիլ, հեռչհեռ մեծնալով ու ստուարանալով։ Մեղաւոր ու ամբարիշտ Սրքէի հոգին այդ ձիւնագունդն է։ Պէտք է որ մինչեւ յատակը իջնէ ...։ Անիկա ընդունակ է նաեւ երդում ընել բոլոր նուիրականութիւններուն անունով։

Բայց մարդկային հոգին իր սակարութիւններն ունի. հոգիի տանջանքը աւելի դժուար է տանիլ քան մարմինինը. անգիտակից և աներեւոյթ զօրութիւն մը բոյն դրած է հոն, ենթակային յիշեցնելու համար գործուած մեղքերը։ Սրքէն բռնուած է հոգիի այդ անհանգիստ զոլով, որ ո՛չ գիշերը և

---

(1) Ժողովածու. երկերի, Բ. հատոր, Սեւ սրեր պատմուածքին մէջ։

ո՛չ ալ ցորեկը հանգիստ ու դադար չի տար մարդուն։ Թույլ չի տար կեղրոնանալ ու աշխատիլ. խղճի ձայնն է, որ դուլ ու դադար չունի, կը պեղէ, ու կը պեղէ ներքին էութիւնը։ Անէն կողմ վրէժխնդիր աչքեր ու ձեռքեր կը տեսնէ ան, որոնք իրմէն հաշիւ կը պահանջեն։ Թեղճերուն, թշուառներուն ու զոհերուն նղովքը չի կրնար մոռցնել տալ երէկի սկարուիթիւնները։ Անիկա կը հալածուի մեռնողներուն ուրուականներէն։

* * *

Տիեզերական վիշտն ու տանջանքը միայն մարդկային արարածին ճակատագրուած չեն։ Կենդանական աշխարհը, անասուններու դասը ըսելու համար, նմանապէս, բռնուած է շղթաներու մէջ ու կաշկանդուած. ա՛ն ալ կորսնցուցեր է իր ազատութիւնը՝ ու ենթարկուած՝ տէրերու քմահաճոյքին։ Անասուններու այն դասը մանաւանդ, որ մարդոց պէտքերուն, երբեմն ալ հաճոյքին համար ընտանի դարձեր է, շա՛տ աւելի ենթակայ է անոնց կամայականութեան քան այն միւսները, որոնք կոյս անտառներու գրկին կամ լեռներու քարանձաւներուն մէջ, հեռու մարդկային բնակութիւններէ, վայրենութեան մէջ կ'անցընեն իրենց օրերը։ Հոն ուժն է որ կը յաղթանակէ, և սկարները միշտ հալածուողներն են, նման՝ մարդ արարածներու կողմէ օրէնքի վերածուած դրութեան։

Դիտող ու զգայուն արուեստագէտը տիեզերական վիշտէն ու տանջանքէն կենդանիներուն ալ բաժին կը հանէ, իր հոգին կը խոովի տեսնելով անոնց չարչարանքը։ Ծեղ մը չարչարակոծ ձի մըն է, որ արիւնոտ ոտքերով, մաշուած կողերով ու վտիտ մարմնով դատապարտուած է քաշելու շարունակ լեցուն սայլ մը, մտրակներու հարուածին տակ. ուրիշ անգամ նոյն ձին է պարձակալ, որ իր կառապանին հետ, տեղացող ձիւնին կամ անձրեւին տակ, ստիպուած է երկա՛ր ժամեր սպասել իր տիրոջ, որ վերը, լուսաւոր ու տաք սրահներու մէջ զգայական հաճոյքներու անձնատուր է. անդին տուներէն վռնտուած ու հալածական կատու մը, վիրաւոր ու անօթի, կը սլքտայ պատերուն ու քարերուն տակ. դաշտերուն մէջ, կիզիչ արեւուն տակ եղն ու գոմէշն են, որ ժամ մը յարդի սիրուն, արշալոյսէն մինչեւ վերջալոյս և մինչեւ ուշ գիշեր արօրը կը քաշեն հողին ընդերքներուն մէջէն. և կամ աքաղաղ մը, որ ամայի գիւղին մէջ, միայնութեան վերջին երգը կ'երգէ. և այսպէս շարքը բոլոր կենդանիներուն, որոնք մարդկային տիպարներուն պէս տեղ ու դիրք բռներ են համայնապատկերին վրայ։

Մանաւոր գուրգուրանք ու ջերմ խանդաղատանք ունի Ահարոնեան շուներու ցեղին հանդէպ, մանաւանդ անոնց՝ որոնք շատ անգամ մարդերէն աւելի ուշիմ ու իմացական յատկութիւններ ունին. անոնց՝ որոնք քաջասիրտ են ու իրենց կեանքը կապուած է միշտ ընտանիքներու կեանքին, որոնք կը քաժնեն մարդոց վիշտն ու տառապանքը, հաւատարիմ ու երախտագէտ են իրենց տէրերուն հանդէպ աւելի քան մարդիկ, նման պարագաներու մէջ։

Զօմարը, (*Ձաւարի մէջ*) աղնուական արիւնով ու հինաւուրց ցեղի մը ներկայացուցիչ ընտանի շուն մըն է, որ ընտանիքի մը ճակատագրին կը հետեւի սկիզբէն մինչեւ վերջը, մարդու մը պէս կը զգայ տառապանք և վըտանգը, որ կը քալէ մարդուն կրունկին տեւէն ու բնազդով կը ա խաղգայ գալիքը։ Այն աստիճան, որ երբ օր մը իր շղթան բաց կը ձգուի, կայծակի արագութեամբ կը նետուի ընտանիքի պատիւը արատաւորող մարդուն վրայ, զայն պատառ պատառ կը խածնէ, եւ գնդակի զոյգ հարուածներով զետին կը փռուի։

Այսպիսի խանդաղատանք ու գուրգուրանք ունի Ահարոնեան բոլոր կեդանիներուն հանդէպ, որոնց մէջ կը գործէ անգիտակից ուժ մը, որ չի կրնար արտայայտուիլ, և սակայն բացառիկ պարագաներու մէջ կը յայտնուի այդ ուժը արտակարգ ձեւով ու արամաբանութեամբ։ կենդանիներուն ստուերը մարդերուն հետ կը քալէ միշտ։ Գրական այս նորութիւնը, ձեւ ու կերպարանք կը ստանայ մանաւանդ մեր օրերու արձակագիր Համաստեղի գրչին տակ, որ հայ գիւղը կը վերապրեցնէ իր գրականութեան մէջ, այնքան ինքնատպութեամբ ու տաղանդով։

****

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՏԱՐՐԵՐ

ՀՈԳԻԻ ՏԱՐԱԿՈՅՍՆԵՐԷՆ ԱՌԱՋ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՒ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՍԷՐԸ.— ՑԵՂԱՅԻՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲՆՈՒԹԻՒՆԸ.— ԻՄԱՑԱԿԱՆ ՏԱՐՐԸ.— ՆԻՐՎԱՆԱՅԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԻՏԵԱԼԸ.— ԼԵԶՈՒ ԵՒ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ով որ կ'ուզէ կենդանի Աստուածը տեսնել երես երեսի, պարտաւոր է զայն փնտռել ո՛չ թէ իր մտածման պարապ երկնակամարին վրայ, այլ մարդոց ինդէպ զգացած սէրին մէջ:

ՌՕՄԷՆ ՌՕԼԱՆ

Անոնք, որոնք Հարոնեանի գրականութիւնը կը դատեն մէկակողմանի կերպով, ու հոն կը գտնեն մէօրինակ լար մը վիշտի ու զուլումի, ժամանակավրէպ հոգերու և դէպքերու արձագանգը, այդպիսիները նկատի ունին սպահովաբար իր գործին մէկ մասը միայն: Այդպիսի վերագնահատում մը ընթերցողն ու քննադատը սխալ եզրակացութիւններու պիտի առաջնորդէ անտարակոյս: Այս կերպով անկարելի չէ, որ ո եւ է լաւատես հեղինակ իրեւ յոռետես ներկայացուի. համամարդկային հոգերու համար բաբախուն սիրտ մը ունեցողը՝ ազգային սահմանափակ շրջանակի մը հեղինակը ճանչցուի, և իրապաշտ գրող մը՝ վիպապաշտ կամ դասական յայտարարուի:

Որովհետեւ ո եւ է հեղինակի գործին մէջ անկարելի է չի գտնել զգայութեան զանազան երակներ, լեռներու կուրծքէն դուրս հոսող ջուրերու երակներուն պէս, որոնք միանալով կը կազմեն վտակներ ու գետեր: Հեղինակներուն գործը կը նմանի նաեւ, զանազան ծաղիկներու գոյնովը ներդաշնակուած փունջին, այլազան բոյրերով ու երանգներով, առանց երբեք փունջը որակելու այս կամ այն ծաղիկին անունովը միայն: Հեղինակի մը ստեղծագոր-

ծուքիւնը յատկանշելու, և գրականութեան մէջ անոր տեղը սահմանելու համար, պէտք է փնտռել մայր երակը այն զգայութեան, որուն սնունդովը անիկա մեծցուցեր է իր գործը, նման մօր ստինքներէն կախուող մանուկին, որ իր ծծած կաթին հետ կը ծծէ նաեւ իր մօրը հոգին ու սիրտը ծիածանող բոլո՛ր զգայութիւնները։

Ահարոնեանը դիեցնող ու մեծցնող մայր-զգացումն է Հայրենիքի սէրը։ Նախ հայրենի բնութիւնը, անոր մեծափաթթամ ու ամպածրար լեռները, որոնք մանուկ տարիքէն դրոջմուեր են անոր հոգիին մէջ ու գերած երեւակայութիւնը. մշտահոս գետերն ու աղբերակները, աւերակներն ու խրճիթները և գիւղական կեանքի բոլոր ստեղծագործ աշխատանքները։ Նիւթական շօշափելի աշխարհին հետ, անիկա երգեր է, ամէնէն մեծ ոգեւորութեամբ, գիւղական աշխարհի մարդոց հոգին ու անոնց հոգերը, անոնց ուրախութիւններն ու ցաւերը, արցունքն ու ժպիտը։ Մեզի պատմեր է մարդոց սէրերը, ատելութիւններն ու նկարագրի բոլոր բացասական գիծերը, ինչպէս նաեւ անհաւասար ուժերու դէմ մարտնչող հերոսներուն կեանքը, ու մանաւանդ մեր աշխարհին անպատմելի զուլումը։

Ահարոնեանի մէջ սակայն ինչ որ կը գտնենք իբրեւ տղբի ու զուլումի նկարագրութիւն, լաւագոյն ձեւով ու արուեստով արտայայտուած կը գտնենք։ Սիամանթոյի և Վարուժանի քերթուածներուն մէջ երգուած հայ տառապանքը ոչինչ նսեմացուցեր է արուեստի իրենց արժանիքներէն։ Նոյնը նաեւ Ահարոնեանի մօտ։ Կարելի է ըսել թէ մեր գրականութեան մէջ յոռետեսութեան լարը հնչած չէ երբեք, իբրեւ հոգիի ներքին զգայութիւն, և ազգային նկարագրի գիծ։ Մեր ցեղային առաքինութիւնն եղող հաւատքի և յոյսի ուժովը ներշնչուեր են մեր տաղանդաւոր գրագէտները։ Հարցը ամէն բանէ առաջ, տաղանդ ու շնորհ ունենալուն մէջն է։

Աստուածային այդ շունչէն զուրկ մահկանացուները եթէ կ'ուզեն թող կորեն իրենց կապերը տառապանքի այս երկրէն, թող փոխադրուին մտքի և երեւակայութեան մարզերուն մէջ, գրել ու ստեղծագործել փորձեն *անհատական* ցանկութիւններու համաձայն. վստահ կարելի է ըլլալ, որ իրենց բոլոր ճիգերն ի դերեւ պիտի ելլեն, քանի որ *սիրտով* չեն գրած ու ստեղծած։

Միջազգային գրականութեան մէջ անկորնչելի նկատուած գործերը շա՛տ յայտնի օրէնք մը կ'ապացուցանեն, թէ ամէնէն մեծ իմաստասէրներն ու դրագէտները ինքզինքնին չեն կրնար ազատել *միջավայրի, ժամանակի* ու *ցեղային* ազդեցութիւններէն, եթէ նոյնիսկ այդ գլուխ-գործոցներուն մէջ *անհատական* տարրը մեծ դեր խաղացած ըլլայ։

Զարմանալի չէ ուրեմն, որ Ահարոնեանի գրականութեան շուրջ եւս կարծիքները կը տարբերին։ Մայրայեղ մտածողները, մանաւանդ անոնք, որոնք գրականութեան կու տան անհատական յանկութիւններ գոհայնոյի պէս մը մեայն, որոնք մեմեայն *արուեստը արուեստին համար* եասսէր ձրգտումին երկրպագուներն են, կասկածով կը մօտենան անոր գործին, զայն քննութեան բովէն անցընելու և սահմանելու համար անոր տեղը մեր գրականութեան պատմութեան մէջ։

Այսպէս տրամաբանելու համար, պէտք էր, որ մարդիկ մանէին փղոսկրէ աշտարակի մը մէջ, գոյէին իրենց աչքերն ու ականջները, չի լսելու և չի տեսնելու համար դուրսի *իրական* աշխարհին պատկերը, մարդկային հոգիներու ալեկոծումները, գիւղերու ծխնելոյզներուն ծուխն ու շոգին, թշուառութեան գեհենային սարսափները, մշակներուն արօրն ու բրիչը, դարբիններուն մուրճի հարուածները, և այս բոլորէն վեր, անատուգութեան, վախի ու հալածանքի ողբերգութիւնը, որ մարդկային տառապակոծ բազմութիւններուն վիճակուած է առհասարակ։

Ու եթէ սիրտ ունիք, խոտացուցէք պատկերին այս գոյները, փոխադրեցէք մեր հայրենի աշխարհը, Արարատեան դաշտագետինը, Մասիսի հիւսիսն ու հարաւը, արեւելքն ու արեւմուտքը, հոն ապրեցուցէք դարերու կեանք ունեցող մեր ժողովուրդը, իր հայրենի ժառանգութեանը վրայ, զրկուած անոր բարիքներէն ու շնորհներէն, արհամարհուած ու տրորուած իբրեւ արժանապատուութիւն ունեցող էակ, տեսէք անոր մէջէն յարութիւն առնող գերմարդկային հոգիները, որոնք նոր օրերու մէջ, հին դիւցազներգութիւններու կրակովը կը տոչորին, հետեւեցէք հալածական ու թափառական բազմութիւններուն, որոնք հրդեհներէն ու աւերակներէն հալիւ ազատած, իրենց գաղթականի վրանները կը կանգնեն ամայի տաբաստաններուն վրայ, լեռնեղուռ կուշտին, ու Արցունքի հովիտներուն մութին մէջ, լսեցէք *պուտ մը կաթիլ* ու *փշուր մը հացէ* զրկուած մանուկներուն սրտակեղեք ալաղակները, առեւանգուած կոյսերու ողբն ու կոծը . . . , ու այս բոլորէն յետոյ, դուք ձեզի թոյլ տուէք կղզիանալու արուեստի մտահոգութիւններուն մէջ մեայն, փնտռելու ձեւը և ճարտարապետութիւնը բառերուն ու խօսքերուն, անոնց արտաքին դեղեցկութիւնն աւելի շլացուցիչ զարձնելու համար . . .։

Ճշմարիտ արուեստագէտն ա՛յն է, որ մարկ կ՚ընէ իր հոգիին մէջ արձագանգ գտնող այս բոլոր աղաղակները, ամենատես աչքերով կը ճանչնայ իր շուրջն անցած դարձածը, կը համադրէ բոլոր գոյներն ու ձայները, կը հետեւի մարդկային արարածներու բոլոր քայլերուն, բացասական ու դրական

բոլոր իրողութիւններուն, արտասուողին հետ կ՚արտասուէ, ժպիտին ժպիտով կը պատասխանէ, պայքարողին հետ կռուի դաշտը կը փոխադրուի, եթէ կըրնայ՝ արցունքի շիթ մը կը ցամքեցնէ, ափոփանքի կարօտ հոգիներուն վանկ մը կը մրմնջէ, հիւանդին քով գիշերներ կը լուսցնէ, կը տառապի անհնարին ցաւերով ու երկունքի գալարումներով, իր մեծ գործը կերտելու համար։ Ճշմարիտ արուեստագէտ է նաեւ այն, որ իր արուեստին ու տաղանդին բոլոր շնորհները ի սպաս կը դնէ իր ժամանակի մարդկութեան ու իր միջավայրին, մէկ խօսքով իր ցեղին առանձնայատուկ պայմանները երգելուն ու ապրեցնելուն։

Մեծահամբաւ գրական քննադատ Փօլ Մուռէյ, ղէմ է բոլոր անոնց, որոնք արուեստի ու գրականութեան մէջ, արուեստագէտին անձեռնմխելիութիւնն ու անկախութիւնը, անոր *ես*ին քմահաճոյքները կը չափազանցեն. «Նախ և առաջ պիտի պատասխանենք, կը գրէ, թէ մենք չենք գիտեր թէ ի՞նչ ըսել է պարզապէս *անհատական երեւոյթ*. չենք ճանչնար ոչ մէկ բան որ գործունէութեան այս կերպ բացատրութեան պատասխան մը տար։ Մարդը ստեղծուած չէ բոլորովին առանձին, և իրաւունք չունի ինքզինքը նկատելու ազատ կամեցողութիւն մը։ Մենք բոլորս ալ հպատակ ենք ժառանգականութեան և միջավայրին, ձեւուած ու կաղմուած մեր նախորդներուն կողմէ, մեր երկրի ֆիզիքական ու բարոյական բարեխառնութեան. ընկերութեան, որ մեզ կը շրջապատէ և համայն մարդկութեան, որ մեզմէ առաջ եկեր ու գնացեր է։ Մեր ընտրութեամբ չէ, որ շիներ ենք ո՛չ մեր կազմաւորութիւնը, ո՛չ մեր մտաւորական ժառանգութիւնները, որոնք մեզի փոխանցուած են կրթութեամբ ու ընթերցումով, և ո՛չ ալ լեզուն, զոր կը գրենք ու կը խօսինք։ Բայց աստիճաններ կան. ամէնէն անհատականը գեղարուեստական ու գրական արտադրութիւնն է, որ պայմանաւորուած է, ինչպէս Թէն զայն բանաձեւեր է, ցեղային, միջավայրի ու վայրկեանի պայմաններուն համաձայն։ Անշուշտ անիկա չի ժխտեց, արուեստագէտին ու գրագէտին սեփական հանճարը։ Սոփոկլի, Վիրգիլիոսի, Ճանդեի ու Շէյքսբիրի, Կէօթէի ու Վիքթոր Հիւկոյի ստեղծագործութիւնը այն չի պիտի ըլլար, եթէ անոնք ապրէին ուրիշ երկինքներու տակ, ուրիշ դարաշրջաններու մէջ։ Անոնց գործերէն կը ճառագայթեն մեծ շարժուձեր ու հոսանքներ իրենց ժամանակին մէջ, ուր կը տեսնենք մենք դարաշրջանի ձեւը, խղճմտանքը, գեղեցկութիւնը, յստակ ու մեծապայծառ արտայայտութեամբ մը, որ քառսին մէջ կու գայ, պէտքին համաձայն, գործածուելու և անկէ ստեղծելու նորերը։»

Ընդհանրական համար ալ բացարձակ անհատականութիւնը, անհիմն ու

անտրամաբան հասկացողութիւն մըն է, նոյնիսկ անկարելիութիւն է մեր այս աշխարհին մէջ։ «Ծիեզերքում, կը գրէ, ոչինչ և ոչ ոք բացառապէս իր համար չի շարժւում, ինչպէս որ ծովի ոչ մի ալիք օղակ չի կազմում, առանց բիւրաւոր ուրիշ ալիքներ հրհրելու»

Եթէ արուեստագէտը իր հոգիին մէջ կրցաւ համապրել իր ժամանակին ու միջավայրին համաձնական պատկերն ու ոգին, մարդկային որոնող հոգիին տալ արուեստի հրաշակերտի մը մէջ, եթէ անիկա կրցաւ մարդոց հոգիները հրդեհել ու գեղեցկութեան տաճարներ կանգնել, եթէ մարդկային թշուառութեան ու կորսուած արդարութեան համար գիտցաւ բողոքի աղաղակ բարձրացնել ու որեկորոյս մայրերուն արցունքին մէջ սիրոյ ճառագայթը փնտռել, արուեստագէտը թէ՛ ազգային և թէ համամարդկային գործ մի տուած եղաւ։

Ներարենեանի հասցէին արձակուած մեղադրանքը ուրեմն, թէ անիկա չափազանցութեան տարած է ազգային լարը, մոռացութեան տալով համամարդկայինը, անհիմն է ու կ'ենթադրէ թէ այդ կարծիքը ունեցողները չեն ճանչնար անոր գործը։

Մեր անօրինակ ճակատագրին դիւցազներգակն է ան, որ բանաստեղծի ու վիպասանի իր սազը գրկած, կեանքի քառուղիներուն մէջտեղը կանգնած, կ'երգէ հայկական հերոսամարտը, կը ներբողէ ու կը քանդակէ հայկական առաքինութիւնները, որոնք չեն դադրիր համամարդկային առաքինութիւններ ըլլալէ։ Մարդը նոյն մարդն է, ամէն երկինքի ու ամէն աստղի տակ. տառապանքը նոյնն է ամէն տեղի ու ժամանակի համար. անարդարութիւնն ու հալածանքը նոյնն են, սիրոյ ցաւը, մահուան գալարումները մանաւանդ, նոյնն են ու խո՛րը, ամէն հոգիի ու շնչաւոր էակի համար . . . ։

Միկել սը Ունամունօ, մէկը Սպանիոյ ժամանակակից մեծագոյն դէմքերէն ու միջազգային անուանի գրագէտներէն, այսպէս կը սահմանէ արուեստի ու գրականութեան պայմաններուն հպատակող արուեստագէտին դերը, որ կոչումն ունի գրի առնելու ժամանակակից մարդուն հոգիին պատկերը. «Ամէն մէկ գործաւոր մարդու ներքին, խորունկ և յաւէտ մարդկային պահանջները նոյնն են ինչ որ ունէ այլ մարդու պահանջները։ Բանուորը կը սիրահարի ինչպէս այն՝ զոր քաղքենի կ'անուանենք. անոր պէս, ա՛ն ալ կը տառապի, երբ իրեն սիրելի մէկ անձը կը մեռնի. անոր պէս, ա՛ն ալ կը վախնայ մահէն, կամ կը բաղձայ անոր. անոր պէս, ա՛ն ալ կը մտահոգուի կեանքի վախճանով, և անոր պէս կը դողայ ճակատագրի ողբերգական գաղտնիքին առջեւ։ Այս պահանջներէն կազմուած են արուեստ և գրա-

կանութիւն, որուն նպատակն է, ինչպէս նպատակը կրօնին, մեռնելու համար ճնած մարդը մխիթարել։»

Եթէ այս հատուածակողմէն դիտելու ըլլանք Ահարոնեանի ստեղծագործութիւնը, պիտի գանք այն եզրակացութեան, որ իր խոշոր ու տպաւորիչ հարազատ արձագանգը ապրեցուցեր է ան իր հայրենասիրութեամբ, անզուգական մնացեր է, մեր փոթորկայոյզ ժամանակի ձգտումներն ու մտորումները երգելու արուեստին մէջ, և դաւաճանած պիտի ըլլար իր գրագէտ-մտաւորականի կոչումին, եթէ կղզիանար անկիւն մը, կամ անապատի մը մէկ ովասիսին մէջ, ու երգեր միայն իր հոգիին բանաստեղծութիւնը և իր եսին տարակոյսները։

Իր ստեղծագործութեան մէջ, հոգիի թաքուն ղգայութիւնները կրցաւ հաշտեցնել սովորական կեանքի սովորութիւններուն և բնութեան արտաքին գեղեցկութիւններուն հետ։ Դիտցա՛ւ գնահատել ապրելու գեղեցկութեան արուեստը, փիլիսոփայական գաղափարներու մարզանքներէն առաջ։ Շատ անգամ կասկածները մթագնեցին իր ճակատը, և սակայն մտաւորական լաւատեսութիւն մը միշտ ճամբայ գտաւ քաոսին մէջէն դուրս գալու համար։

Պայքարի առաքեալը, անզուգական Վարուժանի բառերով, «մարդկային կրքերի փոթորիկից, որուն անունը կեանք է», ամէնէն հզօր կիրքը նիւթ ընտրեր է իր ստեղծագործութեան համար, հայրենասիրութեան հետ համահաւասար.— «Ազատութեան աննկուն տենչը ու նրան կապուած պայքարի մէջ արիութիւնը, ասպետութիւնը, առաքինութիւնը անձնուիրութիւնը, որոնք մեր ողբալի ու դժխեմ դոյութեան մխակ զարդերն են սերոյ հետ»։

Անոր ստեղծագործութիւնը կենդանի մէկ վկայարանն է մեր ցեղային առաքինութիւններուն, տեւականութեան, համբերութեան, քաջութեան, անձնուիրութեան, գեղեցկութիւնը, ճշմարտութիւնն ու արդարութիւնը սիրելուն, և ունեցած անպարտելի հաւատքին։ Տարրեր, ուրոնք իր գործը մեր սահմանափակ միջավայրէն դուրս, միջազգային արժէքներու բարձրութեան եւս կը մօտեցնեն։

Ռոմէն Ռոլան, ֆրանսայի յայտնի գրագէտը, տեղ մը ըսած է. «Ով որ կ'ուզէ կենդանի Աստուածը տեսնել երես երեսի, պարտաւոր է զայն փնտռել ո՛չ թէ իր մտածման պարապ երկնակամարին վրայ, այլ մարդոց հանդէպ զգացած սէրին մէջ։»

Այս խօսքին ուժը գերազանցօրէն ղգայ մեր դրագէտը։ Սիրեց մարդկայկը, իր աշխատանքին, յոգնութեան ու քրտինքին, իր պարտութեան ու յաղթութեան մէջ. սիրեց արհեստաւորն ու մշակը, իրենց հոգիի պարզու-

թեանը մէջ։ «Տառապանքը միշտ կ'ընկերանայ խորունկ սրտի մը և արձա-կունակ միտքի մը, կ'ըսէ Ռասքոլնիքով, Տօստոեէվսկիի հերոսներէն մէկը։ Ինծի կը թուի թէ մեծ մարդիկը պէտք է մեծ տխրութիւն մը զգան այս երկրին վրայ։»

Անիկա գիտցաւ տառապիլ ու երկունքով արտադրել, որովհետեւ իրա-պէս խորունկ սիրտ մը կը կրէր, սիրտ մը, որ իր ցեղին առաքինութիւննե-րը կը խտացնէր, սիրտ մը, որ մարդկային անօրինակ տառանջներուն ի տես, կրցաւ ողբալ ու սգալ, արժանավայել կերպով ու առնական արիութեամբ։

Սրտին ղուգընթաց, անոր միտքը ճախրել գիտցաւ արձակունակ. տո-ւորական ճամբաներէն չի քալեց երբեք. ամբոխային մտայնութիւններու գերի չի մնաց, տրամաբանեց եւ իմաստութեան ճառագայթով հաղորդուե-ցաւ։

Անիկա սիրեց ու գորովով սիրեց մեր հայրենի բնութիւնը, Արարատեան դաշտն ու վեհասլանձ Մասիսները, մեր այգիներուն գեղեցկութիւնները, երկ-նահամարն ու աստեղավառ գիշերները, որոնց կախարդանքէն չի կրցաւ եր-բեք ազատագրել իր արուեստը, իր բոլոր զգայութիւնները քաղեց անոնցմէ, մանուկ հասակէն ապրած ըլլալով անոնց մոգիչ ազդեցութեան տակ։ Այս է պատճառը, որ բնութեան տարրերուն շղթայազերծումը, որուն առջեւ մարդկային անհատը կը դողդոջ անպաշտպան եղէգի մը պէս, նոյնքան վիշտ ու հոգ կը պատճառեն իր հոգիին, որքան մարդոց անարդարութիւնը։

*
* *

Բոլոր մեծ գրագէտները այնչափով իրապաշտ են, որչափով որ կը ներ-կայացնեն բնութիւնը և մարդկային կեանքը, *իրական* մանրամասնութիւն-ներու մէջ։ Ահարոնեանի արուեստը սակայն իր տարրերը կ'առնէ առաւե-լապէս վիպական դպրոցէն, որուն վաւերական ներկայացուցիչն է մեր գրա-կանութեան մէջ, Բաֆֆիէն յետոյ։ «Ռոմանթիզմը, կը գրէ ռուս յայտնի քննադատ Պէլինսկի, չի պատկանիր միայն գեղարուեստին ու բանաստեղ-ծութեան, անոր աղբիւրները այն բանին մէջն են, ինչ բանի մէջ որ են աղբիւրները թէ՛ գեղարուեստին և թէ բանաստեղծութեան, այսինքն կեանքի մէջ։ Ռոմանթիզմը իր ամէնասեղմ և ամէնաէական նշանակութեամբ ուրիշ բան չէ, եթէ ոչ մարդուն հոգիին ներքին աշխարհը։ Մարդուն կրծքին ու սրտին մէջն է ռոմանթիզմի խորհրդաւոր աղբիւրը։ Զգացումը, սէրը ռո-մանթիզմի արտայայտութիւնն են կամ անոր գործունէութիւնը, և ատոր հա-

մար ալ, գրեթէ ամէն մարդ ռոմանթիկ է։ Սակայն, ռոմանթիզմը միայն սիրոյ մթնոլորտին չի պատկանիր. անոր մթնոլորտն է *մարդու ամբողջ ներքին հոգեւոր կեանքը*, հոգիի և սրտի այն խորհրդաւոր գետինը, ուրկէ կը բղխին բոլոր անորոշ ձգտումները դէպի լաւը և դէպի բարձրը, աշխատելով իրենց բաւարարութիւնը գտնել երեւակայութեան ստեղծած իտէալներուն մէջ։»

Իր դերին ու կոչումին հաւատարիմ, վիպագիրը մեզի տուեր է *մարդու ամբողջ ներքին, հոգեւոր կեանքը, հոգիի եւ սրտի խորհրդաւոր գետինը*, նոյն իսկ իր երեւակայութեան ստեղծած տիպարներուն մօտ։ Անոր հոգիներու համայնապատկերը տեսակ մը թանգարան է, ուր քով քովի, դիրք գրաւեր են բոլորը, առանց ցեղի, սեռի և տարիքի խտրութեան. մարդկային խղճմտանքը պատկերացնող բոլոր զգայութիւնները տեղ ունին անոր գրականութեան մէջ և այդ տարրերով կերտեր է արուեստի իր շէնքը։

Հայրենի կարօտի լարին վրայ կը թրթռայ նաեւ մարդկային սիրոյ մեղեդին. անհատական ազատութեան հետ կ'երգէ անիկա համամարդկային իտէալ ազատութիւնը. իր ցեղակցին ու հայրենակցին տառապանքը իր մօտ կը գտնէ նաեւ մարդկային տառապանքին երակը. նախանձի ու ատելութեան, անարդարութեան ու ոգիտութեան զգացումները արցունք կը բերեն իր աչքերուն մէջ, և ուրախութեան ժպիտը կը փթթի անոր ճակտին ու դէմքին վրայ, երբ ականատես կ'ըլլայ մարդկային վերսական գործերու, երբ աշխատանքին օրհնութիւնը կը փառաբանէ, երբ թշուառութեան առջեւ կարեկցութիւն կը զգայ, երբ ուժի, ճշմարտութեան ու գեղեցկութեան սաղմոսը կը քնարահարէ, և երբ մանաւանդ կը թաղուի բնութեան թովիչ ու անտեղիտալի գեղեցկութիւններուն մէջ։

* * *

Ն. Արտենեանի գրականութեան մէջ *բնութիւնը*, իբրեւ տարր, երկրորդ մայր-երակն է, իբրեւ զգայութիւն, որուն կը տպաւակի, ինչպէս թանկագին ու գորովագութ մօր մը, որուն քովնյքէն չուզեր բաժնուիլ։ Անոր բանաստեղծական զգայութիւններուն ներշնչարանն է *բնութիւնը*, ըլլայ հայրենի թէ օտար հորիզոններու տակ։

Եթէ հին օրերու մարգարէները, բնութեան գիրկին մէջ կամ անտառի մը խորը կ'ապաստանէին ու իրենց հոգին կը բանային բնութեան անիմանալի ու անմեկնելի խորհուրդին առջեւ, մեր օրերու մտածողներն ու զգա-

յուն հոգիները նոյն ձեւով, անո՛ր է որ անձնատուր կ'ըլլան, փորձելով հո՛ն գտնել գաղտնիքը գիրենք չարչրկող բոլոր առեղծուածներուն։

Ահարոնեան ջերմօրէն կը սիրէ բնութիւնը։ Ոչ մէայն կը սիրէ, այլ կը հերշնչուի անով։ Իր թոքերը լայնօրէն կը բանայ անտառներէն ու լեռներէն փչող հովերուն առջեւ։ Անոր արիւնը աւելի ուժգին շրջան կ'ընէ, մարմինը կրակի մը պէս կը բորբոքի և ուղեղը կը գործէ ղեկի խորհուրդին ապրեցնողները արշաւելու համար։

«Այժմ ապրում էի մի տեղում, կը գրէ, ուր բնութիւնն ինքը մի սքանչելի երազ լինէր ասես, և ուր մարդկութեան հոգին, ծարաւի և յուզում՝ դողում էր գեղեցկութեան ներդաշնակութեան սքանչելի գաղտնիքի առաջ։»

Ահարոնեան երազող, գեղապաշտ ու բնութեան սիրահար է։ Կը սիրէ թափառիլ լեռները, չափել լայնարձակ հորիզոնները, գլխու պտոյտ պատճառող ահաւոր բարձրութիւններէն վար, անունդները դիտել։ Բանաստեղծի հոգի ունի և զգայուն հոգի, որ բնութեան խորունկ վիշտովը կը համակուի։ Կը բաղձայ երազել անոր պէս, լռութեան մէջ, փայփայել ու դուրգուրալ անոր վրայ, ժպտիլ ու լալ անոր հետ։ Այս անկարելի երազին ախտաւորն է եղեր միշտ, հաւատալով որ բնութեան ամէն մէկ երեւոյթի մէջ գոյութիւն ունի գեղեցկութիւնը և վհատուած երազը։ Կը սիրէ ձորերու խուլ լռութիւնը, և անտառներուն շշուկը, թռչուններուն երգը, ջուրերուն կարկաչը, խոտերուն փսփսոցը և զեփիւռին սլսլոցը։

Անիկա մխամիտ յափշտակութիւններ և երեւակայութեան խոյանքներ ունեցաւ։ Ոչ մէայն «անուղղելի երազողը» մնաց, ինչպես ինքզինքը կ'որակէ, այլ արդարութեան ու ճշմարտութեան յաղթանակին համար, պահեց միշտ գաղափարապաշտի իր ջերմ հաւատքը։ Այս տարրերը բանաստեղծի իր խառնուածքին անմիջական արդիւնքն էին, որոնցմով կը յուսար մարակել մարդոց հոգիներուն տենչերը, և անոնց ուղղութիւն տալ։

Անոր սիրտը կը ճմլուի, երբ կը տեսնէ վանդակին մէջ կծկուած թռչուն մը, կիսախաւար սենեակին մէջ թօշնող ծաղիկ մը, ժայռերու խուռչին մէջ լացող ու ոռնացող վտակ մը, իր ցցին առջեւ շղթայակապ կաղկանձող, ցաւագինօրէն ճչացող շուն մը, ինչպէս նաև մտածող ու զգայող մարդ էակը, բանտին մէջ շղթաներու զարնուած ... ։ Բոլորն ալ բնութեան զրկին մէջ ծնած, մեծցած ու արեւին կարօտովը տոչորող զեղեցկութիւններ ... ։

Ինչպէս տեսանք երազն ու երեւակայութիւնը իր արուեստին ստեղծագործծող տարրերն են, որոնցմէ չի կրնար բաժնուիլ իբրեւ վիպագիր։ Մանաւանդ բնութեան գրկին մէջ երազը, որ կը գգուէ յոգնած ուղեղները և

որոնող ճակատները։ Անոր երազը կը թափառի բնութեան ամէն մէկ երեւույթին վրայ. «Երբեմն ինձ թուում էր, կը գրէ Լոութիւնը վեպին մէջ (էջ 10) թէ իմ փնտռած երազը մարմնացած է մի գեղեցիկ թռչնի, մի թիթեռի, մի ծաղկի մէջ։ Թռչունը բարձրումն էր, թիթեռը բռնել չէի կարողանում, միայն ծաղիկն էի քաղում, նայում, խաղայնում ձեռքիս մէջ և ապա փետուռ ու թերթիկները քամուն տալիս։ Ես նայում էի փախչող թերթիկներին, որոնք գնում էին ո՞վ գիտէ ուր, և ողջ բնութիւնը իր արտաքին գեղեցկութեան տակ պառնում էր իմ աչքին մի հսկայական գերեզման, ուր մի կոյր անգիտակից ոյժ յեղյեղւում էր վեհօրէն, ստեղծում էր ու փշրում, ծնում էր և չնչում չգիտես ինչո՞ւ համար։ Բնութեան երազը բռնելու իմ անզօրութեան մէջ՝ ես վհատուած ու մռայլ, յաճ էի իջնում դէպի դաշտերը, ուր չարքաշ կեանքը եռում էր մի անխորհուրդ թափով՝ կարծես դարձեալ անգիտակից ու անտարբեր դէպի անխուսափելի վախճանը։ Ես էլ այդ կեանքի մի մասն էի, նրանից անբաժան։»

* * *

Առանց իմացական տարրին, ինձի համար անըմբռնելի է ո եւ է ստեղծագործութիւն, գրականութեան ո՛ր սեռին ալ որ պատկանի։ Անիկա գոյութիւն ունի նախնական դարերու իմացական գանձերուն մէջ այնպէս, ինչպէս ժամանակակից բոլոր արտադրութիւններուն մէջ։ Անոր ներկայութիւնը գեղարուեստի բոլոր ճիւղերուն ուժ ու գեղեցկութիւն կու տայ, կը ներշնչէ, և արուեստագէտին որոնումներուն համար առաջնորդող լապտերը կը դառնայ։ Առանց այդ տարրին, առանց այդ լուսաւոր միջնորդութեան, ո՛չ մէկ արուեստագէտի հոգի թռիչք պիտի առնէր, ապաւինելով միայն զգայումներուն։ Նկարիչը, քանդակագործը, երաժիշտը, ճարտարապետը և գրագէտը անկարող պիտի ըլլային գոյն, ձեւ, վանկ ու բառ գտնելու, յօրինելու համար իրենց հոգիին անգիտակից աշխարհին մէջ մարմին առնելու կոչուած, բոլոր պատկերները, առանց իմացական տարրին օժանդակութեան։

Ակարոնեանի գեղարուեստական ստեղծագործութեան մէջ արհամարհուած չէ այս տարրը, և զգայութիւններու փոխորիկին մէջ, իր վճռական դերը կատարեր է։

Բոլոր խորհրդածութիւնները յատակութեամբ ըսուած են հոն։ Գրագէտը ամէն բան յստակ ու պայծառ տեսնելու ձիրքն ունեցեր է։ Տրամաբանութիւնը թոյլ չէ տուեր իշնալու սայթաքումներու, երեւակայութեան անխոր-

հուրդ խաղերուն մէջ։ Իմացական տարրը նպատակ մը չէ եղեր երբեք, տարւելու համար բնազանցական խորհուրդին գիրկը, հրաժարելու համար իրական կեանքին թելադրութիւններէն։ Մտածումը կը յայտնուի մի՛շտ հոն, ուր որ արուեստագէտը մարդկային տկարութիւն մը կը դգայ կամ գեղեցկութիւն մը կը տեսնէ։ Երկու պարագային ալ, իմաստասէրի խոր յուեւեսութիւնը շա՛տ քիչ դեր կը խաղայ Ներսնեանի դրականութեան մէջ։ Այդ տարրին կը դիմէ այն ատեն միայն, երբ շեշտել կ՛ուզէ մարդկային տառապանքը։ Իրերու և էակներու վախճանականութեան կը նայի բանաստեղծի մը հոգիով, որ կ՛երգէ քաղցրութեամբ ու գորովով, և իր ներքին ցաւը հայելիացած կը տեսնէ արտաքին աշխարհի իրերուն վրայ, հաւատալով, որ բարեշրջութեան սիեզերական օրէնքին ենթակայ է ամէն երեւոյթ անխուսափելիօրէն։

Ինութիւնը կը սիրէ կարօտակէզ հոգիով, ու իր ցաւը կը խորանայ, երբ գարնան ու ամրան լիալիր գեղեցկութեան կը յայտնուին աշնանային դալկութիւնն ու ձմրան տառնամանիքը, ճիշդ ինչպէս պատանեկութեան ու երիտասարդութեան կը յայտնուին անտեղիտալիօրէն չափահասութիւն եւ ծերութիւն։ «Վհատեցուցիչ ու անյոյս մի բան կայ այդ մերկ եւ լալկան ծառերի, կը գրէ տեղ մը, այդ գունատ տերեւների, նրանց օրհասական, խղճուկ խշշոցի մէջ. ամէնքը կարծես հաղիւ լսելի մրմունջով լուռ լալիս էին իրենց մահուան ցաւը գորշ հողի գրկում...։»

Անմահութեան գաղափարին կը հաւատայ բարեշրջութեան ճանաչ տեսութեանը համաձայն, թէ նիւթին ձեւը կը փոխուի միայն, առանց բան մը կորսուելու։ Մեկը միւսին կը յաջորդէ և կեանքը իր գնացքն ունի յաւիտենօրէն։

Կարօտ հայրենի հատորին մէջ տեղ մը կը կարդանք.

Ջայներն են եռում բարձր ոլորտում
Եւ ամէն մի ինչիւն՝ Թրթռուն պատգամ
Թէ՝ «կայ, կայ, անցնողը միշտ կայ»...
Աճիւնների վրայ կեանքը կայ յաւէտ,
Ոչ ոք չի մեռել աստղերի ներքոյ,
Ամբար-աշխարհում գերեզման չը կայ,
Մեռելութիւնը դալուկ օրօրան ժայթքող ժպիտի,
Լաց ու խնդութիւն միեւնոյն երգն է,
Եւ տիեզերքում ուրիշ երգ չը կայ։

Այսպէս խորհող Էակը, իր վերջին մխիթարութիւնը կը գտնէ մայր բնութեան գրկին մէջ, ու փա՛ռք կու տայ անոր.

փա՛ռք քեզ մայր բնութիւն, դու միայն գիտես
մեր ալիքների արծաթ շողերով
մաիը զարդարել, եւ անէութեան
սարսափը մեղմել մշուշոտ քօղով:

Անխուսափելի վախճանին գգայութիւնը, արուեստագէտին ամէնէն տանջող ու հոգեհան հարցն է, որուն կը յանգին բոլոր մտածողները, բանաստեղծներն ու արուեստագէտները:

Ահարոնեանի ծօս, այս տարրը շատ անգամ կը գրաւէ անոր ամբողջ էութիւնը, դերակշռելով միւս բոլոր գգայութիւնները, որոնք կը բղխին վիպագրին հոգիէն:

«Տիեզերքի մէջ երեւի ամէն ինչ մահ ունի... անմահը միայն տառապանքն է, որ կապուած է մարդկային խղճուկ ճակատագրի՛ն... մեռնում են, մեռնում ամէնքը... ի՛նչ լաւ է, որ աստղերն էլ են մեռնում, թէ չէ մենակ մեր մահը սարսափելի կը լիներ:» (1)

Գգայուն վիպագիրը կը խորհի, որ անդօր ու ողորմելի ենք այդ անծանօթ ուժին առջեւ:

Կայ կոյր դիպուած մը, մեզի համար առեղծուածներով լեցուն ու խորհրդաւոր, որ իր տրամաբանութիւնն ունի, իր զարմանալի բանականութիւնը, որ կը քալէ դէպ ի մութ նպատակներ, բոլոր անհատներուն բախտերը իր ձեռքին մէջ, իբրեւ արիւնոտ շաղախ գործածելով: «Շաղա՛խ են, շաղախ, ե՛ւ սէր ու բոյր, կեանք ու արեւ, յոյզեր ու յոյսեր, ծիծաղ ու արցունք, երիտասարդութիւն ու վայելքներ, երազներ ու ցաւեր, ողջ շաղախ են լոկ մի յաւիտենական շէնքի, որի ինչ լինելը չգիտենք, և որը շինւում է շինուո՛ւմ, բայց վերջ չունի:»

Այս անթափանցելի դաղտնիքին առջեւ, երազող վիպագիրը իր հաւատարակշռութիւնը կորսնցնելով, կը տարուի երբեմն յոռետեսութեան ալիքներէն. կը զգայ սակայն, որ ճշմարտութեան ճարաւը չի յագեցնար երբեք, ու մեղի վիճակուած է «անյոյս տխրութիւն ու յարատեւ թախիծ»: Մեր հոգիներուն մէջ բոյն դրած այդ թախիծը, մեր գոյութեան մեծ իմաստը հասկընալու բուռն ու անվախճան այդ տենչն է պատճառ, որ մենք կապուինք

---

(1) Լուսինը, էջ 119-120:

երազի ու երեւակայութեան, օրօրուելու համար պատրանքներով։ Կեանքին անցողական հաճոյքներն ալ իրենց մէջ ուժը ունին մեզ հրապուրելու և մեր ականջներուն փսփսալու, թէ «կեանքը միայն ցաւին չի պատկանիր»։

Ջիրար չէզոքացնող ու ամբողջացնող այս զգայութիւնները կը բերեն արուեստագէտն եզրակացութեան մը, ըսելու համար, թէ «բնութեան մէջ մարդկային հոգին աղմկող բոլոր իրական յոյզերն ու յանկութիւնները ջնջուած են, մնած է միայն մի հատիկ բուռն տենչ, — խառնուել անպառնալի կերպով շուրջդ փսփսացող գաղտնիքին, ապահ շրթունքներով ծծել նրա թագցրած ճշմարտութիւնը և ջնջուել՝ ինչպէս Նիրվանայի մէջ, մոռացութեան ու ոչնչութեան ծոցում»։

Այս իմաստութեան կը յանգին մեր անզօրութիւնն ու համակերպութիւնը, և ճաշակուած դառնութիւնը կը մղէ մարդկային արարածը ապաստանելու խորհուրդին ու հայեցողութեան գիրկը, թափառելու համար շատ անգամ անապատներուն մէջ . . .։

* * *

Աշխարհի ունայնութեան, աշխարհի անցաւորութեան անսիրտ ու անողորմ փիլիսոփայութիւնը կնճռոտեր է անոր ճակատը, գիտակցութեան առաջին օրէն։ Կեանքը ապուշ ու անմիտ է թուեր երբեմն, խորհելով որ մարդը կը ծնի, աշխարհ կու գայ, հանելով մտքի այն վիճակին, որ ակնթարթի մը մէջ կորսուելու, յաւիտեան կորսուելու պատապարտուած է . . .։ «Բոլորս կ'երթանք, բոլո՛րս . . . կ'երթանք լո՛ւռ, լո՛ւռ . . . խակի միտք ալե՛լ ես, ա՛յ, հարիւր տարի յետոյ, ո՛չ ոք . . . մեծ, փոքր, մարդ ու կին, աղքատ ու հարուստ, բաղդաւոր ու անբաղդ, իրենց դարդ ու ցաւով իրար յետեւից շարան շարան կ'երթան, կ'երթա՛ն, կ'երթա՛ն . . . ու էլ խակի յետ չեն գայ . . .»։

Ո՞վ կրնայ հասկնալ, թէ ինչո՞ւ համար Աստուած կը լացնէ այն, որ պիտի խնդար, ու կը խնդացնէ այն, որ պիտի լար . . .։ Ինչո՞ւ կը մեռնի մանուկը մօր արգանդին մէջ և ծաղիկի պէս կոյսը՝ կեանքը չի տեսած . . .։ Աստուծոյ, տիեզերական ուժին կշիռքը ո՞վ տեսեր ու չափեր է . . .։

Այսպէս կը սրամաբանէ Ահարոնեանի *Խաւարին մէջ* վիպակին աշուղ Սարհատը, ցոյց տալու համար Թաթուլին մոտենալու ուրիշ եղանակ մը։ Թաթուլ հաւատացեր է այն Ուժին, աղօթեր է այն Աստուծուն, որ անտէրին ու թշուառին ձեռքէն բռնած, ոտքի կը հանէ, արդարը կը պաշտպանէ, կը հարուածէ չարը ու կը փշրէ անարդարութեան մէջքը։ Իր միակ զաւկին աչքերը կուրցնող Աստուածն է որ կը փնտռէ մխամտաբար . . .։ Դժբախտ

մարդ-արարածը կու գայ այն եզրակացութեան, որ «մխեւնոյն չէ՞, ով և լինի, նա սարսափելի է, նա խորտակիչ է, անիրաւ է, անարդար, — նա զուլումի մայրն է. նա ինքը զուլումն է...»: Անոր համար ամէն բան սուտ է, ամէն բան, աշխարհը, արեւը, երկինքը, ես ու դու, մարդիկ, հոգի, հաւատք, ամէն բան սուտ է: Քարտաշ Թաթուլը կը փնտռէ այդ ուժը, Աստուածը ամէն կողմ ու չի գտներ... բողոքելու համար Անոր, թէ ինչո՞ւ կը խլէ իր պաւկին աչքերուն լոյսը. «Քեզ ի՞նչ պէտք է անմեղ երեխայի երկու շողը, ՏԷ՛ր, ի՞նչ է քեզ համար երկու շող. չէ՞, ասում են դու ո՞ղջ լոյս ես, ինչո՞ւ ես խաւարեցնում իմ վիրաւոր, իմ ծառուած կեանքը...»: (1)

Խորհող գրագէտին համար այդ ուժը, բնութեան մէջ գործող այդ անբացատրելի գոյութիւնը կոյր, համր ու խուլ է դէպ ի զոհերուն տանջանքը, անոնց հեծեծանքն ու հոգեվարքի գալարումները: Անդիտակից է այդ ուժը ու անտարբեր, դէպ ի գոյացութիւնները...: Իր տարակոյսներուն ամպն ու մըշուշը փարատելու համար, տրուած հարցումներուն հետեւեալ պատասխանը կը գտնէ.

Աստուած ի՞նչ է որ
Թռթռուն մշուշ,
Արեւ ու աստղիկ,
երկինք ծուատող ամպրոպ աիաւոր,
Շանթող օձի պէս կայծակի քեկբեկումն,
Թելագար քրքիջ անսանձ մրրկի,
ցաւիտենական լաց,
Մի անծայր տնքոց, որից դողում էր մեր դուռ ու հերդիկ: (2)

Ուժ-Աստուածն գաղափարը տարածելով այսպէս բնութեան մէջ, կը հաւատայ, որ

Ամէն մի հասկ՝ արեւի մի շող,
Մի լոյս մտածումն է անյայտի խորքից.

և դիտակցութեան այս յստակ ու տրամաբանական եզրակացութեան գալով կը հաշտուի.

Ափսոսանք չունիմ, ոչ տրտունջ ցաւի.
Աստուորից անդին պատրանք է գունատ.

հաճոզուած ըլլալով, որ մեր գոյութիւնը բնութեան մէկ չար հեգնութիւնն է,

(1) *Ա. Ահարոնեան*, Խաւարին մէջ, էջ 81:
(2) *Ա. Ահարոնեան*, Կարօտ Հայրենի, *Հատուած՝* Հայրենի տուն:

երբ մարդն այնքան աննշան տեղ բռներ է այս զարմանահրաշ տիեզերքին մէջ...: Մարդը, որ ապրելու բոլորովին տարբեր ըմբռնում մը ունի: Ցեղն է կրկնելու, որ վայրկեաններ կան, որոնք յաւիտենականութիւն կ'արժեն իրենց որակով. ի՞նչ է արդէն մարդոց վիճակուած սովորական կեանքի մը տեւողութիւնը՝ ժամանակի, տարածութեան ու անհասանելի միջոցին մէջ...: «Նայեցէ՛ք այս թիթեռնիկներին, կը գրէ Մոխիրների տակից վէպին մէջ (էջ 204), նայեցէ՛ք սրանց, ամէնքն էլ խուռներամ ու խելայեղօրէն դիմում են դէպ ի բոցը, իրար հրհրում, իրարից առաջ են անցնում և... այրուած թեւերով վար են թափւում ու մահանում, և նրանք յաւիտեանն ապրում են մի վայրկեանում...: Ողջ տիեզերքը քրտինքի մի կաթիլ է, որ եռում ու բեղմնաւորւում է անհունի ծոցում...:»

Հաշտուելով այսպէս կեանքի ու մահուան անխուսափելի երեւոյթներուն և տիեզերական անբացատրելի հոլովոյթին հետ, կ'ընդունի որ կեանքի իսկական պսակը մահն է, եթէ անիկա կու գայ իտէալի յաղթանակէն յետոյ. հետեւաբար բարի է իր գալուստը: Զարհուրելի է մահը, երբ ան կու գայ յուսաբեկութեան ու պառնութեան փոշիները ցանելով մեր ճամբուն վրայ: «Զաւարտուած կեանքի ու գործի վրայ թառող մահը տանելապատիկ աւելի դաժան է և անգութ:»

Ի՞նչ կարելի է եզրակացնել ուրեմն: Այն որ անխուսափելի ծնունդներէն յետոյ, անհատներէ կազմուած մարդկային զանգուածներուն համար, մէկ միջոց կայ դիմաւորելու անխուսափելի մահուան գաղափարը.—

Ունենալ իտէալ մը,

Հաւատալ անոր յաղթանակին համար թափուած ճիգերուն,

Եւ հաւատալ նաեւ ճշմարտութիւնը փնտռող մարդկային ճիգերու գեղեցկութեան:

*
* *

Իր արուեստին ու ճարտարապետութեան համար ուրի՛շ տարրեր ալ ունի անիկա:

Ինքնատպութիւնը նախ իր ոճին, և մտածումին պարզութիւնը: Մի՛շտ կորովի և գունագեղ, երկաթագործի մը մուրճին չափուած ու ճեւուած հարուածներուն պէս, անոր բառերը սալին վրայ կ'իյնան ու կայծեր կը ցանեն չորս կողմը:

Ոճը պարզ է և ուժգին, պատկերաւոր ու ներդաշնակ, տպաւորական ու ժողովրդական: Գրուածքին ճիւթիւնն ու կարգը, ներդաշնակութիւնն ու չա-

փը միշտ յարդուած են իր ճօտ, և արուեստի այս պահանջներուն հանդէպ շատ քիչ անգամ մեղանչեր է ան։ Այս տարրերով, անոր գրականութիւնը, անոր արձակը կատարելութեան հասնող սիրալիր արձակն է։

Խորապէս կը ճանչնայ այն գործիքը, որով կը զգայ, կը մտածէ, կ'երեւակայէ, կ'երգէ ու կը ճառէ, որովհետեւ չի բաւեր ունենալ գաղափարներ, զգացումներ ու երեւակայութիւն, այլ պէտք է ճանչնալ լեզուն, իր գանձերն ու ալքիւրները։ Ահարոնեան կը ճանչնայ նաեւ մեր ժողովրդական արարատեան բարբառը։ Ապրեր է հայ գիւղը, և հայ մարդոյ մէջ, ու այդ միջավայրին բոլոր հարստութիւնները իւրացուցեր է։

Անոր լեզուն արեւելահայ ու արեւմտահայ կենդանի բարբառներուն միջեւ կամուրջի դերը կը կատարէ։ Անոր լեզուն և բառարանը ընդունակ են ամէնէն բարձր յղացումներն արտայայտել, գրական և դեղարուեստական, իմաստասիրական ու պատմական նիւթերուն տալ համապատասխան ճկունութիւն, գնացք, շեշտ ու կենդանութիւն։ Նարեկացիին պէս, որ Աստուծոյ դովքը երգելու և իր հոգեդէնի մեղքերը թուելու համար ահաւոր ու անտիպ բառերու փոթորիկ մը կը թափէ թուղթին վրայ, որ կը զգուշանայ ածականներուն կրկնութենէն, միշտ ինքնատիպ մնալու մտահոգութեամբ, Ահարոնեան եւս թափ կու տայ իր երեւակայութեան, կը բանայ մտքին գանձարանները ու քովէ քով, իրարու ետեւէ մարգարիտի ու ադամանդի պէս կը շարէ մեր լեզուին թանկագին գանձերը, պատկերալից բացատրութիւնները, վերադիրները, այլաբանութիւնները մանաւանդ, որոնցմով իր արուեստը կը բանայ նոր հորիզոններ, ճոխ երանգապնակով մը։

Դաղափար մը տալու համար, ահաւասիկ քանի մը օրինակ։ Նախ Մահիսին համար. «Հայոց աշխարհի հսկայ նահապետ, ասպարկու վարպետ, խօլական արձան, աստղերի կայան, փոթորիկներու տէր, մրրկի Աստուած, հովիւ ահարկու, արքայ Մասիս, մեր արքայ, վիթխարի հսկայ, հսկայ մտածումն, տիտանեան հոգի, սոսկալիթխար լեռ, տիտան մերունի, վիթխարի հովիւ, անքուն պահապան Հայոց աշխարհի»։ Ու յետոյ Արարատեան դաշտին համար, կը կարդանք հետեւեալ քանի մը որակականները. «Դեղանի դժխոյ Հայոց աշխարհի, հայրենի դաշտ, անբիծ խանձարուր իմ արդար յեղի, ոսկէ օրօրան, շքեղ անուրջ, դիւթական պարտէզ Հայոց աշխարհի, հրաշագեղ դաշտ, երբեմնի բեհեզ ծաւալուն, հին հին օրերի հովուերգութիւն, բնութեան տաճար, աղօթքի տաճար»։

Շնորհիւ լեզուի խոր հմտութեան ու գիտակցութեան, Ահարոնեանի ոճը և ճարտարապետութիւնը կը մնան դասական ու վիպական, առանց երբեք

ունենալու արդիական արուեստին ծայրայեղութիւնները, երբ ժամանակակից հայ միտքը առհասարակ ինքզինքն ազատ կը զգայ լեզուական, քերականական ու համաձայնական ընդունուած տրամաբանական օրէնքներէն, որոնք իրենց վրայ կը կրեն մեր ցեղին դարերու ընթացքին ունեցած ճիգերուն կնիքը։

Անոր գործածած բառերը կարելի է ըսել թափանցիկ են. ընթերցողը կը տեսնէ բառերուն գոյնը, ձեւը ու կը զգայ ծանրութիւնը։ Ոչ մէկ գրաբէի մօտ հայ լեզուն ա՛յնքան երաժշտական է ու չափածոյ, որքան Ահարոնեանի մօտ, որուն նախադասութիւնները զրեթէ միշտ կարճ են ու կը հպատակին արուեստի պահանջներուն, — կարգ ու կանոնի, միութեան ու ներդաշնակութեան։

Հակառակ միջնակարգ ու համալսարանական բարձրագոյն կրթութեան, հակառակ երկար տարիներ արեւմտեան երկիրները ապրելուն ու միջազգային քաղաքական ու գրական դէմքերու հետ շփման մէջ գտնուելուն, հակառակ զանազան ժողովուրդներու բարքերուն ու նիստ ու կացին ծանօթանալուն, Ահարոնեան կրցեր է պահել, թէ՛ իր գրականութեան և թէ՛ իր խօսակցութեան մէջ, իր հայրենիքին, իր ծննդավայրին շունչն ու շեշտը, հոգին ու մարդկային ներքին աշխարհը, ա՛յնքան հարազատութեամբ, որ նոյն իսկ, երբ իր մտքին ու զգացումներուն թռիչքը կը հասնի բարձրագոյն սահմաններու, անիկա կը մատնէ ժողովրդական այն տեսակ մը կենդանութիւնն ու ջերմութիւնը, որ իր ստեղծագործութեան յատկանիշը մնաց։

Անիկա հաւատարմօրէն պահեց իր հոգիին մէջ մեր միջավայրին, հողին ու արեւին գոյնն ու բոյրը, ձայնն ու շարժումները, հայ մարդուն հոգիին բուռ՛ը տարրերը։ Ստար հորիզոնները չի խաթարեցին գիծերու այս հարազատութիւնը. անիկա ինքզինքը միշտ կապուած զգաց հողին ու արեւի մարդուն, անոնց՝ որոնք Մասիսներու ստորոտները, Արարատեան դաշտին վրայ, ու Արաքսի ափերուն երկայնքին քրտինք թափեցին ու ստեղծագործեցին։

.....

ՄԱՐԴԸ

ԳՐՋԻՆ ՀԱԽԱՍԱՐ՝ ԽՕՍՔԻՆ ՈՒԺԸ.— ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԸ.— ՄՏԱԾՈՂ ՄԱՐԴՈՒԻՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻՆ ՊԱՅՔԱՐԸ.— «ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԱՄԱՐ».— ԿՌՈ՛ՒՆԿ... ԾԱՌԱՅ ԵՄ ՋԱՅՆԻԴ.— ՄԵՐ ԱՇԽԱՐՀԸ... ՄԵՐ ԼԵԶՈՒԻՆ.— ՓՈՔՈՐԻԿԻ ԲՌՆՈՒԱԾ ԹՌՉՈՒՆՆԵՐՈՒՆ ԵՐԱՄԸ.— ՎԵՐԱԳՆԱՀԱՅՈՒՄՆԵՐ.— ՏՐՈՐՈՒՈՂ ԿԱՀԸ.— ԲԱՆՈՆ-ՑԻՆ ՈՒ ԱՍԻԱՆՑԻՆ.— ՄԱՍԻՍԸ ԱՆՄԱՀ Է.— ԵՐԱՋԸ.—

Մարդը բնութեան ամէնէն տկար մէկ եղեգն է, բայց խորհող եղեգ մը:

ՓԱՍՔԱԼ

Մարդը բնութեան մտածող ֆայելին է:

ԼԱՄԱՐԹԻՆ

Շատ քիչ անգամ գրիչն ու խօսքը հաւասար ուժգնութեամբ ու հաւասար բարձրութեամբ կը ներդաշնակուին միեւնոյն անձին մէջ։

Մենք ունեցեր ենք խօսքի ու հռետորութեան վարպետներ, որոնք երկու նախադասութիւն շա՛տ ուժուարութեամբ կրցեր են քով քովի շարել։ Ընդհակառակն, ունեցեր ենք նաև գրչի ու գրականութեան վարպետներ, որոնք խօսելու մէջ, իրենց տկարութիւնը զգացեր են։

Ակարոնեանի մէջ, հռետորն ու արուեստագէտ գրողը հաւասար արժանիքներով զիրար կը գերազանցեն։ Ուրիշ խօսքով, Ակարոնեանի մէջ գրելու բնածին յատկութեան քով, հասակ առեր է նաև անոր խօսողի կարողութիւնը։ Եթէ առաջինը նուիրուած է բնութեան երգին ու մեր ժողովուրդի ֆիզիքական ու հոգեկան կեանքին, երկրորդը նոյնպէս զարգացեր է նոյն ժողովուրդին գաղափարական քարոզին ու հանրային դաստիարակութեան համար։ Բազմութիւններն անոր խօսքին ուժին ենթարկուած են այնպէս, ինչ-

ալէս մտաւորականներն ու առհասարակ բոլոր ընթերցողները սիրած են անոր ժողովրդական գրականութիւնը։

Այս է եղեր պատճառը, որ երբ հրապարակախօսը բեմին վրայ երեւ-ցեր է, խելայեղ ծափահարութիւններու փոթորիկ մը պայթեր է։ Ամբողջ սրահներ, ականջ կորած ու տեսողութիւն դարձած, սրտատրոփ սպասեր են անոր կախարդող բառերուն ու գաղափարներու հեղեղին, որոնք «թեւաւոր ու բոցոտ», մի՛շտ տիրական դարձեր են ժողովուրդին վրայ։

Ահարոնեանի ունկնդիրները կը զգան, որ «խօսողը նրա շրթունքները չեն, այլ սիրտը, անհանգիստ ու տառապող սիրտը, որ հառաչանքով ու կրքով կախուած է ամէնքից ու ամէն ինչից, որ թերեւս յոյս, օգնութիւն կարող է տալ իր մարտիրոսուող ցեղին։ Ուխտաւորի խորհրդաւոր ուժն էր նրա ձայնի մէջ, նրա դէմքին, և խօսակիցը կամ ունկնդիրը, իսկոյն զգում էր, որ այս խոհական մարդու բառերը սովորական չեն, և գալիս են մի աղբիւրից, որ միայն բարձր հոգիներին է մատչելի։» (1)

Այն ինչ որ իր անզուգական ուսուցչին համար գրի առած է Ահարոն-եան, կատարելապէս կը պատշաճի արժանաւոր աշակերտին. «Նրա հոգին նոյնացած է Հայաստանի հետ։ Հայրենիքի տառապանքը իր հոգու ամէնօր-եայ տառապանքն է, և իր ալեծուփ կեանքի գեղեցկութիւնը։» (2)

Իր ունկնդիրները մի՛շտ մագնիսացած դրութեան մը մէջ պահելուն, անոնց հոգիները, սիրտերն ու միտքերը տիրապետելուն գաղտնիքը գիտցաւ։

Զգացումներուն տիրապետելով էր, որ շնորհիւ իր գրականութեան և հռետորական արուեստին, մարդկային մտածումը առաջնորդեց ուղուած կողմը։

Խօսեցաւ թէ ժողովուրդին և թէ մտաւորական դասին։ Սիրեց ընդու-նիլ հրաւէրը նոր թեւ առնող ու թռիչք փորձող երիտասարդութեան, որուն պաշտամունքին առարկան մնաց մինչեւ այսօր։ Առաջիններուն խօսեցաւ հայրենիքի կարօտէն և մարդկային տարրական իրաւունքներուն և ազատու-թիւններուն մասին. պատմեց դարերուն հէքեաթը, ոգեւորեց ժողովուրդը պայքարի անունով, որ միակ ազդակն է ապրելու իրաւունք ձեռք բերելու համար։

Խօսեցաւ նաեւ նոր սերունդին, հայրաբար ու եղբայրօրէն, քաղաքա-կրթութեան ու արուեստներուն մասին, այն լոյսին, որուն դասական հայրե-նիքն է արեւելքը, մեր արիական ժողովուրդին բնակավայրը։ Փառաբանեց

---

(1) *Ա. Ահարոնեան*, Քրիստափոր Միքայէլեան, *Պոստոն*, 1926։

(2) *Նոյն*, էջ 137։

դեղեցկութիւնը, արդարութիւնն ու ճշմարտութիւնը, որոնց երազովը տոչորուեր են մեզմէ առաջ եկող ու գացող բոլո՛ր սերունդները։ Անիկա քաջալերանքի, յոյսի ու հաւատքի իր ազդու, համոզիչ ու վստահ խօսքը ըսաւ երիտասարդներուն ու որքերուն, ամէն անգամ որ անոնք դեղեւկոտ քայլեր ուներ էին։ Ամսագիր Երկունքի առաջին թիւին մէջ կը գրէր.

«Դո՛ւք, իմ աստանդական, իմ վտարանդի զաւակները, Հայաստանի Որբուկներ, դուք սիրուն ծիլեր մեր նոր անդաստանի, մեր խորտակուած անտառի հարուստ բողբոջնե՛ր, առաջին ցոլքերը մեր ծագող արշալոյսի, ահա ձեր պատկերն իմ հոգումն է և կեանքս՝ ձեր կեանքն է և շունչս՝ ձեր շունչը, վասնզի դուք էք հաւատքիս անխորտակելի, անսասան սիւները։

«Մեր ազատութեան հզօր երգը ձեր արդար ու մաքուր շրթներէն պիտի հնչէի և ձեր բեղուն քրտինքով ու կուռ բազուկներով պիտի վերստին բողբոջի, ուռճանայ և պտղաբերի Հայոց Աշխարհն։

«Շեփորեցէ՛ք, շեփորեցէ՛ք յոյսը հայրենիքի, փառքը հայրենիքի, կարօտը հայրենիքի, դուք իմ Հայաստանի վաղուան բողբոջներ։

«Երբ դուք կաք ու այդպէս կաք, Հայ Հայրենիքը կայ ու կ'ապրի։»

Իր հաւատաւոր պատգամը շեփորեց մեր հայրենիքի վերջնական ազատագրութեան համար։ Ուր որ գնաց, որ բեմին վրայ որ երեւցաւ, իրեն հետ տարաւ քաջալերութեան, ոգեւորութեան ու գիտակցութեան կենդանի խօսքը. մանաւանդ աշխատաւոր դասակարգին ունենալիք տնտեսական աւելի նպաստաւոր պայմաններուն մասին միշտ լաւատես եղաւ։

Ինչպէս իր գրականութեան մէջ, հռետոր Ահարոնեան չի փնտռեց բառեր ու գաղափարներ, ընտրելու համար անոնց գեղեցիկները. ճիգ չըրաւ երբեք։ Եթէ գրողն իրաւունքն ունի կրկին ու կրկին անգամ փորձի ու սրբագրութեան ենթարկելու իր առջեւ տարածուող էջերը, հռետորը, բեմին վրայ և ամբոխին առջեւ, ա՛յդ իրաւունքէն ալ զրկուած է. անիկա ո՛չ ժամանակ, և ոչ ալ պատեհութիւնն ունի, իր խօսքերն ու գաղափարները փնտռելու կամ կշռելու, եթէ աղբիւրի մը պայծառութեամբ ու առանց ճիգի դուրս չի հոսին անոնք։ Անոր բազմաթիւ հրապարակախօսութիւններն ու արտասանած ճառերը, մէկ մէկ գրական գլուխ–գործոցներ են, իրենց ներդաշնակութեամբ, պարզութեամբ, գեղեցկութեամբ ու իմաստով։

Արձակին պէս, երաժշտական է նաեւ անոր խօսքը, կշռաւոր ու չափով։ Ներշնչուած մարգարէներու պէս, արամազդեան աչքերով ու հպարտ ճակատով, անգամ մը հորիզոնը չափելէ յետոյ էր, որ խօսիլ կը սկսէր, հանդարտ ու ծանր, հետզհետէ բարձրացնելու համար իր ձայնին ուժգնութիւնը,

շեշտն ու ծաւալը, տիրապետելու համար հաւատայեալներու բազմութեան։

Մեր ժողովուրդը, եկեղեցիներու բեմէն արտասանուող սովորական քարոզներէն աւելի, հետորին խօսքն ու քարոզը փնտռեց, լսեց ու ծափահարեց. որովհետեւ Ահարոնեանի մէջ ո՛չ միայն կը ճանչնար ազգային գրագէտն ու ժամանակակից հայ մեծ վիպասանը, որուն գրականութիւնը հայ ժողովուրդին հարազատ հոգիին ու սիրտին պատկերացումն էր, այլ՝ անոր մէջ կը մարմնացնէր Հայ Մարդը։

* * *

Հայ մարդը Ահարոնեանի մէջ աշակերտն էր երեկուան սերունդին։ Այդ սերունդը Քրիստափորին, Զաւարեանին ու Ռոստոմին սերունդն էր, որուն շունչին տակ մարզուեցաւ ու թեւեր առաւ երիտասարդ գրագէտը։ Ծեսակ մը մտաւորական – յեղափոխական ընտանիք, որուն գիտակցութիւնն ու կամքը կը զարթնուէր արտասահմանի մէջ։ Ժընեվը կեդրոն մըն էր, ուր հայ ուսանողութիւն մը և մտաւորականութիւն մը, գաղափարապաշտ և հայրենասէր երորդութեան շունչին ու ազդեցութեան տակ, կը պատրաստուէր կարեւոր դեր մը կատարել մեր վերածնունդի պատմութեան համար։ Դրօշակը իրարու կը յաջորդէր նկարագրի տարբեր գիծեր ունեցող երիտասարդութիւնը, միեւնոյն նպատակին համար։ Հնոց մըն էր, ուրկէ դուրս կը ցայտէին յեղափոխական խօսքին ու քարոզին կայծերը, և մեր գրականութեան գեղարուեստական էջերը, անոր մէջ լոյս կը տեսնէին, Ահարոնեանէն սկսեալ Սիամանթօ, Ակնունիէն սկսեալ Դանիել Վարուժան, և ուր Մ. Վարանդեան, մէկը մեր ամէնէն հմուտ հասարակագէտներէն, իր պատմափիլիսոփայական ուսումնասիրութիւնները կը ստորագրէր։

Յեղափոխական հայ մտաւորականը, մանաւանդ գրագէտը միշտ գուրգուրանքի առարկայ եղեր է մեր մէջ, շատ հասկնալի պատճառներով, որովհետեւ շատ քիչերը գիտցեր են հարազատօրէն ներկայացնել խորունկ այն ողբերգութիւնը, որ զարերէ ի վեր կրծեր է մեր էութիւնը…։ Այդ ողբերգութիւնը խորապէս գգացեր ու երգեր է մանաւանդ Ահարոնեան, որուն անձին ու գործին հանդէպ հայ ժողովուրդին վերապահած խանդավառութիւնը, և զգացած հպարտութիւնը, որքան կը բղխի անոր ստեղծագործութեան առարկայական արժէքներէն ու անոր գործին բացառիկ հանգամանքներէն, նոյնքան և անոր յեղափոխական – մտաւորականի գաղափարներէն։

Գաղափարները, իբրեւ հայրենասիրութիւն, ընկերային արժէքներու վերագնահատում, կեանքի ու մահուան հարցերու քննութիւն և կրօնական

խնդիրներու շուրջ խորհրդածութիւն, կը կազմեն բարոյական դիմագիծը բոլոր մեծ գրողներուն, որոնց մէջ յատկանշական դէմք մը կը մնայ Թօլսթօն, ռուս գրականութեան այդ հսկան։

Ահարոնեան կը սիրէ գաղափարները, և անոր գործին մէջ *մտածող մարդը* կը յայտնուի առէն ուղղութեամբ։ Այս գիծը յատուկ է մարդկային էակին, որուն մէջ յաճախ պայքարի կը մտնեն *մարդը* և *արուեստագէտը*, չանալով չեզոքացնել զիրար։ Երբ արուեստագէտը իր հոգիին անկախութիւնը պահել կը ձգտի, արտաքին աշխարհին ու անոր հոգերուն կապուած մարդը, իր ներկայութիւնը զգալի կ'ընէ զօրաւոր կերպով։ *Հոգիի* և *իրականութեան* այս երկու աշխարհներուն տիրապետութենէն կախում ունի ստեղծագործութեան մը արժէքը։ Հանճարներն իսկ չեն կրցեր արհամարհել իրականութեան թելադրութիւնները, որոնք ձեւ ու մարմին առեր են գլուխ-գործոցներու մէջ, ու երեւան հանած նաեւ դիմագիծը՝ զիրենք երկնող արուեստագէտ-մտածողին։

Իրականութեան այդ թելադրութիւնները գրականութեան մէջ մկրտուած են *օգտապաշտ ծգտումներ* անունով, որոնց յաճախումը, եթէ արուեստի գործին համար տկարութիւն կը դաւանէին երբեմն, արդի մարդկութիւնը ընդհակառակն ստեղծագործութեան մը մէջ կը փնտռէ չեմ գիտեր այն ինչը, որ իր որոնումներուն, ձգտումներուն ու խնդիրներուն պատասխաններ տալ կը փորձէ։ *Ամէն արուեստի գործ իրականութենէն առեր է իր տարրերը, զգացումներու, գաղափարներու եւ երեւակայութեան հնոցէն անցընելէ վերջ։*

Գաղափարները կարմիր թելի մը պէս կը յայտնուին Ահարոնեանի գործին մէջ, իբրեւ հիմնական տարր։ Գաղափարներուն զարգացումը սակայն վերացական մարզանքներու չեն յանգիր իր մօտ։ Ինչպէս *արուեստը արուեստին համար* նշանաբանին չի ծառայեց, այնպէս ալ *խորհուրդը խորհուրդին համար* դաւանանքը չի յոգնեցուց իր ճակատը։ Իր կարծիքներն ու յանկութիւնները յայտնեց անիկա քաղաքական, ընկերային, ընտանեկան ու ազգային, բարոյական բոլոր խնդիրներուն մասին, առանց սիստեմի, առանց վարդապետական տասնաբանեանների։

Արուեստէն և ենթակայական զգայութիւններու չորսմէն անկախաբար, *մարդը* պէտք է ունենայ իր ըմբռնումը տիեզերքի և անհատին մասին, որովհետեւ ստեղծագործ անհատներէն է միայն, որ կրնան ճառագայթել բոլոր մեծ գաղափարները, իբրեւ լծակներ մարդկային կեանքի յառաջդիմութեան։ *Զգայուն սիրտը* եւ *մտածող միտքը* պարտաւոր են մարդոց

աչքերուն մէջ կարդալ արցունքներուն իմաստը։ Մեծ մարդոց և մեծ արուեստագէտներուն կոչումն է նաեւ սրբել մարդկային արցունքները, նոյնիսկ ժամանակաւոր կերպով։

Ա. Ահարոնեանի փայփայած գաղափարներուն մէջ ամէնէն սիրապետողն է Հայրենիքի գաղափարը, ուրիշ խօսքով հայրենասիրութիւնը։ Մեր հայրենի հալածական ոգին, սուսերի մը պէս կը հետեւի անոր բոլոր քայլերուն. թոյլ չի տար, որ գրագէտը մոլորի էնթակայական զգայութիւններու ցանցին մէջ, մոռնալու համար մեր աշխարհը, որ կը շնչէ ու կը գալարւի իր աչքերուն առջեւ։

Մեր աշխարհը... այն երկիրն է, որուն գովքը երգեր են բոլոր սերունդները, մանաւանդ անոնք, որոնք արուեստագէտի կրակը զգացեր են իրենց հոգիներուն մէջ։ Արեւելքի մէկ անկիւնը, դարերու մէջէն, իր ճամբան է գտեր ան. ապառաժներու կուրծքին մէջ, գետերու եղերքները և դաշտագետիններու վրայ, դէպի արշալոյսը դարձեր, արեւին առջեւ ծնրադրեր է, կեանքն ու գեղեցկութիւնը, ուժն ու քաջութիւնը փառաբաներ է. բագիններուն մէջ, աւերուշաններուն վրայ և ծխնելոյզներուն ծուխն ու կրակն անպակաս է ըլեր, աչքերը սեւեռած հեռո՛ւն...։ Սահմաններ է պետական կեանք, սիրապետեր ու սիրապետուեր է, ընդուներ է առաջին ճառագայթներն ու վարդապետութիւնը քրիստոնէական կրօնին, կազմեր է իր այբուբենը, գրական ու թարգմանական Ոսկեդարը ունեցեր է, արեւելքի ու արեւմուտքի մէջ կռուախնճոյ դարձեր է, յաղթեր ու յաղթուեր, շահեր ու կորսնցուցեր, դարձեր է վերջապէս անկախութիւնը կորսնցուցած հպատակ ժողովուրդ մը, որուն ծոյէն կրկին լոյս աշխարհ եկեր են մեծ արուեստագէտներ, ու երգեր ցեղին անցեալ փառքերը, և ապագայի երազները...։

Իր ստեղծագործութեան մէջ ամէն առիթ կը հանդիպինք անոր հայրենասէրի գաղափարներուն։ Երկու գիրք սակայն կը խտացնեն անոր հայրենասէր-գործիչի դաւանանքը։ Առաջինն է Կարօտ հայրենիին, որ լոյս տեսած է 1927 ին. երկրորդը՝ Հայրենիքիս համար, 1920 ին. երկուքն ալ հրատարակուած Պոսթոն, Հայրենիք ի կողմէն։ Առաջինը մեր խորհրդածութիւններուն առարկայ սիւտի դառնայ Արուեստագէտը գլուխին մէջ։ Գալով երկրորդին, հոն կը գտնենք անոր հոգին ալեկոծող անհատական խոհերն ու յուշերը, գրուած ընդհանուր պատերազմի ընթացքին, մասնաւորաբար 1917 – 18 ին։ «Մենութեանս տրտում ու խոհուն ժամերին, կը գրէ իր յառաջաբանին մէջ, սրտիս ծածուկ զրոյցներն են արիւնոտած ու մարմնչող հայրենիքիս հետ։ Վշտիս ու վիրաւոր յոյսիս հեծեծանքներն են արդար ցա-

ուսմիս ու ընդվզումիս մոլեգնութիւնը։ Աշխարհիս ծածուկ, խաւար գիշերնե-
րին որդիական իմ պաշտամունքն է իմ վատաբաղդ Հայրենիքին՝ նրա ճօտա-
լուտ ազատութեան կուռ հաւատով, որ ամենասեւ օրերին իսկ՝ կեանքիս յե-
նարանն եղաւ»

Կը բաղձայ, որ մեր ազատ ու անկախ հայրենիքին մէջ, երբ մեր օրե-
րու ցաւագին ու դաժան բախումները հէքեաթներ դառնան, գալիք սե-
րունդներու սրտերուն մէջ վառ հնոցի պէս միշտ կենդանի մնայ անարդա-
րութեան, ամէն զրկանքի դէմ ըմբոստացումի վսեմ զգացումը։

Իր գրականութեան մէջէն անցնող այս զգացումին երակն է, որ հետե-
ւողականօրէն կը դառնայ նաեւ անոր հայրենասէրի ընկերային դաւա-
նանքը։

Ցոյսի ու լոյսի Հայրենիքը կ'երգէ անճառելի գեղեցկութեամբ, գեր-
մարդկային աբգեցութեամբ։ Կ'երգէ հերոսութիւնը, որ աւերակներու վրայ,
լեռներու կատարին՝ աստղերու ցոլքերուն տակ մարմին կ'առնէ։

Բոլոր բանաստեղծ հոգիները կ'երգեն ու կ'աստուածացնեն տիեզերա-
կան ցաւն ու վիշտը։ Բայց ամէնուն մէջ աւելի՛ բարձր կը հնչէ ազգային
շունչը։ Անծանօթ ու հեռաւոր հորիզոններու տակ կոտտացող ցա՛ւն ալ ար-
ձագանգ կը գտնէ անշուշտ Ահարոնեանի մէջ, սակայն Հայաստանի ար-
ցունքը, հայ աշխարհի վիշտը տարբեր սարսուռներ կը խլեն անոր ալեկոծ
ու վիրաւոր սիրտէն։

Ահարոնեանի *խոհերուն* ու *յուշերուն* հետեւելով, անոնց մէջ ժա-
մանակագրական կարգ մը կը գտնենք, որ կը բնորոշէ ընդհանուր պա-
տերազմի շրջանին, մեր հայրենիքին մէջ ու անոր շուրջը տեղի ունեցած
դէպքերը, ինչպէս 1917ի ռուսական Մեծ Յեղափոխութիւնը, Կովկասեան
Հանրապետութիւններուն կազմութիւնը, Հայկական մեծ ճգնաժամը,
Հայաստանի Հանրապետութեան հիմնարկութիւնը, հայ գինուորութիւնը, հայ պատ-
մութեան *Եղեռնի Աստանը* մուտքը, և հայաջինջ սարսափները։

Իր հզօր ու արդար ցասումին մէջ, չի կրնար բացատրել թէ, ինչո՞ւ հա-
մար մեր ցեղը կը լողայ արիւնի ծովու մէջ, մրրիկներու աւջեւ թափառա-
կան, հակառակ անոր որ «Մեր հոգին շքեղ կարելիութիւններով միշտ հա-
րուստ եղաւ, ստեղծելու տենչերով հպարտ, արդարութեան ու ճշմարտու-
թեան սիրով՝ թրթռուն, լուսաթաթախ մտածումներով՝ զեղուն. մեր աչքերի
վառ ցոլքերը միշտ բարի եղան և մեր բազուկների շարժումները՝ յուրթի.
անապատները մեր ոտների տակ ծաղկեցին և խոպան լեռներն ու ձորերը
մեր անուշ ու բեղմնաւոր քրտինքով շէնցան։ Ջինջ ու մաքուր հաւատ ու-

նեցանք միշտ դէպի արշալոյսն ու յաւիտենական արեւը»։

Սեղանին վրայ թերթիկներ կան... թերթիկներ, որոնք հայկական մարտիրոսագրութեան անո՛ւր, անպատո՛ւհ ու ղիւայլն հէքեաթը կը պատմեն։ Հեղինակին երեւակայութիւնը կը թափառի հայրենի հորիզոնները, ուր համայնական դամբարան մը կը տարածուի, որուն վրայ պիտի գար իր աբիւնոտ գահը հաստատել ցարական Ռուսիան։ Անարդարութեան դէմ ըմբոստացող Ահարոնեանի հոգին, կը բողոքէ բուռն թափով, անոր համար որ հայ ցեղը, հոյակապ բախումներու մէջ և յոյսի ժպիտը շրթներուն, դէպի Գողգոթա կը դիմէր և աշխարհի հզօրներուն մատի շարժումով, մեր «Հայրենիքը արիւնոտ լաթի պէս նետուած էր արիւնոտ ծար ոտների տակ»։

Սակայն կայ ու կը մնայ, իբրեւ անկորուստ ու ազգային սեփականութիւն, կենդանի հաւատքը *Մաքի* ու *Դեղեցկութեան*, որոնք աւերակներու մէջէն իսկ գիտեն կայծեր արձակել։

Իբրեւ ղեկավար բանաստեղծ հոգի, երբ պատմութեան և իր արիւնոտ քաղաքակրթութեան առջեւ արցունք կը թափէ, երբ արդարութեան յաղթանակին համար կը խանդավառուի, իր խորաթափանց աչքերը կը թափանցեն այն ծանրակ իրականութեան, ուր հայ շինականն իր արօրն ու բահը շալկած, զարբինն իր մուրճը դրկած պիտի հնչեցնեն փրկութեան աւետիսը և աշխատանքի հզօր երգը։

Անիկա ընդունակ է, ցաւրա ու դաժան իրականութիւնը նկարագրելու ատեն իսկ, դառնալ հռետոր ու քարոզիչ, ճեղնելու համար կարծրացած սիրտերու քար անտարբերութիւնը. կ'ապաւինի իր «հին ու թշուառ գրիչ»ին, որպէսզի երկինքէն շանթեր կորզէ՝ և արձակէ անիրաւութեան դէմ։ Կը հեծեծի դէպքերուն ու անոնցմէ կը հանէ մեծ ու խորհրդաւոր եզրակացութիւններ, կազդուրիչ թելադրութիւններ։

Գրքին մէջ Ա. Ահարոնեան ունի մեծ ու կարեկցող սիրտ մը, իր խղճի ծանրութիւնն ու բեռը թեթեւցնելու համար։ 1918 թուի Յունիսին Սեւ Ծովուն վրայ է, նաւու մը մէջ, որ զինքը դէպի *մեծ եղեռնի ոստանը* կ'առաջնորդէ։

Մանկութենէն ի վեր սիրած է իր հայրենիքը ինչպէս զաւակն իր մօր ժպիտը, ծաղիկն արեւի ցոլքը և եղնիկն անտառի թաւուտը։ Հայրենիքին ու անոր մայրական սիրուն համար է, որ կը մեկնի դէպի սուլթաններու արիւնոտ մայրաքաղաքը։ Նաւուն մէջն է ու մինակ՝ ալիքներուն դէմ, հովերուն առջեւ։ Կու գար *Եղեռնի Ոստանը*՝ Հայրենիքի կամքին հպատակ՝ կատարելու համար «անփառունակ ու դժուար աւաքելութիւնը» իր իսկ բառերով։

* * *

Հայրենասէրին համար Հայրենիքը ամէնէն նուիրական գաղափարն է: Առանց հայրենիքի ժողովուրդ չի կայ, և առանց ժողովուրդի՝ ազգ գոյութիւն չունի: Իսկ ազգը, իր պատմական ու գիտական իմաստով, ազգ է ու հաւաքականութիւն, երբ ունի իր անկախութիւնը, իր պետական կազմը և լեզուն: Քաղաքական անկախութեան պէտք է հետեւի տնտեսական անկախութիւնը, որուն վրայ պիտի բարձրանայ քաղաքակրթութեան ու ճշակոյթի ամուր շէնքը: «Աշխարհը լայն է, ասում են, ի հարկէ, լայն է, մենք էլ դիտէինք, բայց արի տես, որ այդ լայնարձակ աշխարհում մենք մի անկիւն չունէինք ծուարելու համար: Ասենք ուրիշ կերպ չի էլ կարող լինել. ո՛վ վաթան չունի, նա աշխարհում տեղ չունի, մի այն չը գիտեմ, երկնքում էլ նրան տեղ կը տա՞ն, թէ ոչ: Մնած տեղներս՝ մեր վաթանը փուշ ու տատասկ էր դարձել մեզ խոցոտում, օձ ու կարիճ էր դարձել մեզ կծում, և մենք գլուխ առած՝ փախչում էինք առանց ետ նայելու. տեղն է, որ ասեմ՝ սեւ լինէր մեր փախած օրը, մեր ոտները երկու տակ լինէր՝ չը հեռանայինք. վաթանը եթէ գեհէն դառնայ, էլի դարիբութիւնից լաւ է:» (1)

Հայրենասէրը կը խօսի բոլոր անոնց հոգիէն, որոնք հայրենիք ու ծննդավայր ձգել հեռանալով, օտարութեան գիրկն ինկեր են, պանդխտութեան խորունկ ցաւին անձնատուր: Ցաւ մըն է, որ անուն ու բացատրութիւն չունի, և կը զգան մի այն անոնք, որոնք ենթարկուած են անոր: Ցաւ կաւին շա՜տ հին ժամանակներէն այս հիւանդութիւնը կրծեր է մեր ցեղին էութիւնը, ու անկէ խլեր է ամէնէն հոգեցունց ու կարօտակէզ երգը,

կռո՛ւնկ, ուստի կու գաս ծառայ եմ ծայնիդ...
կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս...:

Ռաշիտը պատմուածքին մէջ Ահարոնեան կը յուզէ հայրենիքը ձգել հեռանալու և գաղթելու ծանր հարցը, որ մեր նախահայրերուն ճակատնեը կ'ճռռտար է, և այսօ՛ր իսկ կեանքի և մահուան կարեւորութիւն ունեցող խնդիրներէն մէկն է հայ ժողովուրդին համար: Երբ վտանգը կայ, հալածանքն ու անապահովութիւնը, պէ՞տք է, որ մեր հայրերուն գերեզմանները լքենք, մեր նուիրական օճախները քրքրենք, մեր պապենական ժառանգութիւնները թշնամիին թողունք ու դառնանք գաղթական, օտար հորիզոն-

(1) *Ա. Ահարոնեան*, Արազ, Անթիաւասր, *էջ 70:*

ներու և երկինքներու տակ։ Այսօր այս հարցը Թերեւս տարբեր կերպով կը ներկայանայ հայ մտաւորականութեան ու ղեկավար սերունդին, քանի որ մեր կամքովը չէր, որ գաղթական դարձանք։ Բայց հարցը կը պահէ իր կարեւորութիւնն ու նշանակութիւնը մեզի համար, քանի որ գաղթականութեան ուրիշ մեկ տեսակը կ'ապրինք այսօր։

Մելիք–Սարգիսը այն տիպարն է, որ կը մտածէ թէ, «վաթանը կորչելուց յետոյ, կեանքը մի՞թէ որ և է դին ունի։»

Գաղթը կապուած է առհասարակ ո և է պատերազմի, երբ թշնամիին աւերող բանակներուն առջեւէն, ժողովուրդը ստիպուած է ժամանակաւոր կերպով հեռանալ. բայց մեր պարագան մի՛շտ տարբեր եղեր է։ Նախ որ պատերազմ մղողը մենք չենք եղեր, և ընդհակառակն մեր հայրենիքը ասպարէզ դարձեր է զինուորական գործողութիւններու։ Ռուս–Թրքական, կամ ռուս–պարսկական պատերազմներուն հետեւանքով հայ գիւղացիին կրած աւերիչ տառապանքն ու զրկանքները, աւերն ու կոտորածը պատմական իրողութիւններ են արդէն։

Հին սերունդը, այն որ իր արտին ու կալին մէջ ճերմկցուցեր է իր մազերը, համոզուած է, որ «գաղթելով մենք դարձեալ մահուան դատապարտուած ենք։ Ո՞ւր գնանք, ո՞ւմ դիմենք, ո՞րի դուռերը ծեծենք մեր երեխաները կերակրելու համար։ Ո՞վ մեզ մի անկիւն կը տայ նոյնիսկ գլուխ դնելու։ Մեր զաւակները դարձեալ կը մահանան, միայն դանդաղ, անարգական մահով, մուրացիկի մահով։»

Կը հարցնեմ. մի՞թէ հայ ժողովուրդին կեանքը և պայմանները փոխուեր են, աւելի քան երեսուն տարիներ անցնելէն վերջ անգամ։

Հայրենասէր է ամէն զգայուն հայ, մանաւանդ ամէն զգայուն գրագէտ։ Եթէ այս զգացումը գոյութիւն չունի ո և է մեծ արուեստագէտի մէջ, անիկա կը զարկի իր հայրենիքին ու ժողովուրդին համար օգտակար տարր մը դառնալ, եթէ երբեք միջազգային արժէք մը ներկայացնէ։ Եւրոպական քաղաքակրթութեան ու հանճարներուն ձգած գործին առջեւ հիացող Ահարոնեան, տխրօրէն կը հարցնէ. «Դանտէ՝ Իտալիա, Շէքսպիր՝ Բրիտանիա, և իմ միտքերը հեռաւոր աշխարհից թռչում հասնում են հայ ժողովրդին, հայ պատմութեանը, հայ բանաստեղծութեանը և մեր պատմական ճակատագրին։ Դանտէ և Շէքսպիր չունինք մենք, չենք ունեցել երբեք, չենք էլ կարող ունենալ, բայց էլի անուններ ունինք, որոնք հին օրերում և նոր ժամանակներում խօսեցին մեր սրտից, մեր հոգուց, մեր ցաւերից և ուրախութիւնից, մեր փշոտ, արիւնոտ փառքերից. բայց հայ ժողովուրդը փարե՞ց

այդ անուններին, հասկացա՞ն նրանց։ Քանի՞ հայ իր լեզուն գիտէ, ինչպէս որ պէտք է և կարող է իմանալ» (1)

Որովհետեւ լեզուն կ'ապրի ու կը զարգանայ հոն, ուր ստեղծուեր է. հայրենիքէն դուրս, արմատախիլ բոյս մըն է, որ թառամելու և մեռնելու դատապարտուած է։ Որովհետեւ՝ «Երբեք, երբեք չը ստեղծուեց ամուր հիմքերի վրայ կանգնած մի հայրենիք, ուր հայը ընդհիշտ հայերէն խօսեր, ուր նրա հոգին զարգանար բնական պայմաններում, և ուր ցեղի հանճարը կարողանար բեղմնաւոր դառնալ։ Եւ՛ հայրենիք, և՛ ազգային լեզու, և՛ ազգային մխութիւն, որ ուժեղ ձեռքի տակ ի մի ծեփեր կեդրոնախոյս տարրերը» (2)

* * *

Մեզի ծանօթ է արդէն Ահարոնեանի համակրանքը մանուկ ու պատանի սերունդին հանդէպ, որուն՝ իր գրականութեան մէջ կարեւոր դեր մը տուեր է։ Հայրենասէր գրագէտը իր սրտի խորէն դառնօրէն կ'ողբայ այդ սերունդին դժբախտութիւնը, երբ ան օտարութեան մէջ իր հայրենի ծառէն փըրցըած ոստի մը պէս, պանդխտութեան արցունքը կը թափէ անմխիթար ու որբացած։

Գրեթէ քառորդ դար առաջ է, որ իտալական քաղաքի մը մէջ կը հանդիպի հայ որբերուն, երբ մեր բիւրաւոր մանուկներն ու պատանիները աշխարհի չորս հովերուն առջեւ թափառական դարձած չէին, փոթորիկի մը բռնուած թռչուններու երամի մը պէս . . . : Այդ առթիւ կը գրէր. «Մէկիկ մէկիկ նայում եմ այս դէմքերին, ինձ ընտանի դէմքերին, ծանօթ ու սիրելի, հայ ցեղի դրոշմն են կրում վրաները. այդ սեւ յօնքերի տակ փայլող աչքերում վառվում է ցեղի կրակը, պատմական իմացականութիւնը, որ բիւրաւոր արիւնալի արկածների միջից կարողացել է քաշ տալ և մեզ հասցնել մի զարմանալի դոյութիւն. նայում եմ ծանօթ իմ այդ դէմքերին նկարված պատմական թախիծին, որ դարերն են դրել մեր ճակատին. այդ յարատեւ մռայլ յուսացող դէմքերը ինքը հայ ժողովուրդն են ներկայացնում, տառապանքի և արցունքի մէջ անորոշ կերպով յուսացող, հարւածների տակ ճկուն, հարուածելիս մտածկոտ, անվճռական, վարանոտ։» (3)

Հայ որբը աշխարհի ամէնէն դժբախտ որբն է։ Չի կայ պատասխանա-

---

(1) Ա. Ահարոնեան, Իտալիայում, էջ 268։
(2) Ա. Ահարոնեան, Իտալիայում, էջ 228։
(3) Ա. Ահարոնեան, Իտալիայում, էջ 229-230։

տու տէր ու տիրական, պետութիւն ու կառավարութիւն, որ նահատակուած ծնողներու խլեակները իրը նկատէ։ Քառորդ դար առաջ հայրենիք չու-նէինք, և եթէ այսօր ունինք, մեզմէ և հայ ոլբութենէն շա՛տ հեռու է, տեսնելու անոր վիճակուած կեանքը, և լսելու անոր հոգիէն ու սիրտէն բարձրացող բողոքի աղաղակը, օտար հորիզոններու տակ . . . ։

Պատանիները «մանուկ – ծերեր» են, որոնք իրենց կեանքի արշալոյսին ապրեր են արդէն իրենց ցեղին վիճակուած դողգոթան, և կեանքի ճամ-բուն վրայ, տակաւին չապրած ու չի մեծցած, յոգներ են։ Իրենց պատմու-թիւնը վերջացած չէ, և օտարութեան մէջ դառն ճակատագիր մը վերա-պահուած է իրենց։ Անոնք հայրենազուրկներ են ծնողազուրկներ դառնալէ յետոյ . . . ։

* * *

Մեր ցեղին վիճակուած դառն ճակատագիրը հայրենասէր – գրագէտը կ'առաջնորդէ վերապահատումներու։ Կը գտնէ, որ արեւելահայոց մէջ ազ-գային, յստակ, կուռ, տրամաբանուած և հայ ժողովուրդի իրական շահերու դիտակցութենէն բղխող քաղաքականութիւն գոյութիւն չունէր։ Հանրային մտածողութեան մէջ կ'իշխէր քաոս մը։ Ռուս և հայ յարաբերութիւններու մէջ կը տիրէր անորոշութիւն ու մթութիւն, պարագայ մը, որ չետագային զարհուրելի չարիքներ հասցուց հայ ժողովուրդին, անոր կեանքի ամէնէն ծանր ու տագնապալից օրերուն։ 1885 թուին, հայ դպրոցներու առաջին փակումին, կովկասահայ ժողովուրդը ո՛չ քաղաքականութիւն ունէր և ոչ ալ ուրոյն ազգային կերպարանք։ Իշխող մտայնութիւնը հայ-քրիստոնէութիւնն էր պահպանողական խաւերուն մէջ, և «անմեղօրէն ու բարեմտօրէն ազա-տամիտ» Գրիգոր Արծրունիի քաղաքակրթական միամիտ պատգամներուն հա-մաձայն։ «Լուռ համակերպութիւնը տակաւին տիրող մտայնութիւնն է, և ծածուկ վշվշոցը՝ զգայուն ցաւի միակ արտայայտութիւնը։» (1)

Իր խորհրդածութիւնները այսպէս զարգացնելով, Ահարոնեան կ'եզրա-կացնէ, որ ահաւասիկ կէս դար է, որ հայ ժողովուրդի ազատագրական, հե-րոսական ձիգերն ի դերեւ ելան, հակառակ իր յանձն առած անհնարին ու պատմութեան մէջ աննախընթաց զոհաբերութեան։

Ի՞նչ կը մտածէ սակայն արեւմտահայերու մասին. նոյն գրքին մէջ կը գտնենք հետեւեալ հատուածը. «Գերագոյն արդարութիւնն է պահանջում

---

(1) *Ա. Ահարոնեան*, Քր. Միքայելեան *հրատ. Պօստօն 1926։*

ասել, որ թիւրքահայ լաւագոյն մտաւորականները, չափաւոր ազատամիտ՝ թէ յեղափոխական, շուտ վաղ տեսան, թէ հայ ցեղը՝ վաստակաւոր, տքնող, քրտնաթոր հայ ցեղը կամաց-կամաց հալւում, ոչնչանում է թիւրք բռնապետութեան դիւային ցանցերում: Նրանք լաւ հասկացան, որ հայ ժողովուրդը աննկարագրելի կերպով, ամէն օր, ամէն ժամ մաս-մաս մեռնում է իր հայրենիքում թիւրք բէժիմի ճիւաղային մեթոտներով, և որ աւելի երկար տոկալն ու համբերելը համազօր է հայ ցեղի խաղաղ բնաջնջման:»

Տրամաբանական կարգով, կը հասնինք կէտի մը, ու կը հարցնենք. այս վիճակէն ազատուելու համար հայ ժողովուրդը հաւաքականօրէն ի՞նչ միջոցներ ձեռք կրցաւ առնել վերջին չիսուն տարուան ընթացքին:

Պատասխանը մեզ շատ հեռուները պիտի տանէր: Այդ հոգը հայ պատմաբանին ու քաղաքագէտին թողլով, ուրիշ հարցում մը կու գայ գրչիս ծայրը. հայ դիւանագիտութիւն ունեցե՞ր ենք. եթէ այո՛, կրցա՞ւ անիկա իր օժանդակութիւնը բերել մեր հարցին լուծման համար, այն միւս ազդակներուն, որոնցմով կազմուեցաւ մեր վերջին չիսուն տարուան ազգային-քաղաքական պատմութիւնը, և որուն մէջ լուսաւոր, մարդկայնօրէն հերոսական դրուագները չեն պակսիր:

Պատասխանը շատ որոշ է. — Հայ դիւանագիտութիւն չենք ունեցեր, և այս պայմաններուն մէջ, չի պիտի կրնանք ունենալ:

Դժբախտ դէպքերու բերումովն է, որ ամէնէն փափուկ ու պատախտաւոր րոպէներուն մեր շուրջը նայեր ու փնտռելու ելեր ենք մարդիկ, դիրքեր կանչելով լուրջ պաշտօններու և առաքելութիւններու գլուխը: Այս է եղեր պատճառը, որ շատ անգամ անձրկեր մնացեր ենք, ու գործին հատպատասխան մարդը չենք գտեր:

Մեր քաղաքական-ազգային պատմութեան վերջին տասնամեակներու պատմութիւնը, մեկէ աւելի, բազմաթիւ փաստեր ունի արձանագրած այս մասին: Եւ եթէ մարդիկը, չըսելու համար ընտրուած «դիւանագէտները», վրիպած ու անյաջողութեան մատնուեր են, պատճառը ոչ թէ իրենց անկարողութիւնն է եղեր, այլ ուրիշ ազդակներ, որոնք կապուած են եղեր բացառապէս մեր կեանքին ու իրականութեան, մեր անհեռատեսութեան ու անփորձութեան, քաղաքականութեան մէջ մեր ունեցած մանկամտութեան: Հետեւաբար յանցաւոր ու պատասխանատու չեն բոլոր անոնք, որոնք մեկ օրէն միւսը, յանկարծ, դէպքերու հարկադրանքին տակ, ինքզինքնին գտան դիւանագէտի պաշտօնին մէջ:

Մեր պայքարի ու քաղաքական վերջին ձախողութիւններուն վերագնա-

հատումը ակամայ կը տանի մեզ այս խորհրդածութիւններուն։ Մեր ժամանակներու դիւանագիտութեան դիւային պարը խաղալ տրուած չէր անշուշտ մերիններուն, որոնք այդ դպրոցին աշակերտած չէին, ի վիճակի չըլլալով հաշտեցնել այդ դպրոցին խաղերն ու կեղծիքները մարդասիրական խնդիրներուն հետ։ Միամտութիւն է անշուշտ սպասել, որ հայ մարդը, ըլլայ անիկա պետական պաշտօնեայ կամ առեւտրական, գրագէտ-բանաստեղծ թէ ընկերաբան, քաղաքական թոհուբոհին մէջ, աշխարհի ճակատագիրը տնօրինելու կոչուածներուն մէջ դեր մը կատարէ։

Սխալը ո՛չ թէ անհատներունն է, այլ կը վերաբերի հասարակութեան և մեր ուժերը միշտ գերագնահատելու միամտութեան։ Սխալը նաեւ նուազ իրատես ու շա՛տ գաղափարապաշտ ըլլալնիս է եղեր. հասատացեր ենք արդարութիւն ըսուած առաքինութեան բացարձակ արժէքին, առանց մտածելու և գիտակցելու, որ ինչպէս իմաստասէր Ժիւլիէն Պենտա ըսեր է. «Արդարութիւնը յարաբերական է տրուած պայմաններուն մէջ, և բայարձակի մը հասատալը, նմանօրինակ պարագաներուն մէջ, տղայական փիլիսոփայութիւն է։» Այդ տղայական միամտութիւնը ունեցանք տասնեակ մը տարիներէ ի վեր աղդովին և անհատաբար։

Կրնա՞ք պատկերացնել վիճակը և իրականութիւնը, որ գոյութիւն ունէին մեր մէջ, երբ աշխարհի քարտէսը վերակաղմելու համար, ամէնէն վարպետ ու փորձառու լարախաղացներ քով քովի կու գային, որոնց պիտի ներկայացուէր նաեւ *մեր հարցը*...։

Մղոններով հեռու հայրենիք մը, որ կազմուիլ կը սկսի փոթորիկներէ, արիւնէ ու արցունքէ յետոյ, անօթութեան ու թշնամիին ուրուականին առջեւ։ Ռազմամթերքի և ուտելիքի պակաս, հարիւր հազարներու հասնող գաղթականութիւն մը, իր խելքն ու հոգեկան արիութիւնը կորսնցուցած, դրացիներու թշնամութիւն, և ամէնէն կարեւորը, կուսակիցներու հոգիներուն մէջ անհուն դառնութիւն, տեսած ու կրած անիրաւութիւններէն ու չուսախաբութիւններէն։ Դուրսէն օգնութեան ո՛չ մէկ յոյս և թշնամին չամառ ու անգութ։

Հեռուն հայ դիւանագիտական մարմինը, դուք ըսէք պատուիրակութիւն մը. դաւ ու վտանգ, թշնամի դուրսէն ու ներսէն, մանաւանդ հայ մարդոց կողմէ. պատկերացուցէք մտայնութիւնը հայ ժողովուրդին, (զուրկ քաղաքական հասկութենէ և կարգապահութենէ, որոնք քաղաքացիական դաստիարակութեան հիմնաքարերն են. եսասէր՝ իր անհատական շահերն ու հանդիսաը միայն նժարին մէջ դնելու համար. վճռական պահելու երկչոտ ու

վարանոտ, և իր ճակատագիրը բուռ մը անձնուէրներու հերոսական քաջութեանը միայն վստահած) որ յանձին իր մասնաւորականութեան ու առաջնորդներուն, իր իրաւունքին ու պաշտպանութեան համար, անկախութեան ու սեփական հայրենիքի ընտրութեան համար իսկ, բաժնուած էր իրերամերժ խմբակցութիւններու և հոսանքներու: Այս բոլորը մոռնալ, կը նշանակէ հայ պատմութեան անօրինակ ու ինքնայատուկ պայմանները մոռնալ, ու հետևաբար հանել սխալ եզրակացութիւններ:

Ա. Ահարոնեան իր վճռական խօսքն ունի բոլոր անոնց դէմ, որոնք «ուշ մնացած մարգարէներ» ու պատգամախօսները պիտի մնան միշտ. «Ցեղին թուով քաջահմուտ պիւանագէտներ կը ծնին, կը գրէ, որոնք կը փորձեն գուցէ ստուեր ձգել ազատատենչ ազգի վերագոյն հոյակապ գրոհի վրայ: Համակերպութեան իմաստուն ասպետներ կը գան, որոնք քրմական ծիրանի հագած, նեղ աչքերով կը դիտեն պատմութեան փոթորկաշունչ ընթացքը և դատապարտութեան կամ գոհերգիկ քննադատութեան փորձեր կ'անեն ազգի տագնապալի օրերի առաջնորդների հասցէին: Այս բոլորը հասկնալի է և տրտմօրէն անխուսափելի: Բայց, ահեղ ու վճռական պայքարով կրած պարտութիւնը մի իմաստ ունի, որ վրիպում է մտավախների աչքերից և լուսեղեայն ղեկավարում է պարտասուած ու նկուն ժողովուրդների բախտը: Ազատագրուրկ ու բեկանուած ազգերը յաճախ արցունքի ու կսկիծի միջից արիութիւն են քաղում: Պարտութեան կկղիչ յուշերը և ատամների կրճտոցը երբեք չեն մնում առանց հետեւանքի:» (1)

* * *

Ի՞նչ կը մտածէր սակայն ազգային վիպագիրը բոլոր այն ազգակներուն մասին, որոնցմով պայմանաւորուած էր մեր ազատագրութեան խնդիրը, մինչեւ ընդհանուր պատերազմ, հայկական Հանրապետութեան կազմութիւնն ու կորուստը:

Ինչպէս տեսանք, քննութեան առնելով իր գրականութիւնը և այն հերոսական դրուագները, որոնք ատրկութեան ու համակերպութեան անապատին մէջ ովասիսներու յուսատու, կազդուրիչ և լուսաւոր երեւոյթները կը ներկայացնէին, Ահարոնեան ջերմ հաւատացող մըն է սեփական ուժերով, ինքնագիտակցութեամբ ու ինքնապաշտպանութեամբ ձեռք բերուած ազա-

(1) Ա. Ահարոնեան, Հայաստանը Հռոմի դէմ, Ամսագիր Հայրենիք, Է. տարի, Թիւ 6, էջ 32:

տագրութեան։ Առանց այս փրկարար ու տրամաբանական գործօններուն, դուրսէն եկած ո՛և է օժանդակութիւն դրական օգուտ չունի երբեք։

Դուրսի և օտարի օժանդակութիւնը չի մեծնար ու արժէք ստանար իր աչքին, որովհետեւ փորձառութեամբ զգացեր է, թէ «օտարի փշոտ կաբեկցութիւնը տեսանք, նրա թունաւոր ժպիտը ճաշակեցինք, անհիւրընկալ հորիզոնների բոլոր հողմերը մեր գլուխներին փոշի ցանեցին, տրորուող կաւ դարձանք աղգերի անգութ գարշապարներին»։

Մինչեւ ընդհանուր պատերազմ ըսի, որովհետեւ այս աշխարհապղծող իրողութիւնը եկաւ ամէն բան, ամէն արժէք ու տրամաբանութիւն, վարդապետութիւն ու գաղափարաբանութիւն տակն ու վրայ ընել, ջնջել հին տախտակները և մարդկային մտածողութիւնը առաջնորդել տարբեր ուղղութիւններու, տարբեր ըմբռնումներու։ Մանաւորաբար ռուսական մեծ յեղափոխութիւնը և համայնավարական իրաւակարգը, որոնք մեր հայրենիքին ու ազգային հարցին հետ անմիջական կապերով կապուած էին, դժբախտ զուգադիպութեամբ մը, դարերէ ի վեր մեր երազած ու անհնարին արիւնով և զոհողութեամբ ձեռք բերած անկախութեան՝ ճակատագրական հարուած մը տուին։ Լքուած մեր դժնդակ ճակատագրին, հիասթափուած և յուսալքուած, մեր հայբերող ժողովուրդին մէկ մասը անգամ մըն ալ դարձաւ հայրենազուրկ, փնտռելու համար ինքնամփոփման ու պայքարի նորանոր միջոցներ ու հնարաւորութիւններ։ Այս է պատճառը, որ հայ մտաւորականը պարտաւոր է վերագնահատման ենթարկելու բոլոր տրամաբանական միջոցներն ու կարելիութիւնները, նաւազ վնասով ու ցնցումով հասնելու ազգային իտէալին, կատարեալ անկախութեան, որուն շնորհի՛ւ միայն կարելի պիտի ըլլայ տնտեսական անկախութիւնը և մշակոյթի զարգացումը մեր հայրենի երկնակամարին տակ։ Մտածող հայ մարդը հաշուի առնելու է երէկի բոլոր տուեալները, պայքարի միջոցները, (ինքնապաշտպանութիւն, օտարներու օժանդակութիւն, դրացիներու հետ գործակցութիւն, մտաւորական ու կրթական վերածնունդ, և տնտեսական կարողութիւն ու հարստութիւն) որպէսզի դէպքերու նպաստաւոր դասաւորութեան մը պարագային, երազը՝ իրականութիւն դառնայ։

Ռաֆֆիի օրերէն մեզի հասնող, և կեանքին հետ իրենց գաղափարները չի փոխող, պահպանողական մտածողութեան ներկայացուցիչներ ունինք, որոնք Ազարանեանի գրականութեան կը վերագրեն, հայ ժողովուրդը կռուի, ըմբոստութեան ու յեղափոխութեան մղող դեր մը, այն միամտութեամբ, որ իբր թէ մեր կեանքին դժնդակ պայմանները չէին բաւեր մեր ազգը անկարելի ո-

պորումներու մղել։ Յէկ Ռաֆֆին էր «Ի խաչ հա՛ն զրա» պատգամին ու մղեռանդութեանը նշաւակ, այսօր՝ Ահարոնեան. ժողովրդական բնազդը մի՛շտ աւելի առողջ եղեր է, քան իր ներկայացուցիչներուն։ Եւ եթէ երիտասարդ սերունդները մի՛շտ խանդավառուած են Ահարոնեանի գրականութիւնով, պատճառն այն է, որ մարդու հոգիին մէջ գոյութիւն ունեցող ծգտումը չատ աւելի գեղարուեստական գրականութեան մէջ արժէքաւորեր է ան, և իր նիւթերը քաղեր է իրականութենէն, որուն ստիպուած են հպատակիլ բոլոր ճշմարիտ արուեստագէտները։

Ցիշուած բոլոր միջոցները գրական արժէքներ են Ահարոնեանի համար։ Անիկա իր խօսքն ունի բոլոր անոնց դէմ, որոնք կը կարծեն թէ իր և իրեն պէս մտածողներուն պատճառով եղեր է ցեղային կռիւներ մեր հայրենիքին մէջն ու անոր շուրջը։ «Ցեղային ատելութիւնը մարդկային ամենագարշ, ամենաանարգ զգացումն է» կը գոչէ Իմ գիրքերին մէջ (էջ 306)։ Սակայն ի՞նչն է այն կռիւներուն պատճառը, զորս մեր պատմութիւնը արձանագրեր է։ Պատճառը աշխատանքը սիրող, նատակեաց հայուն և թափառաշրջիկ ու անաշխատ ցեղերու տարբերութիւնն է։ «Այն օրից, կը գրէ վիպագիրը Երկերի Ժողովածուի յուշերուն մէջ էջ 98–99, երբ Բանոնցին մաճն ու գութանը ձեռք առաւ, պատուեց մայր երկրի սիրտը, ուռգեց նրան իր քրտինքով և իր զաւակների համար արդար հաց պատրաստեց, իսկ Ասիանցին արհամարհելով այդպիսի հալալ աշխատանքը, կապաւ իր նժոյգի թիկունքին և մահաւիթ զէնքերով գնաց կողոպուտի՝ յանձն առնելով ծանր, արիւնոտ արկածներով լի մի կեանք, այն օրից, երբ Բանոնցին քարով ու ցեխով շարեց իր բնակարանը և մտաւ խաղաղ յարկի տակ, իսկ Ասիանցին գերադասեց մաղէ վրանի անհանգիստ և անհաստատ կեանքը, այն օրից երբ Բանոնցին գրկեց աշխարհի Փրկչի խաչը, կապեց նրան իր բոլոր յոյսերն ու իղձերը, իսկ Ասիանցին մի վայրենի, արիւնածարաւ կրօն պաշտել սկսեց, այն օրից էլ կռիւն սկսուեց բանոնցու և ասիանցու մէջ, կռիւ անհաշտ և յաւիտեան։»

Իսկ եթէ Ասիանցին հայ գիւղացիին ձեռքէն հողը յափշտակէ ու զինքը անհող ձգէ, և կամ այնքան հող ձգէ, որ չի կարենայ իր ապրուստը անկէ հանել. երբ ալզովին զրկուած մնանք մեր հայրենի հողէն ու պաշտերէն, որոնք ոտոգուեր են մեր նախահայրերուն արիւնովն ու քրտինքովը...։

Այս հարցին նուիրած է Ահարոնեան մէկը իր գեղարուեստական պատմուածքներէն, Ղէյօի արտը վերնագրով, հրատարակուած Ճամբորդը հատորին մէջ։

Ծերունի Գէվօն անհոգ կ'ապրի, ամէնուն արհամարհանքին ու կա-
րեկցութեան արժանի. «բնութեան ազատ պարգեւի բաշխումի օրերին, զըր-
կանքի զգացումը, որպէս մի պաժան անիրաւութիւն մտրակում էր նրա
հոգին»:

Անիկա հողածին մարդ էր ու հողին կարօ՞տ, պիտի ճեռնէր վերջապէս:

Ծերունի Գէվօն, որ այլաբանօրէն Հայ ժողովուրդը կը ներկայացնէ, «բաժին չունի այս անիրաւ աշխարհի առատ սեղանէն»:

Աղքատ ու չքաւոր Գէվօն, որուն Ղէղօ արհամարհական մականունը տուեր էր կիւղը, կը գտնէ վերջապէս անմշակ հող մը, կը դարձնէ զայն իր աչքին լոյսը. «ամայի, չոր տափի փուշ ու տատասկը քաղեց, քարերը հա-
ւաքեց, մէջքով առուների եզրի հողը կրեց, փռեց տափի երեսը, դուր ու
քամբերը հարթեց, փոսերը լցրեց, ու բացեց մի հարթ, եռանկիւնի հրապա-
րակ, փորփրած, փխրուն հողով»: Ծերունի Գէվօյին երազները կ'իրականա-
նան, կը դառնայ արտի տէր, արտը կը ծլի, կը դեղնի, հունձք կու տայ: Գէ-
վօն ուրախ է անհունօրէն, և հպարտ, որ իր *արտն* ունեցաւ վերջապէս: Սակայն փոքր է ան, անոր հունձքը չի բաւեր նոյն իսկ պետական տուր-
քին: Ընտանիքը անմխիթար է, բայց ինք կը հաւատայ աւելի լաւ բերքե-
րու, ապագայի լաւագոյն հեռանկարներու...:

* * *

Ազգերու տնտեսական ազատագրութեան նախապայմանը քաղաքական անկախութիւնն է. հետեւաբար առանց այս վերջինին, տնտեսական ձերբազատ-
ման բոլոր փորձերը ցնորքներ են միայն:

Ահարոնեանի քաղաքական, ընկերաբանական գաղափարները և պատ-
մափիլիսոփայութիւնը կը բղխին Հ. Ց. Դաշնակցութեան ծրագիրէն ու աշ-
խարհայեացքէն, ուրիշ խօսքով՝ հայ ժողովուրդի ձգտումներէն: Անիկա ուխտեալ պաշտպանն է ու գաղափարախօսը աշխատաւոր զանգուածներուն, գիւղացիութեան, բոլոր զրկուածներուն ու կեղեքուածներուն, և թշնամի՝ ա-
մէն տեսակ բռնութեան, ինչպէս իր անզուգական վարպետը՝ Քրիստափոր Մ'իքայէլեան: Անոր պէս մանուկ տարիքէն գիտէ բոլոր «վաստակեալների և բեռնաւորների» ցաւը, գիտէ և աշխարհի հզօրներուն անարդարութիւնը:

Գիտէ որ անհո՞ւն ժամանակներէ ի վեր աշխարհի վրայ կը հնչէ տա-
ռապանքի ու թշուառութեան երգը: Մարդիկ չարաչար կ'աշխատին ու կը տքնին, առանց կշտանալու, առանց վայելելու իրենց աշխատանքին համե-

մատական արդիւնքը։ Դարերէ ի վեր մարդկային բազմութիւնները կանգներ են հսկայական բուրգերն ու պալատները, շէն ու լուսաւոր քաղաքները, և սա- կայն իրենք մնացեր են անտուն, ու կարօտ փշրանքներու։ Խեղճութեան հետ տգիտութիւնը բաժինն է նոյն դասակարգին։ Հետեւաբար ինչո՞ւ զար- մանալ, որ «Աշխարհում մեծ մասամբ կարիքն ու չանցանքը ձեռք ձեռքի տուած են ընթանում, ոճիրները շատ յաճախ ծնունդ են առնում մութ նկուղներից, խաւար գետնափորերից, խշտիկների վրայից, ցնցոտիների մի- ջից. քաղցից գալարվող ստամոքսը սնունդի տեղ թոյն է քամում մարդկային երակների մէջ, և տանջված գլուխները, տառապանքներից շշմած, կեղծիքի, խաբէութեան և չանցանքների մէջ են փնտռում մի ելք, մի հնարք։» (1)

Ո՞վ է չանցաւորը...։

— *Ամբոխը...։ «Հսկայ չիմար»ը...։ «Ամբոխը, բուռն կրքերի, ստոր վայելքների ծարաւ ամբոխը, որ իր զուարճութեան և մանաւանդ իր զայ- րոյթի մէջ անսանձ է ու զարմանալի, որ ծովի պէս իր անհասկանալի գժու- թիւններն ունի, իր հրեշաւոր չեղեղումները, անողոք ու կոյր, աւերիչ ու ճակատագրական՝ որպէս տարերքը։ Քաղաքն իր մութ ծոցից մղում էր իր տականքը. հասարակութեան այս մասը որ բոլոր դարերում, բոլոր աշխարհ- ներում բոպէական հզօր ցնցումների, բիրտ կրքերի, չանկարծական վայրենի բռնկումների մէջ է փնտրել իր գերագոյն վայելքը. նա՝ որ գիտէ իր մէջ- քին բեռ, իր վզին լուծ դնել չիմարաբար, որ գիտէ իր բռնակալների ոտ- ները համբուրել սողալով, և աչքերը փակած՝ անձեղների և նոյն իսկ իր բա- րերարների մէջքին վրայ քայլել վայրենի քրքիջով։» (2)։*

Քաղաքէն չեռոյ գիւղական աշխարհը փոխադրուինք, եթէ սիրտ ու- նինք, աչքերով տեսնելու և հոգիներով զգալու լռութեան ու խաւարի մէջ սահող, և աշխատանքով ծանրաբեռնուած մարդկային արարածներու տա- ռապանքին չափն ու մեծութիւնը.

«Ճրագի լոյսի առաջ փռուած մի ամբողջ գիւղական կեանք իր բազ- մապիսի, պարզ, գրաւիչ արտայայտութիւններով, չարաչար աշխատող, լռու- թեան ու խաւարի մէջ, տքնող մարդկանց մի ամբողջ բազմութիւն, որոնց մի այլ տեսքը այնպէս առաքինի է դարձնում մեզ, այնպէս մեղմում է փոք- րիկ իրերից յուզուած մեր խոշոր կիրքերը, նոր սահմանումներ է տալիս մեր անհատական յաւերին, հասկացնում է մեզ մեր ներքին արժէքը։ Այսպիսի

---

(1) *Ա. Ահարոնեան*, Իտալիայում։

(2) *Ա. Ահարոնեան*, Կեանքի վէպը, *էջ 36-38*։

տեսարաններուն առաջ միայն մենք զգում ենք սեփական վշտերի բոլոր ուչնչությիւնը, զգում ենք, որ իրապես տառապող, մորմոքող սրտերի ցաւերին նայելի չենք, և շատ անգամ հէնց դրա համար է անտանելի թւում։»

*
* *

Հայ ժողովուրդը լաւատես է բնազդով և հաւաքական յոռետեսութիւնը չի մթագնեց երբեք անոր ճակատը. «*Աստուածների դէմ իսկ կը ծառայանք ապրելու համար*», որովհետեւ «*Կանգուն է Մասիսը. նա մահ չունի*» կը պատգամէ լաւատես հայրենասէրը։

Լաւատես է մանաւանդ անոր համար, որ ջերմօրէն կը հաւատայ պատմութեան բարեշրջման անյաղթելի օրէնքին։ Կը հաւատայ, որ դարերու ընթացքին իր լուսաւոր ճամբան գտած ու քալած մեր ժողովուրդին, լաւ ապագայ մը վերապահուած է. կը հեգնէ մտայնութիւնն ու յոռետեսութիւնն անոնց, որոնք ներկայ օրերու անարդարութիւնն ու անիրաւութիւնը հանղէպ մեր ծեղին, հանղէպ Բանականութեան ու Ճշմարտութեան, յաւիտենական կարծելու մանկական հաւատքը և հետեւաբար պատրանքն ունին։ «Գաղափարի յաղթանակը դանդաղ է կատարվում կը գրէ *Իտալիայում* հատորին մէջ, (էջ 135) ի՞նչ փոյթ, ապագան նրանն է. բուրգերի և ամֆիթեատրոնների հիմքը Պլատոններ ու Արիստոտէլներ են փորում, մտքի էվոլիւցիան ժամանակից էլ զօրեղ է, երբ պէտք է քանդել մղլած խաւար հակացողութիւնների դարաւոր շէնքերը։»

Այս նպատակին հասնելու համար, անհրաժեշտ է *հանրային խղճի մութ խորշերը* լուսաւորելու աշխատանքը։ Լո՜յս, աւելի լո՜յս, կ'աղաղակէ, միակ իտէալը մարդկային բոլոր ձիգերուն ու յողնութիւններուն։ «Իսկապէս մեծագործ մարդ կը լինի նա, ով կարողանայ մեր ժողովրդի հասարակական խիղճը կրթել, զարգացնել, զգայուն դարձնել դէպի շրջապատող չարիքը։ Մի միայն հասարակական ազնուացած խիղճը կարող է վերջ դնել ոգեւո, խաւար ժողովուրդների գլխին ծանրացող չարիքին, որի խոշոր հիմունքներից մէկն է անհատի և հասարակութեան շահերի անհամաձայնութիւնը, այդ երկու ազդակների մշտական պայքարը։» (1) Դարձեալ նոյն գիրքին մէջ, «Ամէն բան կախուած է միայն ժողովուրդի կրթութիւնից, նրա մտաւոր մակերեւոյթի բարձրացնելուց, մնացածը ինքն իրան կը կատարուի։»

Այս բոլորը կը տանջէն հանրային գործիչին միտքը։ Անհատի և անոր

---

(1) *Ա. Ահարոնեան*, Նվէյցարական գիւղը, էջ 115։

իրաւունքներուն պաշտամունքը նոյնքան արդար է անոր համար, որքան անհատներէ կազմուած հաւաքականութիւններուն և ազգերուն իրաւունքները. մանաւանդ՝ անկաշկանդ հոգիի և ամէն նախապաշարումներէ ձերբազատուած անհատին իրաւունքը, հիմը կը նկատէ ամէն բարեշրջումի։

Բարեշրջումի տիեզերական օրէնքին հետ ղոյդ կը քալէ նաեւ պայքարի իմաստութիւնը։ Շատ անգամ այս վերջինն է, որ բարեշրջութեան դանդաղ ընթացքը կը փութացնէ, միջամտելով յարմար ու պահանջուած րոպէին։ Ուրիշ խօսքով զաղափարական պայքարին կը յաջորդէ, և անով կը զարգանայ իսկական յեղափոխութիւնը, որ դարերու ընդունած իրաւակարգերը կը տապալէ, մարդկային անբռնաբարելի իրաւունքներուն քարոզը կը պատգամէ ապրող ժողովուրդներուն։ «Քանի մարդը մարդի վրայ կը բռնանայ, դասակարգը դասակարգի, ազգը՝ ազգի, քանի որ մարդկային անգիտակից կամ մոլորուած զանգուածները որձացող կովերի պէս իրենց ձագերի խոտով լցրած մորթին կը լիզեն կթուելու համար, այնքան ժամանակ պայքարը կայ և կը մնայ, որպէս գիտակից սերունդների ամենասրամայական, ամենանուիրական պարտք...։ Ազգերի ազատական տենչը մարդկային զանգուածների ամենահզօր կիրքն է։» (1)

Այս տեսական խորհրդածութիւններէն յետոյ, Ահարոնեան մեզի կու տայ իր *Երազը*, ինչպէս Րաֆֆիի *Վարդանի երազը*, «քնքուշ՝ որպէս մանկան առաջին ժպիտը, խնկաբոյր՝ որպէս կոյսի առաջին համբոյրը»։

Հայրենասէր գործիչը աննպատակ զրականութիւն մը ըրած պիտի ըլլար, եթէ մարգարէի մը պէս դալիք սերունդներուն աչքերուն առջեւ չի պատկերացներ այն խոհալ երկիրը, հայրենիքը, որ մերինը պիտի ըլլայ։ Ո՛չ միայն հայրենասիրութիւնն է իր մէջ խօսողը, կամ ազգային ինքնապահպանման բնազդը, այլ ընկերական ու տնտեսական անկախութիւն ձեռք բերած, քնութեան բարիքները վայելելու արժանի ժողովուրդի մը երազն է որ կը ծաղկի իր գրչին ծայրը։ Այդ էջը իբրեւ իր խոհալը, գաղափարապաշտի ու արուեստագէտի խոհալը, ամբողջութեամբ մէջ կը բերեմ հոս. անիկա մասը կը կազմէ Զաւարեանին ձօնուած, և Զահակիրը վերնագիրը կրող մէկ գրուածքին, որ կը գտնուի *Ազատութեան ճանապարհին* հատորին մէջ։

«Ահա արեւն էր բարձրանում ոսկեշող երկնքում, գարնանային պերճ արեւը ու նրա վառ ցոլքերի մէջ, որպէս ոսկէ ծովում ալեծածան դաշտն

---

(1) *Ա. Ահարոնեան*, Րաֆֆի, Հայրենիք *ամսագիր*, *բ. տարի*, *1924*, *թիւ 11*։

էր ծիծփում։ Գեղանի աղջիկները եղնիկների կայտառ երամով անցնում էին ցօղազարդ հովիտներով, աչքերի մէջ սէր ու կեանք, կրծքերը բրթռուն, հոգիների մէջ շող ու ցոլք ու նրանց երգը գալարուն և քրքիչը խանդավառ՝ հնչում էին ձորերում կախարդիչ ելեւէջներով։ Հնձուորների հուժկու թիկունքները կռանում ու շակում էին ջլուտ բազուկների թափի հետ, գերանդիները զրնգոցով բարձրանում, համբուրւում էին արեւի ցոլքերի հետ, բեկբեկուն փայլ արձակում ու կրկին սուղւում խոտ ու ծաղկի բուրաւէտ թանձրութեան մէջ։ Հեռուն հաստավիզ եզն ու գոմէշը ամոլ-ամոլ քաշում էին գութանը, մաճկալը՝ պէմքը հողագոյն, աչքերն արեւով լի, լիաթոք շընչում էր թարմ ակօսի բոյրը, պատանի հօտաղը, լծան վրայ նստած՝ հայրենի «հօրովէլի» վճիտ ու առնական հնչիւններն էր արձագանգում ու մայր երկիրը իր յուռթի կողերն էր բաց անում քրտինքն ու սերմը ընդունելու համար։ Հօտերը հանդարտ բարձրանում են լեռն ի վեր, ինչպէս ոսկեզօծ մշուշը վաղորդեան, և հովուական սրինգի հնչիւնները ծաղիկները համբուրելով՝ գնում էին լեռնակատարների ջինջ հովերի հետ համբուրուելու։ Ու ողջ դաշտավայրը իր խինդ ու ժպտով, իր խոտ ու ծաղկով, արտ ու արօտով, հօտ ու հօտաղով, մի վիթխարի օրհներդ էր, որ բրթռում էր արեւի տակ վաստակի, արդարութեան ու ազատութեան լուսաշող աստծուն։

«Եւ հեռուն, գիւղն էր, ճերմակ, ժպտուն տնակները ծառ ու ծաղկի մէջ կորած, ուր յարկերի տակ արցունքն էր չորացել, երջանկութեան ու խնդութեան ժպիտն էր փթթում։ Մանուկները խռներամ ու կանչուռտոցով շտապում էին դէպի դպրոց, ծերուկ պապը ջրում էր ծաղիկները, հարսն ու աղջիկ գործում էին ու երգում, մայրը վաստակաւորների սեղանն էր պատրաստում։

«Աշխատանքի իրաւունքն ու պաշտամունքն էր թագաւորում ամէն կողմ, թշուառ, հիւծուած վաստակաւորը վերջապէս շտկել էր իր թիկունքը, պորտաբոյծ ու լկտի գիշատիչների, իր արիւն-քրտինքի ծծողների լուծն էր փշրել և այժմ լեռները թնդում էին նրա մուրճերի յաղթ հարուածներից, մայր երկիրը բաց էր անում նրա առաջ իր բեղուն ծոցը, նրա ճիգերը պսակելու, նրա կեանքը դրախտի վերածելու համար։»

* * *

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ

«ԿԱՐՕՏ ՀԱՅՐԵՆԻ».— ՖԱՈՒՍՏԻ ԻՏԷԱԼԸ. «ԿԵՑԻ՛Ր, ԴՈՒՆ ԱՅՆՔԱՆ ԳԵՂԵՑԻԿ ԵՍ».— ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ՝ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԷՋ.— ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԸ.— ԲԱՆԱՍՏԵՂԾԸ.— ԳԵՂԵՑԿԱԳԻՏԱԿԱՆ ՅՈՒՋՈՒՄԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԸ.— ԲՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ

Բանաստեղծութեան մէջ, մի՛ մոռնաք արցունքները, մի՛ մոռնաք մարդկայինը:

ՓԻԵՌ ԼԱՍԵՐ

Կարօտ Հայրենիի (1) Ահարոնեանի վերջին գործերէն է: Հատորը, նախերգանքէն զատ, որ *Ստուերներն իջնում են* վերնագիրը կը կրէ, կը բաղկանայ ութը երգերէ. *Արեւի յետեւից, Հայրենի տուն, Արաքս, Մասիս, Այրարատեան դաշտ, Սրճարին, Մեր աղջիկները* և *Կախարդական Տաճար*: Բոլորն ալ քերթուածներ են, ազատ չափով գրուած: Այս նիւթերը Ահարոնեան մեզի տուեր էր աւելի կանուխ, իր արձակ էջերուն մէջ, որոնցմով կ'երգեր մեր հայրենի բնութիւնն ու իր գեղեցկութիւնները. այս անգամ կ'երգէ իր *կարօտը*, որ հետզհետէ կը խորանայ, տրուած ըլլալով, որ հեռու է հայրենիքէն, իր սիրած, պաշտած ու երգած հայրենիքէն: Կը նախազգայ որ «ստուերներն իջնում են» ու իր մազերուն մէջ «արծաթ թելեր են շողում, մօտալուտ ձմրան գունատ բանբերներ:» Ուրախութեամբ կը քնարահարէ, սակայն իր հոգիին մելամաղձոտութիւնը կը մաղուի անոր լարերէն . . . :

Բանաստեղծը խո՛ր վիշերուան մէջ, առանձնացեր է իր անշուք սենեակը պլպլան ճրագի մը լոյսին հետ մտերիմ, և աչքերուն առջեւէն անցնելը կը պիտէ թափօրի մը, որ կազմուեր է «Հին-հին պապեր»էն: Ծառուստի մը պէս, որ կեանքին մէջէն քալեց ու անցաւ, գիտութեան, արուեստի

(1) Ա. Ահարոնեան, Կարօտ հայրենի, Պօստոն, տպարան Հայրենիք, 1927:

ու գրականութեան նեկտարը ըմպելէն, աչքերուն կը յայտնուին ուրուականները անցնող սերունդներուն, որոնցմէ շատերը կը ճանչնայ։ Բայց ինք լոյսին սիրահար է, կ'ատէ խաւարն ու սոուերը։ Կը սիրէ վիրջալոյսի ցոլքերը, որոնք այրուած սիրտերուն վերջին կայծերն են։ Կը սիրէ մայր բնութիւնը, ու վա՞ռք կու տայ անոր։

Յաւիտենական ուխտաւորն է կախարդական ծաճարի մը անծանօթ աստուածուհեան։ Գիշեր թէ ցերեկ կը քալէ, իր ցուպին յենած, մանաւանդ գիշերները, երբ լուսինն կը տիրէ ամէն կողմ։ Ցամր ու անձայն, ճրագի մը ազօտ լոյսին ապաւինած, ուխտաւորը կը քալէ դէպի արեւը, դէպի կեանքի ճշմարտութիւնը, համառարած աւերակի մէջէն։ Փոխորիկները կը ծարեն ու կը փշրեն լապտերը. սակայն բանաստեղծը կը գոչէ.

Հոգուս մէջ մի աստղ ունիմ մշտավառ —
կարօտը հայրենի.
Եւ ոչ մի աստուած կարող է այն մարել
Ադանց ամօթի, առանց սարսուռի.
Ա՛հ, կարօտը, կարօտը հայրենի...

Կը քալէ անիկա անապատին մէջէն դէպի արեւը, ինչպէս երբեմն Ըբու-Լալա-Մահարին, Հնդիկ մեծ բանաստեղծը։ Երազի պէս կը յիշէ կեանքին ամէն մէկ օրակը, որ շղթայի մը պէս կազմուեցաւ. ինքը հիմա բարձունքներու սիրահար, եռեւը կը դառնայ, ու ամէն բան երազի մը պէս կը յիշէ։ Կը յիշէ երիտասարդական տարիները, փառքի ու յաղթանակի պայքարները, գրականութեան ու արուեստներու սէրը, և սակայն կը զգայ, որ այդ բոլորէն կը մնայ մխայն *հայրենի կարօտը*.

Հանգչում է աիա ծարաւը փառքի,
Եւ՛ սէրը փոթորկոտ,
Եւ՛ կիրքը բոցոտ,
Եւ՛ տենչը պայքարի.
Մնում է միայն կարօտն հայրենի,
Աւեր տաճարի կանթեղ պլպլան,
Մի անմահ կրակ,
Որ գերեզմանիս մէջ իսկ կը մխայ,
Թէ Այրարատի ծոցում չը հանգչեմ,
Եւ Արաքսը չօրօրի քունս յաւերժական...

Բանաստեղծին քնարը կ'երգէ այս անգամ հայրենի տունն ու երդիքը, կ'երգէ աւերակն ու մոխիրը, և կ'ոգեկոչէ անոր բնակիչները, որ անտուն ու անհող կը թափառին աշխարհի չորս ծագերուն: Անոր երգը հեծեծող է ու մղկտան, ինչպէս կոյր աշուղին երգը, մեր հայրենի աւերակներուն վրայ...:

Հոգիին վերքն ու մոխիրը կը բանայ Մայր-Արաքսին, որուն ջրերը խմեր ու երգերը սորվեր էր մայրենի օրօրի մը պէս: Բանաստեղծը կարօտն ունի նաև անոր կուրծքին, հոն հանգիստ առնելու համար, անոր պատմելու իր կսկիծն ու տառապանքը անանուն: Անոր հասկցնելու, թէ ի՛նչ տանջանք է նկուն ցեղի մը զաւակն ըլլալ, հզօրին թունաւոր ժպիտը մուրալ, փակուած դրան առջեւ արցունքը կլլել, և աշխարհէն գաղտնի ու լքուած հեծկլտալ...:

Ինչպէս բանաստեղծ Պետրոս Դուրեանը, որ «Քող որ շանթ մ'ըլլամ ու կողղ խրիմ»ի ահաւոր ու անիծակուռ տրտունջքը կը քանդակէր, մեր օրերու ուխտաւոր քնարահարն ալ, բռնութեան ղէմ կրակէ մրրիկ կ'ուզէ ըլլալ, մահուան գաղտնիքը յափշտակել ու խորտակել անոր մեջքը.

> Եթէ կաս, Աստուա՛ծ, գուն դ չեմ հայցում,
> Դադրի՛ր չարիքից, յոգնութիւն չունի՞ս,
> Ինձ գէթ մի՛ անգամ մի՛ հազար տարի,
> Քո՛ղ որ իմ ազգը իր բաղդը կերտի
> Քո եղեռնաճին աչքերից հեռի...

Այս տողերէն յետոյ բանաստեղծը կը զգայ որ յուսաբեկութեան պահու մըն էր, որ «փոքրոգութիւնը» ունեցաւ սպառոյ երգիչ դառնալու և իր ցեղը «նկուն» յորջորջելու: Անոր հոգիին անձանօթ է այդ ճիչը, որովհետեւ մեր ցեղը «Երկնքի հուրն է շարթել խիպախ խոյանքով», աստուածներուն վրէժխնդրութեան նշաւակ դառնալով, իբրեւ նոր Պրոմէթէոս.

> Ի՛նչ փառք անստուեր, ի՛նչ հպարտութիւն
> Ջահիակիր ցեղի զաւակը լինել
> Ջաւակը անյաղթ, հզօր Արաքսի...

Ջորրորդ երգը նուիրուած է Մասիսին, «Հայոց աշխարհի հսկայ նահապետին»:

Ահարոնեան մանկական տարիքէն կրեր է այս սիրանեան հսկային ներկայութիւնը, շատ անգամ երգեր ու փառաբաններ է զայն: Իրեն համար անկարելի եղեր է մոքին հորիզոնէն վանել անոր պատկերն ու ստուերը:

Ձգայուն հոգի մը չէր կրնար խուսափիլ անոր հրապոյրէն։ Դարեր դարերու են յաջորդեր, սերունդներ սերունդներու, և հսկայ լեռը,

Աստղերի կայան,
փոթորիկներուն տէր,
Մրրկի Աստուած,
Շանթ ու ամպրոպի ահարկու վարպետ,
Մասիս զարհուրանք,

իբրեւ «մեռած Աստուծոյ մը խոլական արձան» կեցեր է անխռով, ու կը դիտէ աշխարհի չորս հովերուն առջեւ տարուբեր ու ցրուած ժողովուրդը...։

Մասիսը անհասանելի բարձունքներէն վար կը նայի, ու

Ժամանակից դուրս՝ մի անիւն խոհ է նա,
երկնքից կախուած իսկայ մտածումն.
Տիտանեան հոգի, որ արձանացել է
Հայոց աշխարհի բաղդի ճակատին,
Ալեբաժներից վեր,
Մահերից բարձր,
Աստղերի մէջ,
Աստծու կողքին,
Աշխարհին ասելու՝
ես կա՛մ ու կը լինեմ...

Լինելութեան ու գիմադրականութեան այս պատգամին ականջ տուեր է մեր բանաստեղծը «մանուկ օրերից», այդ պատգամը Մասիսի անլռունդնեբուն մէջ շրթայուած Արտաւազդին դարաւոր փափաքն է, անմահ հէքեաթը մեր ցեղին անկախութեան ու ազատագրութեան...։

Մասիսէն յետոյ, ահաւասիկ երգը Այրարատեան դաշտի։ Ինչպէս նախորդ երգերուն, այս երգին մէջն ալ Ակարոնեան անսանձ երիվարի մը վրայ հեծած, շունչը բռնած, աչքեր կ'անցընէ հայրենի բնութեան գեղեցկութիւնները, որոնց կարօտովը կը տոչորի իր հայրենազուրկ հոգին։ Կը փնտռէ Արարատեան դաշտի հորիզոնները, վերջալոյսները, ամպերու կարաւանը, չինչ երկինքը, լոյս աղբիւրներուն երգը, շինականներուն հեւքը, և արշալոյսներուն վեհափառ ծնունդը։ Կ'երգէ տարուան չորս եղանակները, ամէն ձեւի իր գեղին ու հրապոյրին մէջ։

Վեցերորդ երգը կեանքի ու մահուան խորհրդաւոր հէքեաթներուն ձօն-

ւած է: Բանաստեղծը խորո՛ւնկ լաւատեսութեամբ, երեւոյթներուն գեղեցիկ ու զուարթ կողմը տեսնել կ՛ուզէ միայն: Խորապէս կը հաւատայ, որ Աղամ ու Եւայի հէքեաթը ամէն օր ու ամէն ժամ տեղի կ՛ունենայ բնութեան մէջ, ու կեանքը կը թրթռայ հզօր երկունքներով, կատարեալ ներդաշնակութեամբ: Բնութիւնը և իր երեւոյթները, ձայներն ու շունչերը սիրող ու պաշտող բանաստեղծը, կ՛երգէ մեղի յաւիտենական հէքեաթը.

Անցած գարնանը ծաղկած փշատի ծովանու ներքոյ
Պատանի մաճկալը շատ խորը նայեց կոյսի աչքերին.
Եւ երկու սրտեր կայծակների պէս իրար պլլուեցին.
Արեւի ցոլքը՝ մի կաթիլ կրակ, ծաղկի ծոցն ընկաւ,
Բազէն արտի մէջ ճչացող լորի կուրծքն էր կցատում
Եւ ցուլը տնքոցով գետինն էր ծոտոտում էգի յետեւից.
Ձլուըլան արտուտը բարձր եթերում ցոլքեր էր խմում:

Իր լաւատեսութիւնը բնութենէն ներշնչուած է իրեն, որովհետեւ կը հաւատայ, թէ տիեզերքի մէջ մէկ հաստիկ երգ կայ, ու այդ երգը վերանորոգութեան, վերաղարթնումի ու յարութեան հզօր երգն է, ուրախութեան ու արցունքի յաւիտենական զոյգ ներդաշնակութիւնը:

Այսպէս երգելէ յետոյ *հայրենի կարօտը*, մեր անզուգական բնութիւնը, երեւակայութեան նժոյգը հեծած, բանաստեղծը կը կանգնի մեր դաշտերուն եղերքը ու մտիկ կ՛ընէ երգը *մեր աղջիկներուն*, որոնց «երգը սէր է, և սէրը՝ երգ», և որոնց հայեացքին մէջ թաւած է «ցաւը ոսկեզօծ ու կեանքը ժպիտ»:

Վերջին երգը, երգն է *Կախարդական Տաճարին*, որուն երազը սիրտին, հոգիին ու աչքերուն մէջ, յոգնած ու գունատ ուխտաւորի մը պէս, որուն ցուլը ձեռքին մէջ մաշեր է, կը քալէ ու կը քալէ անվախճան, դէպի այդ անծանօթ Տաճարը...

Մի աղօթք կայ իմ հոգում,
Որ դեռ երբեք չեմ արտասանել.
Մի արցունք կայ իմ սրտում,
Որ դեռ երբեք չեմ լացել.
Այն աղօթքն ու արցունքն է՝
Մի անծանօթ աստուածուհեան
Կախարդական տաճարի:

* * *

Ճշմարիտ բանաստեղծները իրենց հոգիին խորն ունին աղօթք ու արցունք, մարդկային էակի այս երկու զգայութիւնները, որոնցմով կեանքը կը գեղեցկանայ, ու բանաստեղծութեան կը վերածուի: Արցունքը տառապանքին, գոհունակութեան ու երջանկութեան աղօթքը, և գեղեցկութեան փառաբանութիւնը, որոնց վրայ հիմնուած է մեր գոյութիւնը, — բանաստեղծութեան ամէնէն վճիտ, ամէնէն հարազատ տարրերն են:

Ուետիս Ակարոնեան *կարօտ հայրենի* քերթուածներով, գերազանցօրէն զգայուն ու լաւատես բանաստեղծի մը բոլոր արժանիքներն երեւան կը բերէ, կատարեալ ներշնչումով, կատարեալ արուեստով, որուն յատկանիշները կը մնան, նախ՝ *բնութիւնը*, իր իրական ու ճշմարիտ պատկերին մէջ, *մարդու հոգին* իր տառապանքով ու սէրերով, *կեանքի եւ մահուան* անիմանալի խորհուրդները, *մտածումին թեւը*, որով իրարու կը կապուին խորունկ զգայութիւնները, և ատոնցմէ վեր, *գեղեցկին զգացումը*, որուն ստուերը պէտք է թափառի միւս բոլոր զգայութիւններուն վրայ, որպէսզի գեղարուեստի գործը ապրելու տեւմանուի: Ուստիոյ այս վերջին զգայութեան որ բանաստեղծին երեւակայութեան թռիչք կու տայ, ունեցած ճաշակն ու նախասիրութիւնները երեւան կը հանէ, անկարելի է կարդալ *բնութեան* գաղտնիքներուն գեղեցկութիւնը, *մարդկային հոգիին* առեղծուածը, ուր երբեմն, կարգով կը յայտնուին կարեկցութեան, սիրոյ, նախանձի, ատելութեան ու ոճիրի զգայութիւնները. անկարելի է ըմբռնել մանաւանդ *ճշմարտութեան* և *իրականութեան*, այս զոյգ ազդակներուն կարեւորութիւնը, որով կը կնքուի արուեստի գործերուն վաւերականութիւնը: Դրաստէտ մը, որ յարգանք կը զգայ այս բոլորին հանդէպ ստեղծագործելէ առաջ, ու անոնց օժանդակութեանը կը դիմէ, գտնելու համար տանջանքով երազած *վայրկեանը*, ըսելու համար «*կեցի՛ր, դուն ա՛յնքան գեղեցիկ ես*», ինչպէս Դէօթէի Ֆաուստին հոգեկան տագնապներն ըսել տուին այդ անմահ գործին մէջ, — այդ գրագէտ-արուեստագէտը ուրախութիւնը կը զգայ, թէ ինքը կը ճանչնայ *բնութիւնը* , մարդոյ հոգին և իրական ու շօշափելի աշխարհը: Այս պայմաններէն դուրս գոյութիւն չունի արուեստի ո և է գործ:

Գեղարուեստական գործ մը տալու համար ուրեմն, արուեստագէտը պէտք է ունենայ յիշուած բոլոր զգայութիւնները, առանց որոնց՝ մի միայն ոճի ու ճարտարապետութեան, լեզուի ճկունութեան ու հարստութեան միջոցներով, արուեստի գործը անկատար է. անոր կը պակսի աստուածային այն

շունչը, որ հոգի ու միտք կու տայ տառապանքով երկնուած ստեղծագործութեան։

* * *

Իրականութեան ու ճշմարտութեան ձայնին հարազատ արձագանգը փնտռելու համար, երբ քննադատը կը մօտենայ գործի մը քննութեան, դայն լուսաւորելու, ոչ թէ այրելու և մոխիրի վերածելու համար, մէկ բան ուշադրութենէ վրիպելու չէ ուրեմն, այն՝ որ քննուելիք առարկան պէտք չէ ձեկուսացուի, ու նկատողութեան առնուի իբրեւ անկախ արուեստի գործ մը, ժամանակէ, միջոցէ, տրուած պայմաններէ դուրս, ու մանաւանդ ցեղային այն հանգամանքներէն ազատ, որոնք կը բնորոշեն ու կը կազմեն անոր դիմագիծը, հոգիին պատկերը, ու դարերու յաջորդականութենէն մինչեւ մեր ժամանակները հասնող նկարագիրը։

Եթէ արուեստի գործ մը չի տար մեզի պատկերը ցեղային նկարագրի մը, անոր հոգեբանութիւնը, տառապանքով թրծուած փիլիսոփայական արիութիւնն ու դիմադրականութիւնը, եթէ ան չի ցուցներ մեզի հաւաքականութիւնները և անհատները փոթորկող ու գալարող ներքին կրակը, ու ընդհակառակն արուեստագէտը կը տարուի մի միայն երազներու աշխարհը, հեռո՞ւ իրականութենէն, ու կ'ապրի միմիայն իրեն համար, իր անձին ու անհատական պահանջներուն ու ձգտումներուն համար, արուեստի գործ մը տալու պարագային իսկ, շա՛տ քիչ հետաքրքրութիւն կ'արթնցնէ մեր մէջ, շա՛տ քիչ կը խօսի մեր ղգայումներուն. թերեւս պիտի հիանանք հեղինակին տաղանդին ու կարողութիւններուն վրայ, և սակայն պիտի ուզենք, որ այս վերջին պայմանները լրացնելով մէկտեղ, մնար մեր երկինքին տակ ու հորիզոնին վրայ, ներշնչուէր *մեր* հայրենի միջավայրով ու *մեր* երազներով. տար *մեր* ուրախութիւնները, *մեր* վիշտերը, *մեր* սէրերը, ատելութիւնները, *մեր* ցանկութիւններն ու թուիչքները վերջապէս։

Այս պայմաններով երկնուած ստեղծագործութիւն մը, արուեստի գործ մըն է անպայման, ու զուրկ չէ համամարդկային տարրեր պարունակելէ։

Պարագան բոլորովին յատկանշական ու տարբեր է մանաւանդ մեզի համար, մեր իրականութեան համար։ Մեզի տրուած չէ միջազգային արժէք ունեցող հանճարներ ծնիլ. մեր պայմանները, մեր միջավայրը, մեր հոգեկան դաստիարակութիւնն այնպէս դասաւորուած են, որ մինչեւ հիմա չենք ունեցեր համամարդկային կշիռով կշռուած արուեստագէտը։ Իրողութիւնը այս է, անոր պատճառներու վերլուծումն ալ բոլորովին ուրիշ խըն-

դիր է։ Հետեւաբար մեր արուեստագէտները, մեր դրագէտները ինքզինքին պիտի արժէքաւորեն այն չափով, ինչ չափով որ անոնք կը ստեղծագործեն մեր իրականութեան և մեր սերունդներուն համար։ Ակէ դուրս տեղի ունեցող շարժումներն ու փորձերը գատապարտուած են ձախողութեան։

Մենք մե՛զի համար միայն արժէք ունինք, մենք մե՛զի համար համեմատութեան եզր կրնանք դառնալ, մանաւանդ քաներորդ դարու մէջ, քանի որ ֆիզիքական ուժի պաշտպանութեան ու դրօշին տակ է, որ արուեստ ու գրականութիւն իրենց տիրապետութիւնը կը տարածեն ուրիշներուն վրայ։

Այս խորհրդածութիւնները կ'ունենամ երբ Ահարոնեանի բազմաթիւ հատորները կը թերթատեմ։ Անկասկած ան է եւրոպացի հեղինակ, նոյն իսկ միջակ գրող, ա՛յքան գործեր արտադրելէն յետոյ, մանաւանդ որակը նկատի ունենալով, ո՛չ միայն իր հայրենիքին այլ նաեւ միջազգային գրականութեան մէջ իր որոշ տեղն ու դիրքը պիտի ապահովէր։

Ահարոնեան անտարակոյս մեր գրականութեան մէջ գրաւած է իր պատուաւոր ու առաջնակարգ տեղը, այդ մասին երկու կարծիք չի կայ։ Շատ մը գործերու թարգմանութիւնը դինքը միջազգային արժէք պիտի ներկայացնէ, խորքին մարդկային հանգամանքով։ Իւ սակայն անիկա արժէք ունի ու համբաւ մեզի համար, մեր ժողովուրդին ու գրականութեան համար, ինչպէս նոյնն է բազմաթիւ հայ դրագէտներու պարագան։

Եթէ մեկն ու մեկը անոնցմէ փորձէր նուազ ազգային մնալ իր ստեղծագործութեան մէջ, ու փորձէր ենթադրենք խիստ յաջող գործեր տալ համամարդկային խոհելով ու ձգտումով, կը կարծէ՞ք որ աւելի արժէք մը տուած պիտի ըլլար մեր գրականութեան, ու համբաւ շահած միջազգային գրականութեան մէջ։ Ես կը տարակուսիմ։ Եւ օրինակներ ալ կարելի է տալ։

Գրիգոր Զօհրապի նորավէպերը, իրենց արուեստով ու բովանդակութեամբ մե՛զի համար արժէք ունին, թարգմանեցէք զանոնք օտար ո՛ւ է լեզուի, և ներգործութիւնը շատ աննշան պիտի ըլլայ։ Յովհ. Թումանեանի ամէնէն ժողովրդական դիւցազներգութիւններուն թարգմանութիւնը նմանապէս. Րաֆֆիի վէպերը մեր գրականութեան մէջ միայն գլուխ-գործոցներ են. Շանթի թատերախաղերը օտար հանդիսատեսի մը համար չեն խօսիր երբեք, երբ ա՜նիկա ընտանի է Շէյքսպիրի, կամ Իպսէնի թատերգութիւններուն։ Վարուժանի Հացին երգը, իր մարդկային հանգամանքովն իսկ, ո՛ւ է եւրոպացիի աչքերուն առջեւ չի բերեր իր գիւղացին ու արտերուն կեանքը։ Սիամանթոյի դիւցազներգութիւնները օտարին համար անըմբռնելի վիճակի մը նկատմամբ պիտի թուին։ Նոյնը նաեւ Ա. Ահարոնեանի պատմուածքնե-

րուն, կամ օրինակ *Հայրենի կարօտին* թարգմանութիւնը։ Այս բոլորին արժէքը, տեղն ու դիրքը կրնանք սահմանել, ու պէտք է որ սահմանենք հայկական ակնոցով, ու մեր միջավայրին ու պայմաններուն ներկայացուցած քննական ոգիով։ Ակէ դուրս ոևէ ուրի ու միջոց, մեզի կ'առաջնորդէ սխալ եղրակացութիւններու և սխալ պատաստաններու։ Տիեզերական հանճարները, մարդկութեան պատկանելէ առաջ, իրենց հայրենիքին ու ժողովուրդին են։

* * *

Ակարոնեանի գրականութեան մէջ ինչ բան որ կը թուի *ենթակայական* ըլլալ, այսինքն գրագէտին զգացումներուն, դաղափարներուն ու ցանկութիւններուն չատուկ, *առարկայական* արժէք ունի, որովհետեւ մեր ժողովուրդին հոգիին դարաւոր պատմութեան անհրաժեշտ մէկ օղակը կը ներկայացնէ։

Արուեստագէտը գիտական գործ մը չէ որ կու տայ, որպէս զի իր դործը *առարկայական* ըլլայ. ընդհակառակն՝ արուեստի գործերուն մէջ անհրաժեշտ է, որ Արուեստագէտը իրմէն բան մը դնէ, աւելի լաւ բացատրելու, աւելի խորը թափանցելու և աւելի կարկառուն դարձնելու համար իր նիւթը։ Արուեստագէտը պէտք է դնէ իր հոգին ու սիրտը, արուեստի գործին մէջ։

Եթէ գիտունը իր առարկային կապուած է գիտական մարդու մտածողութեամբ, երբ կը փնտռէ տիեզերական ճշմարտութիւնները և անոնց իրարու հետ ունեցած աղերսները, արուեստագէտը, նոյն այդ ճշմարտութիւններն ու գեղեցկութիւնները որոնելու իր բազմազան ձեւերուն մէջ, (ճարտարապետութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն, երաժշտութիւն, գրականութիւն և շարժապատկեր) պէտք ունի անձնատուր ըլլալու երազի ու երեւակայութեան, զգացումներու յորդումին, որոնք բոլորն ալ դերազանցօրէն զուտ *անձնական, ենթակայական* գործօններ են։

Ակարոնեանի արուեստը սակայն *եսասէր հաճոյքին* անձնատուր ըլլալ չի սիրեր։ Անգամ մը միայն, հոգիներու տառապանքը պատկերացնելու առեն, երբ մեզի պատմել ուզեց *լռութեան* մէջ գոյութիւն ունեցող անհո՞ւն խորհուրդը, անձնատուր եղաւ բնազանցական հարցերու քննութեան։ Այդ կալուածին մէջ մնաց դերազանցապէս բանաստեղծ ու ենթակայական. հոգիներու տառապը երգեց, աւելի ճիշտ պիտի ըլլար ըսել, երգեց *իր* հոգիին տառապը, կեանքի ու տիեզերքի աւերծուածներուն առջեւ, անծանօթին սար-

սուրը զգացող հոգիին տառապը։ Այս աշխատութեան մէջ եւս չի քրքրեց վիպային ո եւ է կնճիռ, ոչ ալ փնտռեց բազմաթիւ անձնաւորութիւններ անլուծելի հանգոյցը քակելու համար։ Անիկա բաւականացաւ մէայն Եսի մը հոգին կարդալ, առանց բռնազբօսիկ ճիգերու, մնալով արուեստի անձնական սահմաններուն մէջ։ Իր նպատակին հասնելու համար, ստիպուեցաւ երբեմն դառնալ առարկայական, ապատոանիլ բնութեան գիրկը, կարդալ անոր գեղեցկութիւնները, ընդօրինակել անոր բոյրերն ու գոյները, ձայներն ու ձեւերը, իր ենթակայական զգացումներն աւելի խորացնելու և աւելի խտացընելու համար։

Այս է պատճառը, որ Ահարոնեանի ստեղծագործութեան մէջ, բացառիկ տեղ մը ունի *Լոութիւնը* վէպը, և կը յատկանշէ անոր արուեստի կազմութեան մէկ որոշ անկիւնադարձը, մէկ որոշ հանգրուանը։

Այդ վէպին մէջ թէեւ «բնագանցութեան սարդի ոստայնին» մէջ բռնուած է, սակայն մտածումին ու կեանքին, այսինքն ուղեղին ու սիրտին միջեւ գոյութիւն ունեցող կապերը չէ խզած երբեք։

Երբ վէպին մէջ վիպագիրը չի կրնար չնչել իր անձնաւորութիւնը, և ընդհակառակն ամէն բան անով կը բացատրէ, կը նշանակէ թէ վէպը կըրաւած է ենթակայական տուեալներով, անհատական յոյզերով։

* * *

Բանաստեղծ արուեստագէտին համար ամէն բանէ առաջ յուզում պէտք է. անիկա աշխարհը կը տեսնէ ու կը զգայ մաքի ու հոգիի բոլորովին տարբե՛ր աչքերով, մանաւանդ երեւակայութեամբ, որմէ կը ծնին պատկերներ ու գաղափարներ հաւասարապէս։

Ահարոնեան մտքի և հոգիի տիրապետող ուժը կը զգայնէ իր գրականութեան մէջ, իբրեւ ճշմարիտ բանաստեղծ, որ իրերը կը սիրէ այնպէս, ինչպէս բոլոր բանաստեղծները, անոնցմէ լսելու խորհուրդն ու բանաստեղծութեան նոր պատգամներ։ Ճշմարիտ բանաստեղծ արուեստագէտ մըն է, քանի որ ճակատագրի հարցին առջեւ մարդկային հոգիին տառապանքը նաեւ կ'արտայայտէ։

Անոր բանաստեղծութիւնը բնաբական է մանաւանդ, երբ կ'երգէ բնութիւնը, մարդ էակին ներքին յոյզերը և կարօտները։

Բանաստեղծը իր արուեստին համար օժանդակ ունեցեր է նաեւ երեւակայութիւնը։ Առանց այս կարողութեան, որ իմացականութեան և զգացու-

մին հետ մրցումի մէջ է շարունակ, անկարելի է ուրանալ ոճ և ստեղծագործութիւն։ Երեւակայութեան շնորհիւ է, որ գրագէտը ինքնատիպ է իր ոճով ու պատկերներով, ինչպէս նաև իր ստեղծած կամ ընդօրինակած տիպարներով։ Վիպագիրն ալ ունի այդ իրաւունքը, իրականութենէն առնուած անձի մը տալու իր փափաքած նկարագրի գիծերը, բացասական կամ դրական, աւելի շեշտուած կամ ցայտուն ձեւով դուրս բերելու համար մարդկային հոգիին թաքուն մէկ մութ անկիւնը։

Այս բոլոր կարողութիւններով, Ահարոնեան կը տիրապետէ մեր վրայ, կը բաւէ որ, ինչպէս Թէն ըսեր է, իր մտածումն ու զգացումները կրնայ թարգմանել ձայներով, չափերով ու պատկերներով. մենք անոր կը պատկանինք միտքով, սիրտով ու մարմնով, որովհետեւ շնորհիւ անոր արուեստին ընթերցողը կը ճանչնայ կեանքը, կը սիրէ մարդիկն ու իրերը և կը յարի անոնց։

Բառին բանաստեղծական իմաստովը, Ահարոնեան բանաստեղծ հոգի մը ունի։

Այս բառը սովորական նշանակութիւն չունի անոր մօտ. անիկա այն տիպարներէն չէ, որոնք տալանդէ, արուեստէ ու ներշնչումէ զուրկ, կը մօտենան բանաստեղծութեան խորանին։ Այդպիսիները ներշնչուածներ չեն, որպէս զի մեզ ներշնչեն, որպէս զի մեր յոգնած միտքերուն ու հոգիներուն վերացում պատճառեն, մոռնալու համար ժամանակաւորը, անցաւորը։

Անիկա պէտք չէ զգացեր, գրիչը ձեռք առած ատեն Մուսաներուն խունկ ծխելու, որպէս զի անոնք իրեն վերացումի ճառագայթը տան, երեւակայութիւնը խթանեն, ու ղինքը ի վիճակի դարձնեն երգելու աստուածային քնարին վրայ։

Առանց ճիգի ու արուեստակութեան, ընդունակ կեանքի բովանդակ երեւոյթներուն մէջ գեղեցկութեան տարրեր փնտռելու, անոր առաջին արձակ գրուածքներուն մէջ իսկ ընթերցողը կը դիմաւորէ բանաստեղծ հոգի մը, որ չի սաւառնիր անձանօթ բնագաւառները, գերբնական ոլորտները. կեանքին կապուած մնալով մէկտեղ, անկէ կը քաղէ զգայութեան իր բոլոր տարրերը, որովհետեւ *տեսնելու* աչքեր և *զգալու* սիրտ մը ունի։

Տեսնելն ու զգալը երկու գործողութիւններ են, որոնք բանաստեղծի մը համար անհրաժեշտ են, այն բանաստեղծին, որ իր յոյսերը չի դներ մեկայն երեւակայութեան վրայ։ Տեսնելու և զգալու համար ալ զգայուն հոգիները պարտաւոր են ճանչնալ *բնութիւնը*, և ճանչնալ նաեւ *մարդկութիւնը*։ Գեղեցկագիտական յուզումի առաջին երեւոյթն ուրեմն բնութեան սէրն է։

Անհուն ու անսահման, բեղմնաւոր ու անսպառ հունձքի պաշտ մըն է բնութիւնը, իր անհամար երեւոյթներով, և մարդկութիւնը՝ իր կիրքերով, ե-րազներով, ինչպէս նաեւ շարունակ վերակոչող փորձառութիւններով։ Այս սահմաններուն մէջ է, որ բոլոր ժամանակներու մեծ բանաստեղծները, տիրապէս ներշնչուեր են։

Թերեւս ուրիշներուն համար բանաստեղծութիւնը աւելի բարձր նպատակ ունի, հասնելու համար իրերու և երեւոյթներու կատարեալ գիտակցութեան, հետու՝ մանաւորաբար աշխարհէն ու մարդոց առեղծուածնե-րէն։ Այսպիսիներուն համար բանաստեղծութեան մէջ անհրաժեշտը, տրամա-բանական, յաճախ նաեւ անտրամաբանական ճարտարապետութիւն մը, ե-րազ, բանականութիւն և ներզգայութիւն ունենալն է։

Ահարոնեանի գրականութեան մէջ կարմիր գծի մը պէս կը յայտնուի բանաստեղծի այն տիպարը, որ բնազանցական մարզանքներէ աւելի, տպա-ւորութիւններ կը առանձին դիմքը շրջապատող երեւոյթներէն, մարդերէն, ինչ-պէս նաեւ դանազան դէպքերէ. մարդկային սէրը, իր բազմաթիւ երեսներով, դժբախտութիւններ, ճակատագրական արկածներ, յիշատակներ ու հայրե-նիքի գլխուն պայթած փորձութիւններ, այս բոլորը կը յուզեն իր սիրտը։

Ու այն օրէն, որ առաջին անգամ գրիչը բռնեց գծելու համար դժբախտ պատահարներու հարկադրանքին տակ թափառական բազմութիւններու կա-րօտութիւնները, այն օրէն ղգայ իր հոգիին ձայնը։ Այն օրէն ըմբռնեց կեանքին մեծ խմաստը, ինչպէս նաեւ արուեստին ու բանաստեղծութեան ի-մաստը, նշանաբան ընտրելով վանոնք հպատակեցնել իրեն ու իր տրամա-դրութիւններուն, այդպիսով ծառայելու համար իր ժողովուրդին ու հայրենիքին։

Այն օրէն խմաստութիւնն ունեցաւ նաեւ գեղեցկութեան ու բանաստեղ-ծութեան շղթերը կաթած տեսնել բոլոր երեւոյթներուն վրայ։ Ինութեան ա-մէն մէկ երեւոյթ, մարդկային հոգին ալեկոծող ամէն ղգայութիւն անոր հա-մար պարձան ներշնչումի աղբիւրներ, բանաստեղծական յոյզերու մէկ մէկ թթխմոր։

Անոր բանաստեղծութիւնը կը հոսի արձակին մէջէն առհասարակ չա-փով ու կշիռով, ներդաշնակութեամբ ու երաժշտութեամբ։ Հոն տեղի տուած չէ երբեք բանաստեղծութեան հարազատ տարրը կազմող զգացումը. յաճախ մտածող Ահարոնեանն է, որ միջամտեր՝ ու խորհուրդին գողը կաթե-ցուցեր է ղգայութեան բաժակին մէջ։ Հաղիւ մեր բնութեան անդորրութիւնն ու քաղցրութիւնը երգած՝ պատնութեան հովն եկեր է խառնուիլ այդ ներ-դաշնակութեան։ Ժպիտն ու ծիծաղը երգած պահուն, աչքերուն մէջ ար-

ցունքի կաթիլներուն փայլիլը տեսեր է։ Երբ փորձեր է երգել ճահիլ ու ճիւան զոյգերուն հարսանեկան ուրախութիւնը, հեռուէն, դաշտերուն մէջ նշմարեր է դիակները լքուած որբերուն ու մոռցուած թափառականներուն։ Հալիւ ոգեւորուիլ սկսեր է հայ գիւղին «ճախին կրակովն ու ծուխովը, երբ չարաղետ հրդեհի մը կարմիր բոցերը շլացուցեր են իր աչքերը, և երբ յաղթութիւններուն ու հերոսութիւններուն փառքին երգերը պաշնաւորած է, պարտութեան ու լքուածութեան դէմին սառեր է...։

«Մեծ արուեստագէտներ կան, կը գրէ Ռ. Ռօլան, որոնք իրենց եսը միայն կ'արտայայտեն։ Բայց, անոնցմէ ամէնէն մեծերը անոնք են, որոնց սիրտը կը բաբախէ բոլորին համար։»

Ահարոնեանի արուեստը, քնարն ու բանաստեղծութիւնը «մտածման պատրաստ երկնականարին վրայ» չի թափառեցան երբեք։ Անոր սիրտը բաբախեց բնութեան համար, մարդկութեան համար։

Իր բովանդակ գործին մէջ լեռնէն վար իջնող ներշնչեալ մարգարէն է, բարձր ոճով ու պարթեւ հասակով, որ ամէնուն մխիթարութիւն ու զեղեցկութիւն, յոյս ու ոգեւորութիւն կը բաժնէ։ Անոր քնարը հնչեցուց միշտ լաւատեսութեան սաղմոսը, միշտ մնաց հաւատաւոր։ Եւ հակառակ անոր որ «կեանքի արեւը թեքուեց դէպ մուտք», երիտասարդ օրերու ոգեւորութեամբ ու լաւատեսութեամբ, հետեւեալ տողերով վերջացուց *Կարօտ հայրենիի* նախերգանքը.

կեանքիս արեւը դէպի մուտքն իջաւ,
Շրկիգուած սիրտս դեռ կայծեր ունի,
եւ ամէն մի կայծ՝ մի աստղ հաւատի.
Թողէ՛ք, որ առանց ցաւի ու լացի
Դէպ անէութեան մշուշը դիմեմ
իմ արեւի հե՛տ, իմ հաւատի հետ...

* * *

Ինչպիս կեանքին, այնպէս ալ քննադատին անհրաժեշտ է ներքին զոհունակութիւն ու ոգեւորութիւն, գործ մը քննութեան ճառեհալէ առաջ, որոնք վինքը պիտի առաջնորդեն տրամաբանական աշխատանքին. այսինքն — *ճանչնալ արուեստագէտին հոգին եւ պայմաններն այն միջավայրին, որուն կապուած է անիկա թրթռացող բազմաթիւ թելերով։*

Կը հաւատամ կատարած ըլլալ ուսումնասիրողի այս պարտականութիւնը, առանց իյնալու քննադատութեան արդէն հինցած ու ձայրայեղ մեթոտին

մէջ, որուն համաձայն քննադատը ժխտողի հանգամանքով պէտք է ներկայանայ, և որուն գրիչէն պէտք է կաթէ դառնութիւն, հեգնանք, արհամարհանք ու մեծամտութիւն . . . :

Իմ դերս եղաւ քիչ մը լոյս տարածել արուեստի գործերուն վրայ, մատնանշել քանի մը նախապաշարումներ, որոնք կը կապուին միշտ գրագէտին կեանքին, և ընթերցողներու միտքը առաջնորդել հոն, ուրկէ անոնք պիտի կրնան քալել իրենց ուզած ուղղութեամբ։

Պարտականութիւնս եղաւ խուզարկել նիւթիս բոլոր մութ կողմերը, երեան հանել ճշմարտութիւններ, որոնք արուեստի գործերէն մեզի կու գան առհասարակ։ Ուրիշներու բացատրելէ առաջ փորձեցի լաւ մը ճանչնալ ու թափանցել անոր, մանաւանդ չանացի քննադատողի անձս չէզոքացնել ու երբորդ կարգի վրայ բերել։

Ակարոնեանի գործին մօտեցայ առարկայական պայմաններով, և հրաժարեցայ դատելու այն կերպէն, որուն մարդիկ կը դիմեն քաղաքական պզտոր ակնոցներ անցուցած իրենց աչքերուն, երբ արուեստի ու գրականութեան մասին նոյն իսկ խօսիլ կը փորձեն . . . :

Խանդավառութիւնս մեծցաւ մանաւանդ, երբ պրպտումներուս ընթացքին, գտայ մեծ արուեստագէտը, որ մարդկային կարելի ճիգը թափեր էր երեան հանելու համար արհամարհուած ճշմարտութիւններ, որոնք միշտ խուսափեր են մեր տեսողութենէն։

Ճանչցայ արուեստագէտը, որ մտքի բացառիկ ուժով կրցեր էր հոգիի խորութիւնը չափել և անկէ վեր բերել անհրաժեշտ բոլոր տարրերը, անոնց-մով տալու համար մեզի գործ մը։ Այդ գործին մէջ ես գտայ հայ ոգին ամէն բանէ առաջ, բանալին՝ թափանցելու և կարդալու համար մեր ազգային բոլոր արժէքները։

Արուեստագէտը տուաւ մեզի *մեր հարազատ երգը*, այնպէս ինչպէս իւրաքանչիւր մեծ արուեստագէտ կրնայ տալ իր ցեղային նկարագիրը յատկանշող անմահ ստեղծագործութիւնը։ Եթէ ամէն ժողովուրդ մեծ է իր երգը, արուեստն ու գրականութիւնը ունենալուն և կարենալ տալուն համար խաւարն ու մռայլը փարատող *ճառագայթը*, մեր ժողովուրդն ալ մեծ է յանձին իր գրագէտներուն ու արուեստագէտներուն։

Եթէ ուրիշներ, ա՛նքան խարխափումներէ յետոյ, այսօ՛ր մնայն կը փնտռեն հեռաւոր անցեալէն մեզի եկած հոգեկան ժառանգութեան անկորստ տարրերը, մեր ցեղային բնազդը ուրեմն սխալած չէ երբեք, ու յայտնըւեր է մեր մտքի վաստակաւորներուն գործերով, որոնց շարքին մէջ Ահե-

տիս Ահարոնեան կը դրաւէ արժանաւոր ու վաւերական տեղ մը։

Եւ սակայն արուեստագէտը մարդ է ամէն բանէ առաջ, հետեւաբար կապուած անխուսափելի սկարրութիւններու, որոնք արդիւնքն են շատ անգամ այլազան ուժերու բախումին, ենթակայական և առարկայական տրամադրութիւններու, որոնցմով կը կազմուին արուեստի գործերը։

Լոյս ու ստուեր քով քովի գալով, և ղրական ու բացատական գիծերով ճնունդ կ'առնեն գործերը։ Իննատատը կշիռը ձեռքը բռնած կը փորձէ կշռել զանոնք, ու ամէն մէկուն ծանրութեանը նայելով՝ համապատասխան կնիքը կու տայ իր ուսումնասիրութեան։

Ես փորձեցի նիւթիս ղրական ու լուսաւոր գիծերը երեւան հանել, որոնք ա՛նքան հեշտութեամբ անզօրութեան մատնեցին ճամբուս վրայ ցիս ցիմաուորող անխուսափելի ստուերները։ Այս փորձը սրտի անխառն ուրախութիւն պատճառեց ինծի.— միակ վարձատրութիւնը, մտաւորական մարդուն։

.....

ՇԱՆՕԹ.— 38րդ էջին վրայ տող 23. կապմածին *պիտի ըլլայ* կարդացուի։
82րդ » » » 21, են » » է։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.— Արաքսի յորդումը.— *Իր առաջին յօդուածը, որ լոյս տեսած է Թիֆլիսի Արձագանգ շաբաթաթերթի 14 րդ թիւին մէջ, 26 ապրիլ 1887 ին։*

2.— Հոս կինը.— *Ազգագրական յօդուածներու շարք մը, նախապէս հրատարակուած Արձագանգի՝ եւ յետոյ Տարազ շաբաթաթերթին մէջ, 1887-1894։ Թիֆլիսի Հայ Հրատարակչական Միութիւնը լոյս ընծայեց զայն հատորով մը։*

3.— Լուրեր սահմանի միւս կողմից.— *Առանձին յօդուածներու շարք մը կը կազմեն, հրատարակուած 1894 ին, Թիֆլիսի Մշակին մէջ, Գ. Արծրունիի մահէն յետոյ, որոնցմով յօդուածագիրը Թրքահայութեան սպառնացող չարդերու վտանգը կը նախատեսէր։*

4.— Պատկերներ Թրքահայ գաղթականներու կեանքից.— *Հրատարակուած Մոսկուա 1889 ին։ Նախապէս լոյս տեսած Մշակի մէջ։ Բ. տպագրութիւնը՝ 1889 ին, Փեթրօկրատի մէջ։ Այս հատորին առաջին հրատարակութեան հասոյթը յատկացուած է ամբողջովին Պոլսոյ որբանոցներուն։*

5.— Խեղճերը.— *Հրատարակուած 1902 ին Թիֆլիս, Բ. հրատարակութիւնը՝ 1909 ին նոյնպէս Թիֆլիս։*

6.— Ազատութեան ճանապարհին.— *Ա. հրատարակութիւն Դրօշակի մէջ 1898-1902։ Բ. հրատարակութիւն Ժընեւի մէջ։ Գ. հրատարակութիւն 1908 ին Ցառաջի գրադարան։ Դ. հրատարակութիւն 1926 ին Պօստոն։*

7.— Իտալիայում.— *Մաս առ մաս հրատարակուած Մշակ օրաթերթի մէջ 1902 ին, առանձին հատորով լոյս տեսած է Թիֆլիս 1903 ին։*

8.— Նվէյցարական գիւղը.— *Մուրճ ամսագրի մէջ 1902 ին Թիֆլիս. հատորով՝ 1913 ին։*

9.— Մրրկի սուրբը.— *Մուրճի մէջ 1903 ին. առանձին հատորով՝ Թիֆլիս։*

10.— Արազը.— *Մուրճի մէջ, եւ առանձին հատորով՝ 1904 ին։*

11.— Մայրերը.— *Մուրճի մէջ 1904 ին, յետոյ առանձին գրքով։*

12.— Կեանքի վէպը.— *Մշակի մէջ եւ առանձին հատորով՝ 1908 ին։*

13.— Լուսինը.— *Մուրճ ի մէջ 1903 ին. առանձին հատորով 1909 ին Թիֆլիս, 1924 ին Բ. տպագր. Պօստօն:*

14.— Մոխիրների տակից.— *1924 ին Պօստօն, Լուսինը վէպի հետ լոյս տեսած:*

15.— Արցունքի ծովիտը.— *1907 ին Պագու:*

16.— Գայլերը ոռնում էին եւ Աշնան գիշերին.— *1907 ին Թիֆլիս:*

17.— Խաւարի մէջ եւ Անդունդը.— *Պագուի բանտին մէջ գրուած 1908-9. յետոյ առանձին գիրքերով լոյս տեսած՝ Թիֆլիս, 1910 ին:*

18.— Պարտուածները.— *Գրուած Պագուի բանտին մէջ, առանձին գրքով լոյս տեսած Պոլիս, 1912 ին, մատենաշար Ազդակ:*

19.— Իմ բանտը.— *Հրատարակուած Դրօշակի մէջ 1911 ին:*

20.— Աստծու կրակը.— *Հրատարակուած 1912 ին. նոյն թուին՝ Ջարթիր Աստուած, Ազատամարտի մէջ:*

21.— Երազներիս աշխարհը.— *Ուղեւորի տպաւորութիւններ ու յուշեր Հայաստանէն, 1910 ին, տպուած Ազատամարտի մէջ 1911 ին:*

22.— Ձամբորդութիւն մը դէպի Եգիպտոս.— *Տպուած Հորիզոնի մէջ 1913 ին Avesta առորագրութեամբ:*

23.— Հայրենիքիս ծամար.— *Հրատարակուած Պօստօն, 1920 ին:*

24.— Ձամբորդը.— *Հրատարակուած Պօստօն, 1926 ին:*

25.— Քրիստափոր Միքայէլեան.— *Հրատարակուած Պօսթօն, 1926 ին:*

26.— Կարօտ հայրենի.— *Հրատարակուած Պօստօն, 1927 ին:*

27.— Իմ գիրքը.— *Հրատարակուած Փարիզ 1927 ին:*

28.— Արագիլներ.— *Հայրենիք ամսագրին մէջ, 1927 ին:*

29.— Կաճուչկ.— *Հրատարակուած Գահիրէ, 1927 ին:*

30.— Իտալական էսկիզներ.— *Հրատարակուած Հայրենիք ամսագրին մէջ, 1928-1929:*

31.— Բաֆֆի եւ Անդրանիկ.— *Հրատարակուած Հայրենիք ամսագրին մէջ, առաջինը 1925 ին եւ երկրորդը՝ 1928 ին:*

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

1.— Աշնան գիշեր (Nuit d'automne) *Mercure de France*, 15 Fév. 1911, Paris.

2.— Գայլերն ոռնում էին, (Les loups hurlaient), *La Revue*, 15 Juin 1912, Paris.

3.— Մասիսները, (Les Massis) *Revue Bleue*, 24 Août 1912, Paris.

4.— Խաւարե՛ս, լուսին, (Eclipse-toi, lune !), *Revue Chrétienne*, 1er Mai 1911, Paris.

5.— Խաւարին մէջ, (Dans les ténèbres), *Oeuvres libres*, Août 1925, Paris.

6.— Դէպի ազատութիւն եւ Անդունդը, (Vers la Liberté et l'Abîme), *E. Leroux*, Editeur, Paris, 1912.

7.— Ձավո, (Djavo) *Etudes arméniennes*, traduction F. Macler, 1925, Paris.

8.— Դարաւոր կաղնին, (Le chêne séculaire), *La semaine littéraire*, 1er Juillet 1911, Genève.

9.— Երկու կոյրերը, (Les deux aveugles), *Bibliothèque universelle*, Septembre 1912, Lausanne.

ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

1.— **Armenische Erzahlungen**. — übersetzt von Agnes Finck — Giandschezian *(Reclams universal Bibliothek, No. 5107, Leipzig).*

2.— *Առանձին հատորով.—*

a. Die Ehre des Madchens.

b. Der Kirchenbruder, ein Martyrer Vazrik, der Kleine Held.

c. Morgenrote.

d. Bis nicht mehr.

e. Der Ruf des Blutes *(Armeniens Leid, Von Pascal Ohaniantz. Wien, 1912).*

ՉԵԽՕ-ՍԼԱՒԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

1.— **A. Aharonian.**— Obrazky tureckano arménska, Al. Koudelka, V, Prager, 1903.

2.— **A. Aharonian.**— Nouvelles sur la vie des Arméniens de la Turquie.

ՌՈՒՍԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

1.— Les nouvelles, Bibliothèque universelle, Moscou.
(Les mères, Le coq, Les loups hurlaient, L'Arbre solitaire, Le Tocsin.)

2. – Le Père.

ԱՆԳԼԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

1.— **Mother Armenia, Forgive me !** (*N - Y Evening Post*), 14 Février 1918. *Թարգ. Մխսաք Թռւփանճեան։*

2.— Խայը, New-York.

3.— Աշուղը (The Ministrel). *N - Y Evening Post,* 19 juillet 1919. *Թարմ. Մխսաք Թռւփանճեան։*

ՊՈՒԼԿԱՐԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

1.— Արտը (*Նիվաթա*) *Իլիտէն պատկերազարդ շաբաթաթերթի ապրիլի թիւին մէջ 1929։*

2.— Մայրը (*Մայքաթա*), *նոյն թերթի յունիսի թիւին մէջ։*

3.— Պատիւը (*Զէսթա*), *նոյն թերթի յուլիսի թիւին մէջ։*

4.— Բանտուհի (*Վըճ Զաիրվօրա*), *օրաթերթ Փլատվէի 23 յունիսի թիւին մէջ 1929.*

ՅՈՒՆԱՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

1.— Ալքաղաղը.— *Ալթէնքի Պուլքէթա պարբերաթերթի 1929 օգոստոսի թիւին մէջ։*

.....

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

ԿԵԱՆՔԸ

Ծանկութիւնը.— Գիւլազիզ խալիֆան.— Ծտանաւոր մը եւ գիրքերու գաղտնիքը.— Ռուս-Թրքական պատերազմը.— Համալսարանէն յետոյ բանտ.— Քաղաքական ասպարէզը.— Աչքերուն լոյսը . . . . . էջ 7—20

ՄԻՋԱՎԱՑԸ ԵՒ ԱԶԴԱԿՆԵՐ

Նկարագրի գիծեր.— Մեր իրականութիւնը.— Հայ գիւղը.— Հայրենի բնութիւնը.— Ընտանիքը.— Ծտաւր հորիզոններ.— Ռաֆֆի.— Քրիստափոր Միքայէլեան . . էջ 21—41

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

«Պատկերներ Թրքահայ գաղթականներու կեանքից».— «Ազատութեան ճանապարհին».— «Արազը».— «Խաւարի մէջ».— «Անդունդը».— «Գայլերը ոռնում էին . . էջ 42—61

Բ.

«Լռութիւնը».— «Իտալիայում».— «Իտալական Էսկիզներ».— «Շվեյցարական գիւղը».— «Մրրկի սուրբը».— «Մայրերը» . . . . . էջ 62—72

Գ.

«Ձամբորդը».— «Կաթուշկը».— «Մոխիրների տակից».— «Իմ գիրքը».— «Աստծու կրակը».— «Պարտուածներ . էջ 73—86

ՄԱՐԴԿԱՑԻՆ ՑԱՒԱԿԱՆՔԸ ԵՒ ՀՈԳԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՑՆԱԿԱՑՔԵՐԸ

Ա.

Երեք շրջանները.— Հոգին նոյնն է ամէն տեղ.— Քաղաքակրթութեան առաջին օրրանը.— Մութ ու խորհրդաւոր հաւաքականութեան հոգիին պատկերը.— Ցեղին դարաւոր նկարագիրը . . . . . էջ 87—102

Բ.

Ամէն բանէ առաջ ճշմարտութիւնը.— Ընդհատը հաւատքականութեան համար.— Դիւցազներգութիւն մը.— Նահատակ մանկութիւնը.— Երիտասարդութիւնը՝ որ հոգիին մէջ արեւ, եւ ձեռքին մէջ կռան ունի.— Թափառական ոգին.— Գիւղէն դէպի բանտը . . . . . էջ 103 — 116

Գ.

Կեանքի վէպը.— Դարերու ճամբորդը.— Ձակատագիրը.— Աշխարհի իմաստութիւնը իբրեւ նոր առաքինութիւն.— Վրիպած կեանքեր.— Սէրը եւ մինակութիւնը ծերութեան դռներուն առջեւ.— Անասուններուն ըստուերը . . . . . էջ 117 — 132

ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՏԱՐԲԵՐ

Հոգիի տարակոյսներէն առաջ՝ հայրենիքի եւ մարդկութեան սէրը.— Ցեղային առաքինութիւններ.— Բնութիւնը.— Իմացական տարբը.— Նիրվանայի իմաստութիւնը եւ գեղեցկութեան ու ճշմարտութեան իտէալը.— Լեզու եւ ճարտարապետութիւն . . . . էջ 133 — 149

ՄԱՐԴԸ

Դրչին հաւասար՝ խօսքին ուժը,— Հայրենասէր գաղափարախօսը.— Մտածող մարդուն եւ արուեստագէտին պայքարը.— «Հայրենիքիս համար».— Կռո՛ւնկ... ճառայ եմ ձայնիդ.— Մեր աշխարհը... մեր լեզուն.— Փոթորիկի բռնուած թռչուններուն երամը.— Վերագնահատումներ.— Տրորուող կաւը.— Բանոնցին ու ասիանցին.— Մասիսը անմահ է.— Երազը . . . . . էջ 150 — 171

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ

«Կարօտ հայրենի».— Ֆաուստի իտէալը, «կեցի՛ր, դուն այնքան գեղեցիկ ես».— Արուեստագէտը՝ իր հայրենիքին ու ժողովուրդին մէջ.— Ինթակայական գործօնը.— Բանաստեղծը.— Գեղեցկագիտական յուզումի երկու տարրերը, բնութիւնը եւ մարդկութիւնը . . . . . էջ 172 — 186

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

.....

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

ԱՐԻՒՆԻ ՏՕՆԸ, (դրուագներ պատերազմի կեանքէն):

Տպ. Շանթ, կ. Պոլիս 1912, գին 10 ֆր.

ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԵԱՆ ԺԱՅԹՔՈՒՄ, Թարգ. գերմաներէնէ,

Հեղինակ՝ ԱՌԻԿՈՒՍԹ ՖՕՆ ՓՕՑԷՊՈՒԻ

Տպ. Շանթ, կ. Պոլիս 1912, գին 2 ֆր.

(Այս երկու գիրքերէն քանի մը օրինակներ կը մնան հեղինակին մօտ):

.....

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ ԵՐԿԵՐ

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ, (ուսումնասիրութիւն)

ԲԼԿԱՏԵՆՑԻՆ »

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ »

ԳՐԱԿԱՆ ԱՍՏԵՂԱՏՈՒՆ (Ա. եւ Բ. շարք)

(Հին եւ նոր գրական դէմքեր, իրենց գործերով)

ՄԵՌՆՈՂ ԳԻՒՂԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ (Հայրենի յիշատակներ)

.....

ԳԻՆ.— ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ՝ ՖՐԱՆԿ 25

ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐ՝ ՏՈԼԱՐ 1,50